


ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մ. Ա. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

XIX դ. ՎԵՐՋ ԵՎ XX դ. ՍԿԻՖ

630



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1974

Մարտիկ Արշավիրի Խանդիքարյանի (1926—1972) ետմանու մրատարակվող սույն աշխատուրյան մեջ ուսումնափրկած են պգրարային հարաբերությունները Արևելյան Հայաստանում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին։ Համառոտակի թեորագրական է զյուղացիական ուժուրմի զշանակությունը, ապա ցոյց է տրված պիտական, կարլածատիրական, վաճական ու զյուղացիական նորագործուրյան պատկերը, լուսարանված են՝ կապիտաֆումի զարգացումը արելամայ զյուղում, ագրարային հարաբերությունների կրած փոփոխությունները և զյուղացիական շարժումները մասնավառապես 1907—1914 թվականներին։

Խ 0161-30
704(02)-74 434-74

© Երևանի Համալսարանի
հրատարակչություն, 1974 թ.

ХОНДԿАРЯН
МАРТИК АРШАВИРОВИЧ

ИЗ ИСТОРИИ АГРАРНЫХ ОТНОШЕНИЙ
ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

(конец XIX в. и начало XX в.)

(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван — 1974



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարքս-լենինյան տեսությունը սովորեցնում է, որ համարակության զարգացման պատմությունն ամենից առաջ արտադրության, արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների զարգացման պատմությունն է, ուրեմն և անմիջական արտադրողների՝ աշխատավոր մասսաների պատմությունը։ Այս տեսակետից կարենոր նշանակություն ունի հասարակության տնտեսական զարգացման, անմիջական արտադրողների տնտեսական վիճակի և դասակարգային պայքարի պատմության ուսումնասիրությունը։

XX դարի սկզբին ազրարային հարցը Խոսաստանում սոցիալական մեծ նշանակություն ուներ և, ինչպես Լենինն է նշել, կազմում էր երկրի բուրժուա-դեմոկրատական հեղափոխության առանցքը։ Բոլշևիկների ազրարային ծրագրի հիմնական նպատակն էր՝ բռնագրավել կալվածատիրական, վանքապատկան ու արքունի հողերը, ազգայնացնել դրանք և անհրաժեշտ պայմաններ ստեղծել կապիտալիզմի ամենաարագ զարգացման, դասակարգային պայքարի հետագա խորացման համար, կազմակերպել պրոլետարիատին ու գյուղի կիսապրոլետարական զանշվածներին և անցնել սոցիալիստական հեղափոխության։

Ցարիզմը ստոլիպինյան ազրարային քաղաքականության միջոցով մի նոր քայլ էր անում կապիտալիզմի զարգացման ուղղությամբ և կուպակության մեծաքանակ շերտ ստեղծելով աշխատում էր ամրապնդել իր սոցիալական բազան, վերջ տալ գյուղացիության հեղափոխական շարժումներին։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հողային հարցը սուլու կերպարանք էր ստացել ինչպես Ռուսաստանի այլ ծայրամասերում, այնպես էլ Հայաստանում։ Սույն աշխատության մեջ մենք նպատակ ենք դրել բնութագրել ագրարայի հարաբերությունների էությունը Հայաստանում, ցույց տալ, թե ինչ փոփոխություններ էին տեղի՝ ունենում դրանցում, ինչպես էր ուժեղանում գյուղացիության շահագործումը և վատանում նրա տնտեսական վիճակը։ Ցույց է տրվում նաև բոլշևիկյան կազմակերպությունների պայքարը բուրժուական և կեղծ սոցիալիստական կուսակցությունների դեմ, գյուղացիության դասակարգային պայքարը ռեակցիայի տիրապետության և հեղափոխության նոր վերելքի տարիներին։

Հայաստանի ագրարային հարցի և գյուղացիության վիճակի մասին արդեն հրատարակվել են մի շարք արժեքավոր աշխատություններ¹։ Սակայն տակալին շատ անելիքներ կան

¹ В. А. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947. «Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX в.», сост. проф. В. Рштуни, при участии К. Степаняна, Ереван, 1951. О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, 1934. Ա. Մարտիրոսյան, Գյուղացիների դրությունը նախառավելական Հայաստանում (1900—1920), Երևан, 1948. Օ. Մ. Հովհաննեսյան, Ագրարային Հարցը Երևանի նախկին նահանգում XIX դ. վերջին և XX դ. սկզբին, Երևан, 1949; Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պատառական պայքարը թուրքական բռնականության վեմ, Երևան, 1955; Մ. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении в XIX в., Ереван, 1957. В. Д. Мочалов, Крестьянское хозяйство в Закавказье к концу XIX в., М., 1958. А. С. Абрамян, Развитие капиталистических отношений в арм. деревне (1860—1920), Ереван, 1959. Խ. Հ. Ավդարելյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917), Երևан, 1959. Վ. Հ. Թշոտին, Արդարագույն Հայաստանի գյուղացիության պատմության, Երևան, 1960, մաս Ա։ Ա. Եղանյան, Հայաստանի Հետուերմյան ագրարային հարաբերությունները, Երևան, 1964։ Վ. Ա. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմության, Երևան, 1967, հ. 3։ Վ. Հ. Թշոտին, Արդարագույն Հայաստանի գյուղացիության պատմության, Երևան, 1968, մաս Բ։ Մ. Հ. Արգանց, Հայաստանի ժողովրդական տնտեսավորումը և հայ տնտեսագիտական միտքը XX դ. սկզբին, Երևան, 1968։

կրանց գիտական ու բազմակողմանի ուսումնասիրման համար։

Սույն աշխատությունը գրելիս դեկավարվել ենք մարքությունի կլասիկների համապատասխան դրույթներով և կունհիցական կարևոր փաստաթղթերով։ Օգտագործել ենք ՍՍՀ Կենտրոնական պետական արխիվի (ՀՍՍՀ ԿՊԱ), Վրացական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվի (ՎՍՍՀ ԿՊԱ), ՄԼԻ Հայկական և Վրացական մասնաճյուղերի արխիվների նյութերը, ինչպես նաև զանազան ժողովածուներ, վիճակագրական տեղեկություններ, այդ ժամանակաշրջանի պարբերական մամուլը, առանձին ուսումնասիրություններ։

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսքով անդրադառնալ գյուղացիական, կալվածատիրական և վանքապատկան հողատիրության մասին առանձին հեղինակների վկանությամբ աշխատած տվյալների քննարկմանը։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Հայաստանի ագրարաբերությունների և հողատիրության մասին արժեքավոր տվյալներ են հաղորդում Վ. Թշոտինու „Крестьянская реформа в Армении в 1870 г.“, Հ. Թումանյանի „Экономическое развитие Армении“, Ա. Մարտիրոսյանի „Գյուղացիության դրությունը նախառավելական Հայաստանում (1900—1920 թթ.)“, „Аграрно-земельные отношения Армении в период первой русской революции“ (դիմերոշիա), Օ. Հովհաննիսյանի «Ագրարային հարցը Հայաստանում XIX դ. վերջին և XX դարի սկզբին» (դիմերտացիա) և աշխատությունները։ Սակայն այդ աշխատությունների են գտել առանձին անձնառություններ։ Կալվածատիրական գյուղացիության մեջ հաշվի չեն գրանցված աշխատավորական մասնատիրական 5 գյուղերում՝ 21000 բնակչության գյուղացիական օգտագործման բաժնում։ Հայտնի է, որ այդ գյուղերի գյուղացիությունը Հայաստանի մնացած շրջանների կալվածատիրական գյուղատիրություններից տարբերվում էր միայն նրանով, որ տնտեսագործական ծանր կախման մեջ էր գտնվում ոչ թե աշխատավորական ծանր կախման մեջ, այլ հոգերու կալվածատիրությունը։ Պրոֆ. Թումանյանը գյուղագիտական հողերն ամբողջ Հայաստանում նշում է

45000 դես., Ա. Մարուխյանը՝ 45000 և 81000 հեկտ., իսկ միայն Երևանի նահանգում՝ 32440 հեկտ., Օ. Հովհաննիսյանը՝ 81000 դես. և այլն: Մեր կարծիքով, վանքապատկան հողերը Հայաստանում եղել են մոտ 64000 դես. առանց էջմիածնապատկան 5 գյուղերում և դաժ 21000 դես. գյուղացիական բաժնեհողերի: Այդ հաշվելու դեպքում վանքապատկան հողերը կազմեն 85000 դես.²: Ընդ որում 45000 դես. (այդ թվում նաև 21000 դես. գյուղացիական բաժնեհողը) ունեցել է միայն էջմիածնի վանքը, իսկ 32440 դես. հողը եղել է Երևանի թեմի (և ոչ թե Երևանի նահանգի) 48 վանքերի սեփականությունը: Այնուհետև վրիպում են Հ. Թումանյանը և Օ. Հովհաննիսյանը, երբ պիտանի հողերի մեջ չեն հաշվում արոտավայրերը: Հայտնի է, որ արոտավայրերը կարենոր նըշանակություն ունեին երկրի գյուղատնտեսության համար ընդհանրապես և անասնապահության համար՝ մասնավորապես: Նույն հեղինակները կալվածատիրական ծխերի քանակը և կալվածատիրական տիրույթների թիվը նույնացնում են: Դրանք տարբեր բաներ են: Այսպես, Երևանի նահանգում 1899 թ. տվյալներով 430 տիրույթներ ունեին մեկական կալվածատեր, 47 տիրույթներ՝ 2-ական, 19 տիրույթներ՝ 3-ական, 15 տիրույթներ՝ 4—10-ական տեր, իսկ 133 տիրույթներում հողատերերի քանակն անորոշ է: Հ. Թումանյանը նշում է, որ Լոռիում եղել են 50 կալվածատերեր, երբ 1910 թ. վիճակագրական ժողովածուն որոշակիորեն ցույց է տալիս 139 տիրույթ 265 կալվածատերերով: Վերջապես ամենք այն, որ Ա. Մարուխյանը ուսմացնում է կալվածատիրական հողատիրույթյանը՝ և նվազեցնում կալվածատերերի քանակը: Նրա հաշվումների համաձայն Հայաստանում 400 կալվածատիրական տնտեսություններ ունեցել են 303000 հեկտար հող, ընդ որում, ինչ-ինչ պատճառներով, կալվածատերեր առելով նա հասկանում է միայն մուլքատերերին և թիուլատերերին³: Նույն սխալը կրկնում է նաև Ս. Խրիմյանը. առանց աղբյուր-

ները նշելու, կալվածատիրական հողատիրության շափը Երևանի նահանգում նա հաշվում է 270000 հեկտ., իսկ Հայկական ՍՍՀ տերիտորիան ընդգրկող շրջաններում՝ 300000 հեկտ., որից 45000-ը՝ վանքապատկան⁴: Հայաստանի ինչպես հողատիրության, այնպես էլ կալվածատիրական տընտեսությունների մասին լրիվ և ստույգ տվյալներ ստանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նոր աղբյուրներ, արխիվային վկայությունների: Ներկա աշխատության մեջ վերաբերելով հողային հարաբերությունները, անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել գյուղացիական ունեցավորմի վրա, քանի որ այն կարուր նշանակություն ունեցավ այդ հարաբերությունների գարգացման համար:

³Տե՛ս Ար. Մարուխյան, Գյուղացիության դրույթյունը նախասովետական Հայաստանում (1900—1920 թթ.), Երևան, 1948, էջ 16:

⁴Ս. Խրիմյան, գրախոսություն, „Բ. Ռշտуни, Ագրарная политика царизма и крестьянское движение в Армении в начале ХХ в.“, Ереван, 1951 (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1952, № 5):

²Տե՛ս Թարիլն վարդապետ, Ս. Էջմիածնի կալվածքներն ու նրանց բարեկարգության ծրագիրը, Վաղարշապատ, 1908; Մխիթար վարդապետ, Հայերը Խուսաստանում, 1906:

ԳՈՒԽԻՍ ԱՌԱՋԻՆ

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (XIX Դ. ՎԵՐՋ—XX Դ. ՍԿԻՖԾ)

1. ԷԽԵԶԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԱՅԻՆԱՆ ՌԵՑՈՐՄԻ ՄԱՍԻՆ

1861 թվականի գյուղացիական ռեֆորմի հրապարակումից հետո, ինչպես հայտնի է, ցարիզմը ռեֆորմներ անցկացրեց նաև կայսրության ծայրամասերում, այդ թվում նաև Ալեքսանդրապում։ Կառավարությունը 1864 թ. այդ ռեֆորմը անցկացրեց թիֆլիսի, իսկ 1865 թ.՝ Քութայիսի նահանգներում։

Սովետական Հայաստանի տերիտորիան ընդգրկող շրջաններում գյուղացիական ռեֆորմն անցկացվեց 1864, 1870 և 1877 թթ.։ Կալվածատերերի շահերից ելնող օրենքների կենսագործման հետևանքով մասնատիրական գյուղացիները ենթարկվեցին թալանի. գրկվեցին լավագույն հողերից։ Գյուղացիների մեծ մասն ստացավ անբերի, ոչ պիտանի, գյուղի զանազան մասերում ընկած հողաբաժիններ։ Զգալի թվով գյուղացիական ծիեր մնացին հողազորկ։ Հող շահացան նաև կալվածատերերի հողերում «կամավոր համաձայնությամբ» ապրող գյուղացիական շատ ծիեր, 15 տարեկանից բարձր արական շում շունեցող ծիերը և այլն։

1870 թ. մայիսի 14-ի օրենքի 9-րդ հոդվածով կալվածատերն իրավունք ուներ իրեն պահելու ամրող հողի $\frac{1}{3}$ -ը։ Օգտվելով այդ հոդվածից, կալվածատերերն անողոքաբար խուզում էին գյուղացիական բաժնեհողերը։ Պարզ է, որ այդպիսի պայմաններում խոսք լինել չէր կարող գյուղացիներին օրենքով պահանջված բաժնեհող տալու մասին (յուրաքանչյուր 15 տարեկանից բարձր արական շնչին՝ 5 դե-

յատին կամ ծիսին՝ 15 դեսյատին)։ Այդ թալանով պետք է ացատրել, որ, օրինակ, 1885 թ. Երևանի նահանգում կային 1209 հողագուրկ ծիեր⁵։ Լոռու շրջանում, պաշտոնական տրվալներով, կալվածատիրական գյուղացիները մինչև 1864 թ. ռեֆորմը ունեին 1301 դեսյատին հող, կանոնագրերի կազմումից հետո նրանց օգտագործմանը մնաց միայն 1028 դեսյատին հող⁶։ Ռեֆորմը շտարածվեց լոռու շրջանում ապրող արգանների, ինչպես նաև թիուզական գյուղերի վրա։

Ռեֆորմի կիսատ-պոատ լինելու հետևանքով զգալի շատով պահպանվեցին ճորտատիրության մնացուկները, գյուղացիների կախվածությունը հողատերերից։ Կալվածատերերերն իրեն կամոն չէին վարում տնտեսությունը և իրենց հողերն ստրկական պայմաններով վարձով էին տալիս շրավոր պարզացիներին։ Դրա հետևանքով լայն շափով տեղ էին գրանցում աշխատավճարումները, զանազան նատուրալ պարհակները։ Գյուղացիները գրկվեցին անտառային բաժնեհողերից, զահպաններց արոտավայրերից ու անտառներից օգտվելու նույց եկող սերվիտուտային իրավունքը, որ նշանակում էր մի սողանցք ևս թողնել կալվածատերերի կողմից գյուղացիների շահագործումն ուժեղացնելու ուղղությամբ։ 1870 և 1877 թթ. օրենքներով տոհմիկ և ոչ տոհմիկ հողատերերը մանաշվեցին իրենց ունեցած անձնական և գյուղացիական ստագործմանը տրված հողերի լիակատար սեփականատերը։ Գյուղացիների վրա մնաւ էին կալվածատերերին և պետքյանը տրվող հարկերի ծանր բենու և բազմաթիվ պարականություններ։ Ետ գնման ոչ պարտադիր լինելը և կավարությունից «օժանդակություն» չստանալը նշանակում որ շարունակվելու էր գյուղացիների կախյալ վիճակը կալվածատերերից, նրանց անողոք ճնշումն ու շահագործությունը կալվածատիրության ու աճող կուլակության կողմից

⁵ Տե՛ս «Կավազքին դեպուտատներ 3-ի Գումարական դատարանում», Եա 1912, էջ 24։

⁶ Տե՛ս «Սահմանադրություն» շատանալը նշանակում ու շահագործությունը կալվածատիրության ու աճող կուլակության կողմից»:

դաժան շահագործման, գարգացող ապրանքադրամային հարաբերությունների պայմաններում գյուղացիների տնտեսությունը քայլքայվում էր, փերջիններս աղքատանում, պառակացման և պրոիտարացման էին ենթարկվում:

Չնայած այդ ամենին, ռեֆորմն իր բովանդակությամբ բուրժուական էր: Այն օրինակիվորեն նպաստում էր ապրանքա-դրամային հարաբերությունների հետագա ծավալմանը, զյուղի սոցիալական բենուացմանը և կապիտալիստական հարաբերությունների գարգացմանը:

Ռեֆորմը իրավաբանորեն ձևակերպում էր մուլքատիրական գյուղացիների տնատիղերի, վարելահողերի, այգիների, բանջարանոց-բուտանների անհատական ծխային օգտագործման ձևը: Դա հնարավորություն էր տալիս զանազան միջոցներով բաժնեհողերը «զիշել» համագյուղացիներին, իսկ այդինելք վաճառել նույնիսկ ոչ համագյուղացիներին: Այս ամենը զարկ էր տալիս դրամական հարաբերությունների զարգացմանը, հողի կենտրոնացմանը կուլակային խավի ձեռքում: Ռեֆորմը որոշ կանոնավորում մտցրեց գյուղացիներից կալվածատերերի օգտին գանձվող նատուրալ բահրացի շափի մեջ, մուլքատիրական գյուղերում վերացրեց հողատիրոջ համար կատարվող մի զարք պարհակները և ծառայությունները: Ռեֆորմը իրավումք էր տալիս, որ գյուղացիները բանջարանոցներից, այգիներից մուլքատիրոջը հասնող բահրան վճարեին նաև դրամով և այլն:

Վ. Ի. Լենինը 1861 թ. ռեֆորմի մասին գրում է. ««Գյուղացիական ռեֆորմը» ճորտատերերի ձեռքով իրագործվող բուրժուական ռեֆորմ էր: Դա քայլ էր Ռուսաստանը բուրժուական միապետության վերածելու ուղիղվածությունը: Հասկանալի է, որ լենինյան այդ բնութագրումը վերաբերում էր նաև Հայաստանին:»

Սակայն ռեֆորմի բուրժուական էությունը Հայաստանում ավելի թույլ էր արտահայտված, քան եվրոպական Ռուսաստանում: Այսպես, 1881 թ. օրենքով ոռուական նահանգներում մտցվեց բաժնեհողի պարտադիր ետ գնում, որը, չնա-

շած իր ծանր պայմաններին, այնուհանդերձ գյուղացուն բարձնում էր իր փոքր բաժնեհողի սեփականատեր Մինչդեռ Հայաստանում այդ օրենքը չկիրառվեց: Մուսական գյուղական համայնքում կատարվում էին ամեն տեսակի առևտրական, վարձակալական, հողի գնման և վաճառքի գործարքերը, որոնց հետևանքով հողը կենտրոնանում էր մի խումբ ուղակների ձեռքում, իսկ Հայաստանում այդ գործարքները ատարգում էին սահմանափակ շափերով:

2. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՎ ՆԲԱ ԶԵՎԵՐԸ

Հետոեփորմյան Հայաստանում պահպանվում էին գյուղացիության նախկինում գյուղիուն ունեցող մասնատիրական, եկեղեցական, պետական և սեփականատիրական կատեգորիաները: Մասնատիրական խմբի մեջ էին մտնում կալվածատիրական, մուլքատիրական, թիուլական, եկեղեցական հողերի վրա բնակվող գյուղացիները և խիզանները: Պետական հողերից օգտվող գյուղացիները կոչվում էին պետական գյուղացիներ, իսկ սեփականատեր գյուղացիները՝ սեփականատիրական: Այս խմբերում ամենամեծ տոկոսը կազմում էին պետական գյուղացիները, հետո՝ մասնատիրական գյուղացիները, իսկ սեփականատերը կազմում էին Հայաստանի գյուղական բնակչության շնչին տոկոսը⁸:

Մասնատիրական գյուղացիների գերակշռող մասը կազմում էին մուլքադարական գյուղացիները, որոնք ապրում էին Հայաստանի կալվածատիրության մեծամասնությունը կազմող և այսպես կոչված բարձր գասին պատկանող մուլքատերերի հողերի վրա: Այդ գյուղացիները կալվածատերներում ուղագատիրոջ հողից օգտվելու համար վճարում էին ստացված բերքի ^{4/30-րդ} մասը: Մուլքատիրական, ինչպես նաև բեկային-աղալարարական գյուղացիները ցարական կառավարության կողմից պաշտոնապես կոչվում էին տիրունական հողերի վրա բնակեցված պետական գյուղացիները (ոսքելանե),

⁸ Արևելյան Հայաստանի գյուղացիության տարբեր կատեգորիաների հողատիրության մասին մանրամասն տես Վ. Հ. Թշուննի, Ուրվագեր Հայաստանի գյուղացիության պատմության, Երևան, 1968, մաս Բ:

իսկ 1870 թ. ուժորմից հետո սկսեցին կոչվել «ժամանակավոր» կախյալ գյուղացիներ:

Մովքատիրական գյուղացիների օգտագործման տակ գտնվող հողատարածությունների մասին կան զանազան և նույնիսկ իրարամերժ տվյալներ: Այսպես, Անդրկովկասյան վիճակագրական կոմիտեի կողմից 1893 և 1899 թթ. հրատարակված ժողովածուները, հիմնվելով հաշտարար միջնորդների՝ կանոնագրերից վերցրած տվյալների վրա, նշում են, որ կալվածատիրական գյուղացիների ծխաբանակը Երևանի նահանգում եղել է 11 515, որոնք ունեցել են 52 918 արական շունչ, նրանց բաժնեհողերի տարածությունը կազմել է 101691 դեսյատին⁹: Ուրեմն, 1870—1880-ական թվականներին Երևանի նահանգում կալվածատիրական գյուղացիության յուրաքանչյուր ծխին միշին հաշվով ընկնում էր 8,83 դես., իսկ արական շնչին՝ 1,92 դես. բաժնեհողը Սահայն այդ տարածությունից եթե հանենք 9363 դես. գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողը և սակավ եկամտաբեր 16223 դես. արոտավայրերը, ապա գյուղացիության օգտագործմանը կրծնա միայն 76105 դես. կամ ծխին 6,6 դես. և արական շնչին 1,43 դես. վարելահող, այդիների հող, տնատեղ և խոտհարք: Միաժամանակ պետք է նշել, որ դրանից բացի, գյուղացիների ու կալվածատերերի «ընդհանուր» օգտագործմանն է պատկանել 36057 դես. արոտավայր, որից օգտվելու համար գյուղացիները կախված են եղել կալվածատերերի կամայականություններից:

Հետոքիրոմյան շրջանում Երևանի նահանգում եղած կախյալ գյուղացիության հողատիրության մասին համարյանույն տվյալներն են տալիս նաև Օրեստ Սյոմինը, ըստ որի գյուղացիական 11699 ծխեր ունեցել են 98264 դես. Հող, Սե-

⁹Տե՛ս «Сборник стат. данных...», «Сведения о числе государственных крестьян, живущих на владельческой земле в губерниях Бакинской, Елисаветпольской и Эриванской, с показанием количества десятин земли, находящейся в наделе или пользовании у называемых крестьян, а также размера и вида повинностей, уплачиваемых крестьянами за эти земли», Тифлис, 1893 г. (Յետագայում «Сведения о числе гос. крестьян...»).

ռալը, ըստ որի 9508 ծխեր ունեցել են 101687 դես. Հող, Ավալիանին և ուրիշներ¹⁰: Ինչ վերաբերում է սովետահայ հետագուղներին, ապա նրանք (Վ. Խշտունի, Ա. Սամայան, Օ. Շովշանիսյան, Ա. Մարուխյան) հենվում են Անդրկովկասի հիմակագրական կոմիտեի կողմից 1893 և 1899 թթ. հրատարակված ժողովածուների տվյալների վրա:

Այն, որ Երևանի նահանգի մովքադարական գյուղացիների օգտագործման տակ իրոք եղել է շուրջ 100000 դես. Հող, նայում են նաև մի շարք այլ աղբյուրներ: Այսպես, գյուղատեսության կարիքներն ուսումնասիրող Երևանի նահանգական կոմիտեն 1902—1903 թթ. մովքատիրական-գյուղատիթյան հողաքանակը նշում է 76896 դես.¹¹: Նույն թիվն է այլիս նաև Պետերբուրգի «Նովոյե վրեմյա» լրագրի թղթակցը 1911 թ. հունվարի 10-ին թիֆլիսից ուղարկած հաղորդման մեջ¹²: Եթե ի նկատի ունենանք, որ այդ տվյալներում բարեկայում են 16223 դես. արոտավայրերն ու 9363 դեսյատին ոչ պիտանի հողերը և եթե 76896 դեսյատինին ավելացնենք սրանց գումարը, ապա կստանանք մոտավորապես այն թիվը, որը նշված է վերոհիշյալ ժողովածուներում: Երևանի նահանգի գյուղացիական գործերի ատյանի կողմից 1906 թ. փոխարքայի գրասենյակին ներկայացրած արժանահավատ փաստաթղթերից մեկում մովքատիրական գյուղացիության հողաքանակն առանց արոտավայրերի հիշատակված է 87970 դես.¹³, եթե դրան ավելացնենք 16223 դես. արոտավայրերը, ապա գումարը կլինի մոտ 104 193 դես.:

Մովքատիրական գյուղացիության հողաքանակի մասին պահ բան են ասում Կովկասի փոխարքայության գրասենյակի ոյն բազմաթիվ փաստաթղթերը, որոնք ստեղծված են գլխա-

¹⁰Տե՛ս Орест Семин, Великая годовщина, Киев, 1911, է 35.

¹¹Լ. Сегаль, Крестьянское землевладение в Закавказье, Тифлис, 1912, է 72, С. Л. Авалиани, Крестьянский вопрос в Закавказье, Одесса, 1914, է. 3, է 64 և է. 4, է 2:

¹²Տե՛ս «Извлечения из журналов местных комитетов...», է 2 11—12:

¹³ՎՍՀՀ ԿՊՊԱ, ֆ. 13, գ. 7, գ. 2543, թ. 126:

¹⁴Նույն տեղում, շ. 2540, թ. 19—20:

Վորապես հարկային հարստահարումների նպատակով։ Կամկած են Հարուցում նաև կանոնագրերի տվյալները։ Առվայնիսկ ցարական շինովնիկներն են նշում նրանց մեջ եղած թերություններն ու մխալները, Հաճախ աշխաչափով գյուղացիներին բաժնեհողեր առանձնացնելը և այլն։ Սակայն կանոնագրերում թույլ տրված սխալների հետ չի կարելի համեմատել այն խոշոր կեղծիքները, որ կատարում էին ցարական ֆինանսական օրգանները, հարկային տեսուչները, որոնք գյուղացիական բաժնեհողերի մասին ուռմացված տվյալներ տալով, աշխատում էին հարկերի ու տուրքերի միջոցով մեծացնել պետության հասույթները։ Օրեստ Սյոմինը և Ավալիանին իրավամբ գտնում են, որ պետական պալատը հարկային նորադատակներով կախյալ գյուղացիների հողաքանակը Երևանի նահանգում արհեստականորեն մեծացնում է և ցուց տալիս 137199 դեմ։ Փոխարքան ևս 1909 թ. գրում էր, որ ետ գնվող հողերի քանակը Երևանի նահանգում կազմում է 137200 դեմ.¹⁴ Հասկանալի է, որ ցարական ֆինանսական օրգանները հարկային հարստահարման նպատակով գյուղացիական 101.000 դեմ։ Հողաքանակի վրա ավելացնում էին փաստությն կալվածատիրական՝ 36000 դեմ։ «ընդհանուր» օգտագործման տակ գտնվող արոտավայրերը։ Սակայն ցարական պաշտոնյաները շահմանափակվեցին դրանով։ 1907—1914 թթ. գյուղացիական հողատարածությունները հասցրին արդեն մոտ 358000 դեմ։¹⁵

Ծյու տվյալների բաղդատումից մենք եզրակացնում ենք, որ Երևանի նահանգում մուլքատիրական գյուղացիության օգտագործած հողաքանակի մասին համեմատաբար ճիշտ տեղեկություններ են տալիս 1893 և 1899 թթ. վիճակագրական ժողովածուները։ Այդ ժողովածուներում գյուղացիության հողաքանակը հաշվվում է շուրջ 100000 դեմ։

Գյուղացու բաժնեհողի շափի, նրա հողային բավարարվածության մասին քաղաքիար կազմելու համար անհրաժեշտ է

¹⁴ ՎՍՀՀ կՊՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 1042, թ. 57։

¹⁵ Տե՛ս «Կավազական կալենդար ու 1907 թ.», 2-րդ բաժին, էջ 72—79։ և «Կ. Կ. հա. 1914», վիճ. բաժին, էջ 154—155։

հմանալ նաև մեր ուսումնասիրած ժամանակաշրջանում ամսիյալ գյուղացիական ծիսերի քանակը Երևանի նահանգում։ Այդ մասին որոշակի տվյալներ Այնելու հնտեանքով մենք գիմում ենք անուղղակի հաշվումներին։ Այսպես, գյուղատնտեսության կարիքներն ուսումնասիրող Երևանի նահանգական կոմիտեն 1902—1903 թթ. գրում էր, որ Երևանի նահանգում 20-րդ դարի հենց սկզբին գյուղացիական 99974 ծիսերից 17221-ը մուլքատիրական գյուղացիական ծիսեր են եղել¹⁶։ Այսպիսով, ընդունելով գյուղացիական ամբողջ ծիսերակալ 100000, գտնում ենք, որ նահանգում պետական և մուլքատիրական գյուղացիության ծիսերի տոկոսը համապատասխանաբար կազմել է 82,8 և 17,2։ Մեր ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանի վերաբերյալ մոտավոր տվյալներ ստանալու համար մենք հիմք ենք ընդունում այս տոկոսները։ Ենելով այն բանից, որ ըստ պաշտոնական հայուրդորումների¹⁷ գյուղացիական ծիսերի ընդհանուր քանակը Երևանի նահանգում եղել է 107647, եզրակացնում ենք, որ մուլքատիրական գյուղացիության ծիսերակալը կազմել է դրա 17,2 տոկոսը կամ 18514 (1870—80-ական թվականների համեմատ աճը կազմել է 60,4 տոկոս), իսկ պետական գյուղացիների ծիսերակալը՝ դրա 82,8 տոկոսը կամ 89133։

Այսպիսով, 1870—1880-ական թվականներից մինչև 1907—1914 թվականները ընկած ժամանակամիջոցում խիստ կերպով կրճատվում է կախյալ գյուղացիական յուրաքանչյուր ծիսին ընկնող հողաքանակը։ Երևանի նահանգում 1870—80-ական թթ. 11515 կախյալ գյուղացիական ծիսեր դաշտեին 101691 դեմ։ բաժնեհող և յուրաքանչյուր ծիսին միշին հաշվով ընկնում էր 8,83 դեմ., 1907—1914 թթ., երբ ծիսերի քանակը հասնում էր 18514-ի, յուրաքանչյուր ծիսին ընկնող քանեհողի քանակը իշխում է մինչև 5,48 դեսյատինի։ Եթև հաշվի ազնենք, որ դրա մեջ մտնում էր նաև 9363 դեմ։ Երկրագործության համար ոչ պիտանի հողը, ապա գյուղացիա-

¹⁶ Տե՛ս «Պամятная книжка Эриванской губернии на 1904 г.», Заключение, էջ 5—6 և «Извлечение из журналов местных комитетов...», էջ 11—12։

¹⁷ Տե՛ս «Պաмятная книжка Эриванской губернии на 1914 г.».

կան յուրաքանչյուր ծխին ընկնող բաժնեհողն ավելի կկըր-
ճատվի: Երեանի նահանգի՝ ՀՍՍՀ-ի մեջ մտած շրջաններում,
ըստ Անդրկովկասի վիճակագրական կոմիտեի 1893 և 1899
թթ. ժողովածուների տվյալների, մուլքատիրական գյուղա-
ցիության 5284 ծխեր ունեցել են 33052 դես. Հող և յուրա-
քանչյուր ծխին միջին հաշվով ընկել է 6,25 դեսյատին բաժ-
նեհող: Խսկ 1907—1914 թթ. ընթացքում, երբ գյուղացիու-
թյան ծխաքանակը հասնում էր 8479-ի, յուրաքանչյուր
ծխին ընկնող հողաքանակն իջնում էր մինչև 3,89 դես.:
Այսպիսով, տարեցտարի ուժեղանում էր մուլքատիրական
գյուղացիության սակավահողությունը, հողազրկումը, մեծա-
նում էր նրա տնտեսական կախվածությունը կալվածատերե-
րից ու կուլակներից, որոնք դաժան շահագործման միջոցով
քամում էին գյուղացու արյունը, քայլքայում նրա տնտեսու-
թյունը:


Երեանի, ինչպես նաև Բաքվի և Ելիզավետպոլի նահանգ-
ներում կային շատ հողատերեր, որոնց կալվածատիրական
բարձր դասին պատկանելու իրավունքը ցարական ադմինիս-
տրացիան չէր ճանաչել: Նրանց տիրույթներում բնակվող
գյուղացիների վրա 1870 թ. մայիսի 14-ի օրենքը չէր տա-
րածվել, 1877 թ. նոյեմբերի 5-ին հրապարակվեցին հատուկ
կանոններ այդ գյուղացիության հողաշինարարության մա-
սին, որոնք որոշ հարցերում տարբերվում էին 1870 թ. մա-
յիսի 14-ի օրենքից: Այսպես, 1877 թ. կանոններով գյուղա-
ցիների սեփականություն ճանաչվեցին նրանց օգտագործման
տակ գտնվող տնատեղերը, այգիները: Կալվածատիրոջը նր-
րանք դրամական բահրա չէին վճարում, իսկ բերքից տալիս
էին $\frac{4}{30}$ մասը: Գյուղացիներն իրավունք ունեին պահանջելու
յուրաքանչյուր արական շնչի համար 5 դեսյատին հող և
այլն: Խօսրկե, այս արտոնյալ վիճակը գյուղացիների համար
միայն թղթի վրա էր: Նրանց կացությունը նման էր բարձր
դասին պատկանող կալվածատերերի հողերի վրա ապրող
գյուղացիների դրությանը: Այդ երկու կարգի կալվածատիրա-
կան գյուղացիները սովորաբար կոչվում էին մուլքատիրա-
կան գյուղացիներ: Յավոք, բարձր դասին չպատկանող կալ-
վածատիրական հողերի վրա բնակվող գյուղացիական ծխե-

ի և նրանց հողային բավարվածության մասին մենք չկարո-
ղացանք հայտնաբերել առանձին տվյալներ: Սակայն մեր
կողմից կատարված հաշվումները հավանաբար պետք է վե-
րաբերեն երեանի նահանգում բնակվող կալվածատիրական
բոլոր գյուղացիներին:

Հարկ է նշել, որ երեանի նահանգից Հայկական ՍՍՀ-ի
աերիտորիայում ընդգրկված շրջաններում մուլքատիրական
141 գյուղերից 41-ը կոչվում էին պետական-մուլքատիրա-
կան: Նրանցից ստացած եկամուտը բաժանվում էր պետու-
թյան ու մուլքադարների միջև: Հողի եկամուտներից գյուղա-
ցիները վճարում էին արքունիքին՝ պետական հասության
տուրք, իսկ մուլքատիրոջ՝ մուլք: Այսպիսի գյուղերում հողի
խոշոր մասը սովորաբար մուլքատերերին էր պատկանում,
իսկ արքունիքի մասն առաջացել էր նահանգը Ռուսաստա-
նին միանալու ժամանակ, երբ առանձին մուլքատերեր հե-
ռացել և զրկվել էին իրենց իրավունքներից: Սովորաբար
աղբյուրներում պետական-մուլքատիրական գյուղերը նշվում
են մուլքատիրականի հետ միասին¹⁸:

Անցնելով թիուղարական գյուղացիներին, պետք է նշել,
որ նրանք կազմում էին կալվածատիրական գյուղացիության
չնչին տոկոսը, բնակվում էին թիուղատերերի հողերի վրա
և թիուղատիրոջ հողից օգտվելու համար տարեկան վճարում
էին բերքի $\frac{3}{30}$ -ը և ծխից 2ռ. 50կ. դրամական բահրա Հողա-
տիրության թիուղական ձեր գալիս էր դեռ պարսկական տի-
րապետության շրջանից և, ի տարբերություն մուլքատիրա-
կանի, համարվում էր ձևականորեն ոչ ժառանգական, ցմահ
և պետք է վերացվեր թիուղի իրավունք ստացած պաշտոն-
յայի մահից հետո: Իրականում թիուղատերերը ևս մուլքա-
տերերի նման ժառանգական հողատերեր էին դարձել և դա-
ժանորեն շահագործում էին կախյալ գյուղացիությանը: 1870
թ. մայիսի 14-ի օրենքը թիուղային գյուղերի վրա շտարած-
քեց, քանի որ նրանց նկատմամբ թիուղատերերը ժառանգա-
կան հողատիրության իրավունք չունեին: Ցարական կառա-

¹⁸Տիւ Վ. Բ. Քաջուն, Ագրарная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX в., Երևանի ժողովածու (Հետապայում՝ «Ագրարная политика царизма...»):



պարությունը 1875 թ. օրենք հրատարակեց, որով վերացվում էր թիուզատերերի իրավունքը հողի նկատմամբ. նրանք ցմաք պետք է նպաստ ստանային պետական գանձարանից: Սպակայն այն չկենսագործվեց, և թիուզական իրավունքը շարժմակվեց մինչև 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը:

Երևանի նահանգում հետևեփորմյան շրջանում կային թիուզային 6 գյուղեր, որոնցից մեկը էջմիածնի, իսկ 5-ը՝ Երևանի գավառներում, ընդ որում գյուղացիական ծխերի թիվը նրանցում 1870 թ. կազմում էր 380, 1866 թ.¹⁹ և 1910 թ.²⁰ Մեզ շաջողվեց որևէ տվյալ գտնել թիուզային գյուղացիության բաժնեհողերի տարածության մասին: Սովորաբար թիուզական գյուղերը միաժամանակ նաև մուլքատիրական էին, և փաստաթիթերը նրանցում ծխերի որոշակի բաժանում ըստ թիուզականի կամ մուլքատիրականի ցույց շեն տալիս: Ընդհանուր առմամբ թիուզական հողերն այնքան քիչ էին, որ նրանց տարածության մասին որոշակի տվյալների բացակայությունն առանձին նշանակություն չունի հողատիրության ընդհանուր վիճակի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար:

Ֆեոդալական կախյալ գյուղացիության թվին էին պատկանում նաև վանքապատկան գյուղացիները: Նրանք ապրում էին էջմիածնի հողերի վրա և շահագործվում հայ հոգևոր հաստատությունների կողմից: Ռեֆորմի անցկացման տարիներին այդ գյուղացիների ծխերի քանակը եղել է 1206²¹, նրանք ունեին բաժնեհող և իրենց կացությամբ նման էին կալվածատիրական-մասնատիրական գյուղացիներին: Վանքապատկան գյուղացիության հիմնական մասը բնակվում էր էջմիածնի կաթողիկոսարանի անմիջական սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Եղվարդ, Մուղնի գյուղերում և գյուղացիության այլ կարգերի համեմատ առավել ծանր շահագործման պայմաններում էր գտնը: Այդ 5 գյուղերում, ինչպես հաղորդում է Երևանի նահանգի գյուղացիական գործերի ատյանը (հիմնվում էր սի-

նողի տվյալների վրա), եղել են 2030 գյուղացիական ծխեր, որոնք ունեցել են 21105 դես. բաժնեհող²²: Ճիշտ է, գյուղացիները պետական հարկերից ազատ էին, սակայն նրանք այսպիսի ծանր պարտավորություններ ունեին վանքի նկատմամբ, որ կիսաճորտային վիճակում էին և տնտեսապետայքայիման էին ենթարկվում: Հատ սինողի վերոհիշյալ տրվյալների, գյուղացիական յուրաքանչյուր ծխին միջին հաշվով ընկնում էր մոտ 10,4 դես. բաժնեհող: Մեզ թվում է, որ այդ թվերը ուսմացված են, նրանցում նշված են նաև երկրագործության համար ոչ պիտանի հողերը՝ ետ գնման գործարքի միջոցով վանքին մեծ եկամուտներ ապահովելու նպատակով: Հօգուտ ալդ ենթադրության է խոսում նաև այն փաստը, որ գյուղացիությունը տնտեսական խիստ ծանր պայմաններում էր գտնվում և պայքար էր մզում վանքի դաժան շահագործման ու կամայականությունների դեմ: Վանքապատկան գյուղացիության մի փոքր մասն էլ բնակվում էր զանազան վանքերին ենթակա հողերի վրա և շահագործվում էր ինչպես «ժամանակավոր» պարտավորյալ և կախյալ գյուղացիները: Այդ կարգի գյուղացիները Երևանի նահանգում, կանոնագրերի համաձայն, վճարում էին մուլք, կատարում էին պիտական և զեմստվային հարկային պարտականությունները և, մեր կարծիքով, մտնում էին մուլքատիրական գյուղացիության ընդհանուր քանակի մեջ, քանի որ 1912 թ. գեկանմբերի 20-ի օրենքով եկեղեցապատկան գյուղացիների ետքնման հատուկ կանոններ մշակվեցին միայն էջմիածնապատկան հինգ գյուղերի մասին, իսկ մյուս բոլոր եկեղեցապատկան-վանքապատկան գյուղերը պետք է ետ գնեին իրենց բաժնեհողերը ընդհանուր հիմունքներով: Նրանց հողերն ինչպես Երևանի նահանգում, այնպես էլ Հայաստանի մյուս շրջաններում չեն գտնվում կալվածատիրական գյուղացիության հողերից: Այս կարգի գյուղացիությունը փոքր տոկոս էր կազմում. եկեղեցապատկան նման կարգի գյուղերից ամենամեծը Բշնին էր, որը XX դարի սկզբին ուներ 290 ծուխ²³:

¹⁹ Տե՛ս նույնը:

²⁰ Տե՛ս Վ. Քաջանյան, Կրестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947:

²¹ ՎԱՍՀ, ԿՊՊ, ֆ. 13, ց. 7, գ. 2540, թ. 210—211:

²² Տե՛ս «Аграрная политика царизма...», էջ 351:

Վանքապատկան գյուղացիության դրությունը ծանր էր նաև կոռու շրջանում: Օձունի, Սանահինի, Հաղպատի վանքերի հողերից օգտվող մի քանի տասնյակ տնտեսություններ սահմանված նատուրալ բահրայից բացի՝ պարտավոր էին կատարել նաև զանազան աշխատավճարներ ու դրամավճարներ, ինչպես և սակավահողությունից դրդված, ստրկական պայմաններով վարձակալել կալվածատիրական ու վանքապատկան հողեր:

Լոռու շրջանում հայտնի էին «ժամանակավոր»—պարտավորյալ գյուղացիները, որոնք առաջացել էին 1864 թ. օրենքով և ապրում էին կալվածատիրական հողերի վրա: Այդ շրջանի կալվածատիրական գյուղերում հողային հարաբերությունները նման էին Վրաստանի ճորտատիրական հարաբերություններին: Գյուղացին և տնտեսական, և արտատնտեսական ուժեղ կախման մեջ էր գտնվում կալվածատիրոցից: Լոռիում կալվածատիրությունը, ի տարբերություն Երևանի նահանգի մանր և միջին հողատերերի, խոշոր հողային տարածություններ ուներ և պետական օժանդակության պայմաններում բռնի կերպով մեծացնում էր իր հողային տիրությունները՝ ի հաշիվ գյուղացիական բաժնեհողերից կատարվող զավթումների: 1864 թ. «ազատագրական» ռեֆորմի հետեւ վնանքով կալվածատերերը նոր հափշտակումներ կատարեցին գյուղացիական բաժնեհողերից, որը առաջացրեց ուժեղ սակավահողություն և հողագործություն:

Պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա կատարած հաշվումները ցույց են տալիս, որ կոռու շրջանում եղել են 10 կալվածատիրական գյուղեր (Աքորի, Հաղպատ, Որմակ, Սանահին, Արդվի, Մաթեր, Իլմազի, Լամբարտ, Ճոճկան և Ճոճկան-Այրում), որոնցում 16 կալվածատերեր ունեցել են 208 «ժամանակավոր»—պարտավորյալ գյուղական ծուխ՝ 1060 դես. բաժնեհողով²³: Այսպիսով, գյուղա-

²³Տե՛ս «Сборник стат. данных...», «Сборник статистических сведений о частном землевладении в Тифлисской и Кутаисской губерниях», Тифлис, 1910 (հետագայում՝ «Сборник статистических сведений...»):

ցիական յուրաքանչյուր ծխին միջին հաշվով ընկնում էր միայն 5 դես. բաժնեհող: Եթե ընդունենք նույնիսկ, որ հետագա տարիներին գյուղացիների կողմից օգտագործվող հողաքանակը անփոփոխ է մնացել, ապա միայն ծխերի աճի հետևանքով նրանց բաժնեհողերը խստ կրճատվում էին: Այսպես, արդեն 1886 թ. ծխամատյանները կազմելիս, կոռու շրջանի կալվածատիրական միայն 6 գյուղերում (առանց կամբալու, Իլմազու, Ճոճկան-Այրում և Մաթեր գյուղերի) «ժամանակավոր»—պարտավորյալ գյուղացիների ծխաքանակը նշվում է 256՝ կանոնագրերի կազմելու ժամանակ եղած 160-ի փոխարեն: Եթե կոռու համար ևս հիմք ընդունենք կալվածատիրական գյուղացիության ծխերի աճը 1870—80-ական թվականներից մինչև 1907—1914 թթ. 60,4 տոկոս (որն, ինչպես երեսում է 1886 թ. ծխամատյանների մեջ 6 գյուղերի ծխաքանակի աճից, կոռու համար իրականից ցածր տոկոս է), ապա կստանանք, որ մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում կոռիում «ժամանակավոր»—պարտավորյալ գյուղացիների ծխաքանակը մոտավորապես եղել է 334: Յուրաքանչյուր ծխին միջին հաշվով ընկել է 3,18 դես. բաժնեհող: Այստեղից հեշտ է եզրակացնել, թե ինչպիսի ծանր տնտեսական վիճակում էին գտնվում կոռու գյուղացիները, որոնք կատարում էին բազմաթիվ կիսաճորտային պարհակներ, աշխատավճարումներ ինչպես բաժնեհողերի, այնպես էլ վարձակալությամբ վերցրած չնշին հողակտորների դիմաց:

Լոռիում կային նաև խիզաններ, որոնք կալվածատիրական հողերի վրա ապրող հողագործք, անժամկետ վարձակալներ էին: Նրանք տասնյակ տարիներ շարունակ ձևականություն համարվելով «ազատ» գյուղացիներ, «պայմանագիր» էին կնքում կալվածատիրոջ հետ նրա հողերի վարձակալության մասին: Վարձակալության «պայմանագրեր» նորոգվում էին յուրաքանչյուր մի քանի տարին մեկ անգամ՝ առավել ծանր պայմաններով: Խիզանների կախվածությունը կալվածատիրոջից հետևանքը էր այն բանի, որ տարեցտարի մեծանում էր հողագործք գյուղացիների թիվը և դրա հետ կապված անընդհատ բարձրանում էր հողի վարձագիրը: Խիզանը կալվածատիրոջ կամայականությամբ կարող էր հեռացվել

իր հողակտորից, իսկ դա նշանակում էր գրկվել տարիների ընթացքում ավյալ հողամասում մեծ շարչարանքով կառուցած տնից, տնամերձ տնտեսությունից: Խիզանների վիճակը վատացավ հատկապես 1864 թ. ուժորմից հետո, երբ շատ գյուղացիներ հողագրկվեցին, և հողի վարձակալման գներն արագ բարձրացան: Կալվածատերերին այդ պայմաններում օգուտ չէր հողը երկար ժամանակով տալ խիզաններին, այլ ձեռնառու էր հողը կարճ ժամկետներով, ավելի բարձր, աճող գներով վարձակալության տալ հողագուրկ գյուղացիներին: Քանի որ խիզանները չունեին իրենց իրավունքներն հողակտորների վրա ապացուցող փաստաթղթեր, ուստի կալվածատերերը մասսայաբար սկսեցին քշել նրանց իրենց հողերից: Դա այնպիսի շափեր ընդունեց և գյուղացիության գրժոհության պոռթկման այնպիսի հող առաջացրեց, որ նույնիսկ ցարական ադմինիստրացիան ստիպված եղավ միջամտել: 1891 թ. օրենք հրատարակվեց, որով խիզանները հինգամաններով պետք է մնային որպես իրենց հողակտորների վարձակալներ: Կալվածատերը կարող էր քշել խիզաններին իր հողից այն դեպքում, եթե վճարեր նրանց հողի մշակման մեջ ներդրված բարեկավումների և այդ հողակտորի վրա ունեցած շինությունների արժեքի կրկնակին: Կալվածատերերի բողոքի հետևանքով որոշվեց վճարել ոչ թե կրկնակին, այլ արծեքը միայն, որը, իհարկե, մնաց թղթի վրա և որևէ լուրջ սահմանափակում կալվածատիրական կամայականությունների մեջ փաստորեն շմտցրեց: Այսպես, Սեծ Ղարաբիլիսագյուղի խիզանները, որոնք 1860-ական թ. վարձակալությամբ ապրում էին իշխան Օրբելիանիների հողերում և 30-ամյա պայմանագրի լրանալուց հետո շհամաձայնվեցին իշխանուհի Բագրատիսն-Մուխանսկայայի պահանջած նոր բարձր վարձագնին, զրկվեցին ներկար տարիներ իրենց օգտագործած հողերից, իսկ տնամեղերը մնացին նրանց ձեռքին՝ ծխից տարեկան 1 ոռուլի գանձերու խիստ ծանր պայմանով: Այդ խիզանների կեսը ստիպված հեռացավ կարսի մարզը, իսկ մնացած 60 ծխերը տնտեսապես քայլայվեցին, ծանր կարգի, թշվառության մեջ ընկան: Ցարական գանգան հիմնարկներին տարիներ շարունակ ուղարկվող խնդրա-

գրերը մի կտոր հող տրամադրելու մասին մնում էին անհետանելի և կամ, ինչպես փոխարքան էր գրում 1907 թ., կարգագրություններ էին արվում ազատ հողամասեր «փնտրելու» և նրանց տեղավորելու համար^{24:}

XIX դարի 80-ական թվականներին կոռու շրջանում խիզանների ծխարանակը եղել է 368, իսկ նրանց վարձակալած հողի տարածությունը՝ 4733 դեսյատին և ծխին հասել է միշտին հաշվով 12,86 դես. Հող^{25:} Սա պաշտոնական վիճակագրության թվակածակած հողը կարգում և շատ հնարավոր է, որ իր մեջ պարունակած լինի նաև երկրագործության համար ոչ պիտանի հողային տարածությունները: Եթե խիզանների ծրխերի աճը մինչև 1907—1914 թթ. ընդունենք 60,4 տոկոս, ապա կստանանք, որ խիզանների 590 ծխեր ունեցել են 4733 դես. վարձակալած հող կամ յուրաքանչյուր ծխին միջին հաշվով 8 դես. ինչպես պիտանի, այնպես էլ ոչ պիտանի, վատորակ հող: Ընդ որում այդ հողի համար XIX դարի վերջերին խիզանները տարեկան վճարում էին կալվածատերերին ավելի քան 8500 ռ. և կատարում զանգան նատուրալ ու աշխատանքային պարհակները^{26:}

XX դարի սկզբներին խիզանների վիճակն իրականում ավելի վատ էր, որի հետևանքով նրանք կոռու գյուղացիության մայու կարգերի հետ միասին ակտիվ դասակարգային պայտարի ուղին բռնեցին:

Հայաստանի ֆեռղալական կախյալ գյուղացիներից հիշատակենք, վերջապես, աղալարական-բեկային գյուղացիներին: Նրանց մեջ էին մտնում գերազանցապես Զանգեզուրի և Ղազախի գավառների կալվածատիրական գյուղացիները: Զնայած 1870 թ. մայիսի 14-ի օրենքը տարածվեց նաև այդ գավառների վրա, բայց աղալարական-բեկային գյուղացիները փաստորեն շարունակում էին տնտեսական ու իրավական կախման մեջ մնալ հողատերերից և դաժան շահագործման ենթարկվել նրանց կողմից:

24 Տե՛ս «Ագրարная политика царизма...», էջ 231—232:

25 Տե՛ս «Сборник статист. данных...», Приложение I:

26 Նույն տեղում:

Մեր հաշվումները ցույց են տալիս, որ XIX դարի 70-ական թվականներին Զամբեզուրի գավառի՝ Հայկական ՍՍՀ-ի մեջ մտնող շրջաններում 4435 կախյալ-գյուղացիական ծխերը (13808 արական շնչով) ունեցել են 20531 դես. Հող: Գյուղացիական յուրաքանչյուր ծխին միջին հաշվով ընկել է 4,63 դես. և արական շնչին՝ 1,41 դես. բաժնեհող²⁷, այսինքն՝ փաստորեն ամեն մի ծխին շի հասել նույնիսկ այնքան հող, որքան, ըստ 1870 թ. օրենքի, կալվածատերերը պարտավոր էին թողնել 15 տարեկանից բարձր յուրաքանչյուր արական շնչին: Հողից օգտվելու դիմաց գյուղացին պարտավոր էր կալվածատիրոջը վճարելու միայն ստացած բերքի $\frac{1}{10}$ մասը, այլև կատարել այնպիսի պարտականություններ, որոնք ցույց էին տալիս ճորտային մնացուկների առկայությունը հատկապես աղալարական-բեկային գյուղերում: Դըրանցից որպես օրինակ կարելի է նշել այն փաստը, որ գյուղացին պարտավոր էր նատուրալ բահրան հասցնել կալվածատիրոջ կալվածքը մինչև 100—120 վերստ հեռավորության վրա: 1870 թ. օրենքից 20 տարի անց Զանգեզուրի 49 կալվածատիրական գյուղերից 7-ում չեին կազմվել կանոնագրերը: Գյուղացիների նախառեփորմյան վիճակի մեջ չեր մտել որևէ էական փոփոխություն կալվածատերերի նկատմամբ ունեցած պարտականությունների նորմավորման և կարգավորման գործում, խոշոր սողանցք էր թողնվել կալվածատիրական դաժան շահագործման ու կամայականությունների հետագա ուժեղացման համար:

Ղազախի գավառից Հայկական ՍՍՀ-ի մեջ մտած շրջաններում կալվածատիրական գյուղացիությունը գորեթե բացակայում էր: Գյուղացիների փերակշող մեծամասնությունը պետական հողերի վրա էր ապրում: Կալվածատիրական միակ Զորաբթան գյուղում կախյալ-գյուղացիական 55 ծխերունեին 324 դես. բաժնեհող, այսինքն՝ յուրաքանչյուր ծխին միջին հաշվով ընկնում էր 5,89 դես. Հող²⁸:

Սակայն ինչպես Զանգեզուրի, այնպես էլ Ղազախի կախ-

յալ-գյուղացիության տնտեսական վիճակի մասին գոնե մասմբ ճիշտ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հաշվի առնել բնակչության աճը 1870—80-ական թվականներից մինչև XX դարի սկիզբը ընկած ժամանակաշրջանը: Պայմանականորեն հիմք ընդունելով ժամանակավոր-կախյալ գյուղացիության աճը նույն ժամանակամիջոցում 60,4 տոկոս, գտնում ենք, որ 1907—1914 թթ. Զանգեզուրի և Ղազախի գավառների՝ ՀՍՍՀ-ի մեջ մտնող շրջաններում գյուղացիական ծխերի քանակը աճել և համապատասխանաբար կազմել է 7113 և 88, այսինքն՝ գյուղացիական յուրաքանչյուր ծխին Զանգեզուրում և Ղազախում միջին հաշվով ընկել է համապատասխանաբար 2,88 դես. և 3,68 դես. բաժնեհող:

Ինչպես Հայաստանի մյուս շրջաններում, այնպես էլ Զանգեզուրում ու Ղազախում գյուղացիությունը խիստ սակավահող էր, տնտեսապես բայցքայվում և հողագրկվում էր:

Ամփոփելով մասնատիրական գյուղացիության առանձին կարգերի հողատիրության վերաբերյալ մեր հաշվումները, ստանում ենք հետևյալ աղյուսակը:

ՀՍՍՀ-ի մեջ մտած շրջաններ	Ծխերի քանակը	Հողաբանական աշխատանքներում	Ցուրաքան- չյուր ծխին բնիքնող հողաբանա- կը.
1. Երևանի նահանգ	8479	33052	3,89
2. Լոռի ա.) «Ժամանակավոր»— պարտավորյալ գյու- ղացիներ բ). Խիզաններ	334 590	1060 4733	3,7 8,02
3. Զանգեզուր	7113	20531	2,88
4. Ղազախ	88	324	3,68
5. Էջմիածնապատկան հինգ գյուղեր	2030	21105	10,39

Հնդամենը	18634	80805	4,33

²⁷ Տե՛ս «Сборник статист. данных...», Приложение IV:

²⁸ Տե՛ս նույն տեղը:

Այսպիսով, Հայաստանում 1907—1914 թթ. մասնատիքական գյուղացիների 18634 ծիւեր ունեին 80805 դես. ամեն տեսակի հող և գյուղացիական յուրաքանչյուր ծուռ՝ միջին հաշվով 4,33 դես. բաժնեհող: Եթե նկատի ունենանք, որ 80805 դեսատինի մեջ մտնում էին նաև զգալի քանակությամբ երկրագործության համար ոչ պիտանի, քարքարոս տարածություններ և հաշվի առնենք նաև այն, որ էջմիածնի սինոդի կողմից ուղացված են էջմիածնապատկան հինգ գյուղերի բաժնեհողային տարածությունները և իրականից շատ բարձր են ցուց տրված խիզանների հողատիրության տվյալները, ապա առավել պարզ կդառնա, որ մասնատիքական գյուղացիության սակավահողությունն ու հողագրումն ավելի մեծ շափերի էր հաւել:

Դառնանք պետական գյուղացիների հողատիրության բընությամբ: Նպաստակես ասենք, որ դրանք այն գյուղացիներն էին, որոնք բնակվում էին պետական հողերի վրա և պետության օգտին կատարում էին որոշակի պարտականություններ՝ վճարում պետական հասութային տուրք, գեմսավային հարկ: Գյուղացիներն իրենց բաժնեհողերի սեփականատերը չին: Նրանք կախված էին ոչ միայն ցարական շինովնեկների, հարկային տեսուչների կամայականություններից, այլև խիստ սակավահողության հետևանքով դաժան շահագործման էին ննիքարկվում և կուլակության, և շրջակա կալվածատերերի կողմից:

Դեռական գյուղացիների հողաքանակի մասին աղբյուրները տալիս են զանազան, հաճախ միմյանց հակասող տրվայաներ: Դա բխում է ցարական իշխանությունների վարքայից, որոնք գիտակցաբար խեղաթյուրում էին իրական գծից, որոնք գիտակցաբար խեղաթյուրում էին իրական պատկերը, նպատակ ունենալով ուժեղացնել գյուղացիների հարկային հարստահարումը և խուզել նրանց բաժնեհողերը, հարկային հարստահարումը և խուզել նրանց անշատումը օգտվելով այն բանից, որ պետական գյուղացիների տարածությունների սահմանագործումը, նրանց անշատումը մասնատիքական և արքունի հողերից տարիներ շարունակ գգգվում էր:

Աւատմասիրողների մեծ մասը (Գոգիշալշվիլի, Ավալիանի, Վ. Ռշտունի, Հ. Թումանյան, Օ. Հովհաննիսյան), հենվե-

լով Անդրկովկասի վիճակագրական կոմիտեի 1899 թ. ժողովածուում զետեղված տվյալների վրա, նշում է, որ Երևանի նահանգում XIX դ. վերջերին պետական գյուղացիության 51120 ծիւեր ունեցել են 819924 դես. Հող կամ ծիւին ընկել է միջին հաշվով 16,04 դես. բաժնեհողով²⁹:

Մեր հաշվումները, որոնք կատարված են այդ նույն ժողովածուի տվյալների հիման վրա, ցուց են տալիս, որ XIX դարի 70—80-ական թվականներին Հայաստանում պետական գյուղացիության 51668 ծիւեր ունեցել են 862564 դես. Հող, յուրաքանչյուր ծիւին միջին հաշվով ընկել է 16,67 դես.; իսկ 232601 արական շնչերից յուրաքանչյուրին՝ 3,7 դես. բաժնեհողը եթե այդ քանակից հանենք 320878 դես. Հողագործության համար ոչ պիտանի տարածքը և անասնապահության համար փոքր նշանակություն ունեցող վատրակ և քարքարոս արոտավայրերը, ապա պետական գյուղացիների օգտագործմանը կմնա միայն 541636 դես. Հող կամ յուրաքանչյուր ծիւին՝ միջին հաշվով 10,48 դես. և արական շնչին՝ 2,32 դես. բաժնեհողը: Հետագա տասնամյակներում այդ հողատարածությունն ավելի է կրճատվում, մի կողմից, բնակչության բնական աճի, մյուս կողմից, ցարական «հողաշինարարական» քաղաքականության և կալվածատիրության ու կուպակության կողմից գյուղացիական հողերի հափշտակումների հետևանքով: Մեր հաշվումները այսուհետև ցուց են տալիս, որ Հայկական ՍՍՀ-ի տերիտորիայում պետական գյուղացիները կազմում էին ամբողջ գյուղացիության մոտ 70 տոկոսը: Նրանց ծիւաքանակը 1890-ական թվականներից մինչև 1910—1914 թվականները հասել է 51668-ից 79310 (կամ աճել 53,5 տոկոսով)³⁰, իսկ գյուղացիական յուրաքանչյուր ծիւին ընկնող միջին հողաքանակը 16,67 դեսյատինից իշել է մինչև 10,87 դեսյատինի: Եթե պետական գյուղացիության ընդհանուր հողաքանակից հանենք ներկագործության համար ոչ պիտանի 320878 դես. Հողը, կստանանք, որ 1910—1914 թթ. գյու-

²⁹ Տե՛ս նույն տեղը, Պриложение I:

³⁰ Տե՛ս, «Памятная книжка Эриванской губернии» на 1906, 1914 г., «Сборник статист. данных...», Приложение 1:

դացիական յուրաքանչյուր ծխին միջին հաշվով ընկնում էր միայն 6,86 դես. բաժնեհող: Ուրեմն պետական գյուղացիները նույնպես տառապում էին սակավահողությունից ու հողագրկությունից և այդ պատճառով հարկադրված էին վաշխառուական գներով վարձակալել կալվածատիրական ու կուլակային տարածություններու:

Պետական գյուղացիների հողատիրության ձեր հիմնականում համայնական էր և մասամբ միայն անհատական-ծխային: Համայնական հողատիրությունը ավելի շատ տարածված էր ինչնային և նախալեռնային շրջաններում, ուր գերիշխում էր հացահատիկային կուլտուրաների մշակությունը և գարգացած էր անհանապահությունը: Այդ վայրերում անհատական-ծխային հողատիրությունն կար միայն տնատեղերի ու տնամերձ փոքր հողակտորների նկատմամբ: Անհատական-ծխային հողատիրությունը գերազանցապես տարածված էր հարթավայրային շրջաններում, ուր մեծ տեղ էին գրավում այգեգործությունը, տեխնիկական և այլ թանկարժեք կուլտուրաների մշակությունը, որոնք մեծ աշխատանք և խնամք էին պահանջում: Մովքատիրական գյուղերում, որոնք հիմնականում հարթավայրային շրջաններում էին գտնվում, գերազում էր անհատական-ծխային հողատիրությունը, և հողի վերաբաժնումներ փաստորեն տեղի չեին ունենում: Առևտրային հողագործության զարգացմանը զուգընթաց ուժեղանում էր անհատական-ծխային հողատիրությունը, վերաբաժնումներից ավելի շատ հողեր էին ըսկըսում գուրս մնալ, իսկ այդ բոլորը նպաստում էր հողի առուծախի, գյուղում դրամական հարաբերությունների հետագա զարգացմանը: Հողատիրության համայնական և անհատական-ծխային ձեռքը գյուղերում խառը վիճակում էին հանդիս գալիս. ընդ որում, եթե նախալեռնային և լեռնային շրջաններում գյուղական համայնքի տնօրինության տակ էին գտնվում վարելահողերը և արոտավայրերը, ապա հարթավայրային շրջաններում՝ գերազանցապես արոտավայրերը:

XIX դ. վերջերին ցարական աղմինիստրացիան համայնքի պաշտպանության համար մատրեց ըստ շնչերի (արական կամ երկսեռ) վերաբաժնության կարգը կամ, ինչպես ըն-

դունված էր ասել, «նախարաբաժանությունը»: Դրա համաձայն մի քանի տարին մեկ անգամ գյուղական ժողովի որոշմամբ պետք է տեղի ունենար հողի վերաբաժնումը ըստ առկա շնչերի՝ հողը «հավասար և արդարացի» հիմունքներով բոլոր գյուղացիների մեջ բաժանելու, նորա կենտրոնացումը կուլակների, վաշխառումների ձեռքին թույլ շտալու համար և այլն: Իրականում «նախարաբաժանությունը» գյուղերուն ուներ միայն թթվի վրա. տասնյակ տարիներ գյուղերում վերաբաժնումներ տեղի չեին ունենում, քանի որ լավագույն հողերը գանգզան ճանապարհներով իրենց ձեռքում կենտրոնացրած գյուղական բուրժուազիային այդ օգուտ չեր:

Զնայած պետական գյուղացիները մասնատիրական գյուղացիների նման չեին գտնվում կալվածատերերի կամ եկեղեցու կամայական ճնշման ու շահագործման տակ, սակայն իրենց իրական վիճակով քիչ էին տարբերվում նրանցից: Հաճախ պետական գյուղացիները ընկնում էին թե՛ պետության, թե՛ կալվածատիրության և թե՛ աճող կուլակության ճիրանները: Անկազմահողությունն ու հողագրկությունը ստիպում էին նրանց դիմել ստրկական վարձակալության, Հաճախ այդ գյուղացիները հարկադրված էին լինում վաճառել կամ պարտքի դիմաց տալ իրենց շնչին հողաբաժնում, տնտեսապես քայլայվել ու վերածվել բատրակի և կամ պրոլետարի:

Սեփականատեր գյուղացիների մասին, ցավոք, քիչ տեղեկություններ ունենք: Ա. Բարբայանի հաշվումներով, XIX դ. վերջերին Հայաստանում նրանք կազմում էին 203 տնտեսություն, որոնք բնակվում էին հիմնականում Ղափանի, Ալավերդու, Սիսիանի և Աղտարակի շրջաններում³¹: Թիֆլիսի պետական պալատի տվյալներով, 1907 թ. երեսնի նահանգում սեփականատեր գյուղացիներն ունեին 22274 գետ: Հող³²: Անհավանական է, որ 203 գյուղացիական տնտեսություններն ունենային այցափակ հող: Այդպիսի դեպքում յուրաքանչ-

³¹ А. Бадалян, Население Армении со временем присоединения ее к России и до наших дней. (անգլ. ՀԱՅՈՒ ԿԱ Տեղեկագիր, Հայապահկան գիտություններ, 1953, № 5, էջ 63):

³² ՎՍՀՀ ԿՊԿ, ֆ. 13, ց. 7, գ. 2653, թթ. 19—20:

յուրը կունենար ավելի քան 100 դես., մի բան, որ շունեին կալվածատիրական բազմաթիվ առանձին տնտեսություններ; Ճիշտ է, հետոեփորմյան շրջանում եղան փրկագնումների դեպքեր, բայց գյուղացիների փրկագնած բոլոր հողատարածությունները կազմում էին 285 դես. միայն³³; ինչ զերաբերում է կուղակային տնտեսություններին, որոնք կենտրոնացրել էին իրենց ձեռքբում հողային մեծ տարածություններ, նրանք իրավապես դեռ հանդիսանում էին համայնքի անդամներ, բայց ոչ սեփականատերեր: Յարական պաշտոնական վիճակագրությունը, ամենայն հավանականությամբ, սեփականատեր գյուղացիներ էր համարել նաև ոչ արտոնյալ դասին պատկանող հողատերերին: Այդ պատճառով էլ սեփականատերերի հողատարածությունները հասցրել էին 22774 դես.: Իրականում սեփականատեր գյուղացիները, կազմելով Հայաստանի գյուղական ազգաբնակչության խիստ աննշան մասը, ունեին այնքան թիւ տարածություն, որը չէր կազմում երկրի ամբողջ տարածության անգամ կես տոկոսը:

3. ԿԱՂԱԾԱՏԻՐԱԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ-ՎԱՆՔԱՄԱՏԿԱՆ ԵՎ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Կալվածատիրական հողատիրության մասին եղած վիճակագրական տվյալները աղքատ են, իսկ պետական պատաների կողմից հարկային նպատակների համար կազմված տվյալները՝ քիչ վստահելի: Այնուամենայնիվ, մեր ձեռքի տակ գտնվող աղբյուրները քննադատաբար բաղդատելով, փորձ է արվում գոնե մոտավոր կերպով ցույց տալ կալվածատիրական հողատիրության պատկերը:

Հատ Անդրկովկասի վիճակագրական կոմիտեի 1899 թ. ժողովածուի, XIX դ. վերջերին Երևանի նահանգում կալվածատիրական հողատիրությունը կազմել է 60126 դես.³⁴: Ինչպես ճիշտ նկատել է պրոֆ. Վ. Հ. Ռշտունին, դա հավանաբար միայն արտոնյալ, բարձր դասին պատկանող կալվա-

ծատիրության հողատիրության տարածքն է³⁵: Մեր հաշվում՝ ները ցույց են տալիս, որ 1907—1914 թթ. պաշտոնական տվյալներով, Երևանի նահանգում կալվածատիրական ընդհանուր հողաքանակը կազմում էր 98500 դես.³⁶:

Սեգալը նշում է, որ Երևանի նահանգում կալվածատիրական հողատիրությունը կազմել է 135000 դես.: Հավանական է, նա այդ թվի մեջ մտցրել է նաև կալվածատերերի ու գյուղացիների կողմից համատեղ օգտագործվող ավելի քան 36000 դես. արտավայրերը:

Երևանի նահանգի 98500 դես. կալվածատիրական հողերից Հայկական ՍՍՀ տերիտորիայի մեջ է մտել մոտ 59007 դես., Ղազախի գավառից՝ 10703 դես., Զանգեզուրի գավառից՝ 10561 դես., իսկ Լոռու գավառից՝ շուրջ 115.000 դես.³⁷ Հողատարածություն: Այս տվյալներն ամփոփելով, տեսնում ենք, որ ընդամենը Հայաստանում կալվածատիրական հողատարածությունը եղել է 195271 դես.:

Դիրքի տարաբար, մեզ շահջողվեց թեկուզ մոտավոր տեղեկություններ ստանալ կալվածատիրական տնտեսությունների քանակի մասին, որը թույլ կտար լրիվ կերպով ցույց տալ կալվածատիրական յուրաքանչյուր տնտեսությանն ընկնող հողային տարածությունների շափը և առավել ակնհայտ կրդարձներ սակավահող, տնտեսապես քայլարվող գյուղացիության դասակարգային պայքարի, կալվածատիրության հանդեպ նրա ունեցած անտագոնիզմի տնտեսական ողջ էությունը:

Սակայն հիմք ընդունելով, որ Հայաստանի կալվածատիրական հողատիրության խոշոր մասն ընդգրկող Լոռիում, ոչ լրիվ տվյալներով, կար 265 կալվածատեր³⁸, որոնք ունեին 15000 դես. Հող և յուրաքանչյուր տնտեսությանը միջին

³⁵ В. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947, стр. 270.

³⁶ Հաշվումները կատարելիս օգտվել ենք «Կովկասյան օրացույցների» 1907, 1914 և 1917 թթ. համարներից, ՎԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 2653-ից և ՀՍՀ ԿՊԱ, ֆ. 31/94, գ. 7101-ից:

³⁷ Տե՛ս «Сборник статистических сведений...»:

³⁸ Տե՛ս «Сборник статистических сведений...», 1910 г.:

³³ Նույն տեղում, գ. 2540, թ. 21:

³⁴ «Сборник статист. данных...», стр. 93—104.

Հաշվով ընկնում էր 434 դես., այսինքն՝ շուրջ 100 անգամ ազելի, քան յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը, կարելի է ենթադրել, որ հողային հարցը ինչպես Անդրկովկասի, այլ վայրերում, այնպես էլ Հայաստանում ստացել էր սուր բնույթ: Լոռիում կային այնպիսի հողատերեր, որոնց տիրութիւնները համում էին մի քանի հազար դեմյատինի: Դրանցից կարելի է հիշատակել Արամյանցին, որն ուներ 5822 դես., Աքրոիդի կալվածատիրոջը, որն ուներ 5267 դես. և այլց³⁹: Խոշոր կալվածատերեր կային նաև Երևանի նահանգում (իվան Մելիք-Աղամալովը ուներ 4897 դես. և Վեղիազարովը՝ 1057 դես., Պողոս քեկ Ատոնովը՝ 1200 դես. և այլն)⁴⁰: Հայաստանում, հատկապես Երևանի նահանգում, գերիշխում էր մանր ու միջին կալվածատիրությունը:

Ի տարրերություն եվրոպական Ռուսաստանի, Հայաստանում և Անդրկովկասում կալվածատիրության մեծամասնությունն իր սեփական տնտեսությամբ շի զբաղվում: Նա գերադասում էր հողը վարձակալութամբ, կիսրարությամբ հանձնել գյուղացիներին. ստացված եկամուտը ծախսում էր անարտադրողաբար, շուալում էր: Շատ հավածատերեր գովազին դնում իրենց կալվածքները և, ի վերջո, քայրայվում:

1899 թ. վիճակագրական ժողովածուն⁴¹ (Հնայած նրանում կալվածատիրական հողատիրության մասին տվյալները խիստ նվազեցված են) նյութեր է տալիս կալվածատիրական հողերի վարձակալության չափերի, հորատերերի կողմից սեփական տնտեսություն չվարելու մասին: Երևանի գավառում 19971 դես. կալվածատիրական հողից միայն 380 դեսլատինն էր կալվածատերերի կողմից մշակվում, իսկ մնացած 10971 դես. կալվածատիրուկան հողից միայն 380 դեսլատինականում փողով և մասամբ բերքի կեսով, ընդ որում գավառի 161 հողատերերից միայն 45-ն էին սեփական տիրություն վարում: Դրանք շատ մանր տիրութիւններ ունեցող,

³⁹ ՏԵ՛ս նույն տեղը:

⁴⁰ ՏԵ՛ս «Сборник статист. данных...»:

⁴¹ ՏԵ՛ս նույն տեղը. Приложение V:

էքստենսիվ հողագործությամբ զբաղվող կալվածատերերն էին, որոնք իրենց փոքր կալվածքներից վարձակալության միջոցով անհրաժեշտ եկամուտներ չէին կարող ստանալ: Էջմիածնի գավառում կալվածատիրական 4015 դես. հողից վարձակալությամբ տրված էր 3666-ը, այն էլ հիմնականում կիսրարությամբ: Ա. Աթանասյանի տվյալներով, Երևանի նահանգի 544 կալվածքներից 91-ում (17 տոկոս) հողատառածքը 100 և ավելի դեսյատին էր, սակայն կալվածատերերը ոչինչ չէին անում երկրագործության տեխնիկայի բարելավման, հողի մշակման ձևերի կատարելագործման ուղղությամբ և հիմնականում եկամուտներ էին քամում գյուղացիներից՝ հողը վարձակալությամբ տալով: Երևանի, Եղիզավետպողի և Բաքվի նահանգներում կալվածատերերի 98 տոկոսը իր կալվածքից գուրս էր ապրում և ինեւ տնտեսությամբ էլ զբաղվում էր, ապա միայն կառավարիչների միջոցով⁴², Պետերբուրգի «Ծովոյե վրեմյա» թերթը 1911 թ. հունվարի 10-ի համարում Երևանի նահանգի կալվածատիրության պարագիտային կյանքի մասին գրում էր. «Հարյուր մուգատիրություն շորսն էլ չի գտնվի, որ ունենա գեթ որևէ սեփական տընտեսություն: Նրանք նույնիսկ գյուղերում չեն ապրում և ոչինչ չեն մուծում երկրամասի երկրագործական կուտուրայի մեջ: Ոչ կատարելագործված գործիքներ, ոչ մշակման նոր եղանակ, ոչ նոր բույս, նրանք ոչինչ չեն մուծում երկրամասի կյանքի մեջ»⁴³:

Կալվածատերերից հետո խոշոր հողային սեփականություն ուներ նաև հայկական եկեղեցին: Այն Ռուսաստանի Յանձներում, 1902 թ. պաշտոնական տվյալներով, ուներ 175000 դես. հող (ներառյալ նաև էջմիածնապատկան հինգ գյուղերի 21000 դես. բաժնեհողը), որից տարեկան ստացվում էր 110000 ռ. եկամուտ: Բնդ որում Հայաստանի տիրիտորիան ընդգրկող շրջաններում, առանց էջմիածնապատկան հինգ գյուղերի 21 000 դես. գյուղացիական բաժնեհողի, եկե-

⁴² ՏԵ՛ս «Труды первого Кавказского съезда сельских хозяев», Тифлис, 1913:

⁴³ ՎԱՍՀ ԿՊՊ, ֆ. 13, ց. 7, գ. 2543, թ. 126:

զեցապատկան հողերը հասնում էին մոտ 64000 դեսյատինի⁴⁴՝ 65000 ռ. տարեկան եկամտով⁴⁵: Առանձին վանքեր հսկայական հողային սեփականություն ունեին. Հաղպատի վանքն ուներ 7867 դես. հող, Տաթևի վանքը՝ 26000 դես. և այլն: Հանդիսանալով խոշոր հողատեր, եկեղեցին ևս դաժան շահագործման էր ենթարկում սակավահող գյուղացիությանը: Զվարելով ինքնուրուցն տնտեսություն, եկեղեցին տարեցտարի ծանր, ստրկացուցիչ պայմաններով գյուղացիության վարձակալության էր տալիս իր հողերը, աճուրդով վաճառում իրեն պատկանող գյուղերի մուլքի-թիւուրի հավաքման իրավունքը և ցարական շինովնիկության և սոտիկանության օժանդակության պայմաններում ստանում էր խոշոր եկամուտներ: Էջմիածնի վանքի շուրջը գտնվող 8500 դես. հողային տարածության միայն մի փոքր մասն էր մշակվում վանքի կողմից, իսկ մեծ մասը ծանր պայմաններով գյուղացիության վարձակալությանն էր տրված: Թե ինչ աստիճանի էր հասել այդ տնտեսության հետամնացությունը և հոգեվորականների պարագիտիզմը, երեսում է հենց էջմիածնի վանքի գյուղատնտեսական բաժնի 1908 թ. հետևյալ տեղեկությունից. «Այդ ահագին տնտեսությունը 1898—1906 թթ. շի ունեցել ոչ հնձող մեքենաներ, ոչ խոտ հավաքող, ոչ ցորեն մաքրող, ոչ գյուղուց հանող, ոչ հարմար գութաններ, ոչ գինու պրեսս, ոչ խաղող շարդելու մեքենա, ոչ գինի եփի տալու շաներ, ոչ բամբակ մաքրող շին, ոչ վագեր բժշկելու հարկավոր գործիքներ, ոչ տավար ազնվացնելու բուզա, մինչեւ անգամ իր 45—65 մշտական ծառայողուց կենալու բնակարան, թեկուզ մի սենյակ»⁴⁶:

Ցարիզմը հանձին հայ եկեղեցու տեսնում էր կալվածատիրական, կապիտալիստական կարգերի անսասանելիության համար մարտնչող մի հավատարիմ զինակցի, որը կարեռ դեռ էր խաղում Հայաստանի աշխատավոր մասա-

⁴⁴ Հաշվառմաները կատարված են բատ Մխիթար Վարդապետի «Հայեր Բուսաստանում» և Բարեկեն վարդապետի «Ս. էջմիածնի կալվածքներն ու նրանց բարեկարգության ծրագրը» աշխատաթյունների:

⁴⁵ Տի՛ւ Բարեկեն վարդապետի նշված աշխատությանը կցված «Ս. էջմիածնի գյուղատնտեսական բաժնի տեղեկագիրը», էջ 6—7:

ինքին տգիտության, խավարի և հնագանդության մեջ պահպանում: Նիկոլայ Երկրորդը նորընտիր կաթողիկոս Մատթեոս Երկրորդին ուղղված իր ողջունում խնդիր էր դրանում. «...սև չեմ կամածում, որ Դուք Զեր ապագա գործունեության ժամանակ շանք գործ կդնեք՝ ամրապնդելու Զեր հոտի անդամների մեջ քրիստոնեական իսկական ոգին... Ըս հավատում եմ, որ Դուք, իբրև Զեր նոր հայրենիքի հավատարիմ զավակ, որ Զեզ ընդունում է սրտաբաց, կրտքեք Զեր հոտին գեպի խաղաղ, առաքինի կյանք և օրինական իշխանություններին ի հնագանդություն»⁴⁶:

Չնայած եկեղեցու բոլոր շանքերին, հայ աշխատավոր ամսաները, ինչպես ցույց կտրվի ստորև, ուտքի են ելնում անդեմ շահագործողների, ընդ որում նրանց պայքարն ուղղված է ոչ միայն կալվածատերերի ու շինովնիկության հեմ, այլ նաև հենց հոգեոր խոշոր հողատերերի, եկեղեցու հշիանության դեմ:

Սակայն ամենամեծ կալվածատերը, ինչպես Խուսաստանում, այնպես էլ Հայաստանում, պետությունն էր: Այն զարգան եղանակներով, հատկապես հողաշինարարական աշխատանքների միջոցով բռնագրավում էր գյուղացիական հողերը և մեծացնում ու ընդարձակում էր իր հողային տարածությունները, ստեղծում նորանոր հասութաբեր հողվաճներ, արոտավայրեր, որոնց շահագործումից ստանում էր հսկանական եկամուտներ: Արքունի հողատիրության վերաբերյալ հոտավոր տվյալներ ստանալու համար մինք 1899 թ. վիճակը պարական ժողովածուում տրված ընդհանուր հողաքանակից մնում ենք գյուղացիական, կալվածատիրական և վանքատկան հողերը: Ստացվում է, որ Հայաստանում արքունիքը ունեցել է 1231204 դես.⁴⁷

Արքունի հողային խոշոր տարածությունները, որպես հա-

⁴⁶ «Արարատ», 1908, ապրիլ:

⁴⁷ Զանգեզուրի և Ղաղախի գավառներից ՀՍՍՀ-ի մեջ մտած շրջանների ընդհանուր հողաքանակը որոշում ենք Ա. Բաղալանի այն հաշվում-գրով, որոնց համաձայն Զանգեզուրի գավառից ՀՍՍՀ-ի մեջ ընդգրկվել է մոտ 60 տոկոսը, իսկ Ղաղախի գավառից՝ 44,5 տոկոսը, Բորչալուի գավառից կերցնում ենք միայն կոռու գավառամասը:

սութաբեր հողվածներ, կամ վարձակալության էին տրվում գյուղացիությանը, կամ ծառայում էին կառավարության գաղութացման նպատակին, կամ արտոնյալ պայմաններով վարձակալության էին տրվում ոռուսական շինովնիկներին, որոնք տեղական կալվածատերերի հետ միասին դաժան շահագործման էին նենթարկում գյուղացիությանը:

Համբագումարի բերելով գյուղացիական, կալվածատիրական, վանքապատկան և արքունի հողատիրությանը վերաբերող տվյալները, ստացվում է հետևյալ պատկերը.

Հողատիրական իմբեր	Դրանք թիվ	Տարածություն հազար հա	Տարածություն հազար հա	Տարածություն հազար հա	Տարածություն հազար հա
1. Պետական գյուղացի-ներ	79310	541686	25,6	6,83	
2. Մասնատիրական գյուղացիներ	18634	80805	3,8	4,33	
3. Կալվածատերեր	անդե-	195271	9,3	անդեկու-	
4. Եկեղեցի	կութ. չկա	64000	3,0	թյուն. չկան	
5. Առքունիք	—	1231204	58,0	—	
Հնդամենը		2112966	100,0		

Այսպիսով, պետական ու մասնատիրական գյուղացիության 97944 ծխեր ունեին միայն 622491 դես. հող և գյուղացիական յուրաքանչյուր ծխին միշտն հաջպվ ընկնում էր 6,93 դես. բաժնեհող: Եթե գյուղացիական 97944 ծխեր ունեին Հայաստանի ամբողջ հողերի միայն 29,4 տոկոսը, ապա արքունիքը, եկեղեցին և կալվածատերերը իրենց ձեռքում էին կենտրոնացրել երկրի հողերի ավելի քան 70 տոկոսը⁴⁸: Սա-

⁴⁸ Տնտեսագիտ Մ. Եգանյանի հաշվումներով, ցարական կառավարությունը իր ձեռքում էր պահում. Երևանի նահանգի ամբողջ տարածության շուրջ 80 %-ը (ան' նրա «Հայաստանի հետոեֆորմյան ազրարային հարաբերությունները», Երևան, 1964, էջ 19):

կայն պետք է նկատի ունենալ նաև այն, որ գյուղացիական հողերի մեծ մասը գտնվում էր սակավաթիվ կուլակների եռքում: Այդ հանգամանքը ավելի էր սրում սոցիալական ակասությունները գյուղում: Սակավահող և հողագուրկ կուլացիները հարկադրված էին կամ դիմել ստրկացուցիչ արձակալումներին, կամ տնտեսապես քայլայվելով՝ բնել աղաքի ճամփան:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՍԿԱՎԱՀՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱԶՐԿՈՒՄԸ

Գյուղացիության սակավահողության ուժեղացումը և հողագործումը տեղի էին ունենում ինչպես պետության, այնպես էլ կալվածատերերի ու կոլազների կողմից բաժնեհողերը զավթելու եղանակով։ Այսպես, 1913 թ. հոկտեմբերի 6-ին Ռեհանլուի կալվածատեր Ղազիկը դատական պրիստավի հետ միասին գյուղացիական բաժնեհողերից կարում է մինչև 60 խալվար հող։ Չնայած գյուղացիության բողոքին, ցարական ագրինիստրացիան ընթացք չի տալիս այդ գործին¹։

Էջմիածնի գավառի Գյոյգումբեթի գյուղացիները, որոնք խիստ սակավահողության մեջ էին գտնվում, 1914 թ. դիմում են Կովկասի փոխարքային և բողոքում իրենց գյուղի կովակային 13 տնտեսությունների գեմ՝ գյուղացիական հողերից 90 խալվար զավթելու կապակցությամբ, ընդ որում, կովակները գյուղացիներից զավթած հողի գեսայտինը 175 ոռոգլով տալիս էին վարձակալությամբ ինչպես հարեան գյուղացիներին, այնպես էլ գյոյգումբեթցիներին²։

Երևանի գավառի Շոռու Դեմրշի գյուղի շքավոր գյուղացիության լիազորները 1912 թ. հունվարի 17-ին գրել են Երևան նահանգի գյուղացիական գործերի ատյանին. «Մեր գյուղական հասարակության մեջ տիրում է հողամասերի ծայրասահման վրդովեցուցիչ անհավասար բաշխում»։

¹ ՀԱՍՀ ԿՊՍ, ֆ. 133, գ. 5104։

² ՀԱՍՀ ԿՊՍ, ֆ. 133, գ. 5024, թ. 4—5։

Մեր գյուղացիների մեջ 100 տնատերեր դատապարտված են կիսաքաղց գոյության, իսկ մնացած 51 ծուխը հաշուստացմէլ է ի հաշիվ առաջինների, շնորհիվ իր խորամանկութողությունների՝ զանազան դավթումների, փող փոխալու և այլնի։

Օրինակը լավ է պատկերում այն դրությունը, որը ոչ մի պարունակությունը չարելի հանդուրժել՝ հակառակ գյուղական կառության վերաբերյալ օրենքի. համագյուղացիներ Հաջի Աբաս աշի Զեյնալ Օղլին, Հաջի Իրզա Կուլի Հաջի Ալաքպեր Օղլին, մերբալա Նասիր Հաջի Իրզա Օղլին, Ասկյար Հաջի Մամադ Ղլին, որոնց ընտանիքները բաղկացած են 5—6-ական շրնչից, ունեն 5—7 խալվար հող, մինչդեռ նրանց կողքին մեր գյուղացիները, որոնց ընտանիքները բաղկացած են 10—12 և ավելի շնչից, ունեն 20 բաթման հող կամ համարյա 50 անդամ առաջիններից պակաս»³։

Գյուղացիների սակավահողությունը ուժեղանում էր նաև այն բանի հետևանքով, որ նրանց շնչերի բանակը տարիների ընթացքում ավելանում էր, իսկ պետական ազատ հողերից նոր լրացուցիչ հողաբաժիններ չէին ստանում։ Գյուղացիներն ստիպված էին մշակել նույնիսկ արոտավայրերը, վերածել դրանք վարելահողերի, գնալ այլ գյուղեր՝ աշխատավճարումների, բատրակության վաստակած կոպեկներով մի կերպ հարկելն ու տուքերը վճարելու համար։ Երևանի գավառի Չամուլու գյուղի ներկայացուցիչները 1910 թ. մայիսի 12-ին Երևանի նահանգական հողագործության վարության պետին ուղարկած խնդրագրում գրում էին.⁴ «Մեր գյուղի հողային կարիքը հասել է ծայրահեղ աստիճանի, ուսում Զերդ գերազանցությունը կհամոզվի հետեւյալ տվյալների հիման վրա. մենք հիմա 2048 շոմն մենք (1897 թ. մարդահամարի ժամանակ եղել ենք 1686 շունչ). յուրաքանչյուր շնչին ամեն տեսակի հող, բացի արոտավայրերից, համանում է կես գեսայտինից պակաս։ Անսառուններ արածացնելու համար պիտանի արոտավայր մեր դաշտերում չի մնացել՝ բո-

³ «Аграрная политика царизма...», стр. 260—261.

⁴ ՀԱՍՀ ԿՊՍ, ֆ. 133, գ. 2750, թթ. 5—7, 56—57։

լորս հերկել ենք: Որպես ամառային արոտավայր մշտական օգտագործման համար մեզ հատկացված է ընդամենը 135 դես. բարձր տեղերում (Արագածի վրա), որը երկարատև օգտագործման համար պիտանի չէ: Հնարավո՞ր է, արդյոք, գոնես առաջովիկ այդքան շնչերի սնունդը այսպիսի հողային հնարավորություններ ունենալով: Խղճուկ արտագնաց աշխատանքները (գավառի տաք մասերում գարնանը և ամառը) հազիվ հնարավորություն են տալիս հարկերը վճարելու: Նրանք խնդրում են 100 դես. տարածությամբ պիտական հասութափեր «Սարիբուզաղ» հողամասը, որպես արոտավայր, երկարատև վարձակալությամբ գյուղին հանձնել, սակայն վարչության պաշտոնյան 8 ամիս գգգելուց հետո 1911 թ. հունվարին մերժում է նրանց խնդիրքը, պատճառաբանելով՝ որ «...օրինական հիմքեր չկան հասութափեր հանդակները վերադասել արոտավայրերի կարգը»⁵:

Ս. Զավարյանը, անդրադառնալով Զանգեզուրի կալվածատիրական գյուղացիության սակավահողության աճման հարցին, նշում էր, որ եթե 1880-ական թթ. շնչին միջին հաշվով ընկնում էր 0,73, ապա 1906—1907 թթ.՝ 0,49 դես. Հող⁶:

Գյուղացիական սակավահողության, պրիմիտիվ հողամըշակման և պարբերական սովոր մասին ստիպված խոստովանում է նույնիսկ երեսանի նահանգի հողագործության վարչության պետք: Նշելով, որ նահանգում գյուղատնտեսությունը խիստ հետամնաց վիճակում է, որ վերջին 30—40-տարում ընակշությունը համարյա կրկնապատկվել է և սակավահողություններ ափելի մեծացել և որ գյուղատնտեսության ագրոկուտրան բարձրացնելու ուղղությամբ միայն շնչին գործ է կատարված, նա շարունակում է. «Դրա հետ մեկտեղ ընակշությունն ապահովված չէ հողով: Նոր թայագետի գավառում ծիխին ներկայում հասնում է միջին հաշվով ոչ ավելի, քան 5—6 դես. Հարմար վարելահող: Այդ նույնը պետք է ասել

⁵ ՀԱԱՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 2750, թթ. 5—7, 56—57:

⁶ Տե՛ս Ս. Զավարյան, Экономические условия Карабага и голод 1906—1907 гг., С. Петербург, 1907, էջ 11:

նաև Երևանի, էջմիածնի և նահանգի այլ գավառների լեռնալին գնուու բնակչության մասին: Ընտանիքի տակավին նախագիտական կառուցվածքի, նրա բազմանդամության պայմաններում հողի այդ քանակությունն անհրաժեշտ է միանմայն անբավարար համարել, որ չի կարող կերակրել բրոկությանը: Յարական պաշտոնյան հայտնում է, որ գյուղիական հողերի մեծ մասը լեռների քարքարոտ լանջերին ընկած, որտեղից ստացված բերքը մեծ մասամբ չի ծածւմ նույնիսկ ցանած մերմնացուի ծախսը, և իզուր կորչում հողագործի աշխատանքը, որ այդ շրջանների բնակչությունը մշտական պարենային անապահովվածության մեջ է և հաճախ կարիքն ու թերասնումը այստեղ ընդունում են ովի ու ժողովրդական աղետի բնույթ»⁷:

Կալվածատիրական-կուլակային աճող շահագործման, արիզմի հակաժողովրդական ագրարային քաղաքականության պայմաններում տարեցտարի ավելանում էր հողատրկ գյուղացիների քանակը: Այդ մասին խոսում են բազաթիվ աղբյուրներ ու փաստաթղթեր: Այսպիս. «Գործ» թերթը գրում էր, որ Երևանի գավառի 110 ծիխց բաղկացած Աւան գյուղի բնակիչները սակավահողության և կողմնակի աշխատանքների բացակայության պատճառով հասել են վկատարյալ աղքատության դուրս: Այնուհետև թերթը շատ ակում է. «Վերջին տարիների անբարենպաստ պայմանները գյուղացիներից շատերին ստիպել են ծախել ամեն ինչ, ույնիսկ վարելահողը, և այժմ Ավանում 25 տուն կատարյալ հողագուրկներ կան»⁸, այսինքն՝ փաստորեն գյուղի ու 1/4-ը հիմնական արտադրամիշոցից զրկվել և վերածվել որ կիսապրոլիտարիատի:

Արևելահայ գյուղում, բացի այդ բնույթի հողագուրկները, կային նաև հողագուրկ գյուղացիների այլ զանգվածներ: Դրանցից էին խիզանները, որոնց թիվը հետզհետե անդամնում, իսկ վարձակալած հողի նկատմամբ իրավունք-

⁷ «Труды первого Кавказского съезда сельских хозяев», Тифlis, 1912, стр. 78.

⁸ «Գործ» 1909, № 108:

ները կրծառվում էին և այսպես կոչված «ժամանակավոր-բնակվողները», Յարական աստիճանավորները 1886 թ. գյուղացիական ծխամատյանները կազմելիս, գյուղական բնակչությունը բաժանել էին երկու մասի՝ արմատական բընակիչների և «ժամանակավոր-բնակվողների»։ Ընդ որում այդ ստորաբաժանումը տեղի ունեցավ այնպիսի ձեռվ.՝ որ մեծաքանակ գյուղացիական ծխեր, որոնք տասնյակ տարիների ընթացքում տվյալ գյուղում էին ապրում, սխալ վկայությունների և զանազան «պատշհականությունների»։ Հետևանքով ծխամատյաններում գրանցվեցին որպես «ժամանակավոր-բնակվողներ»։ Դրանց թիվը բավական մեծ էր։ Այսպես, 1913 թ. տվյալներով Երևանի նահանգում ապրում էին 363518 գյուղացիներ, որոնցից 27644-ը «ժամանակավոր բնակվողներ»⁹ էին։ 1903 թ. ապրիլի 21-ի օրենքի 16-րդ հոդվածը գյուղական համայնքներին իրավունք վերապահեց՝ հողաբաժին չառանձնացնել միայն այն ժամանակ, եթե կլինի գյուղական համայնքի հատուկ որոշումը։ Գյուղական համայնքները սովորաբար չեն համաձայնվում այդ «կողմնակի անձանց» հողաբաժին առանձնացնել, որովհետև դրանով իրենց հողաբաժինը կկրծառվեր։ Ղեկավարվելով այդ օրենքով, տեղական կալվածատիրությունը և չինովնիկությունը 1905—1907 թթ. ծխացուցակները պետական հողի սրբացին «կողմնակի անձանց» հողաբաժիներից։ Այդ մասին վկայում են բազմաթիվ արխիվային փաստաթղթեր։ Այսպես, 1913 թ. Հոկտեմբերի 8-ին հաշտարար միջնորդը գրում էր, որ Ալեքսանդրապոլի գավառի Ղոնազուն գյուղի բնակիչները խնդրագիր են նորկայացրել, որպեսզի գյուղի թուրքահապատակ և պարսկահապատակ 12 ընտանիքները հեռացվեն գյուղից, որովհետև սաստիկ վախենում են, որ նրանք հողաբաժին կուզեն և իրենց վիճակն ավելի կվատացնեն¹⁰, կամածից վեր է, այն «ժամանակավոր բնակվողների» մասին ցարական տվյալ միջոցառումը վնա-

սում էր նաև գյուղացիության միացյալ պայքարի գործին, քանի որ արհեստականորեն սրում էր գյուղացիության մի մասի դգործությունը մյուսի դեմ և շեղում նրանց ուշադրությունը դասակարգային պայքարից։

Զքավոր, սակավահող գյուղացիությունն իր տնտեսական վիճակը բարելավելու համար եղենմն դիմում էր դաշտավիխության, բայց հող ստանալուց հետո շատ հաճախ ոկին վերադառնում էր իր հին հավատին։ Այդպես վարվեն, օրինակ, էջմիածնի գավառի տարբեր գյուղերի 5 ընդամենիքների¹¹, որոնք, ընդունելով ուղղափառություն, հողագործության հոսկելով այդ մասին, երևանի նահանգապահեառ գրել է. «Ուղղափառ հայերի կողմից նման միջնորդություն արուցելու գլխավոր ու իսկական դրգապատճառ հանդիպանում է հողով ավելի լավ ապահովելու ձգտումը, որին հասնելուց հետո, ուղղափառություն ընդունած հայերը հեռանում են ուղղափառությունից և վերադառնում հայ լուսավորչական եկեղեցու գիրկը¹²։» Նահանգգաղեառ, որպես օրինակ, նշում էր, որ Աղին գյուղում ուղղափառություն ընդունած 10 ընտանիքից 7-ը հող ստանալուց հետո կրկին վերադաբել են իրենց լուսավորչական հավատին։

Զքավոր, հացի կարոտ գյուղացիությունն սահիպած էր դիմելու հողերի ստրկական վարձակալությանը, իր բաժնեհողի վաճառքին, ունեցվածքի գրավ դրմանը, որոնք փաստորեն նպաստում էին նրա տնտեսական քայլքայմանը։

2. ՀՈՂԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒՄԸ, ԱՌՈՒՇԱԽԵ

Հայաստանի գյուղացիությունը ստիպված էր դիմել վարձակալության և կալվածատիրոջից ստացած հողակտորի դիմաց հաճախ վճարել բնավճարով, որը շատ դեպքերում բարձր էր լինում դրամակճարից, Ըստ Ա. Մարուխյանի Հաշվումների, Հայաստանում մեկ հեկտար հողի վարձակալության գինը եթե նատուրալ վճարումների դեպքում հա-

⁹ Տե՛ս «Կ. Կ.» ի 1914, վիճ. բաժին, էջ 132—133։

¹⁰ Տե՛ս ՀԱՅԱ ԿՊԱ, ֆ. 28/91, գ. 468, թ. 33։

¹¹ ՀԱՅԱ ԿՊԱ, ֆ. 133, գ. 2653, թթ. 2—3։

¹² «Аграрная политика царизма...», стр. 52—54.

վասար էր 20—30 ոռոգլու, ապա դրամականի դեպքում՝ միայն 18—20 ոռոգլու¹³:

Գյուղացիությունը վարձակալում էր՝ նաև պետական հողերը, այսպես կոչված արքունի հատութաբեր հանգակները, որոնք վարձակալման էին տրվում սովորաբար աճուրդի միջոցով։ Գյուղացիների վարձակալած հողատարածությունները մի դեպքում կազմում էին իրենց բաժնեհողի զգալի մասը, իսկ մեկ այլ դեպքում գերազանցում էին դրան։ Այսպես ըստ «Պամատայ կույշկա Ելիսավետոլյան» գույքի 1910 թվականի ժամանական ժողովածուի տվյալների, Զանգեզուրի գավառում 20932 գյուղացիական ծխերի օգտագործման տակ է եղել 4062 դես. ջրովի և 116754 դես. անջրդի բաժնեհող։ Նրանք միաժամանակ վարձակալել են պետությունից 86 դես. ջրովի և 11889 դես. անջրդի, իսկ մասնավոր հողատերերից՝ 130 դես. ջրովի և 7157 դես. անջրդի հող, այսինքն՝ գյուղացիությունը՝ ստիպված է եղել վարձակալել ունեցած բաժնեհողի $\frac{1}{6}$ մասի շափով պետական և մասնատիրական հող։ Հստ նույն տվյալների, ավելի մեծ շափով վարձակալումների են դիմել Ղազախի գավառի 10490 գյուղացիական ծխերը։ 23939 դես. ջրովի և 92376 դես. անջրդի բաժնեհողի կողքին նրանք վարձակալել են պետությունից 86 դես. ջրովի և 187122 դես. անջրդի, իսկ մասնավոր հողատերերից՝ 2036 դես. ջրովի և 3334 դես. անջրդի հող, այսինքն՝ վարձակալած հողերը մոտ 80000 դեսյատինով շատ են եղել գյուղացիական բաժնեհողից։

Վրաստանի պետական արխիվում մեր կողմից հայտնաբերված մի հետաքրքիր վավերագրից երևում է, թե ինչպես կամբալու գյուղում առաջացան հողազուրկ մշտական վարձակալներ և ինչպիսի ծանր տնտեսական պայմաններում էին նրանք գտնվում։

Լամբալուի գյուղական ժողովի անունից լիազորները 1913 թ. ապրիլին խնդրագրով դիմում են փոխարքային,

¹³ Տե՛ս Ար. Մարտիրյան, Գյուղացիության դրությունը նախառվետական Հայաստանում (1900—1920 թթ.), Երևան, 1948, էջ 52։

որտեղ գրում են, թե դեռ Հերակլի օրոք նրանց նախանիները ունեցել են պետական բաժնեհողեր, սակայն 1840-ական թ. գյուղին տիրացել է իշխան Անդրոնիկովը։ Գյուղացիական ուժորմից հետո գյուղում եղած 25 ծխից կանոնագրով բաժնեհող է տրվել միայն 8 ծխին, իսկ մնացածին Անդրոնիկովը և հաշտարար միջնորդը բաժնեհող չեն առանձնացնել։ Հետագայում նրանք կարողանում են հասնել այն բաժին, որ բաժնեհողից «հրաժարվում» են նաև 8 ծխերը և ողջ ընողով սկսում են վարձակալել կալվածատիրոջ հողերը։ 1890-ական թթ. այդ կալվածքն անցնում է իշխան Սումբատին, որն աստիճանաբար մեծացնում է հողի վարձակալման գինը. թե ինչ աստիճանի է հասնում նրա դաժանությունը և ինչպիսի մեծ շափերով են արտահայտվում այդ վարձակալության մեջ ճորտատիրական մնացորդները, շատ յավ երևում է այն պայմաններից, որ արդեն 90 ծուխ վարձակալների անունից մեջ են բերում իրենց խնդրագրում գյուղի լիազորները։

«1912 թ. փետրվարի 9-ի նրա հետ կնքած վերջին պայմանագրի համաձայն վարձակալագինը, կազմում է՝ հացահատիկների բերքի $\frac{1}{4}$ մասը, որը հավասար է 5000 փութ ցորենի և 3000 փութ գարու. հնձած խոտի $\frac{1}{3}$ -ը՝ այն է 107 սայլ խոտ-մոտավորապես 400 փութ. 90 ոչխար, 90 փունտ կովի յուղ. ոչխարների միօրյա կաթը. 500 սայլ՝ հացահատիկի և խոտի խրճերը փոխադրելու համար. առանձին՝ 90 սայլ իրենց սայլվորներով տասը օրով հատկացվում է իշխան Սումբատովի տնօրինությանը։ Տարեկան երկու անգամ 90-ական բանվոր՝ նրա ջրաղացի առուն մաքրելու համար. 600 սայլ գոմաղրի փոխադրումը նրա խաղողի այգին մնդ որում այդ ամբողջ գոմաղրից 200 սայլը պետք է լինի աշխարի գոմաղր, որը պետք է փոխադրվի. 8—10 և ավելի վերստ հեռավորության վրա. իշխանի հոտը պետք է ձրիալար արածի վարձակալվող հողերի շրջանում. պահապանի վարձում՝ կալվածքի սահմանների խախտումը կանխելու և ցանքերն արածակերպությունից ապահովելու համար, շրաբելի և շրաբածնի ոռնիկի վճարում՝ իշխանի կողմից ոռոգվող հողերին անհրաժեշտ ջրի օգտագործման համար և 1800 ո.

կանխիկ դրամ, թուլոր այս բնավարձ պարհակները միշին գներով փողի վերածելով, մենք և մեր համագյուղացիները 1802 դեւ. 960 քառ. սաժեն վարձակալված հողերի համար տարեկան պետք է վճարենք 13937 ռ. և առանձին՝ «էլ Դադ, Ղզեց, Գյազակ, Բարախլու, Դաշ-Յաթաղ և Գյունեյ-Յաթաղ» ձմեռային արոտավայրերի համար—2750 ռ. դրամով»¹⁴:

Այստեղից երևում է, որ չնայած գյուղացին հիմնական արտադրամիջոցից՝ հողից զրկված էր, սակայն կալվածատիրական հողի ճորտային պայմաններով վարձակալումն ստիպում էր նրան գեռս կապված մնալ հողի հետ։ Գյուղացին ստիպված էր քարշ տալ իր կիսաքաղց գոյությունը։ Կալվածատերերի հրաժարվելը մեքենաների, կատարելագործված գործիքների օգտագործումից, ուացիոնալ, կուլտուրական հողամշակում չկազմակերպելը, կապիտալիստական եղանակով տնտեսություն վարելու մեջ շահագրգռված շինելը դանդաղեցնում էին և գեռս պայմաններ չեն ստեղծում հողագորկ վարձակալներին գյուղատնտեսական բարուրակների, բանվորների վերածելու համար։ Թընորոշ է, որ Սումբատովի գյուղացիները, օգտվելով 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքից, կամեցան փրկագնել իրենց նախկին հողերը, սակայն կալվածատերը մերժեց։ Նրանք դիմեցին իշխանություններին, բայց վերջիններս, պաշտպանելով կալվածատիրոջ շահերը, հայտարարեցին, որ նշված օրենքով վարձակալված հողերը ենթակա չեն փրկագնման։

Չնայած վարձակալության ծանր պայմաններին, այնուամենայիկ չքավոր, քայլայվող գյուղացիությունը պայմարում էր մի կտոր հողի վարձակալման համար։ Հաճախ մի շարք գյուղեր և առանձին գյուղացիներ, ինչպես նաև կուլակներ բազմաթիվ խնդրագրեր, դիմումներ էին ներկայացնում հողագործական հարցերով զբաղվող հիմնարկներին, չինովնիկներին՝ ստանալու որևէ պետական հասութաբեր հողի վարձակալության իրավունք, իշխանությունները, օգ-

տագործելով գյուղացիների սակավահողությունը, բարձրացնում էին պետական հողերի վարձակալական գները։

Ս. Ավալիանին գրում էր, որ խիստ սակավահողության պայմաններում XX դ. սկզբներին Անդրկովկասում կալվածատիրական և պետական հողերը վարձակալողների թիվը համարյա կրկնապատկվել էր, խոշոր շափով բարձրացել էր վարձակալության գինը, որն ըստ նահանգների և հողի տեսակների կարելի է ներկայացնել այսպես (դեսյատինը՝ ուռութիներով)՝¹⁵

Նահանգներ	1902 թ.				1912 թ.			
	Աշնանացան		Գարնանացան		Աշնանացան		Գարնանացան	
	Տրուկ	Աշնանացան	Տրուկ	Աշնանացան	Տրուկ	Աշնանացան	Տրուկ	Աշնանացան
Քութայիս	18,0	14,0	18,7	13,3	24,0	21,3	24,1	20,8
Փիֆլես	11,8	7,7	12,2	7,5	17,8	11,7	18,7	11,3
Բաքու	4,1	4,0	6,4	1,7	12,1	10,1	15,3	5,4
Ելիզավետպուր	6,4	3,9	4,6	3,6	12,3	7,1	8,8	6,5
Ֆընան	22,4	9,0	23,7	9,2	37,9	16,1	42,5	10,1
Անդրկովկաս	11,1	7,1	11,8	6,7	19,1	12,3	19,8	10,1

Աղյուսակից երևում է, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Անդրկովկասի մյուս նահանգներում հողի վարձակալության գինը 10 տարվա ընթացքում բարձրացել է միշին հաշվով 76 տոկոսով։ Պարզվում է, որ երկանի նահանգում մասնավորապես չըստի հողի վարձակալության գինը բարձր է Անդրկովկասի մյուս նահանգների համեմատությամբ։ Ասքացարվում է, մեր կարծիքով, նրանով, որ երեանի նահանգում, որը հին բամբակագործական, այգեգործական շրջան էր, չըստի հողերում խոշոր շափով մշակվում էին

¹⁴ ՎԱՀԱՆ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 7, 'գ. 1615, թ. 4—5:

¹⁵ Տիկ և Ս. Լ. Ավալիան, Կրեստյանский вопрос в Закавказье, т. IV, Одесса, 1914, էջ 8:

կուլտուրական, տեխնիկական բույսեր: Այդ շըշաններում գարգացած էր առևտության հողագործությունը և բարձր էր հողի հեկամտաբերությունը: Ավելի փոքր չափով բարձրացան անշրջի հողերի գները: Այդ հողերում հիմնականում ցանում էին ցորեն, դարի, և բերքատվությունն էլ սովորաբար ցածր էր: Երեանի նահանգում հողի, հատկապես տեխնիկական կուտուրաների տարածությունների վարձակալական գների բարձրացումը ցույց տալու նպատակով (հենվելով կովկասյան գյուղատնտեսական ընկերության՝ տեղերից ստացվող ավելի ճիշտ տեղեկությունների վրա) մենք կազմել ենք հետեւյալ աղյուսակը (դեսյատինը՝ ուղղվիներով):¹⁶

թ. թ.	Աշնանացան		Գարնանացան		Խոտհարք						Բանջարանց
	Հընկը	Անցնկը	Հընկը	Անցնկը	Հընկը	Անձնկը	Բարեկառություն	Բարեկառություն	Բարեկառություն	Բարեկառություն	
1899 թ.	29,8	7,9	20,0	8,2	20,4	8,1	—	—	—	—	
1901 թ.	24,7	8,2	18,4	7,4	15,2	8,5	31,1	23,5	35,0	33,5	
1902 թ.	22,4	9,0	23,7	9,2	18,4	6,8	—	—	—	—	
1909 թ.	37,5	17,3	31,7	14,9	32,6	14,9	—	—	—	—	
1911 թ.	36,0	11,8	28,0	13,2	25,1	13,1	55,3	40,0	67,5	56,6	
1912 թ.	37,0	16,1	42,5	16,3	31,5	11,4	62,2	55,0	67,2	49,5	
1913 թ.	49,7	28,1	54,8	26,8	28,4	19,2	83,4	48,5	80,3	63,7	

Այսպիսով, նկատում ենք, որ վեցին տաս-տասնչորս տարվա ընթացքում հողի վարձակալության գները բարձրացել են ու թե 76 տոկոսով, ինչպես Ս. Ավալիանին է նշում, այլ մոտ 2-3 անգամ: Միաժամանակ՝ պետք է նշել, որ այստեղ տրված են վարձակալված հողերի միջին գները, որոնք հաճախ ճիշտ պատկերացում չեն տալիս իրական վիճակի մասին:

Միջին գների ոչ իրական լինելու և ընդհանուր վիճակը

¹⁶ Տե՛ս «Сельскохозяйственный обзор по Закавказью за 1909, 1911, 1912 и 1913 гг.»:

գեղազարդելու մասին խոսելով, լենին օրինակներ է բիրում Տավրիկյան նահանգից և եղրակացնում: «Այսպիսով՝ մեկ գեսաւտինի 4ո. 23կ. «միջին» վարձագինն ուղղակի աղավաղում է իրականությունը և ի շիք է դարձնում այն հակասությունները, որոնք գործի հենց էությունն են կազմում: Զքավորությունն ստիպված է վարձակալել միջինից ավելի քան եռապատիկ բարձր՝ կործանիլ գնով: Հարուստները հողը գնում են ձեռնուու, «մեծաքանակ» և, ի՞շարկե, հարմար դեպքում կարիքավոր հարևանին են տալիս 275 տոկոս վաստակով: Վարձակալություն էլ կա, վարձակալություն էլ: Կա ձորտատիրական ստրկացում, կա հոլանդական վարձակալություն և կա հողի առևտուր՝ կապիտալիստական ֆերմերություն»¹⁷:

Բոլշևիկյան «Կայժ» թերթում կոռու գյուղացիության սակավահող, կիսաքաղց վիճակի մասին կարդում ենք «իսկ կալվածատիրական հողերը գլխավորապես կենտրոնացած են գյուղական «բոռունցքների» և «աշխարհակերների» ձեռքում, որովհետև, նրանք ուժեղ լինելով մրցման մեջ, միշտ հաղթանակ են տանում և կարողանում են ճարել ամենաբարձր կապալազներ, որոնց այնքան սիրահար են մեր կալվածատերերը: Իսկ «բոռունցքները» իրենց հերթին կապալով վերցրած հողերը բաժանում են հողագուրկ գյուղացիներին առասպեկտական գներով, թեև հողից ստացած արդյունքը կապալազինն իսկ չի հանում»¹⁸:

Կովակների կողմից պետական հասութաբեր հողամասը էժան գնով վարձակալելու և այն բարձր գնով գյուղացիներին տալու դեմ են բոլորքում էջմիածնի գավառի ներքին Աղջաղալայի գյուղացիների ներկայացւցիչները: Այս առթիվ նույն շրջանի հողային վերահսկիչը 1907 թ. նոյեմբերի 29-ին գրում էր, որ իսկապես, ներքին Աղջաղալայի գյուղացիները հողի մեծ կարիք ունեն, ուստի կարելի է նրանց խնդրած 375 դես. տարածությամբ «Թայշարուխ» արոտատեղին 1884 թ. օրենքի արտոնություններով 200 ո. վարձա-

¹⁷ Վ. Ի. Լենին, հ. 15, էջ 110:

¹⁸ «Կայժ», 1906, Ն 17:

Կալության տալ այդ կարիքավոր գյուղացիներին: 1908 թ. հոկտեմբերի 16-ին պետական հասութաբեր այդ հողամասի աճուրդի մասին գյուղի ներկայացուցիչներին շի հայտնվում, իսկ կուլակ Հազրեթ Կուլի Պիրի Օղին, որը մինչ այդ էլ վարձակալում էր այդ հողը և այն իր հնարիխն բարձր գներով կրկնավարձակալության էր տալիս համագյուղացիներին, գործարքի մեջ է մտնում գործակալի հնտ, համոզում նրան, որ գյուղը մտադիր չէ վարձակալել հողը և կարողանում է նորից իր ձեռքում պահել հողամասի հետագա վարձակալությունը տարեկան 170 ռուբլով: Զնայած գյուղը խնդրում է այդ հողը վարձակալությամբ իրեն տալ 200 ռուբլով, սակայն նրանի նահանգի հողագործության վարչությունը մերժում է նրա խնդրանքը, պատճառաբանելով, որ այն արդեն տրված է ուրիշին: Կուլակը կարողանում է պայքարել և իր ձեռքում պահել այդ հողակտորը նաև այն բանից հետո, երբ իմանում է, որ 1912 թ. դեկտեմբերին հողագործության վարչությունն առաջարկել է ներքին Աղջաղալային արդեն 251 ռ. 50 կոպեկով վերցնել այդ հողակտորի վարձակալությունը: Պատճառաբանելով այն հանգամանքը, որ 1903 թ. սկսած ներդրումներ է կատարել այդ հողում, Հազրեթ Կուլի Պիրի Օղին ստանում է ցարական շինովնիկների համաձայնությունը հողի հետագա վարձակալության համար, և անելանելի վիճակի մեջ գտնվող գյուղացիներն ստիպված են լինում բարձր գներով կրկնավարձակալությամբ վերցնել կուլակի կողմից շատ ավելի էժան դնով ձեռք բերված պետական հողը¹⁹:

Անգամ փոխարքան ստիպված էր նշել այն խոշոր շարադաշումների և շքավոր, հողագուրկ գյուղացիության շահագործման մասին, որոնք կապված էին պետական հասութաբեր հողամասերը վարձակալության տալու խիստ անարդարացի կարգի հետ: 1907 թ. կայսրին ներկայացրած իր հաշվետվության մեջ նա գրում է, «Բոլոր փոքր ի շատե խոշոր հասութաբեր հողամասերը աճուրդի միջոցով վարձակալության են տրվում ամբողջությամբ, առանց մանր հողա-

մասերի բաժանելու, այսինքն այնպիսի վիճակում, ինչ վիճակում դրանք չեն կարող վարձակալել նրանց ապագա իսկական վարձակալները. այդ պատճառով հասութաբեր հողամասերը վարձակալում են սովորաբար առավել ունենո՞ւ մարդիկ, որոնք երբեմն հողի մի մասը թողնելով իրենց օգտագործման տակ, մնացած մասը, հաճախ միջնորդների միջոցով, հանձնում են հարեւան գյուղացիներին այնպիսի գնով, որ գանձարանին տրվող վարձագինը երբեմն կազմում է ընդամենը դրա 10 տոկոսը»²⁰:

Այսուհանդերձ, պետական հասութաբեր հողամասերը համեմատաբար ավելի էժան էին գնահատվում, քան կալվածատիրական-եկեղեցապատկան հողերը: Այդ պատճառով էլ գյուղացիները ձգտում էին վարձակալել պետական հողերը: Չատ հաճախ մի հողամասի վարձակալության համար հայտնվում էին մի շարք ցանկացողներ: Դրա հետևանքով աճում էին հասութաբեր հողերից ստացվող եկամուտները, բարձրանում էին նրանց գները:

Երեսնի նահանգական հողագործության վարչության պետի տվյալներով առանձին պետական հասութաբեր հողերի վարձագները 6 տարվա ընթացքում աճել էին հետևյալ շափերով:

Հասութաբեր հողամասեր	Վարձակները (ռուբլիներով)	
	1-ը հունվարի 1907 թ.	առ 1-ը հունվարի 1913 թ.
1. Սարիալի մարգագետին	2040	5520
2. Քարվանսարա Զուխար	110	300
3. Առեւլյան Ուշ-Օյուլու	900	2100
4. Շիշթափա № 1	314	1142
5. Շիշթափա № 2	166	1112
6. Ալադաղ	656	2200

²⁰ Воронцов-Дашков, Всеподданейшая записка по управлению Кавказским краем, 1907, стр. 60 («Ետակայում» Воронцов-Дашков, Всеподданейшая записка...).

Եթե Աղջիկի և Հաջի Մակինսկի հողամասերը 1907 թ. եկամուտ չէին տվել, ապա 1913 թ. նրանց եկամուտը համապատասխանաբար կազմել էր 212 ռ. և 1412 ռ.²¹: Հարկ չկա մեջ բերել այլ օրինակներ, որովհետեւ այսքանն էլ բավական է գյուղացիության սակավահողության և նրա շահագործման մասին գաղափար կազմելու համար:

Պաշտոնական աղբյուրները տալիս են նաև տեղեկություններ պետական հողերը վարձակալողների սոցիալական կազմի մասին: Այսպես, Երևանի նահանգում 1911 թ. եղել է 212 հողային հասութաբեր հանդակ 56250 դես. տարածությամբ, որը վարձակալվել է.

1) գյուղական համայնքների կողմից՝ 64 հանդակ 21081 դես. տարածությամբ,

2) գյուղացիական բնկեռությունների կողմից՝ 16 հանդակ 3814 դես. տարածությամբ,

3) գյուղացիության դասին պատկանող առանձին անհատների կողմից՝ 71 հանդակ 2023 դես. տարածությամբ,

4) այլ դասերից առանձին անհատների կողմից՝ 28 հանդակ 16803 դես. տարածությամբ:

Հողերը վարձակալությամբ տրվում էին 3,6 և 12 տարի ժամկետներով, ընդ որում հասութաբեր հողամասերից 100-ը 28366 դես. տարածությամբ վարձակալությամբ էին տրվել աճուրդի միջոցով²²: Այստեղից եզրակացնո՞մ ենք, նախ, որ ընդամենը վարձակալության տրված 56250 դես. մոտ 26000-ը անցել էր կուպակների և փողատերերի ձեռքը, որոնք այդ օգտագործում էին կամ ձեռնարկուական նպատակներով, կամ բարձր գներով շքավոր գյուղացիությանը վարձակալությամբ տալով, երկրորդ, որ բոլոր հողերի 50 տոկոսը վարձակալությամբ տրվել էր աճուրդի միջոցով: Որի պայմաններում վարձագինը խիստ բարձրանում էր: Հասութաբեր հողամասը հիմնականում անցնում էր կուպակների ձեռքը, որոնք հաճախ հանդես էին գալիս որպես գյուղական համայնքի կամ ընկերության «ներկայացուցիչներ»:

²¹ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 4951, թ. 21—22:

²² ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 2823, թ. 518:

Հողը վարձակալությամբ տրվելիս, որպես կանոն, անցնում էր ոչ թե ողջ համայնքի օգտագործմանը, այլ մեծ մասամբ վերստին ընկնում էր կուպակների ձեռքը: Այս առիվիվ կենինը, Տավրիկյան նահանգից կատարած ուսումնասիրություններից օրինակներ բերելով, գրում է. «Միաւ կլիներ կարծել, թե հասարակությունների գնած կամ վարձակալած հողերն այլ կերպ են բաշխվում, քան անհատական գնման կամ վարձակալության ժամանակ: Փաստերը հակառակն են ասում: Օրինակ՝ Տավրիկյան նահանգի ցամաքում գտնվող երեք գավառում տվյալներ էին հավաքված գյուղացիների հասարակությունների՝ գանձարանից վարձակալած հողերի բաշխման վերաբերյալ, ընդ որում պարզվեց, որ վարձակալած հողի 76 տոկոսը գտնվում է ունեսոր խմբի (ծխերի մոտ 20 տոկոս) ձեռքին, իսկ 40 տոկոսը կազմող շքավոր ծխերին ընկնում է վարձակալված ամբողջ հողի միայն 4 տոկոսը: Գյուղացիները վարձակալվող կամ գնվող հողերն այլ կերպ չեն բաշխում, քան «ըստ փողի»²³:

Այլ կերպ ասած, վարձակալությունը ոչ թե մեղմացնում էր բաժնեհողերի անհավասար բաշխումը կուպակության և շքավոր գյուղացիության միջև և վերացնում շքավոր գյուղացիության հողային սուր կարիքը, այլ փոստորեն մեծացնում էր հողի անհավասար տիրապետությունը գյուղում, ուժեղացնում էր շքավոր, սակավահող գյուղացիության կախումն աճող գյուղական բուրժուազիայից և զանազան տեսակի վաշխառուներից: Հաճախ շքավոր, քայլքայլվող գյուղացին վարձակալությամբ էր տալիս կամ վաճառում էր չնչին բաժնեհողը, երբեմն նույնիսկ միայն այն պայմանով, որ հարուստ համագյուղացին կատարի այդ բաժնեհողի վրա ընկնող հարկերի վճարումները, իսկ ինքը հեռանում էր բաղադր կամ բատրակություն էր անում կուպակների մոտ: 1913 թ. անբերի հության կապացությամբ Երևանի գավառի բաժնի հաշտարար միջնորդը հայտնում է նահանգներուն բաժնի հաշտարար միջնորդը հայտնում է նահանգապետին, որ գյուղացիության մեծ մասը ծանր տնտեսական վիճակում է գտնվում, կողմնակի աշխատանքների մի-

²³ Վ. Բ. Անդրեասյան, գ. 15, էջ 115:

չոցով է մի կերպ իր գոյությունը պահպանում։ Նա նշում է, որ Աղասիիքելու գյուղում չքավոր գյուղացիների 6 բնտանիքներ իրենց բաժնեհողերը տվել են ավելի ունեռ համագյուղացիներին՝ իրենց փոխարեն հարկերը վճարելու պայմանով, իսկ իրենք մեկնել են դատումների²⁴։

Վարձակալող գյուղացիների մեջ քանակով գերազանցում էին չքավոր տարրերը, որոնք վարձակալության էին դիմում իրենց ընտանիքի պահանջների բավարարման համար։ Այսպիսի պայմանները խիստ ծանր էին և կրում էին իրենց մեջ ճորտատիրության գգալի մնացորդներ։ Սակայն այդ ձևից կամ, ինչպես լենինն էր անվանում, պարենային վարձակալությունից բացի, գոյություն ուներ ձեռնարկուական վարձակալություն, կուլաների կողմից դրամավճար վարձակալություն, որին դիմուները քանակով շատ ավելի քիչ էին չքավոր վարձակալողներից, սակայն նրանց ձեռքին էր գտնվում վարձակալության տրված Հողերի կեսից ավելին։ Մ. Աղոնցի հաշվումների համաձայն Հայաստանում եղած 4261132 դես. ոչ բաժնեհողային վարձակալական հողից գյուղական բորժուազիան վարձակալում էր 329774 դես. կամ 71 տոկոսը, իսկ աշխատավոր գյուղացիումը՝ 132338 դես. կամ 29 տոկոսը²⁵, Վ. Ի. Լենինը հողի վարձակալության մասին ելքոպական Ռուսաստանում նշել է. «...եթե մեզ հարցնեն, թե Ռուսաստանում վարձակալության որ ձեւ է գերիշխում՝ պարենայինը, թե ձեռնարկուականը, կարիքից դրվածների, թե ունեռ գյուղացիների վարձակալությունը, ճորտատիրականը (աշխատավճարային, ստրկացուցիչ), թե բորժուականը—ապա միայն մեկ պատասխան կարող է լինել. Ըստ վարձակալող ծխերի թվի, անշուշտ, վարձակալողների մեծամասնությունը հողը վարձակալում է կարիքից դրված։ Գյուղացիների հսկայական մեծամասնության համար վարձակալությունը ստրկություն է. Ըստ վարձակալող հողի քանակի, անշուշտ կեսից ոչ

պակասը գտնվում է ունեոր գյուղացիության՝ գյուղական բորժուազիայի ձեռքին, որը կապիտալիստական երկրագործություն է կազմակերպում»²⁶։ Այդ նույն բանն էր տիրում նաև Հայաստանում։

Աղբանքա-կապիտալիստական հարաբերությունների գարգացման պայմաններում սակավահող, ծանր հարկերի ու պարտքերի տակ տնքող գյուղացիությունը քայլայվում էր. չնչին հողակտորը չէր բավարարում նրա նույնիսկ ամենամինիմալ սպառղական պահանջները, ուստի հարկադրված վաճառում էր այն և վերածվում կիսապրոլետարի, բատրակի, հեռանում զանազան քաղաքներ և առևտրային հողագործության տեսակետից զարգացած շրջաններ՝ իր օրվա ապրուստն ապահովելու համար։

«Կուն» թերթի թղթակիցը ն. գյուղեց գրում էր. «Դյուղացին, ինչպես ասացի, սաստիկ պակասություն էր զգուած Հոգի, սակայն այժմ նա զգալով այդ, ծախում է իր ունեցած մի թղեն տեղն էլ։ Հուսահատությունից, թե տպիտությունից, առանց մտածելու, հարուստի դուռը թակում են՝ հողը ծախելու համար, որը ոչ մի տրտունջ չհայտնելով, ուրախալի ժպիտը գեմքին՝ չնչին փողով խլում է նրա հողը։ Միթե աղքատը հոգի ունի զնզգնուուն ոսկի ունեցող հարուստի առաջ խոսել, իսկույն բանտ, և ահա անընդհաւութ ծախում են հողերն ու այգիները, արոտատեղիները և տնատեղերը։ Այսպիսով; գյուղացին անընդհաւութ զրկում է իր հողից, ավելի է վատանում նրա տնտեսականը»²⁷։ Միայն Ավան գյուղում 110 տնտեսություններից 25-ը ստիպված են եղել վաճառելու իրենց վարելահողերը։

Զնայած օրենքով թույլ էր տրվում գյուղացուն «գիշելու» միայն իր այգին, կալատեղը, տնտեսական շինությունները ուրիշ գյուղացու կամ կողմնակի անցի և բաժնեհողը՝ իր համագյուղացուն և ոչ մի դեպքում թույլ չէր տրվում վաճառել վարելահողը, սակայն գյուղացիները զանազան նույնիսկ ծածուկ միջոցներով վաճառում էին նաև իրենց

²⁴ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 7/70, գ. 409, թ. 77։

²⁵ Մ. Ածոնց, Էկономическое развитие Восточной Армении в XIX в., Ереван, 1957, стр. 340.

²⁶ Վ. Ի. Լենին, Տ. 15, էջ 109—110։

²⁷ «Կուն», 1912, № 12/19։

բաժնեհողերը: Իմանշալուի գյուղացի Գեղամ Մուսեյանի 1908 թ. մարտի 20-ին Երևանի նահանգապետին ուղղված խնդրագրից երևում է, որ նրա հայրը ժայռաստիճան աղքատության հետևանքով իր բաժնեհողը վաճառել է համագյուղացի Ավագ Օրդակին: Ճիշտ է, այդ վաճառքի գործարքը բացվում է, և բաժնեհողը վեր է ածվում սկզբում հասութաբեր հողամասի, իսկ հետո վերադարձվում է գյուղական համայնքի տնօրինությանը՝ այն կրկին նախկին հողատիրոջը չվերադարձնելու պայմանով²⁸, սակայն շատ սակավ էր պատահում, որ այսպիսի գործարքները բացվեին, մանավանդ, երբ դրանց մասնակից էին լինում կուլակները: Այսպես, Երևանի գավառի հաշտարար՝ միջնորդներից մեկը 1908 թ. ապրիլի 4-ին գեկուցագիր է ներկայացնում Գյուղացիական գործերի նահանգական ատյանին՝ գյուղացիների մեջ կատարվող պետական բաժնեհողերի առուծախի մասին. «Պրակտիկան ցույց է տալիս, որ պետական գյուղերի բրնակիչները իրենց ամեն տեսակի բաժնեհողերը վաճառում են թե իրենց համագյուղացիներին և թե կողմնակի անձանց, ընդ որում գնման և վաճառման գործարքները կատարվում են կամ տնավարի, կամ դատական օրդանների աջակցությամբ: Վերջին դեպքում, ամենից հաճախ կիրավում է հետևյալ միջոցը: Նազարովը հաշտարար դատավորին հայց է ներկայացնում Պողոսովի գեմ, թե այս վերջինը խլել է նրա բաժնեհողը. մի որոշ ժամանակ անցնելուց հետո նրանք երկուն էլ հայտարարություն են տալիս հաշտարար դատավորին, որ հաշտվել են իրար հետ հետևյալ պայմաններով. Նազարովը հրաժարվում է հողից, իսկ Պողոսովը վճարում է նրան մի որոշ գումար փող և խնդրում է հաստատել հաշտության գործարքը. գործարքի հաստատման վերաբերյալ դատավորի կազմած արձանագրությունը դառնում է երկու կողմերի համար էլ անվիճարկելի փաստաթուղթ»²⁹:

Ապրանքա-կապիտալիստական տնտեսության վերելքի

²⁸ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 7/70, գ. 216, թ. 4—5:

²⁹ «Ագրарная политика царизма...», стр. 145—146.

պայմաններում արագորեն բարձրանում են հողի գներն ամենուրեք և հատկապես՝ հարթավայրային շրջաններում: Կովկասյան գյուղատնտեսական ընկերության կողմից հրատարակող «տնտեսությունների» հիման վրա մենք կազմել ենք հետեւյալ աղյուսակները, որոնք պարզ կերպով ցույց են տալիս 1889 թ. մինչև 1913 թ. ընկած ժամանակամիջոցում Հայաստանում հողերի գների բարձրացումը: Այսպես, վարելահողի գեսատինի միջին գինը Երևանի նահանգում եղել է:

1889 թ. 249 ռ.

1899 թ. 314 ռ.

1902 թ. 407 ռ.

1909 թ. 437 ռ.

1911 թ. 537 ռ.

1912 թ. 669 ռ.

Հատկապես բարձր է եղել հողի գինը առեւրական հողագործության շրջաններում և ջրովի հողերի մեծ տարածություն ունեցող Երևանի գավառում: Եթե 1911 թ. Երևանի նահանգում գեսատինի միջին արժեքը եղել է 537 ռ., ապա Երևանի գավառում՝ 780 ռ., 1912 թ. Համապատասխանաբար՝ 669 ռ. և 1088 ռ. և այլն³⁰:

Ավելի հետաքրքիր են հողի առանձին տեսակների մասին տվյալները: 1913 թ. մեկ գես. հողի արժեքը (ոռութիւններով) Երևանի նահանգում ցույց է տրված աղյուսակում³¹:

Այս աղյուսակը ևս խոսում է այն մասին, որ հողի գները բարձր են եղել հատկապես Երևանի գավառում: Ինքը տինքյան հասկանալի է, որ այդշափ բարձր գներով հող կարող էին գնել միայն կուլակալին տնտեսությունները:

Գնալով բաժնեհողը կորցնում էր իր բերք, որովհետև շքավորությունը առերևությ էր համարվում բաժնեհողային տարածությունների օգտագործող, իրականում նրա հողերի

³⁰ Տե՛ս «Сельскохозяйственный обзор по Закавказью за 1909, 1911, 1912 и 1913 гг.»:

³¹ Խույն տեղում:

մեծ մասը վարձակալության և վաճառքի միջոցով ընկնում էր կուլակի, վաշխառուի օգտագործման տակ: Կուլակությունն ընդարձակում էր իր հողային սահմանները բաժնեհողերից դուրս, ձեռնարկուական տնտեսություններ էր ըստեղծում վարձակալած և գնած հողերի վրա: Լենինն այս

Գովառներ	Վարելահող		Արո- տա- վայր	Խաղողի այգիներ		Պտղատու այգիներ	
	Հա-	Տա-		Հա-	Տա-	Հա-	Տա-
Ալեքսանդրապոլ	—	—	—	—	—	1466	—
Նախիչևան	548	50	200	1812	—	1200	—
Սուլուառու	594	100	26	1016	500	633	—
Շ. Դարալազյակ	675	125	20	1000	—	750	—
Երևան	1007	—	315	1792	—	2000	—
Քջմածին	276	883	—	2833	—	—	—
Նահանգում (միջինը)	620	89	197	1691	500	5210	—

աւթիվ գրում է: «Հետեաբար մենք տեսնում ենք, իբրև ընդհանուր երկույթ, որ գյուղացիական տնտեսության մեջ բաժնեհողի գերը նվազում է: Այս նվազումը գյուղի երկու բեկեններում տարբեր ուղիներով է ընթանում: Զքավորության մոտ բաժնեհողի գերն ընկնում է, որովհետեւ աճող կարիքն ու քայլայումը ստիպում են նրան վարձակալության տալ, լքել հողը, պակասեցնել հողային տնտեսությունը անասունի, ինվենտարի, սերմի և դրամական միջոցների պակասության պատճառով և անցնել կամ որևէ չնշին վարձու աշխատանքի, կամ... դեպի երկնային արքայություն: Գյուղացիության ստորին խմբերը մեռնում են. սովը, ցինգան, տիգըն իրենց գործն են անում: Գյուղացիության բարձր խըմքերում բաժնեհողի նշանակությունն ընկնում է, որովհետեւ ընդլայնվող տնտեսությունն ստիպված է բաժնեհողի սահմաններից շատ ու շատ հեռու անցնել, ստիպված է կառուցել ոչ թե հարկադիր, այլ ազատ, ոչ թե վաղեմի տոհմային,

այլ շուկայում գնվող հողատիրության վրա՝ գնում ու վարձակալություն: Գյուղացիությունը որքան ավելի հարուստ է հողով, որքան ավելի թուլ են նորտատիրական իրավունքի հետքերը, որքան ավելի արագ է տնտեսական զարգացումը, նույնքան ավելի ուժեղ է բաժնեհողից այդ ազատվելը, ամբողջ հողն առևտրական շրջանառության մեջ ձգելը, առևտրական երկրագործություն կառուցելը վարձակալած հողի վրա»^{32:}

3. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԵՐԸ, ՏՈՒՔԵՐԸ, ՊԱՐՀԱԿՆԵՐԸ

19-րդ դարի վերջին Արևելյան Հայաստանի գյուղացիները բազմաթիվ հարկեր ու տուքեր էին մձարում, ինչպես նաև կատարում էին պարհակներ:

1900 թ. հունիսի 12-ի օրենքով 1901 թ. Կովկասում վերացվեց ծիսահարկը, հարկային հին կարգը, որն ապահովում էր կալվածատիրության բացառիկ արտոնյալ վիճակը հարկային գործում և փոխարենը մտցվեց հարկերի ու տուքերի գանձման այն կարգը, ինչ գոյություն ուներ Ռուսաստանի ներքին նահանգներում: Նոր օրենքով սահմանվում էր, որ պետական գյուղացիները վճարելու էին պետական հասութային տուքը, իսկ մասնատիրական գյուղացիների և կալվածատիրության հողերը հարկման էին ենթարկվելու պետական հողային հարկով: Հարկման չէր ենթարկվում միայն արքունիքի անմիջական սեփականություն հանդիսացող հողային փոնդը: 1900 թ. հունիսի 12-ի օրենքով հարկերի շափերը տարբեր նահանգների համար որոշում էին օրենսդրական կարգով, ենելով նրանցում եղած հողերի եկամտաբերությունից: Այնուհետև նույն աշխատանքը կատարվում էր նահանգում՝ գումարն ըստ գավառների բաժանելու համար: Այս աշխատանքները կատարվում էին պետական պարտների կողմէց յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ: Հարկային տեսուչները թուլ էին տալիս ամեն կարգի կեղծիքներ և շարաշահումներ: Նրանք որոշակի կերպով

32 Վ. Ի. Խենին, Հ. 15, էջ 117—118:

անց էին կացնում գյուղացիական հողերի քանակը և եկամտաբերությունը ուժացնելու, կալվածառիրական-կուլակային հողերի իրական եկամտաբերությունն իշեցնելու և դրանով իսկ հարկերի ամբողջ ծանրությունը գյուղացիական մասսաների վրա դնելու գիծը:

Անդրադառնալրվ այն հարցին, թե ինչ շափով «թեթևացրեց» հարկային նոր օրենքը գյուղացիության վիճակը և ինչ նպատակ ուներ դրա անցկացումը եռվկասում, փոխարքան որոշ թվական տվյալներ բերելուց հետո (որոնք, իհարկե, պաշտոնական և քիչ վստահելի աղբյուրներից էին վերցված), նշում էր. «Գյուղացիների և մասնավոր հողատերերի վճարումների հարաբերությունը ուժքորմից հետո համեմատաբար ավելի համաշափ դարձավ։ Մասնավոր հողատերի ունեցած հողից երկու անգամ ավելի հողի համար գյուղացիներն այժմ վճարում են ոչ թե քսան անգամ ավելի, այլ միայն 6 անգամ ավելի։ Այսպիսով, 1901 թվականի հարկային ուժորմը խստ աննշան շափերով անդրադարձավ գյուղացիների հողային հարկերի պակասում անդրադարձավ, սակայն նրա գլխավոր նպատակը բնավ էլ հարկային բեռի թեթևացումը շէր, այլ միայն նրա ավելի համաշափ բաշ-ինումը»³³։

Հարկային նոր օրենքով 1901—1903 թթ. համար պետական հասութային տուրքի գումարը որոշվեց պետական գյուղացիների օգտագործման տակ գտնվող հողի եկամտաբերության 12 տոկոսի շափով, վերջինիս 10 տոկոսը համարվում էր հողի դիմաց տրվող բահրան, իսկ 2 տոկոսը՝ պետական հողային հարկը³⁴։

Թե ինչպիսին էր կառավարության հարկային քաղաքականությունը գյուղացիության և կալվածատիրության նկատմամբ, երևում է նույնիսկ պաշտոնական տվյալներից. 1907 թ. պետական գյուղացիները 987571 դես. տարածություն հողի համար վճարելու էին 571372 դ. հասութային

³³ Воронцов-Дашков, Всеподданнейшая записка..., стр. 89—90.

³⁴ 1900 թ. հունիսի 12-ի հարկային օրենքի մասին մանրամասն տե՛ս Մ. Ն. Աղոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան, 1968, էջ 94—100.

տուրք կամ դեսյատինից 58 կոպ., գեմստվային տուրք՝ 325682 դ. կամ դեսյատինից 33 կոպ.: Պետական գյուղացիները կատարելու էին նաև ներքին գյուղական պարտադիր վճարումներ 255534 դ. կամ դեսյատինից 26 կոպ.: Ընդամենը պետական գյուղացիները վճարելու էին 1152588 դ. կամ յուրաքանչյուր 1 դես. հողի դիմաց մոտ 1 դ. 17 կ. Մասնատիրական գյուղացիներն իրենց օգտագործման տակ եղած 360596 դես. հողի համար վճարելու էին պետական հողային հարկ 18962 դ. կամ դեսյատինից ավելի քան 5 կոպեկ, զեմստվային տուրք՝ 85355 դ. կամ դեսյատինից մոտ 24 կոպ., ներքին գյուղական ծախսեր՝ 90955 դ. կամ դեսյատինից ավելի քան 25 կոպ.: Ընդամենը 195279 դ. կամ դեսյատինից 54 կոպ.: Սակայն պետական և համայնական հարկերից բացի, կալվածատիրական գյուղացիությունը բահրան էր վճարում նաև կալվածատիրոջը, որը 1907 թ. (դրամի վերածած) հավասար էր 928132 դ. կամ դեսյատինից 2 դ. 57 կ.: Այսպիսով, կալվածատիրական գյուղացիությունը 1907 թ. վճարելու էր պնտությանը, կալվածատիրոջը և գյուղական համայնքին 1123411 դ. կամ յուրաքանչյուր դեսյատին հողի դիմաց 3 դ. 11 կոպ.։

Պետական պալատների այս տվյալների մեջ առանձնացված են ինչպես տոհմիկ, այնպես էլ ոչ տոհմիկ դասին պատկանող կալվածատիրության հողերի հարկման թվերը։ Այսպես, տոհմիկ կամ արտոնյալ դասին պատկանող հողատերերը 68299 դես. հողից պետական հողային հարկ էին վճարելու 3032 դ. կամ դեսյատինից 4,5 կոպ., զեմստվային տուրք՝ 13924 դ. կամ դեսյատինից 20 կ.: Ընդամենը 16956 դ. կամ դեսյատինից մոտ 25 կոպ.: Ոչ արտոնյալ դասին պատկանող հողատերերը 22274 դեսյատին հողի համար վճարելու էին պետական հողային հարկ՝ 781 դ. կամ դեսյատինից 3,5 կոպ., զեմստվային տուրք՝ 3516 դ. կամ դեսյատինից մոտ 16 կ., համայնական ծախսեր՝ 4799 դ. կամ դեսյատինից 21,5 կ.: Այսպիսով, նրանք ընդամենը վճարելու էին 9096 դ. կամ դեսյատինից մոտ 41 կ.³⁵:

³⁵ Տե՛ս ՀԱՅ ԿՊԱ, ֆ. 31/94, դ. 7101, թ. 82—84 և ՎԱՀ ԿՊՊԱ, ֆ. 13, գ. 7, դ. 2653, թ. 45:

Այսպիսով, յուրաքանչյուր գեսյատին հողի համար եթե մասնատիրական գյուղացիները պարտավոր էին վճարել տարեկան 3 ռ. 11 կոպեկի զանազան տեսակի հարկեր և տուրքեր, պետական գյուղացիները՝ 1 ռ. 17 կ., ապա ու, արտոնյալ դասին պատկանող Յողատերերը վճարելու էին 41 կ., իսկ արտոնյալ դասին պատկանող կալվածատերերը մոտ 25 կ.:

Ցարական կառավարությունը տարիներ շարունակ ձբգձբում և Կովկասում չեր մտցնում զեմստվային ինքնավարություն, պատճառարանելով, որ Կովկասը գեռ «Հասունացել» տեղական ինքնավարության օրդաններ ունենալու համար։ Ձեմստվոների բացակայությունը չեր խանգարում ցարիքմին հարստացնելու իր գանձարանը։ Կալվածատիրությունը մինչև 1901 թ. համարյա ազատված էր զեմստվային տուրքերից։ Վճարում էր գանձող զեմստվային տուրքերի միայն 0,8 տոկոսը։ 1900 թ. հարկային նոր օրենքի հրատարակումից հետո էլ կալվածատիրությունը արտոնյալ վիճակի մեջ դրվեց, և զեմստվային տուրքերի մեծ մասն ընկավ գյուղացիության վրա։ Եթե Ռուսաստանի ներքին նահանգներում զեմստվային տուրքերի որոշ մասը հատկացվում էր տեղական ինքնավարություններին սոցիալ-կուլտորական ծախսերը հոգալու համար, ապա Հայաստանում, ինչպես նշում է պրոֆ. Դ. Շաքարյանը «Մինչսովետական Հայաստանի ֆինանսները» աշխատությունում³⁵, զեմստվային բյուջեի 36,8 տոկոսը ծախսվում էր ոստիկանության վրա։

1907 թ. փոխարքան կայսրին ուղարկած էր Հաշվետրվությունում ստիպված էր խոսսովանել, որ Հարկային ոեփորմից հետո Կովկասում զեմստվային 4,67 մլն ոութիւն գումարից միայն ոստիկանության և ազմինիստրացիայի ծախսերը կազմել են 61 տոկոսը, իսկ ժողովրդական կրթության համար հատկացվել է 4 տոկոս, բժշկական օգնության համար՝ 13 տոկոս։ «Մի կողմից, — գրում էր փոխարքան, — ինչպես վերը հիշատակել ենք, հարկային բեռի, այդ թվում և զեմստվային տուրքերի ամբողջ ծանրությունը մի շարք

³⁵ Տե՛ս Երեանի համալսարանի գիտական աշխատություններ, հ. 15.

տասնամյակներում ընկած է եղել միայն գյուղացիության վրա, մյուս կողմից զեմստվոյի միջոցները համարյա թույլ չեն տվել ոչ մի ծախս անել նրա սոցիալական կարիքների համար»³⁷։

Հատկապես ծանր էին մասնատիրական, վանքապատկան գյուղացիների հարկային պարտականությունները։ Դեռևս զգալի շափով պահպանվում էին ճորտային շատ պարհակները։ Գյուղացիները կատարում էին ոչ միայն կանոնագրերում գրանցված պարտականությունները, այլև կալվածատիրոջ պահանջով կատարում էին զանազան նատուրալ վճարումներ, աշխատանքային պարհակներ, ծառայություններ։

Բացի պետական, զեմստվային և համայնական, հարկերից, Հայաստանի զանազան շրջաններում կալվածատիրական և վանքապատկան գյուղացիները դաշտավարության արդյունքներից պարտավոր էին ըրպես բահրա վճարել բերքի $\frac{1}{10}$, $\frac{4}{30}$ կամ $\frac{6}{30}$ -ը, իսկ այգեգործությունից՝ բերքի $\frac{1}{10}$ — $\frac{4}{30}$ -ը կամ 1 ռ. 20 կ. յուրաքանչյուր 300 քառ. սաժեն տարածությունից։ Գյուղացիները զանազան վճարումներ էին կատարում նաև խոտով, յուղով, կաթնամթերքով, մսով և այլն։ Զանազան գավառներում, նույնիսկ գյուղերում գանձումները տարբերվում էին, բայց բոլոր տեղերում գյուղացիությունից վերցվում էր այնքան, ինչքան անհրաժեշտ էր գտնում կալվածատերը կամ վանքը։ Այդ առումով կանոնագրերում գրանցված պայմանները հաճախ ուղղակի ձևական բնույթ էին կրում։ Սեպալը, խոսելով Անդրկովկասի կալվածատիրական գյուղացիության հարկային պարտականությունների մասին, նշում էր. «Թեև մաշահաթը և բահրան կազմում են հողից ստացվող բերքի $\frac{1}{10}$ մասը, գալան՝ $\frac{1}{4}$ մասը, իսկ մուլքը՝ $\frac{4}{30}$ մասը, բայց սովորաբար կալվածատերերը չեն սահմանափակվում այդ բաժնով՝ գոնե Արևելյան Անդրկովկասում, այլ վեցնում են, ինչքան կարող են»³⁸։

³⁷ Воронцов-Дашков, Всеподданнейшая записка..., стр. 99.

³⁸ Л. Сегаль, Крестьянское землевладение в Закавказье, Тифлис, 1912, стр. 22—23.

XX դարի սկզբին Հաղպատի գյուղացիների պարտականությունները կալվածատեր Բարաթովի և վանքի հանդեպ ճորտային բնույթի պարհակների կատարման բնորոշ օրինակ են հանդիսանում: Բարաթովին էին պատկանում 41 գյուղացիական ծխեր, իսկ վանքին՝ 7 ծխեր: Այս երկու կարգի կախյալ գյուղացիներն էլ պարտադիր կարգով Հաղպատի վանքին տարեկան յուրաքանչյուր տնտեսությունից տալիս էին մեկ սալլ փայտ, մի մշակ, մատաղցու անառունի կեսը և կաշին, քահանայի կողմից կալն օրհնելու համար մեկական փութ ցորեն կամ գարի և այլն: Միայն վանքին պատկանող գյուղացիները վճարում էին նաև բերքի $\frac{1}{10}$ -ը, տալիս սպասավորներ և այլն: Կալվածատիրական գյուղացիները միաժամանակ հանդիսանում էին Բարաթովի հողերի վարձակալները, որի համար տարեկան վճարում էին 3000 ռ., իսկ որպես «Ժամանակավոր»—պարտավորյալ գյուղացիներ կալվածատիրոջ վճարում էին բերքի մեկ քառորդը, վառելափայտի տուրք՝ 5—25 ռ., յուրաքանչյուր կովից՝ 1 ֆ. յուղ: Մնում էր և ճորտային կոռը՝ գյուղը ամեն տարի 6—7 գութան էր ուղարկում իր աշխատողներով՝ Բարաթովի կալվածքները մշակելու համար, որտեղ նրանք մնում էին 20—25 օր: Բացի գրանից գարնանը ուղարկում էին 20—30 մարդ՝ կալվածատիրոջ այգիները մշակելու համար: Նատուրալ հարկերը գյուղացիներն իրենց միջոցներով էին փոխադրում Բարաթովի կալվածքը³⁹:

Գյուղացիները կատարում էին ոչ միայն նոր պարտությունները, այլև ճորտատիրության ժամանակից մնացած կոռը:

Դաժան տնտեսական կեղեքման էին ենթարկվում էշմիածնի վանքապատկան գյուղացիները: Երանք պարտավոր էին վանքին վճարել ստացած բերքի $\frac{1}{30}$ -ը, այգիների յուրաքանչյուր դեսյատինից՝ տարեկան 4 ռ. 80 կ., ծխահարկ՝ 4 ռ. 25 կ., իրենց միջոցներով փոխադրել վանքին հասանելիք բահրան, մարդիկ և սալլեր առանձնացնել վանքի և շրջակայքի բարեկարգման համար: Այսքանը միայն

պաշտոնապես է հայտնի, իրականում շահագործումը շատ ավելի ուժեղ էր: Այսպես, էշմիածնի վանքի գյուղատնտեսական բաժնի տվյալների համաձայն, մինչև 1907 թ. վանքը միայն Վաղարշապատ գյուղից տարեկան ստացել է որպես բահրա բերքի $\frac{1}{5}$ մասը, այն է.

1. բամբակ չմաքրած՝ 450—500 գութ 1500—1800 ռ. արժողությամբ,

2. ցորեն՝ 150—160 խալվար 4500—6000 ռ. արժողությամբ,

3. առվույտ՝ 7000—10000 խուրճ 400—500 ռ. արժողությամբ,

4. այգեհարկ՝ 1303 ռ.:

Ուրեմն միայն մի գյուղից վանքի հարկացին եկամուտը կազմել է մոտ 8000—9000 ռ.⁴⁰:

Երբեմն կալվածատերները կամ վանքերը հարկահավաքության հետ կապված գծվարություններից խուսափելու և կամ շահադիտական նպատակներով բահրա հավաքելու իրավունքը կապալով տալիս էին տվյալ գյուղի գյուղացիներին կամ առանձին վաշխառուներին, որոնք անասելի դաժանությամբ գյուղացիներից պոկում էին սահմանվածից շատ ավելի: Այդպիսի մի դեպք է նկարագրում «Բակ» թերթը «Ճորտային իրավունքը էշմիածնում» թղթակցությունում: Այնտեղ նշվում է, որ ամեն տարի էշմիածնը իրեն հասանելիք բահրան աճուրդի էր դնում և խոշոր գումարով հանձնում էր առանձին վաշխառուների: 1910 թ. վանքը Վաղարշապատ գյուղից գանձվող բահրայի հավաքման իրավունքը տալիս է կապալառունուրին, որոնք այնպիսի դաժանությամբ են կեղեքում բնակիչներին, որ վերջիններս ամբողջ գյուղով շարժվում են դեպի վանքը, բողոքում և շեղյալ են հայտարարել տալիս այդ կեղեքից պայմանագիրը: Այնուհետև թերթը շարունակում է «Օշականում ևս նույնը տեղի ունեցավ: Ցորեն հավաքելու գործը կապալով

³⁹ Տե՛ս Մէի հարկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 40, գ. 5, թ. 56—59:

վերցրել են նույն այն մարդիկ, որոնց վաղարշապատցիները վոնդել էին իրենց գյուղից։ Սովորաբար Օշականը վանքին տալիս էր 60 խալվար (խալվարը 30 փութ է), այսինքն 1800 փութ ցորեն, իսկ այս տարի վանքը կապալը տվել է այդ նույն մարդկանց 95 խալվարով, այսինքն 2850 փթով, իհարկե, գյուղացիներից կաշի քերթելով կվերցնեն համամասնորեն մի այդքան էլ ավելի։

Բացի դրանից, վերջին տասնամյակներում վանքը «բահրա» (ցորենի բնահարկ) չի հավաքել այսպես կոչված «բախստ» հողերից, որովհետև այդ հողերից գանձվում էր սահմանված դրամական հարկ։ Բայց այս տարի կապալառուների հետ կնքած պայմանագրի մեջ վանքը պարտադիր պայման է դրել ցորեն հավաքել նաև այդ հողերից։ Այս հանգամանքը մի ժամանակ հուզմունքների և գյուղացիների ու վանքի կառավարիչի միջև բնդարւմների պատճառ է եղել և հավանորեն, այդ նույնն է մեզ սպասում նաև առաջիկայում։

Այնուհետև վանքը կապալառուներին կապալով է տվել նաև բահրայի գանձումը նորվարդ և Մաստարա գյուղերում, ուր գնացել են շահագործողները և գիշատիչ տարրերի տակաները, որոնք, համենայն դեպս, Օշականում և Վաղարշապատում գործողներից լավ չեն⁴¹։

Խոշոր կեղծիքներ էին կատարում կալվածատերերի հարկահավաքները՝ «սարքարները», որոնք բնավճարը հաճախ որոշում էին աշքաշափով, կալվածատիրոջ կամ իրենց օգտին։

Գյուղացու դրամը կորպում էին նաև պետական հարկահավաքները, Զնայած այն կարգին, որ ամեն տարի ստացած հարկերի, առողքերի, գանձումների հավաքման և ծախսման մասին հաշվետվություն էին տալիս գյուղական ժողովին, նրանք կարողանում էին հաստատել տալ իրենց զանազան ապօրինի ծախսումները, յուրացումները՝ մացնելով դրանք զանազան ծախսումների մեջ։ Այսպես, Երևանի գավառի Թաղաքենդ գյուղի 1913 թ. սեպտեմբերի 29-ի ժողովում լր-

սել են Հարկահավաքի հաշվետվությունը 1912 թ. վերաբերյալ, ըստ որի 187 ծխից բաղկացած գյուղը վճարելու էր.	
1. Պետական հասութային տուրք	4575 ռ. 69 կ.
2. Զեմստվային տուրք	2787 ռ. 06 կ.
3. Միութին	109 ռ. 60 կ.
4. Գյուղի կարիքներին	293 ռ. 43 կ.
5. Առուների մաքրման համար	591 ռ. 70 կ.
6. Գյուղապետին	100 ռ.
7. Տանուտերության թեկնածուին	40 ռ.
8. Չառչին	100 ռ.
9. Քահանաներին	50 ռ.
10. Հարկահավաքին	50 ռ.
11. Հովվարներին	200 ռ.
12. Էջմիածնի վանքին	32 ռ.
13. Գյուղական գրագրին	50 ռ.
14. Արիստակես Սիմոնյանին	40 ռ.
15. Դաշտային պահակներին	50 ռ.
16. Հարկամատյանների համար	5 ռ. 20 կ.
17. Տանուտերի վարձատրություն	20 ռ.
18. Պետական տուրքենի պակաս բաշխված լինելոց մնացած գումարը	37 ռ. 42 կ.

Ընդամենը գյուղը վճարելու էր պետական և համայնական տուրքեր, հարկեր և այլ գումարներ 9131 ռ. 10 կ.։ Հետաքրքրիր է, որ Հարկահավաքի «հաշվետվություն» հաստատվում էր, երբ ժողովին 187 ծխերից մասնակցում էին միայն 71-ը։ Նույն ձևով էր տեղի ունենում այդ «հաստատումը» նաև նորագավիթ, Զարբար և այլ գյուղերում⁴²։

Գյուղացիները հաճախ բողոքում էին հարկահավաքները ապօրինությունների դեմ։ Այսպես, Երևանի գավառի Զառ, Թութիա և այլ գյուղերից 1913 թ. խնդրագրեր ուղարկվեցին հաշտարար միջնորդին այն մասին, որ գյուղապետը և հարկահավաքը զանձում են սահմանվածից շատ հարկեր։ Կյուրացնում հավաքած գումարների մի մասը⁴³ իսկ Բաշգյառի

⁴¹ ՀԱՅՀ ԿՊԱ, ֆ. 2, գ. 1779, թ. 8—9.

⁴² ՀԱՅՀ ԿՊԱ, ֆ. 7/70, գ. 114, թ. 15.

⁴³ ՀԱՅՀ ԿՊԱ, ֆ. 7/70, գ. 114, թ. 15.

գյուղից 1910 թ. սեպտեմբերի 10-ին գրում էին, որ գյուղապետը և Հարկածավաքը հարկածատյաններում նշված գումարներից բացի ամեն մի խալվար հողի համար գյուղացիներից գանձում էին 15 կոպ., որը ամբողջ գյուղից կազմում էր 50 ռ. 40 կոպ. և ամեն մի ծխից՝ ՅՈ-ական կոպ.⁴⁴: Սակայն գյուղացիների բողոքները մնում էին անհետանք: Յարական սատրապները միշտցների մեջ խարություն չէին դնում պետական ու մասնատիրական հարկերը հավաքելու գործում, միայն գյուղանում էին գյուղացիական տնտեսությունների վերջնական քայլայումից, քանի որ դրանով կկորցնեին իրենց եկամուտի մշտական աղբյուրը:

4. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ, ՎԱՇԽԱՌՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆՐ ՎԱՐԿ

Գյուղացիության պարտքերի առաջացման աղբյուրները տարբեր էին, սակայն բոլորի հիմքում էլ ընկած էր այն, որ գյուղացին սակավահող էր և դաժան շահագործման էր ենթարկվում թե՛ կալվածատիրության ու կուչակության, թե՛ պետության կողմից: Հիշատակենք գյուղացիական պարտքերի առաջացման մի քանի աղբյուրներ: 1. Հենց բաժնեհողից քիչ եկամուտ ստանալու հետևանքով շքավոր գյուղացիության մի զգակի մասը չէր կարողանում ժամանակին վճարել հարկերը և տարեցտարի ավելի էր ընկղմվում պարտքերի մեջ: 2. Խոշոր շափերի էին հասնում գյուղացիության պարտքերը պետական հասութաբեր հողամասերի և արոտավայրերի օգտագործման դիմաց, ընդ որում զգալիորեն աճում էին նաև դրանց ուշացման տոկոսները: 3. Ամբողջ Հայաստանում, հատկապես անքերի տարիներին, պետական «օժանդակություն» (հացահատիկ, դրամ) էր ցույց տրվում սովոր բնակչությանը, որի ժամանակ տեղի էին ունենում շինովնիկների և տեղի կուլակների կողմից հափշտակումներ, շարաշահումներ, գյուղացիության ձեռքը շատ քիչ բան էր ընկնում, և նրա տնտեսական ծանր վիճակն ավելի էր վատանում: տարինեռ շարունակ նա չէր կարողանում մարել այս նոր, լրացուցիչ

⁴⁴ Նույն տեղում, գ. 45, թ. 117—119:

հարկը: 4. Գյուղացիության վրա տարեցտարի կուտակվում էին պարտքեր պետական սահմանագծումների և հողաշինարարական աշխատանքների դիմաց վճարումները ուշացնելու համար: 5. Զքավոր գյուղացիությունը հողերի վարձակալության, հարկերն ու պարտքերը վճարելու, ինչպես նաև իր ընտանիքի գոյությունը պահպանելու համար ստիպված էր լինում թակել գյուղացիական ցեցերի՝ վաշխառուների դռները:

Գյուղացիության պարտքերի գումարի մասին որոշ պատերացում կազմելու համար վերցրել ենք Երևանի նահանգի 1909 թ. պաշտոնական տվյալները: Ապառիկները եղել են.

1. Սահմանագծման աշխատանքների ծախսերից	126697 ռ.
2. Հարկերից	41135 ռ.
3. Զեմաստվային տուրքերից	71933 ռ.
4. Զինվորական տուրքերից	4642 ռ.
5. Հողային հարկեր	13283 ռ.
6. Ժամկետը երկարաձգված պարտքերից	365406 ռ.
7. Այլ կարգի պարտքերից	141036 ռ.

Այս տվյալները ցույց են տալիս, որ պարտքերի գումարն անցնում էր 760.000 ռուբլուց⁴⁵: Այս գումարի մեջ չէին մըտնում այն խոշոր պատուիկները, որ գյուղացիությունն ուներ հասութաբեր հողամասերի և մթերային «օժանդակության» դիմաց: Միայն պետական ունեցվածքի դեպարտամենտի գրծով եղած հասութաբեր հողերի և արոտավայրերի օգտագործման դիմաց, ըստ պաշտոնական տվյալների, 1907—1911 թթ. ընթացքում ապառիկները կազմել են. 1907 թ.՝ 97973 ռ., 1908 թ.՝ 96857 ռ., 1909 թ.՝ 106041 ռ., 1910 թ.՝ 112814 ռ. և 1911 թ.՝ 115042 ռ., սրանց մեծ մասն ընկնում էր շքավոր գյուղացիության վրա⁴⁶: Նույն էր վիճակը նաև պետական մթերային «օժանդակության» 1906—1907 և 1907—1908 թթ. կամպանիաների ժամանակ գյուղացիությա-

⁴⁵ ՎԱՍՀ ԿՊՊԱ, գ. 13, գ. 15, գ. 2452, թ. 16:

⁴⁶ ՀԱՍՀ ԿՊՊԱ, գ. 133, գ. 2823, թ. 283:

Նը տրված վարկերի ապառիկների գանձման գործում։ Այդ աշխատանքների ժամանակ, ինչպես նշեցինք, իսկական օգնությունը հասնում էր գյուղի հարուստներին և շինովնիկներին, այդ է վկայում 1914 թ. անբերիության հետեանքով պետական «օժանդակություն» կազմակերպողների շարաշահումների մասին թաշաբարանի շքավորների հեռագիրը փոխարքային։ «Հայտնում ենք Ձեզ ի գիտություն, որ փոխարինաբար տրվող պարենի բաշխումը սրբությամբ չի կատարվում, ընդհակառակը, շքավորներին մերժում են, իսկ ունկորներին տալիս են... Զքավոր գյուղացիությունը ծայրահեղ կարիքի մեջ է, ինդրում ենք կարգադրել քննելու մեր դիմումի արդարացնելությունը»⁴⁷։

Չնայած այդպիսի շարաշահումներին, գյուղացիությունն ստիպված էր դիմել պետական «օժանդակությանը», որովհետև անբերիության հետևանքով ոչ միայն սովոր էր մատնըված, այլև չուներ նույնիսկ հաջորդ տարվա սերմացու Այնպիսի խոշոր շափեր էին ընդունել պետական «օժանդակության» դիմաց գյուղացիության ունեցած պարտքերը, որ տարիներ շարունակ իրենց հողաբաժններից ստացած ամբողջ եկամուտը տալու միջոցով էլ նրանք չեին ազատվում դրանցից։ Երևանի նահանգապետն այս կատակցությամբ գորում էր. «Ես ի նկատի ունեմ 1906, 1907 և 1908 անբերի տարիներին նահանգի բնակչության կողմից սնվելու և որպես սերմացու ստացած պաքնային փոխատվության մարումը, — փոխատվություն, — որի դիմաց հաշվետու տարում բառացիկ է 152026.39 ռ. ըստ այսմ, վերջին հաշվով չի կարելի շնանգել այն եղրակացության, որ հաշվետու տարում նահանգին վիճակված բերքի համարյա բոլոր բարիքները բնակչությունը հատկացրել է ամենից առաջ համապետական կառիքներին»⁴⁸։ Այսուհենդեմ, առ 1-ը հունվարի 1912 թ. նահանգի գյուղացիությունը 1906—1907 և 1907—1908 թթ. թերային կամպանիաների ժամանակվանից եկող ապառիկ-

ները չի կարողանում մարել և պարտք է մնում դեռևս 365060 ռ.⁴⁹։

Պետական գանձարանին ունեցած պարտքերի գումարի այս շափերն արդեն անառարկելիորեն խոսում են այն մասին, որ գյուղացիության հակայական մեծամասնությունը Հայաստանում գտնվում էր մշտական պարտապանի վիճակում։ Գյուղացիության թշվառ վիճակն ավելի ակնառու երևում է, երբ անդրադառնում ենք առանձին գյուղերի։ 1907—1908 թթ. ստացած պետական «օժանդակության» դիմաց 1912 թ. գեռևս պարտք էին մնում Գյամբեզ գյուղը՝ 2639 ռ., Քյամալը՝ 3045 ռ., Ճաթղուանը՝ 3812 ռ., Թութիան՝ 3966 ռ., Քյուլուշան՝ 3980 ռ. և այլն⁵⁰։ Նոր-Բայազետի գավառի 556 ծիսց բաղկացած նորագուզ գյուղը 1907 թ. պետությունից վարկ է վերցնում, որը գնահատվում է մոտ 30000 ռ.։ Ոստիկանության միջոցով գյուղացիներից 5 տարվա ընթացքում հավաքվում է մոտ 23000 ռ., և գյուղի քայլքայումն այն աստիճանի է հասնում, որ նույնիսկ հարկային տնառչը և հաշտարար միջնորդը հարց են հարուցում նահանգապետի առաջ մնացած 6818 ռ. ապառիկի վճարումը երկու տարով երկարաձգելու մասին՝ անհանգստանալով, որ գյուղացիները կարող են վերջնականապես քայլքայվել և վճարունակությունը լրիվ կորցրենք⁵¹, «Գործ» թերթի 1909 թ. № 13-ում Շամշադինից ըստացված մի թղթակցության մեջ թովովի գյուղացիության թշվառ վիճակի մասին նշշում էր. «Նույն երկու հարյուր տուն ունեցող թովուզ գյուղում հարց ու փորձից երևաց, որ գուցեք քսան տուն գտնվի, որ պարտք չունենա, մնացածները մինչև կոկորդ խրված են պարտքերի մեջ, այդ գյուղը համարվում է միջակը մեր վիճակում։ Մի ամսվա ընթացքում երեք անգամ հարկը բաժանեցին գյուղացոց վրա։ Դեռ չեին հավաքել արքունական հարկը, հեռագիր ստացվեց, թե թիֆլիսի պարտքը, որ վերցրել են թուրքերի վնասները վճարելու (մոտ 30000), կամ ուղարկեցեք կամ մուրհակն ուղարկում ենք դատարան»։

⁴⁷ Նույն տեղում, ֆ. 49/113, գ. 346, թ. 25։

⁴⁸ ՎՍՈՀ ԿՊԱ, ֆ. 13, գ. 15, գ. 554, թ. 6։

⁴⁹ Նույն տեղում։

⁵⁰ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 49/113, գ. 302, թ. 2—3։

⁵¹ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 28/91, գ. 322, թ. 13։

ԱՀա այս պարտքերի, հարկերի, պարհակների գանձում-ներից խեղդված, կիսաքաղց վիճակում գտնվող գյուղացին, ընտանիքը պահելու անհրաժեշտությունից դրդված, դիմում էր վաշխառուին և նորանոր պարտքերի տակ ընկնում: Վաշխառուից փող պարտք վերցնելը նշանակում էր շտեսնված բարձր տոկոսներ վճարել, հողը և տունը գրավ դնել, աշխատել նրա մոտ որպես կախյալ գյուղացի և, ի վերջո, այդ բոլորի հետ միասին, նրան տալ սկզբում իր աշխատանքի միջոցով հողից ստացված ողջ եկամուտը, ապա նաև շարժական, անշարժ գույքը, տունը և հողաբաժինը: Ամեն տեսակի կեղծիքների, շարաշահումների, ստորությունների դիմում էին գյուղական փողատերերը իրենց դրամագլուխը մեծացնելու համար: Այս մասին հետաքրքիր տվյալներ է բերում Ս. Զավարյանը: Ըստ նրա անձնական ուսումնասիրությունների, Զանգեզուրի 6 գյուղերում գյուղացիության պարտապանության մեծացումը հետեւյալ պատկերն է իրենից ներկայացրել⁵²:

Գյուղեր	Քանակը	Պարտապանակիք		Պարտքի ընդհանուր գումարը		Վերջին երեք տարում աշխատել է	
		1903 թ.	1906 թ.	1903 թ.	1906 թ.	պարտապանակիք	պանակը
Քարահունչ	192	120	170	1500	25000	50	10000
Տեղ	700	400	650	25000	45000	250	20000
Բռնակոթ	410	350	350	20000	25000	—	5000
Թագաղուուղ	102	50	60	3000	5000	10	2000
Հարաբեկիսա հայկական	120	45	60	4000	6000	15	2000
Հարաբեկիսա ազգբնիքանական	80	20	30	3000	4000	10	1000
Հնդամենը	1604	935 կամ 61,5 տոկոս	1320 կամ 82,5 տոկոս	70000 ծիսն 71 ռ. տոկոս	110000 ծիսն 83 ռ. տոկոս	335 կամ 34 տոկոս	40000ռ կամ 57 տոկոս

⁵² С. Заварян, Экономические условия Карабага и голод 1906—1907 гг., С. Петербург, 1907, стр. 55.

Հատկապես մեծ չափերով ավելանում էր վաշխառուների ցանցն ընկնողների թիվն այն ժամանակ, երբ լինում էին երաշտի, անբերրի տարիներ կամ գյուղացու տնտեսությունում անակնկալ գրախառություն էր պատահում: «Բավական է միայն, որ մանր գյուղացու կովը սատկի,—գրում է Մարքուր, —և ահա նա այլևս անկարող է իր վերարտադրությունը հին մասշտաբով վերսկսելու: Սրանով նա ընկնում է վաշխառուի ճանկը, իսկ մի անգամ նրա ճանկն ընկնելով՝ այլևս երբեք չի ազատվում»⁵³:

Գյուղացիները հաճախ պարտքի դիմաց գրավ էին դնում իրենց բաժնեհողը և քանի որ սովորաբար տպրիներ շարունակ չէին կարողանում մարել իրենց պարտքը, ապա հողն անցնում էր վաշխառուի տնօրինությանը, երբեմն նույնիսկ գյուղացու կողմից արվող աշխատողի հատ միասին. «Վարկի այդքան ժամաների հետևանքով հազվագել չէ բաժնեհողերի անցնելը նման վաշխառուների ձեռքբ: Եթե փոխառությունը արված է հողը գրավ դնելով, ապա պարտքը շվճարելու գեպքում հողն սկսում է մշակել վաշխառուն, իսկ հողատերը փաստորեն դառնում է հողագուրկ: Այս գրության հետևանքով գյուղի պարտքերը տարեցտարի աճում են»⁵⁴:

Զավարյանը Զանգեզուրի շրջանի գյուղացիների մասին նշում է, որ նրանք սովորաբար պարտք էին վերցնում 20—30 տոկոսով, սակայն սովի ու հայ-ազդրեցանական կոտորածների ու դրանց հետ կապված դժվարությունների պայմաններում գյուղացիները պարտք էին վերցնում 50 և ավելի տոկոսով: Առանձին դեպքերում վաշխառուների պարտք տալու պայմաններն ուղղակի սոսկալի էին, երբ նրանք վամպիրի նման ծծում էին իրենց ձեռքն ընկածների արյունը: Զավարյանն օրինակ է բերում Քարահունջ գյուղից. մի գյուղացի հինգ տարի առաջ (մոտ 1902 թ.) «ընդունված պայմանով» վաշխառուից պարտք է վերցնում 50 ռ.: Ժամանակին պարտքը շվճարելու հետևանքով գումարը աճում է, գյուղացին մինչև 1907 թ. վճարում է 50 ռ., տալիս է իր 2 նոր, 21 փութ ցո-

⁵³ Կ. Մարգուր, Կապիտալ, հ. 3, մայ 2, էջ 142:

⁵⁴ «Извлечения из журналов местных комитетов...».

րեն և գրավ է դնում վաշխառուի մոտ իր 2 ռեսյատին հողը, ընդ որում այդ ժամանակ արդեն երրորդ տարին էր, որ վաշխառուն օգտվում էր նրա հողից: Պարտապանը մահացել էր, իսկ նրա որդին ուներ դեռևս էլի 50 ո. պարտք և դրա տոկոսների դիմաց նրա 22-ամյա եղբայրը առանց հատուցման աշխատում էր վաշխառուի մոտ⁵⁵:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչ դեր է խաղացել առևտրական, վաշխառուական կապիտալը գյուղում, նըպաստե՞լ է արդյոք գյուղացիության քայլքայմանը, «ապագյուղացիացմանը», գյուղատնտեսության մեջ կապիտալիստական արտադրության և ձեռնարկատիրության զարգացմանը, թե պարփակվել է զուտ ինքնուրույն վաշխառուական, ոչ արտադրական գործարքներով և դրանով իսկ երկարաձգել գյուղացիության արագ քայլքայման պրոցեսը: Լենինը «Կապիտալիզմի զարգացումը նուաստանում» աշխատության մեջ, դեկավարյալով այդ հարցի մասին Մարքսի տեսական դրույթներով, նշում է առևտրային, վաշխառուական կապիտալի երկու կողմը, որը, մեր կարծիքով, արտահայտվել է նաև Հայաստանում: Ըստ Մարքսի, առևտրային ու վաշխառուական կապիտալը պատմականորեն նախորդում է արդյունաբերական կապիտալի գոյանալուն, ինչպես նաև նրա գոյացման անհրաժեշտ պայմանն է, բայց ինքնըստինքյան դա դեռ բավարար պայման չէ կապիտալիստական արտադրության գոյացման համար: Վերջինիս գոյացումն ամբողջովին կախված է զարգացման պատմական աստիճանից, արտադրական եղանակի բնույթից: Լենինը, հենվելով այս դրույթների, ինչպես նաև Մարքսի այն դրույթի վրա, որ առևտրային կապիտալի ինքնուրույն զարգացումը հակառած ճարաբերության մեջ է կապիտալիստական արտադրության զարգացման աստիճանի հետ, գալիս է այն եղանակացության, որ ուսական համայնական գյուղում առևտրական կապիտալի դերը միայն ստրկացմամբ ու վաշխառությամբ, ինքնուրույն դրամական գործարքներով չի սպառվում, այլ նա գործադրվում է նաև արտադրության

վրա՝ հող գնելու, տնտեսությունը բարձրավելու, գործիքներ ձեռք բերելու, վարձու աշխատանքի օգտագործման համար և այլն: Դրանով իսկ նպաստում է գյուղացիության հետագայությաման, վարձու աշխատողի վերածման, գյուղատնտեսության մեջ կապիտալիստական արտադրության ձեռնարկատիրության հետագա ծավալման գործին: Լենինը գրում է՝ «Վերջապես, վերևում քննված տվյալներից այն կարևոր գրույթն է հետևում, որ առևտրային ու վաշխառուական կապիտալի ինքնուրույն գարգացումը մեր գյուղում կասեցնում է գյուղացիության քայլքայումը: Որքան ընդարձակվի առևտրի զարգացումը՝ մոտեցնելով գյուղը քաղաքին, դուրս մղելով գյուղական պրիմիտիվ շուկան և քայլքայելով գյուղական խանութպանի մոնուպուլ դրույթունը, որքան ավելի զարգանան վարկի եվրոպական կանոնավոր ձեռքը, դուրս մղելով գյուղական վաշխառուին,—այնքան ավելի ընդարձակ ու ավելի խոր պետք է լինի գյուղացիության քայլքայումը: Ունենոր գյուղացիների կապիտալը, որ դուրս է մղվում մանր առևտրից ու վաշխառությունից, ավելի լայն շափերով կգործադրվի արտադրության մեջ, որտեղ այժմ արդեն սկսում է գործադրվել այն»⁵⁶:

Հայաստանը XIX դարի վերջին և XX դարի սկզբին այնպիսի շրջան էր ապրում, երբ զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները: Գյուղատնտեսության մեջ ապրանքա-դրամային հարաբերությունները սկսում էին զարգանալ, և առևտրային ու վաշխառուական կապիտալը հետզհետե զուտ ինքնուրույն դրամական գործարքներից ավելի ու ավելի էր ներգրավվում արտադրության ոլորտի մեջ, ընդ որում այս պրոցեսն ավելի արագ տեղի էր ունենում արդյունաբերական նշանակություն ունեցող և նրան հումք մատակարարող բամբակագործական-խաղողագործական հարթավայրային շրջաններում: Եսա փողատեր վաշխառուներ ընդարձակում էին, իրենց հողային տարածությունները, կատարելագործում գործիքները և իրենց տնտեսության մշակման եղանակները՝ ավելի շատ գյուղատնտեսական ապրանքային հումք ստանալու համար: Վաշխառուական, առևտրային կապիտալի ար-

⁵⁵Տե՛ս Ա. Զավարյան, նշված աշխատությունը, էջ 59:

տաղրական նպատակներին ծառայելու և կոնկրետ արտադրության հետ կապվելու օգտին է խոսում այն փաստը, որ 1908 թ. Ղամարլուի շրջանում 20 տեղացի հարուստ փողատերեր 40 փայերով (յուրաքանչյուրը 2500 ռ.) միացել, ըստեղել են «Արաքս» արդյունագործական-փայտիրական ընկերությունը, որը դրամագործին օգտագործում էր տեղացիներից օդի գնելով (այն 96—98°-անոց սպիրտ պատրաստելով ուղարկվում էր Ռուսաստան)՝⁵⁷:

Զմոռանալով, որ դեռևս վաշխառուական կապիտալը խոշոր չափերով մնում էր ինքնուրույն, գյուղացիության ըստըրկացման գործարքների միջոց (մանավանդ առևտրային հողագործության տեսակետից քիչ զարգացած նախալեռնային և լեռնային շրջաններում), առևտրային-վաշխառուական կապիտալի երկրորդ կողմը (այսինքն՝ արդյունաբերական կապիտալի հետ միահյուսվելը) ևս արագ կերպով զարգանում էր: Լենինը նշում է, որ դրա մեջ որոշ դեր էր կատարում նաև մանր վարկի հիմնարկների կազմակերպումը, որի հետևանքով գյուղում ազատված վաշխառուական կապիտալը ավելի լայն կերպով էր կարողանում իր միջոցները ծառայեցնել արտադրական նպատակներին:

Հայաստանում վարկի հիմնարկների առաջացումը կախված էր գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման հետ, եթե ապրանքա-դրամային հարաբերություններին, առևտրային հողագործության պայմաններին հարմարվելու համար գյուղական բուրժուազիայի, ինչպես նաև գյուղացիության միջակ և չքավոր մասսաներին անհրաժեշտ են լինում լրացուցիչ դրամական միջոցներ, վարկեր: Ընդ որում, եթե կուլակությունը և մասսմը միջակ գյուղացիությունը դրահետեանքով միջոցներ են ձեռք բերում և բնդպայնում իրենց տնտեսությունը, ապա գյուղացիության մեծամասնության այդ վարկն անհրաժեշտ է գլխավորապես սպառողական նրապատակների համար:

Հայաստանում վարկային կոռպերացիայի առաջին հիմնարկները կազմակերպվեցին XX դարի հենց սկզբին և քա-

նակապես աճեցին 1906—1914 թթ.: Երեանի նահանգապետի 1911 թ. հաշվետվության մեջ ասվում է, որ մանր վարկի հիմնարկները «...հաշվետու տարում էլ ավելի զարգացրին երկնց գործողության ոլորտը ոչ միայն քանակական, այլ նաև որակական տեսակետով»⁵⁸: Նահանգապետը գտնում էր, որ այդ հիմնարկները իր կուլապրական կենտրոններ են, որոնց հիոցով «բնակչության մասսաների մեջ թափանցում են ոչ բնակչության վաշխառուների և կուլակների ճնշումից զարտվելու գաղափարը, այլև բոլոր նախաձեռնություններն ագրոնոմիական, և ընդհանրապետական գյուղատնտեսական կուլուրայի բնագավառում»⁵⁹: Իսկ դաշնակցական «Փայլակ» ներթի 1907 թ. № 4-ում խմբագրական հոդվածն ասում է, որ այժմյան պայմաններում սոցիալիզմին անցնելու միակ հնարավոր միջոցը կոռակերացիան է, որը ոչ միայն բարձրացնում է աշխատավորների նյութական վիճակը, այլև զարգացնում է նրանց «հասարակականապես», «քաղաքականապես», ուղի հարթում գեպի «կատարյալ համայնականությունը, դեպի սոցիալիզմը»⁶⁰: Ցարական պաշտոնյաների ու դաշնակցական տեսաբանների կողմից առաջ քաշվող այն տեսակետը, թե կոռոպերացիան գյուղացիական մասսաների օգնության համար է ստեղծված, զուտ պատրանք էր, այն կամենում էր շեղել նըրանց դասակարգային պայքարի ճիշտ ուղղուց: Լենինն այդ մասին գրում էր, որ սուս է այն բանը, որ իրը «ամեն տե-

⁵⁸ ՎՍՍՀ ԿՊՍՀ, ֆ. 13, ց. 15, գ. 554, թ. 6:

⁵⁹ ՎՍՍՀ ԿՊՍՀ, ֆ. 13, ց. 15, գ. 554, թ. 6:

⁶⁰ Հետաքրքիր է նշել, թե դաշնակցական մի այլ, լրագրում նույն 1907 թ. ապագրված գյուղական մի թղթակցության մեջ ինչպես է նկարագրվում այդ դաշնակցական «սոցիալիզմի» հիմք հանդիսացող կոոպերացիաի գործունեությունն Աշտարակ գյուղում: «Բանկը (վարկային ընկերությունը—Մ. Խ.)» հակառակ իսկական նպատակին, փոխանակ գործնական միջոցներով կովելու վաշխառության զեմ, ընդհակառակը գրգռում է իր զեկավարներից մի քանիսի վաշխառության ախորժակը, խորհրդի անգամ՝ Կարապետ Դոնալյանը իրեն իրավունք է համարում փող վերցնել գյուղական բանկից 10 տոկոսով և բաց թողնել գյուղացիների վրա 20—24 տոկոսով, իսկ նախազահ Կարապետ Ազգայինը, մեր վաշխառուների այդ տիպիկ զոշիբաշին, տաճիկ բնիկ հատուկ ոգեսրությամբ ամեն բան իր բոլ մեջ է հալաքել, անում է այն, ինչ որ իր և ընկերը բաժակակիցների շահն է պահանջում» («Ժամանակ», 1907, № 23):

⁵⁷ ՏԵ՛՛ «Գյուղատնտես», 1909 թ., № 3:

սակ կոռպերացիաները» հեղափոխական դեր են խաղում արդի հասարակության մեջ և նախապատրաստում են կոլեկտիվիզմը, և ոչ թե գյուղական բուրժուազիայի ամրապնդումը»⁶¹:

Պրոֆ. Դ. Շաքարյանը, անդրադառնալով մինչհեղափոխական Հայաստանի վարկային հիմնարկների դասակարգացին հությանը, համոզի կերպով ցույց է տալիս, որ այդ հիմնարկները զարկ են տվել ապրանքա-դրամային հարաբերությունների ծավալմանը, կուլակային տնտեսությունների արտադրական-ձեռնարկուական գործունեության աշխատացմանը, ինչպես նաև շքավոր գյուղացիական մասսաների շահագործման ուժեղացմանը: Նրա «Մինչույլուցիոն Հայաստանի վարկային կոռպերացիան» աշխատությունից ստորև զետեղվող աղյուսակն ըստ ամենայնի ապացուցում է այդ իրողությունը»⁶²:

Անդամների հնթամբերը	Անդամների քանակը		Ավանդների գումարը (1000 ռուբ- լիներով)		Փոխատվության չափը (1000 ռուբ- լիներով)		Ամեն մի անդամին ընկուռում է (ռուբ.)	
	բացառ չափ	% ընդուն	բացառ չափ	% ընդուն	բացառ չափ	% ընդուն	անդամ չափը	% ընդուն
Սակավագոր-ներ	3960	20,0	29,1	5,5	78,0	4,3	7	19
Սէջակներ	9100	46,0	173,3	32,7	586,2	32,3	19	64
Աւելարներ	6740	34,0	327,6	61,8	1150,8	63,4	48	173
Որոնցից կուլակներ	1980	10,0	118,7	22,4	611,6	33,7	60	310
Ընդամենը	19800	100,0	530,0	100,0	1815,0	100,0	26	92

Աղյուսակը ցույց է տալիս, որ չնայած վարկային կոռպերացիայի մեջ անդամների միայն 34 տոկուն էին կազմում ունենոր գյուղացիները, սակայն ավանդների և փոխատվության մեջ գումարների խոշոր մասը նրանց էր բաժին ընկ-

61 Վ. Ի. Խենին, հ. 6, էջ 253:

62 Տե՛ս «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հ. 27, էջ 206:

նում: Այն գումարը, որ ստանում էին իրենց անձնական, պապողական նպատակների համար շքավոր գյուղացիները, շատ չնշին էր, ընդ որում նրանք ժամանակին չէին կարողանում դրանք վճարել և դառնում էին պարտապաններ նաև այօտեղ, Ուստի նրանց ընդհանուր պարտքի գումարը տարեցարի աճում էր, և ստրկական կախումը վաշխառուներից գեռես շարունակվում էր:

Այսպիսով, մանր վարկի հիմնարկները, որոնց գործությունը մասնավորապես աշխատացավ ստորիակինյան ագրարային քաղաքականության տարիներին, հանդիսանում էին ցարիզմի կալվածատիրական-կովակային ագրարային քաղաքականության լծակներից մեկը և օժանդակում էին գյուղական բուրժուազիայի հետագա հզորացմանը:

5. ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՆԱԶՐԿՈՒՄԸ

Հայաստանի գյուղացիության համար արոտավայրերի և խոտհարքների կարևոր տնտեսական նշանակությունը կայանում էր նրանում, որ բացառությամբ փոքր տարածություն գրաղեցնող ալգեգործական-բամբակագործական շրջանների, նախալեռնային և լեռնային շրջաններում գյուղացիության կարևորագույն գրաղմունքը երկագործությունը և անասնապահությունն էր: Սակայն ինչպես նողն ընդհանրապես, այնպես էլ արոտավայրերը, գտնվում էին պետության կալվածատիրության ձեռքին: Գյուղացիությունը գործելու էր արոտավայրերից և տնտեսական ծանր կախման մեջ էր, դաշտան շահագործման էր ենթարկվում պետության: Կալվածատիրության ու կուլակության կողմից:

Կալվածատիրական գյուղերում, սակավ բացառություններով, արոտավայրերը հանդիսանում էին սերվիսուտներ և 1870 թ. օրենքով մնում էին կալվածատիրոջ և գյուղացիների «հավասար, ընդհանուր, ձրի» օգտագործմանը այն կարգով: Ինչպես մինչև գյուղաշիհական ռեֆորմը: Իրականում, ինչպես «ընդհանուր օգտագործման» բոլոր հանդակները, այնպես մանավանդ արոտավայրերը կալվածատերերի տիրապետության տակ էին: Նրանք ոչ միայն իրավունք ունեին արո-

տավայրերում տնտեսական շինություններ կառուցելու, նըրանցից կտրումներ անելու և վարելահողի ու այլ օգտակար հողամասերի վերածելու, այլև գյուղացիությունից ստանում էին զանազան ապօրինի տուրքեր՝ նրանց անասունը այդ «ընդհանուր» արոտավայրերում արածել թույլ տալու դիմաց, Երևանի նահանգական գյուղացիական գործերի ատյանը 1911 թ. գրում էր, որ դա բացատրվում է նաև «...ազգեցիկ սեփականատերերի կամայական գործողություններով, որոնք յուրացնելով արոտավայրերի լիակատար սեփականության իրավունքը, զանազան հարկեր են դրել գյուղացիների վրա՝ անասուններին արածացնելու համար նրանցից վերցնելով գառներ, լուղ և այլն»⁶³:

Այսպիսով, արոտավայրերի օգտագործման ցարական օրենքը գյուղացիներին դրել էր տնտեսական կախման մեջ կալվածատերերից, և գյուղացիները փաստորեն ստիպված էին ծանր պայմաններով վարձակալել իրենց իսկ օգտագործման տակ գտնվող արոտավայրերը: Զնայած այս բանը քաջ հայտնի էր ցարական ադմինիստրացիային, վերջինս միայն խոստումներ էր տալիս, հանձնաժողովներ ստեղծում, «ուսումնասիրություններ» կատարում՝ իրը ժամանակավոր գործող սերվիսուտային իրավունքը վերացնելու և արոտավայրերը կալվածատերերի և գյուղացիների մեջ բաշխելու համար: Սակայն գյուղացիների արոտագուրք ծանր վիճակը շարունակվում էր և արոտների օգտագործման գործում որևէ բարելավում չմտցվեց նույնիսկ 1912 թ. դեկտեմբերի 20-ը օրենքով:

Լավ չէր նաև պետական գյուղացիների վիճակը: Իրենց տրամադրության տակ ունենալով փոքրատարած արոտավայրեր, նրանք ստիպված էին ամեն մի պայմանի համաձայնվել կալվածատերական և պետական արոտավայրերի վարձակալությունն ստանալու համար: Արոտավայրերի հիմնական ֆոնդը Հայաստանում պատկանում էր պետությանը՝ 1884 թ. հունիսի 29-ին կառավարությունը օրենք հրատարակեց պետական արոտավայրերից օգտագործելու կարգի մասին, որը խո-

չոր եկամուտներ ապահովեց իր գանձարանին: Այդ օրենքը տեղական հողագործական հիմնարկների առաջ երկու հիմնական խնդիր դրեց: 1) մանրամասնորեն ուսումնասիրել, սահմանագծել արոտավայրերը, նշել նրանց եկամտաբերության աստիճանը և 2) ուսումնասիրել անասնապահ գյուղացիների կարիքները և ըստ այդմ պարբերաբար վերաբաշխել արոտավայրերը վարձակալող գյուղացիների միջև: Եթե աշխատանքի առաջին մասը որոշ շափով կատարվեց (որովհետև դա բխում էր պետության շահերից), ապա երկրորդ մասը մնաց անկատար: Զեքը բերելով արոտավայրեր, քաղաքաբնակ դրամատերերը, խոշոր անասնատերերն ու կուլակները առաջվան նման դրանք տալիս էին գյուղացիներին վարձակալությամբ մեծ վերագիրներով և հսկայական օգուտ էին ըստանում: Այսպես, Նոր-Բայազետի գավառի հողային վերահսկիչը 1907 թ. Երևանի նահանգի հողագործության վարչությանը գրում էր, որ 1884 թ. օրենքի համաձայն պետական հսկայական տարածությունները էժան գներով տրվում էին վարձակալության, բայց ոչ թե իրական կարիքսկորներին, այլ այնպիսի մարդկանց, որոնք զբաղվում էին դրանց կորկնավաճառքով և իրենց վերցրած գնից մի քանի անգամ ավելի թանկ գնով վարձակալությամբ տալիս էին կարիքավոր գյուղացիներին: «Այդ վաճառքը կատարվում է զգուշաբար, առանց փաստաթղթերի և անպատճիծ կերպով, որի հետևանքով Նոր-Բայազետի, էժան արոտավայրերը քոշվորական բորսայում գնահատվում են բնակչության համար անմատչելի գներով»⁶⁴: Երևանի նահանգի հողագործության վարչության պետը 1910 թ. նոյեմբերի 19-ին գրած պաշտոնական փաստաթղթում ավելի կոնկրետ օրինակներ էր բերում, ցուց տալով, որ Ալավյազի շրջանում պետության կողմից վարձակալությամբ տրված ներքոհիշյալ արոտավայրերը վերավարձակալության էին տրվել հետևյալ գումարներով⁶⁵:

1. Ներքին Կողբուլաղ—149 դեսյատին 7 ռ. 46 կ. փոխարեն 135 ռուր.

⁶³ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 28/91, գ. 90, թ. 35:

⁶⁴ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 2609, թ. 2-3:

⁶⁵ Տե՛ս «Ագրարная политика царизма...», էջ 151:

2. Եթիմ յուրա № 1—180 դեսյատին 4 ռ. 70 կ. փոխարեն
150 ռ.

3. Ռաշո յուրա—82 » » 4 ռ. 78 կ. » 80 ռ.
4. Քյալաշ յուրա—120 » » 7 ռ. » 50 ռ.

Վարչության պետը նշում էր, որ խոշոր արոտավայրերի վարձակալները գարնանը գյուղացիներից խհստ էժան անասուններ են գնում, արածացնում ու բառում են իրենց արոտավայրերում, ինչպես, օրինակ, Ալագյաղում անում է Հաջի Ռևուր Օղլին, իսկ աշնանը վաճառում են Բաքվից և այլ քաղաքներից իրենց մոտ եկած մեծագնորդ անասնավաճառներին և ստանում օգուտ: «Այսպիսով,—շարունակում էր նա, — ներկայումս պետական արոտավայրերը ծառայում են ոչ թե քնակշության կարիքների և անասնապահության զարգացման նպատակի համար, այլ մի քանի անասնակ մարդկանց հարստացման համար, որոնք ամառային արոտավայրերում հակայական հոտեր են պահում, որպեսզի գրանք աշնանը վաճառեն որպես մսացու»⁶⁶: Վկայակոչելով 1884 թ. օրենքի մի շարք «թերությունները», վարչության պետը գտնում էր, որ գրանց հետևանքով վարչության կատարած աշխատանքն օգուտ չի տվել գանձարանին, ծնել է ավելի մեծ շարաշագումներ, խառնաշփոթություն մտցրել արոտավայրերի օգտագործման մեջ և մեծացրել հողագործ քոչվոր գյուղացիների քանակը:

• Ի՞նչ էր առաջարկում ցարական շինովնիկը 1884 թ. օրենքի թերությունների վերացման ուղղությամբ: Ելնելով ցարիզմի ագրարային քաղաքականության կալվածատիրական-կուլակային բնույթից, նա առաջարկում էր ընդունել նոր օրենք, որի մեջ, ինչպես ճիշտ նշում է պրոֆ. Վ. Խշտունին, առաջին հերթին հաշվի է առնվում այն, որ պետք է բարձրացվեն նախ վարձակալության գները, մի շարք արոտավայրեր պետք է դարձվեն վարելահողեր, որոնք որպես հա-

սութաբեր հողամասեր առավել բարձր գներով պետք է վարձակալության տրվեին սակավահող գյուղացիներին և դրանով ինչ մեծացնեին պետական գանձարանի եկամուաները: Երկրորդ կարևոր կողմն այն էր, որ հաշվի առնելով ստոլիպինան ազրարային քաղաքականության կուլով՝ հատկապես գուլակային՝ տնտեսությունների հետագա ուժեղացման ուղղությամբ, վարչության պետն առաջարկում էր մեծացնել վարձակալությամբ տրվող արոտավայրերի տարածությունները, արոտավայրերը տալ գյուղական համայնքներին «բառ գյուղացիների կարիքների» տնօրինելու համար: «յուրաքանչյուր արոտավայրացին շրջանի նոր նախագծված հողամասերը կամ հողակտորները բաժանելով համապատասխան գյուղական հասարակությունների միջև՝ վերջիններին իրավունք վերապահել տնօրինելու հողամասերն իրենց համայնքների միջև բաժանելու և ներքին կարգ ու կանոնը սահմանելու գործը, ինչպես որ այդ իրավունքը վերապահված է գյուղական հասարակություններին բաժնեհողերի նկատմամբ»⁶⁷: Սա փաստորեն նշանակում էր արոտավայրերի հանձնումը գյուղական կուլակների ձեռքբ: Ինչպես գիտենք, գյուղական հասարակություններում վարելահողի բաշխումը կատարվում էր խիստ անարդարացի կերպով: Ահա նույն բանը պետք է տեղի ունենար ցարական շինովնիկի նախագծով նաև արոտավայրերից օգտվելու գործում: Ցարական կարգերում գրեթե ամենուրեք հաշվի էին առնվում միմիայն պետական գանձարանի, կալվածատիրության և գյուղում ցարիզմի կարևոր հենարան հանդիսացող կուլակության շահերը:

Խոշոր արոտավայրերի սեփականատերեր էին կոռու շըրշանի կալվածատերերը: Այստեղ շատ գյուղացիներ բացարձակապես հողագործկ-արոտավորկ էին և կալվածատիրական հողերի, արոտների մշտական վարձակալներ էին հանդիսանում: Եվ քանի որ նրանք ապրուատի այլ ելք չունեին, ուստի ամածայնվում էին ընդունել տարեցտարի ավելի ծանրացող վարձակալության պայմանները: Այդ մասին հետաքրքիր

⁶⁶ Նույն տեղում, էջ 154:

⁶⁷ Նույն տեղում, էջ 156:

2. Եթիմ յուրա № 1—180 դեսյատին 4 ո. 70 կ. փոխարեն
150 ո.

3. Ռաշը յուրա—82 » » 4 ո. 78 կ. » 80 ո.
4. Քյալաշ յուրա—120 » » 7 ո. » 50 ո.

Վարչության պետը նշում էր, որ խոշոր արոտավայրերի վարձակալները գարնանը գյուղացիներից խիստ էժան անասուններ են գնում, արածացնում ու բտում են իրենց արոտավայրերում, ինչպես, օրինակ, Ալագյազում անում է Հաջի Ռևուր Օղլին, իսկ աշնանը վաճառում են հաքվից և այլ քաղաքներից իրենց մոտ եկած մեծագնորդ անասնավաճառներին և ստանում օգուտ: «Այսպիսով,—շարունակում էր նա, — ներկայումս պետական արոտավայրերը ծառայում են ոչ թե բնակչության կարիքների և անասնապահության զարգացման նպատակի համար, այլ մի քանի տասնյակ մարդկանց հարստացման համար, որոնք ամառային արոտավայրերում հսկայական հոտեր են պահում, որպեսզի դրանք աշնանը վաճառեն որպես մսացու»⁶⁶; Վկայակոչելով 1884 թ. օրենքի մի շարք «թերությունները», վարչության պետը գտնում էր, որ դրանց հետևանքով վարչության կատալած աշխատանքն օգուտ չի տվել գանձարանին, ծնել է ավելի մեծ շարաշահումներ, խառնաշփոթություն մտցրել արոտավայրերի օգտագործման մեջ և մեծացրել հողագուրկ քոչվոր գյուղացիների քանակը:

Ի՞նչ էր առաջարկում ցարական շինովնիկը 1884 թ. օրենքի թերությունների վերացման ուղղությամբ: Ելնելով ցարիկմի ագրարային քաղաքականության կալվածատիրական-կուլակային բնույթից, նա առաջարկում էր ընդունել նոր օրենք, որի մեջ, ինչպես ճիշտ նշում է պրոֆ. Վ. Ռշտունին, առաջին հերթին հաշվի է առնվում այն, որ պետք է բարձրացվեն նախ վարձակալության գները, մի շարք արոտավայրեր պետք է դարձվեն վարելահողեր, որոնք որպես հա-

սութաբեր հողամասեր առավել բարձր գներով պետք է վարձակալության տրվեին սակավահող գյուղացիներին և դրանով իսկ մեծացնեին պետական գանձարանի եկամուսները: Երկրորդ կարևոր կողմն այն էր, որ հաշվի առնելով ստոլիպինության ազրարային քաղաքականության կուլս՝ հատկապես կուլակային տնտեսությունների հետագա ուժեղացման ուղղությամբ, վարչության պետն առաջարկում էր մեծացնել վարձակալությամբ տրվող արոտավայրերի տարածությունները, արոտավայրերը տալ գյուղական համայնքներին «ըստ գյուղացիների կարիքների» տնօրինելու համար: «յուրաքանչյուր արոտավայրային շրջանի նոր նախագծված հողամասերը կամ հողակտորները բաժանելով համապատասխան գյուղական հասարակությունների միջև՝ վերջիններին իրավունք վերապահելու տնօրինելու հողամասերն իրենց համայնակիցների միջև բաժանելու և ներքին կարգ ու կանոնը սահմանելու գործը, ինչպես որ այդ իրավունքը վերապահված է գյուղական հասարակություններին բաժնեհողերի նկատմամբ»⁶⁷: Սա փաստորեն նշանակում էր արոտավայրերի հանձնումը գյուղական կուլակների ձեռքու ինչպես զիտենք, գյուղական հասարակություններում վարելահողի բաշխումը կատարվում էր խիստ անարդարացի կերպով: Ահա նույն բանը պետք է տեղի ունենար ցարական շինովնիկի նախագծով նաև արոտավայրերից օգտվելու գործում: Ցարական կարգերում գրեթե ամենուրեք հաշվի էին առնվում միմիայն պետական գանձարանի, կալվածատիրության և գյուղում ցարիկմի կարևոր հենարան հանդիսացող կուլակության շահերը:

Խոշոր արոտավայրերի սեփականատերեր, էին լուսու շրջանի կալվածատերերը: Այստեղ շատ գյուղացիներ բացարձակապես հողագուրկ-արոտավորկ էին և կալվածատիրական հողերի, արոտների մշտական վարձակալներ էին հանդիսանում: Եվ բանի որ նրանք ապրուսի այլ ելք չունեին, ուստի ամաձայնվում էին ընդունել տարեցտարի ավելի ծանրացող զարձակալության պայմանները: Այդ մասին հետաքրքիր

⁶⁶ Նույն տեղում, էջ 154:

⁶⁷ Նույն տեղում, էջ 156:

տվյալներ է տալիս Բորչալուի գավառի երրորդ բաժնի հաշտարար միջնորդ Ժուկովը։ Մանրամասն ուսումնասիրելով Լոսիի լեռնային շղաններում բնակվող հողազուրկ զցուղպացի-վարձակալների տնտեսական վիճակը, նա 1907 թ. զեկուցագիր է ներկայացնում Թիֆլիսի նահանգապետին և իր առաջարկություններն է անում նրանց տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ։ Ժուկովը նշում է, որ մոտ 80 տարի առաջ լոռու շրջանի հողերը պետական էին, և նրանց վրա ապրում էին թուրքիայից և այլ վայրերից եկած աղբեցանցիներն ու հայ կաթոլիկները, որոնք զբաղվում էին անասնապահությամբ ու երկրագործությամբ։ Այնուհետև այդ հողերը դառնում են իշխան Օրբելիանին, բարոն Կուչենբախի, Շարիֆովի, Սագինովի, ուղելային հիմնարկի և այլոց սեփականությունը, որոնք սկսում են դրանք վարձակալությամբ տալ տեղական գյուղացիներին։ Վարձակալության պայմաններն աստիճանաբար այնքան են ծանրանում, որ, օրինակ, 15 տարի առաջ Շիշթափա և ՄԵծ Ղարաքիլիսա գյուղերի գյուղացիները հրաժարվում են վարձակալել վաղուց իրենց տրամադրության տակ գտնվող հողամասերը և վերածվում են ընշաղուրկների։ Խոշոր շարաշահումներ են կատարում նաև արոտավայրերը վերավարձակալությամբ տվյալները, խոշոր անասնատեր-պանրագործարանների տերերը, որոնք առաջարկում են վարձակալությամբ տվյալները ժողովը։ Ժուկովը նշում է, որ այդ աստիճանի շարաշահումներ և գյուղացիների իրավազրկություն չի կարելի թույլ տալ, որովհետև նրանք բազմաթիվ տարիների ընթացքում հանդիսանում են տվյալ հողամասերի վարձակալները և արդեն մի քանի անգամ ավելի են վճարել, քան վարձակալությամբ վերցրած հողերի արժեքն է։ Նա գտնում է, որ անհրաժեշտ է նրանց տալ մշտական անփոփոխ վարձակալության և արտոնյալ ետ գնման իրավունք։ Պետք է կանոնավոր վարձակալության գործը, շարունակում է նա, «Չի կարելի ժողովրդական աշխատավորական մասսաները թողնն այն վիճակում, որ նրանք ուղղակի կախում ունենան կալվածատիրոջ կամայականությունից, ֆանտազիայից և քմահաճույքից։ Մենք Արկադիայում շենք ապրում... կարող են դիմում են նահանգապետին և բողոքում իրենց գյուղի կալվա-

տրողություն անել, թե վարձակալության իրավունքը, ինչպես առեն մի քաղաքացիական ու գուքային և պայմանագրական իրավունքը կարգավորվում և պահպանվում է քաղաքացիական լրիվ օրենսգրքով։ և այս կատարյալ ճշմարտություն է, բայց այս իրավունքի պրակտիկան մեր կիսավայրենի, խավարամիտ, կիսաքրովոր, ասենք և այլ կարգի գյուղացիության շրջանում հանգեցնում է այլ եզրակացությունների, այն է՝ իրավունքը թղթի վրա և իրավունքն իրականության մեջ՝ տարբեր բաներ են և դատարանում մեծ մասամբ արդար է դուրս գալիս ոչ թե նա, ով ճշմարիտ է, այլ ով ավելի տեղյակ է, ճարպիկ և ձեռներեց։ Խսկ այս ոչ բոլորովին հաճելի գրությները կարող են ապացուցել բազմաթիվ օրինակներով այն անձինք, որոնք ապրել և աշխատել են գյուղացիության մեջ ոչ աշքերը փակած»⁶⁸։ Նա օրինակ ներ է բերում։ Եթե 110 ծխից բաղկացած Սարչապետ գյուղը առաջ ուղելային հիմնարկից վերցնում էր 1300 դես. Հող 3200 ուղելով, ապա այժմ պահանջում են 4000 ո., Փոքր Ղարաքիլիսան իշխան Օրբելիանիից վերցրած 1500 դես. Հողի համար առաջ վճարում էր 2000 ո., այժմ կալվածատերը պահանջում է 5000 ո. և այն։ Ժուկովը նշում է, որ այս ծանր վիճակում գտնվող հողազրկություն շատ են բողովականի մեջ ոչ մի փոփոխություն դեպի լավը տեղի չի ունեցել։ Առաջարկում է այլ նոր վեհանելու գեղագում ընդհանուր հիմնանքներով հատկացնել ազատ պետական հողեր, որ գոնե մասամբ նրանց վիճակը բարելավվի⁶⁹։

Ժուկովի այդ առաջարկությունը, իհարկե, չէր կարող վերցրածնել սոցիալական անհավասարությունը և բարելավել գյուղացիության գրությունը։ Գյուղացիությունը շատ էր նեղ վում նաև շինովնիկների, կալվածատերերի ու կուլակների գանազան ապօրինի գործողություններից, կամայականություններից։ Այսպես, 1912 թ. մայիսի 3-ին Երևանի գավառի Ղալաղիի գյուղի ներկայացուցիչները խնդրագրով դիմում են նահանգապետին և բողոքում իրենց գյուղի կալվա-

⁶⁸ ՎՍՍՀ ԿՊՊԱ, գ. 31, գ. 9818, թ. 4:

⁶⁹ Տե՛ս նույն տեղը, թ. 1-6:

ժամերերի դեմ, որոնք ապրինաբար, ուժով գավթել են ոչ միայն իրենց բաժնեհղողից առանձին կտորներ, այլև նաև գյուղի կողմից վարձակալած պետական արոտավայրերը⁷⁰:

1912 թ. ապրիլի 11-ին Ալեքսանդրապոլի գավառի Հալավար գյուղի ներկայացուցիչները երևանի նահանգական Հողագործության վարչության պետին գրած խնդրագրում նշում են, որ տարեկան 200 սուրլով վարձակալներ են պետական «Կանչի-յուրտ» արոտավայրը, բայց գյուղի կողակները գյուղապետի հետ միասին վարելահողի են գերածել այն, և գյուղն այժմ առանց արոտավայրի է մնացել⁷¹:

Յարական աղմինիստրացիան համարյա ոչխնչ չեր անում առանձին գյուղերի, քոչվորների միջև եղած սահմանային վեճերը վերացնելու ուղղությամբ: Նա բոլոր միջոցներով աշխատում էր ավելացնել գանձարանի եկամուտները: 1912 թ. ապրիլի 10-ին Ալեքսանդրապոլի գավառի Եգանլար գյուղի լիազորները խնդրում են երևանի նահանգական Հողագործության վարչությանը հողաշափ ուղարկել իրենց գյուղի օգտագործման տակ գտնվող «Տաշ-Էռուլախ» ամառային արոտավայրի սահմանները որոշելու համար: Վարչությունը մերժում է այդ խնդիրը՝ «աղատ հողաշափ լինելու» պատճառով⁷²: Յարական շինովնիկների կատարած շարաշառմների մասին ստիպված էր խոստովանել նույնիսկ Ալեքսանդրապոլի գավառի առաջին գավառամասի դատական պրիստավը: 1913 թ. սեպտեմբերի 27-ին նա գավառապետին հայտնում է այն մասին, որ նիկիտինո և Բողիքենդ գյուղերի բնակիչների միջև տեղի են ունենում վեճեր, անասունների բռնագրավում, և դա կարող է հասցնել արյունահեղության: Այդ բոլորի պատճառն այն է, որ անտառապետը իր իրավասության տակ եղած արոտավայրը միաժամանակ վարձակալության է տվել երկու գյուղերի, վերցնելով առաջինից 43 ո. 20 կ., իսկ երկրորդից՝ 30 ո.⁷³:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին առևտրական ա-

նանապահության և կաթնատվության զարգացման հետեւ վանքով բարձրանում են արոտավայրերի վարձակալական գները: Այդ մասին վկայում են հետեւյալ տվյալները (ուսումներով 1 դես.)⁷⁴:

Թվականներ	Արաւային արոտա- վայրեր	Զենոային արոտա- վայրեր	Զըովի խոտհարք	Անջրգի խոտհարք
1899	—	—	20,4	8,1
1901	1,9	2,3	15,2	8,5
1902	1,44	1,32	18,4	6,8
1909	—	—	32,6	14,9
1911	3,2	2,7	25,1	13,1
1912	2,43	2,5	31,5	11,4
1913	3,26	3,42	28,4	19,2

Այս աղյուսակից երևում է, որ 14 տարվա ընթացքում արոտավայրերի վարձակալական գները բարձրացել են մինչև 2 և ավելի անգամ:

6. ԿԱՐԻՍԱԼԻԽՈՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

ԳՅՈՒՂԱՏԵԽԱՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

XIX դարի վերջերից սկսած, ինպես ցարական Պուսառանի մյուս ծայրամասերը, այնպես էլ Կովկասը վերածվում են խոշոր կապիտալիստական արգյունաբերական արտադրանքի վաճառահանման շուկայի և գյուղատնտեսական հումքի բազայի: Կարեսը նշանակություն ունեցավ երկարությունունակ պառացումը, որի միջոցով ուժեղացան տնտեսական կապերն ինչպես Ռուսաստանի ներքին նահանգների և Կովկասի, այնպես էլ Կովկասի տարբեր շրջանների միջև:

Լենինը նշում է, որ կապիտալիզմը չի կարող ապահովել ընդլայնված վերաբարդությունը և պահպանել իր գոյու-

⁷⁰ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 2886, թ. 176:

⁷¹ Նույն տեղում, գ. 4937, թ. 225—226:

⁷² ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 4937, թ. 87, 124:

⁷³ Նույն տեղում, գ. 28/91, գ. 285, թ. 18:

⁷⁴ Տե՛ս «Сельскохозяйственный обзор по Закавказью за 1909,

1911, 1912 и 1913 г.»:

թյունն առանց նորանոր շուկաների գրավման, առանց իր տիրապետության ոլորտների հետագա ընդարձակման ու գաղութային, հետամնաց երկրները համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ ներգրավելու նա, նշելով ոռուական և օտարերկրյա արդյունաբերական ապրանքների կողմից կովկասի վաճառահանման շուկայի գրավման և տեղական արհեստագործությունների արդյունքը շուկայից գուրս մղելու մասին, գրում է. «Այսպիսով ոռուական կապիտալիզմը կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավորց նահապետական ինքնամփոփածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում»⁷⁵:

Հետոնի գործարքային շրջանում Հայաստանում արդյունաբերության զարգացումը և գյուղատնտեսության ապրանքայնության մեծացումը տեղի էր ունենում շատ դանդաղ: Կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը խոշոր չափով խանգարում էին ճորտատիրության մնացորդները, նատուրալ տնտեսությունը, գյուղացիների կախյալ վիճակը: Ուստի թե արդյունաբերության և թե առևտուրի հողագործության զարգացման գործում խոշոր նշանակություն ունեցավ ոռուական կապիտալի ներթափանցումը կովկաս և Հայաստան, որի ազգեցությամբ և պահանջով հատկապես XIX դարի 90-ական թվականներից ինչպես տեղացի, այնպես էլ ուում և մասամբ օտարերկրացի կապիտալիստները մեծացրին իրենց կապիտալ ներդրումներն արդյունաբերության երկու հիմնական ճյուղերում՝ պղնձարդյունաբերության և գինու-կոնյակի արտադրության մեջ: Հստ Հ. Թումանյանի հաշվումների, Հիմնական համակարգությունը պահանջների մեջ խոշոր չափով ոռուական և օտարերկրյա կապիտալներ էին ներդրված, արագ զարգանում է և 1890 թ. 23568 փթի դիմաց 1900 թ. տալիս է արդին 67900 փ., 1908 թ.՝ 18900 փ., իսկ 1913 թ.՝ 337400 փ. պղինձ⁷⁶, 1890 թ. Թափրովը

⁷⁵ Վ. Ի. Անին, հ. 3, էջ 771:

⁷⁶ Տիւ Օ. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954, էջ 188, 208, 210:

հիմնեց կոնյակի առաջին գործարանը, որը թույլ աշտադրողականություն ուներ և տվեց ընդամենը 34848° կոնյակի սպիրտ: Մի քանի տարի անց կոնյակի նոր գործարաններ են բացվում. 1900 թ. արտադրվում է մինչև 12833398° կոնյակի⁷⁷: Արդեն 1913 թ. արդյունաբերության համախառն արտադրանքը Հայաստանում կազմեց ժողովրդական տնտեսության ամբողջ արագարանքի $\frac{1}{4}$ -ը, ընդ որում խոշոր արդյունաբերության արտադրանքը 1926/1927 թթ. գներով 15,5 մլն. տուբլու էր. 84 տոկոսը բաժին էր ընկնում պղնձի (59 տոկոս) և գինու-կոնյակի (25 տոկոս) արտադրությանը: Արդյունաբերության մյուս ճյուղերում կապիտալիստական հարաբերությունները թույլ էին զարգացած կամ տակավին բացակայում էին:

Տնտեսական նոր տեղաշարժերի հետևանքով աճում էր քաղաքային բնակչությունը: Հստ Ա. Բաղալյանի հաշվումների⁷⁸, կիրա 1886 թ. քաղաքային բնակչությունը կազմել է 46456 մարդ կամ Հայաստանի ամբողջ բնակչության 7,3 տոկոսը, ապա 1908 թ. արդին եղել է 73443 մարդ (8,4 տոկոսը), իսկ 1914 թ.՝ 93712 մարդ կամ ընդհանուրի 9,2 տոկոսը:

Կապիտալիզմի զարգացմամբ գյուղատնտեսությունն ըսկըսում է վերակառուցվել ըստ շուկայական պահանջների: Մեծանում է գյուղատնտեսության ապրանքայնությունը, զարկ է տրվում առևտուրային հողագործությանը, ապրանքադրամային հարաբերություններն սկսում են խարիսքել գյուղի նատուրալ պարիսակվածությունը: Լայն չափով ուժեղանում է շուկայի հետ կապված գյուղական բուրժուազիայի ներկայացուցիչների ձեռնարկուական գործունեությունը զանազան բնագավառներում: Վերջիններս սկսում են կատարելագործել գյուղատնտեսական գործիքները և վարել ուղիղական հողագործություն: Երկրի առանձին շրջաններ մասնագիտանում են բամբակի, խալողի, բրնձի, հացահատիկային կուլ-

⁷⁷ Տիւ և նույն տեղը, էջ 194:

⁷⁸ А. Бадалян, Население Армении со времени присоединения ее к России и до наших дней (տիւ և ՀՍԽՀ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1953, № 5):

տուրաների և այլ արդյունքների արտադրության մեջ՝ Խոսկեր այդ մասին ավելի հանգամանորեն:

Առևտային բամբակագործություն. — Առևտրային հողագործության բնագավառում խիստ կարևոր նշանակություն ուներ բամբակը. դա բացատրվում էր ոռուական արտագ զարդացող տեքստիլ արդյունաբերության խոշոր պահանջով։ Դեռ 1860-ական թվականներին, ԱՄՆ-ի բաղաքացիական պատերազմի հետևանքով, Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերությունը մեծ զժվարության առաջ կանգնեց, որովհետև խիստ կերպով կրճատվեց էժան գնով ձեռք բերվող ամերիկյան բամբակի ներմուծումը։ Բամբակի հումքի մեծ պահանջի պայմաններում Ռուսաստանի առանձին ծայրամասերում, այդ թվում Երևանի նահանգի Հարթավայրային՝ շրջաններում զարկ է տրվում բամբակագործությանը. ընդ որում բամբակի ապրանքայնության մեծացումը այնքան արագ է տեղի ունենում, որ ներք 1861 թ. Երևանի նահանգում հավաքվել էր ընդունակությունը՝ 30000 փութ բամբակ, ապա 1870 թ.՝ արդեն 270000 փութ⁷⁹. Սակայն աճման այսպիսի տեմպերը շշարունակվեցին։ Ռուսաստանը 1870-ական թվականներին կրկին դիմեց ամերիկյան էժան բամբակի ներմուծմանը։ Միայն 1880—90-ական թվականներից ոռուական արդյունաբերողները խոչոր միջոցներ են ներդնում, իրենց գործակալներն են ուղարկում Ռուսաստանի համապատասխան շրջանները բնակչության մեջ բամբակամշակության նկատմամբ շահագրգություն առաջացնելու նպատակով։ Այս պայմաններում արագ վերակառուցվեցին ազատ դրամական միջոցներ ունեցող գյուղական կոլակների և փողատերերի տնտեսությունները։ 1912 թ. նոյեմբերին Թիֆլիսում կայացած բամբակագործների առաջին համագումարում կարդացած իր զեկուցման մեջ Պ. Պետրովիչը հետաքրքիր տվյալներ է բերում առանձին գյուղերից ստացած հաղորդումներից, որտեղ ցույց է տրվում բամբակի ցանքատարածությունների աճը Երևանի նահանգում։ Այսպես, եթե Գուրգուլովի գյուղում 1902 թ. բամբա-

կի ցանքատարածությունը եղել է 50 դես., 5 տարի անց՝ 100 դես., ապա 1912 թ. այն կազմել է 160 դես.։ Էջմիածնի թրդթակիցը հաղորդում է, որ եթե 1902 թ. բամբակի ցանքատարածությունը 40—50 դես. էր, 5 տարի հետո՝ 70 դես., ապա 1912 թ. եղել է մոտ 600 դես., Շերեմետևերի «Արագդայան» կալվածքի վարձակալությամբ տրված հողերում եթե գյուղացիները 1907 թ. մշակում էին բամբակ միայն 487 դեսութիւնի վրա, ապա 1912 թ.՝ 836 դես. վրա⁸⁰, Բամբակի ապրանքայնության հետագա մեծացման մասին է խոսում նաև այն փաստը, որ եթե 1909 թ. Երևանի նահանգի բամբակի ցանքատարածությունը եղել է 30400 դես., ապա 1914 թ.՝ 34300 դես.⁸¹։

Առևտրային բամբակագործության զարգացումը առաջ է բերում բամբակացան հողերի վարձագների բարձրացում։ Պետրովիչը նշում է, որ ներք 1910 թ. բամբակացան հողերի մեկ դեսատինի վարձագինը Երևանի նահանգում եղել է 41,9 ռուբլի, 1911 թ.՝ 55,3 ռ., ապա 1912 թ. այն բարձրանում է մինչև 68 ռուբլու, իսկ Երևանի գավառում 1912 թ. համում է նույնիսկ 80 ռուբլու⁸². Աստիճանաբար տեղական վատորակ սերմերի փոխարեն սկսում են տարածում գտնել որակյալ ամերիկյան սերմերը։ Մասամբ բարելավվում է բամբակացան տարածությունների ցանքաշրջանառությունը, կատարելագործված գործիքների և բամբակազտիչ մեքենաների օգտագործումը։ Այսպես, եթե XIX դարի վերջերին ռուսական տեքստիլ արդյունաբերողների ներկայացուցիչները նույնիսկ ձրի էին տալիս ամերիկյան սերմը, որպէսզի կարողանան բարձրացնել իրենց գործարանների համար անհրաժեշտ բամբակի որակը, ապա Երևանի նահանգապետի 1911 թ. տված հաշվետվությունից պարզվում է, որ նահանգում ստացվել է ընդամենը 475782 փութ մաքրված բամբակ, որից ամերիկյան տեսակի՝ 435552 փութ, իսկ տեղական՝ մի-

⁷⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 24—25.

⁸⁰ Տե՛ս Ի. Վ. Ավալիշվիլի, Պլուշած, սбор и урожайность хлопчатника в Закавказье 1909—1914 гг., Тифлис, 1928 г.:

⁸¹ Տե՛ս «Труды съезда хлопководов», Тифлис, 1913:

այն 40230 փութ⁸³: Տեղ-տեղ արդին սկսում են բամբակը ցանել շարքերով, հետևում են նորմալ ցանքաշրջանառության պահպանմանը և հոգերի պարարտացմանը:

Առևտրային բամբակագործության մեջ իշխող դիրք են գրավում գյուղական բուրժուազիայի ներկայացուցիչները, Պետրովիշը գրում է. «Ինչպես և պետք էր սպասել, Անդրեկովկասում համարյա ամենուրեք բամբակի բոլոր առևտրական օպերացիաների կենտրոնում կանգնած է հավաքագրնորդը, որը հանդես է գալիս մեր առաջ մերթ որպես տեղացի հարուստ հողագործ գյուղացի, մերթ որպես դրսից եկած, ամեն տեղ եղող և ամեն ինչ գիտցող առևտրական, մերթ վերջապես, մենք նրան տեսնում ենք որպես պանդոկապանիանության: Մի վայրում հավաքագնորդը գործում է իր կանխիկ կապիտալներով, մի այլ տեղում, և այդ ամենից հաճախ է պատահում—նրա թիկունքում կանգնած է կամ խոշոր բամբակագործի գործարանի տերը, կամ մանրաթելի առևտուր կատարող սովոր ֆիրմա, կամ կենտրոնական և արևմտյան Ռուսաստանի մանուքակտուրայի որևէ գործարանի գրասենյակ...

...Բնակչությանն ամենից մոտիկ կանգնած է հավաքագնորդը. նա փորձված մարդ է, գիտի բամբակագործի բոլոր կարիքները, նրա վարկունակությունը, տնտեսության բոլոր թույլ և ուժեղ կողմերը, իսկ որ գլխավորն է միշտ հնարավորություն ունի զգոն լինելու՝ և այն ժամանակ, երբ հարկավոր է իրեն, և այն ժամանակ, երբ ինքն է հարկավոր: Իսկ նա պետք է լինում միշտ, որովհետև մեր մանր գյուղացիական տնտեսությունը շատ սակավաթիվ դեպքերում կառող է յուլա գնալ առանց համագյուղացի հարուստ վաշխառուի կամ պանդոկապան-կապալառուի օգնության,—իհարկե, ոչ թե եղբայրական, անշռուի զգացմունքների վրա հիմնը ված օգնության, այլ այն օգնության, որն ամբողջ ժամանակակից տնտեսական կարգի թելադրանքն է»⁸⁴, այսինքն շրջապար գյուղացիությանը կեղեքելու, խարելու, իր եկամուտ-

⁸³ ՎՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 554, թ. 9—24:

⁸⁴ «Труды съезда хлопководов», Тифлис, 1913, т. I, стр. 121.

ները մեծացնելու նպատակով: Փողատեր-հավաքագնորդները լավ ծանոթ էին շուկայական գներին, կապեր ունեին մեծագնորդ առևտրականների, տեքստիլ ֆաբրիկաների գրատենյակների հետ և իրենց ձեռքում էին կենտրոնացնում գյուղացիներից բամբակի հումքի գնման, գտման և մաքուր բամբակը Երևան տեղափոխելու ու մեծագնորդներին, ֆաբրիկաների ներկայացուցիչներին վաճառելու գործը: Նրանք սովորաբար բամբակագործից մեքենաների տերերն էին և գյուղացիներից բամբակի գուման համար ստանում էին որոշակի վարձատրություն: Միշտ ներից գուրկ չքավոր գյուղացին շատ հաճախ գիրադասում էր էժան գնով վաճառել բամբակի հումքը այդ հավաքագնորդին, քան մաքրելու համար փող վճարել նույն հավաքագնորդ-մեքենատիրոջը: Խոշոր նշանակություն ուներ նաև այն, որ չքավոր գյուղացին իր փոքր ցանքատարածությունից ստացած բամբակը չէր կարող քաղաք տանել և շուկայական գնով ծախել, ուստի բոլոր դեպքերում ընկնում էր վաշխառու-հավաքագնորդի ձեռքը Երևանի գավառի նովրուզու գյուղի թղթակիցը կովկասյան գյուղատնեսական ընկերությանն ուղարկած թղթակցության մեջ գրում է. «Մեր շրջանում կան 5—6 բամբակագործից մեքենաներ. նրանք պատկանում են հարուստներին, որոնք գնում են գյուղացիներից բամբակը, մաքրում են և տանում վաճառելու Երևան քաղաքում. քաղցր է (լավ է) վաճառել Երևան քաղաքում, իսկ գյուղում գյուղացիների հյութը բամում են (Ճնշում են)»⁸⁵:

Գյուղացիները հատկապես գարնանային աշխատանքների ժամանակ փողի, սերմի մեծ կարիք էին զգում, ուստի դիմում էին հարուստներին, հավաքագնորդներին և ծանր պայմաններով վարկ վերցնում նրանցից: Պետրովիշը նշում է, որ վարկավորման ամենատարածված ձևն այն է եղել, երբ գյուղացին պարտավորվում էր ստացած բամբակի բերքը շուկայական գներից էժան, ամբողջությամբ հանձնել տվյալ վարկատու հավաքագնորդին: Էջմիածնի գավառի Ղըզլ-Թամուրի գյուղական համայնքի մասին Պետրովիշը գր-

⁸⁵ Նույն տեղում, էջ 122:

դում է, որ յուրաքանչյուր առանձին տնտեսությանը հավաքագնորդը գարնանն ավանդ է տալիս մինչև 150 ռ. շափով, պայմանով, որ բերքը հանձնվի հավաքագնորդին շուկայական գնից 2 ռուբլի էժան։ Նույն գավառի Փոքր Շահրիար գյուղի թղթակիցը հայտնում է, որ յուրաքանչյուր գեղատինի համար հավաքագնորդը վարկ է տալիս 80—100 ռ. շափով և բամբակը գնում է շուկայական գնից 2 ռ. էժան, որի հետևանքով «բամբակի տերը հաշիվները մաքրելուց հետո պարտը է մնում երբեմն հսկայական գումար, որը նա վճարում է մի քանի տարի անընդհատ»⁸⁶։ Դուզիգիդանի գյուղում բնակիչները պարտավորվում են ոչ մայն շուկայական գնից էժան վաճառել իրենց ստացած բամբակի բերքը, այլև ավանսատու-հավաքագնորդի մեքենայով մաքրել բամբակը և որի համար լրացուցիչ նրան վճարել⁸⁷, Գյուղական բուժուազի ներկայացուցիչները գյուղացիների շահագործումըն ուժեղացնում էին նաև նրանով, որ միջոցներից զուրկ շքավար գյուղացուն, որը դեռ պահպանում էր իր փոքր հողակտորը, ավանսավորում էին սերմով և գործիքներով՝ բամբակ մշակելու և բերքի կեսն իրենց տալու պայմանով կամ էժան գնով վարձակալում էին նրանց հողը և օգտագործում շքավոր գյուղացիների աշխատանքը՝ «իրենց» իսկ հողակտորների մշակման համար։

Այսպիսով, առևտրային բամբակագործության զարգացումն արագացնում է գյուղի նատուրալ պարփակվածության վերացումը, զարկ է տալիս ապրանքա-դրամային հարաբերությունների հետագա ծավալմանը, գյուղական բուրժուագիտության կողմից կապիտալիստական ձեռնարկուական միջոցառումների ընդլացմանը։

Առևտրային խաղողագործություն, գինեգործություն.—
XIX դարի վերջին և XX դարի սկզբին շուկայական պահանջների համեմատ զարգացավ և լայն առևտրային բնույթ ըստացավ նաև խաղողագործությունը։ Այսպես, ըստ Անդրկովկասի ակցիզային վարչության պաշտոնական տվյալների,

⁸⁶ Նույն տեղը, էջ 127։

⁸⁷ ՏԵ՛ս նույն տեղը։

Երևանի նահանգում խաղողի այգիների տարածությունը եղել է։

- 1891 թ.— 6206 դես.
1902 թ.— 9638 դես.
1907 թ.— 9799 դես.
1914 թ.— 10538 դես.⁸⁸

Զնայած Արարատյան հարթավայրի ոռոգվող հողերը սումմանակակ էին և հիմնականում զբաղեցված էին խաղողի, բամբակի, բրնձի և հացահատիկային կուլտուրաներով, այսուհետեւ, 1902 թ. մինչև 1914 թ. խաղողի այգիների տարածությունն աճում է շուրջ 1000 դեսյատինով։

Դժբախտաբար, մեզ չհաջողվեց տվյալներ գտնել գյուղացիների ունեցած խաղողի այգիների տարածությունների մասին, այն հնարավորությունն կտար պատկերելու նրանց դասակարգային շերտավորումը։ Սակայն հիմք ընդունելով 0. Հովհաննիսյանի կատարած հաշվումները, ըստ որոնց XIX դարի վերջերին ընդամենը 10 տոկոս կազմող կովակային տնտեսությունների ձեռքին է կենտրոնացած նեղել բոլոր այգիների 46 տոկոսը⁸⁹ և նկատի ունենալով այն, որ կապիտալիստական հարաբերությունների հետագա զարգացման հետևանքով գյուղի շերտավորումն ավելի է արագանում, կարող ներ եղրակացնել, որ գյուղացիության այգեկրկման և կովակության ձեռքին այգիների կենտրոնացման պրոցեսը XX դարի սկզբին ավելի էր ուժեղացել։

Տարեցտարի մեծանում էր գինու, օղու և կոնյակի արտադրությունը։ Եթե 1891 թ. Երևանի նահանգում ստացվել էր 332506 դույլ գինի, 1902 թ.՝ 717000 դույլ, ապա 1906 թ. ստացվել էր 2032200 դույլ, իսկ 1913 թ.՝ արդեն 3290341 դույլ գինի⁹⁰։ Այսինքն՝ 1913 թ. համեմատությամբ

⁸⁸ Տվյալները վերցված են «Կ. Կ. առ 1893 թ.», վիճ. բաժին, էջ 42, «Կ. Կ. առ 1904 թ.», 3-րդ բաժին, էջ 87—88, «Կ. Կ. առ 1909 թ.», վիճ. բաժին, էջ 529, «Կ. Կ. առ 1916 թ.», վիճ. բաժին, էջ 85 և ՀՍՊՀ ԿՊՍ. թ. 124, ց. 36, թ. 58—59։

⁸⁹ ՏԵ՛ս 0. Մ. Հովհաննիսյան, Արարատյան հարցը Երևանի նախկին նահանգում, Երևան, 1949, էջ 97։

⁹⁰ Տվյալները վերցված են «Կ. Կ. առ 1899 թ.», վիճ. բաժին, էջ 45,

գինու արտադրությունն ավելացել էր մոտ 10 անգամ, իսկ 1906 թ. համեմատությամբ՝ ավելի քան 60 տոկոսով; Նման խոշոր աճ հնգ նկատում նաև սպիրտի թորման ասպարեզում. եթե 1902 թ. թորվել էր միայն 3778000° սպիրտ, 1906 թ.՝ 6851694° , 1909 թ.՝ 12524933° , ապա 1913 թ. թորվել էր արդեն 16597000° սպիրտ⁹¹; Այսպիսով, միայն յոթ տարվա ընթացքում (1906 թվից մինչև 1913 թ.) սպիրտի արտադրանքն ավելացել էր մոտ 10 մլն աստիճանով, որը ցույց է տալիս ընդհանուր գինեգործության մեջ հատկապես կոնյակի արտադրության նկատմամբ շուկայական պահանջարկի խոշոր աճը: 1890-ական թթ. կոնյակի գործարաններ են բացում Աֆրիկանը, Սարացելը, Գյողալովը, իսկ 1899 թ. ուստի կապիտալիստ Շուտովը գնում է Թափրովի գործարանը, վերակառուցում այն, կատարելագործում և խոշոր չափով մեծացնում է կոնյակի արտադրանքը: Այնուհետև կոնյակի գործարաններ են բացվում նաև առանձին գյուղերում: Եթե 1900 թ. երկանի նահանգում, ինչպես արդեն նշեցինք, արտադրվել էր 128398° կոնյակ, ապա 1906 թ.՝ արտադրվեց 2387432° , 1907 թ.՝ 3275711° , 1908 թ.՝ 4843611° , 1909 թ.՝ 4776306° , 1911 թ.՝ 6798622° և նույնիսկ խաղողագործության համար խիստ անբարենպաստ 1914 թվականին, երբ այդիների մեծ մասը ցրտահարված էր, կոնյակի արտադրությունը երկանի նահանգում կազմեց 6820645° ⁹²:

Կոնյակի շուկայական խոշոր պահանջարկի մասին է վրկայում այն, որ միայն 1909 թ. ընթացքում 3503300° կոնյակ և կոնյակի սպիրտ է արտահանվել Կովկաս, Ռուսաստան և արտասահման, այնինչ երկանի նահանգում ժախսվել է միայն 74312° : 1909 թ. արտասահման է արտահանվել

«Կ. Կ. ի 1904 թ.», 3-րդ բաժին, էջ 87—88, «Կ. Կ. ի 1909 թ.», վիճ. բաժին, էջ 527, «Կ. Կ. ի 1915 թ.», 3-րդ բաժին, էջ 337-ից:

⁹¹ Տվյալները վերցված են «Կ. Կ. ի 1904 թ.», 3-րդ բաժին, էջ 87—88, ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 124, գ. 26, թ. 50—68, «Կ. Կ. ի 1915 թ.», վիճ. բաժին, էջ 337-ից:

⁹² Տվյալները վերցված են ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 124, գ. 26, թ. 50—68 «Կ. Կ. ի 1913 թ.», վիճ. բաժին, էջ 318 և «Կ. Կ. ի 1916 թ.» բաժին, էջ 85:

460° կոնյակ, Անդրկովկաս՝ 1085348° , Ռուսաստան է ուղարկվել 2417492° կոնյակ, ընդ որում Մոսկվայի նահանգ՝ 1535508° , Պետքրբուրգ՝ 258267° և այլն⁹³:

Սպիրտի, կոնյակի արտադրությունը հիմնականում կենտրոնացած էր երկանի գործարաններում (Շուտառի, Սարացի և այլն), սակայն խոշոր գիր էին խաղում և գնալի արտադրանք էին տալիս նաև գյուղական խաղողագործական շրջաններում գործող տնայնագործական ձեռնարկությունները, որոնք պատկանում էին գյուղի փողատիր-կուպակային դասի ներկայացուցիչներին: Այսպես, եթե 1904 թ. երեանի նահանգում եղած 8 կոնյակի գործարաններից 5-ը երեան քաղաքում էին և միայն երեքը՝ գյուղերում, ապա 1907 թ. 10-ից 5-ը երեանում էին, 5-ը՝ գյուղերում, իսկ 1914 թ. արդեն նահանգում եղած կոնյակի 15 գործարաններից 10-ը գյուղերում էին⁹⁴: Դրանք պատկանում էին տեղական կուլակների փայտադրական ընկերություններին (ինչպես «Արաքս» ընկերությունը Ղամարլուում): Ղամարլուից բացի կոնյակի գործարաններ կային նաև Դալուկար, Աղբաշ, Օշական և Աշտարակ գյուղերում: Այդ ընկերությունները աշնեցին արագ տեմպերով, գյուղի աշխատավորությանը շահագործելու ճանապարհով: Այսպես, «Արաքս» փայտադրական-գինեգործական ընկերությունը հիմնվել էր Ղամարլուում 20 տեղացի կուլակներից՝ 100000 ռ. դրամագլխով: Այն բարկությունը գրունքությունը 1907—1908 թթ. տեղացիներից էժան զնով օղի ձեռք բերելով: Ապա պատրաստում էր 96—98°-անոց սպիրտ և այն վաճառահանում ուստական շուկայում: Շուտով նրա գործունեությունն այնքան ընդարձակվեց, որ 1914 թ. արտադրեց ավելի քան 900000° կոնյակի սպիրտ կամ նահանգում արտադրված ողջ սպիրտի $\frac{1}{8}$ մասը⁹⁵: Դրա հետ միասին ընկերությունը ուժեղացրեց գյուղացիության զահագործումը: «Գյուղատնտես» պարբերականը 1909 թ. գրում էր, որ Ղամարլուում «զահագործվում է

⁹³ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 124, գ. 26, թ. 50—68;

⁹⁴ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 124, գ. 26, թ. 50—68 և գ. 34, թ. 8—9;

⁹⁵ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 124, գ. 34, թ. 8—9:

աշխատավոր գյուղացիությունն այն զավոդի գոռքաներից, որոնք մեկ զմեկու կողքի բարձրացնում են օղիի, գինու, կոնյակի գործարանները։ Մեկ մեկու դեմ մղում են ասիական մրցում, մեկ մեկուց գրավում են նրա մուշտարիներին և սրանց հետ վարվում են զարմանալի աշքակապությամբ։ Ամառ է գալիս, գործարանատեր, բավականաշափ գումար դիզած զորքաներն անմիջապես մտնում են ժողովրդի մեջ և արոնիմենտ ավանդակությամբ գրավում աշխատավոր գյուղացիության խաղողը։ Քաֆանում են փող աշնանը խաղող ստանալու համար՝ խալվարին 10 ռ. փող տալով։ Գալիս է աշունը, այգեգործ գյուղացին այգեկութի հուսոյ օրերին սալերով գործարանատիրոջ գործարանն է բերում խաղողը։ Շատ անգամ խաղողը կը վում է այգում։ նշանակվում է քանակությունը, դրանից «բաժին» է հանգում, բերում են գործարան և ամենակարող ու խղճով գործարանատերը մի քանի փունտ ևս պակաս է հաշվում փիթին։ Տալով կուլակության կողմից գյուղացիության ճնշման պատկերը, թղթակիցը վերշացնում է հետեւյալ խոսքերով։ «Ես շրջանում գառն ապրում է գայլի կողքին նրան կեր լինելու և նրա անկուշտ որկորը լցնելու համար»։ Կապիտալիզմի զարգացումը երկրագործության մեջ արտահայկում էր նաև գյուղատնտեսական մթերքների տեխնիկական վերամշակման առաջընթացի մեջ։ Վ. Ի. Լենինն այդ առաջընթացը համարում է «առեւտրային հողագործության զարգացման ձերից մեկը, ընդ որում հատկապես այնպիսի մի ձեւ, որն առանձին ցայտունությամբ ցույց է տալիս, որ հողագործությունը դառնում է կապիտալիստական հասարակության արդյունաբերության ճյուղերից մեկը»⁹⁶։ Գյուղատնտեսական մթերքների մշակման գործում ակտիվ դեր են խաղում գյուղական բորժուազիայի ներկայացուցիչները։ Նրանք բարեկավում են արտադրության տեխնիկան և մտցնում առաջավոր եղանակներ։

Բամբակագործության բնագավառում աճում է բամբակագործի մեքենաների քանակը։ ձեռնարկատերերը ձեռք են բերում ավելի որակյալ զտիչ մեքենաներ, մամլիչներ, օգտա-

⁹⁶ Վ. Ի. Լենին, հ. 3, էջ 354։

գործում են վարձու աշխատուժը։ 1911 թ. բամբակագործների համագումարում Տիմոֆեյի կարգացած զեկուցման մեջ նշված է, որ Երևանի նահանգում եղել են 355 բամբակագործի գործարաններ, որոնցից 124-ը աշխատել են նավթաշարժիչներով, 38-ը՝ շոգեշարժիչներով, 151-ը՝ ջրաշարժիչներով և 42-ը՝ ձիաշարժիչներով⁹⁷, նահանգական վարչության պաշտոնական տվյալների համաձայն 1912 թ. Երևանի նահանգում բամբակագործի գործարանների թիվը 328 էր, որոնք ըստ տեսակների բաժանվում էին հետևյալ կերպ։

1. Նավթաշարժիչներով—108

2. Շոգեշարժիչներով—43

3. Ջրաշարժիչներով—153

4. Ձիաշարժիչներով—24⁹⁸

Այս տվյալների համեմատությունից երևում է, որ հետք-հետեւ պակասում են պրիմիտիվ միջոցով (ձիու, նավթի) աշխատող շարժիչները և, ընդհակառակն, ավելանում են կատարելագործված շոգեշարժիչները։

Գյուղատնտեսական արդյունքների տեխնիկական մշակման հետագա զարգացման և դրա հետ միաժամանակ կապիտալիստական հարաբերությունների ավելի ծավալման մասին է վկայում այն, որ սպիրտաթորիչ և բամբակագործի գործարաններում խոշոր շափով մեծանում է արտադրանքի ծավալը։ Այդ մասին կարող է վկայել Երևանի նահանգին վերաբերող աղյուսակը⁹⁹։

Աղյուսակից երևում է, որ եթե տասը տարվա ընթացքում բամբակագործի գործարանների թիվը գրեթե նույնն է մնացել, ապա տարեկան արտադրանքը 40000 ոուրլուց հասել է 134410 ռ., իսկ բանվորների թիվը՝ 664-ից մինչև 904-ի։ Սպիրտաթորիչ գործարաններում նույն ժամանակամիջոցում եթե գործարանների թիվը մոտավորապես կրկնապատկվել է, ապա արտադրանքն աճել է 281000 ռ. մինչև 819670 ռ.,

⁹⁷ Տե՛ս «Տրуды съезда хлопководов», Тифлис, 1913, т. I:

⁹⁸ «Памятная книжка Эриванской губернии на 1914 г.».

⁹⁹ Աղյուսակը կազմել ենք «Կ. Կ. на 1903 թ.», Յ-րդ բաժին, էջ 76—77, «Կ. Կ. на 1909 թ.», վիճ. բաժին, էջ 502—505, «Կ. Կ. на 1912 թ.», վիճ. բաժին, էջ 306—309 և «Կ. Կ. на 1913 թ.», վիճ. բաժին, էջ 268—271 տվյալների հիման վրա։

բանվորների քանակը 952-ից հասել է 4374-ի։ Արտադրողականության այսպիսի բարձրացումը բացատրվում է մեքենաների և սարքավորումների կատարելագործմամբ, վարձուուժի մասնագիտացման ուժեղացմամբ, նրա առավել «ռացիոնալ» շահագործմամբ։

Թվականներ	Գործարաններ	Նրանց քանակը	Տնտեկան արտադրան- քը սուբի- ներով	Գործարա- նում աշխա- տող բան- փորների քա- նակը
1901	բամբակագոտիչ սպիրտաթորիչ	335	40000	664
1906	բամբակագոտիչ սպիրտաթորիչ	361	281000	952
1910	բամբակագոտիչ բամբակագոտիչ	347	80137	876
1911	բամբակագոտիչ սպիրտաթորիչ	307	376640	1011
	բամբակագոտիչ սպիրտաթորիչ	829	139267	821
	բամբակագոտիչ սպիրտաթորիչ	633	748720	4026
	բամբակագոտիչ սպիրտաթորիչ	327	134410	904
	բամբակագոտիչ սպիրտաթորիչ	718	819670	4374

Առեւրական անասնապահության զարգացումը։—Ապրանքակապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով առաջ եկած գյուղացիության դասակարգացին շերտավորումը արտահայտվում է նաև անասնապահության բնագավառում։ Գյուղական բորժուագիան իր ձեռքն է կենտրոնացնում անասունների գլխաքանակի մեծ մասը, իսկ աշխատավոր գյուղացիությունը զրկվում է դրանցից։ Այսպես, 1910—1912 թթ. Արամուս գյուղում կար 220 տնտեսություն, որից անասուն ունեին 176 տնտեսություն։ լրիվ անասնապուրկ են եղել 44 ընտանիք կամ գյուղի բոլոր ծխերի 20 տոկոսը։ Լծկան անասուն շեն ունեցել 45 տնտեսություն (ծխերի ավելի քան 20 տոկոսը), միայն մեկ գլուխ բանող անասուն են ունեցել 23 տնտեսություն կամ գյուղի ծխերի ավելի քան 10 տոկոսը։ Այսպիսով, Արամուսի գյուղացիական ծխերի 50 տոկոսից ավելին փաստորեն չքավոր էին։ Փոքր էր նաև միջակ՝ մեկ գույզ լծկան ունեցող ծխերի քանակը (37 տոկոս)։ Երեք և ավելի գլուխ լծկան ունեցող ծխերի մոտ էր

կենտրոնացած ինչպես բանող, այնպես էլ մթերատու անասնների մեծ մասը¹⁰⁰։

Գյուղացիության շերտավորումն ավելի սուր է արտահայտվում Ավան, Առինջ, Քանաքեռ, Էլար և Շահար գյուղերում, որտեղ 1910—1912 թթ. կար 700 տնտեսություն։ Աղբանցից անասնապուրկ էին 228-ը կամ գյուղացիական բոլոր ծխերի 32,5 տոկոսը։ Լծկան շունեին 145 տնտեսություն կամ բոլոր ծխերի 20,7 տոկոսը։ Միայն մեկ գլուխ լծկան ունեին 47 ծխեր կամ բոլոր տնտեսությունների 6,7 տոկոսը։ Մեկ գույզ լծկան ունեցող միջակ անտեսությունների թիվն էր 127 (բոլոր ծխերի 18,1 տոկոսը), որոնք ունեին 254 գլուխ լծկան կամ այդ հինգ գյուղերում եղած բոլոր լծկանների 26,3 տոկոսը։ Խսկ բոլոր գյուղացիական ծխերի 21,8 տոկոսը կազմող 153 ուներ և կուպային տնտեսությունների ձեռքում էր կենտրոնացած 964 լծկաններից 663-ը կամ 68,7 տոկոսը¹⁰¹։ Այսպիսով, լծկան շունեցող կամ ընդամենը մեկ գլուխ լծկան ունեցող 420 ծխեր (գյուղացիական բոլոր ծխերի 60 տոկոսը) ունեին միայն 47 գլուխ լծկան։ Նրանք փաստորեն զրկված էին արտադրամիջոցներից, վեր էին ածվել պրոլետարների ու կիսապրոլետարների և մեկնում էին դատումների։

Ահա նաև ուրիշ տվյալներ. 1914 թ. Ալագյազի Զորան-քյարա քրդաբնակ գյուղում 275 ծխեր ունեցել են 4334 գլուխ խոշոր ու եղբերավոր անասուն, մինչդեռ 7 ուներ տընտեսություններ՝ 2104 գլուխ։ Միայն Հաջի Ալի Հաջի Կուրբան Օղլին ունեցել է 568 գլուխ անասուն¹⁰²։

Տվյալները ցույց են տալիս, որ անասնապահության մեջ նույնպես արտահայտվում էր գյուղի սոցիալական շերտավորման պրոցեսը։ Մի կողմից ուժեղանում էր սակավագոր, չքավոր գյուղացիության անասնապրկումը, քայլքայումը, իսկ մյուս կողմից տեղի էր ունենում ուներ գյուղացիության,

¹⁰⁰ Հաշվումները կատարել ենք ՀՍՍՀ ԿՊՍ, ֆ. 7/70, գ. 71, թ. 39—45 և «Պայտագիր կուպային գրքում»։ աղբյուղների հիման վրա։

¹⁰¹ Հաշվումները կատարել ենք ՀՍՍՀ ԿՊՍ, ֆ. 7/70, գ. 71, թ. 75—110 տվյալների հիման վրա։

¹⁰² Հաշվումները կատարել ենք ՀՍՍՀ ԿՊՍ, ֆ. 7/70, գ. 68, թ. 5—9 տվյալների հիման վրա։

կուլակության աճ: Ինչ վերաբերում է միջակ գյուղացիությանը, ապա այն դժվարությամբ էր կարողանում իր տնտեսությունը վարել, դիմում էր փոխառությունների, աշխատավճարումների և դատումների, ճնշվում էր գյուղական բուրժուացիներից և առաջին իսկ անբերդիության հետևանքով ընկնում էր շքավոր գյուղացիության շարքը:

Կապիտալիստական անասնապահության զարգացման հետևանքով Արևելյան Հայաստանում նկատելի արագությամբ մեծանում էր խոշոր եղջերավոր և նվազում մանր եղջերավոր անասունների գլխաքանակը¹⁰³:

Գավառներ	Խոշոր եղջերավոր անասուններ		Մանր եղջերավոր անասուններ		Զի	
	1893 թ.	1913 թ.	1893 թ.	1913 թ.	1893 թ.	1913 թ.
	1.	Ալեքսանդրապոլ	31,1	41,2	63,1	50,6
2.	Նոր-Բայազետ	25,6	41,4	71,5	53,2	2
3.	Էջմիածին	37,3	39,0	57,8	55,1	3,1

Գյուղական բուրժուազիան զբաղվում էր անասունների վաճառքով: Նոր-Բայազետի գավառից տարեկան վաճառքի էր հանգում մոտ 25000 գլուխ անասուն, իսկ անբերդի տարիներին՝ մոտ 2 անգամ ավելի: Անասնավաճառքի կենտրոններն էին նոր-Բայազետը, Երևանը, Թիֆլիսը, Բաքուն, Բաքումը¹⁰⁴:

Սկսվում է առևտրային կաթնատնտեսության զարգացումը. ստեղծվում են յուղի, պանրի գործարաններ, որոնց տեսրերը ձեռք են բերում մեծ թվով կաթնատու անասուններ և կամ էժան գնով վերցնում են շքավոր գյուղացիության կաթը և վարձու աշխատանքի շահագործման միջոցով ստացած կարագը, պանիրը վաճառքի հանում ինչպես նահանգի, այնպես էլ նահանգից դուրս գտնվող քաղաքներում: Գյուղի ապ-

րանքա-դրամային հարաբերությունների զարգացումն այնպիսի շափեր էր ընդունել, որ Երևանի նահանգական գեմսությալին գյուղատնտեսը գրում էր. «Եսկ ընդհանրապես ասած քաղաքների զարգանալու և մեծանալու, հետևապես նաև գյուղատնտեսական մթերքների, մանավանդ մսի և կաթի, պահանջարկի մեծանալու հետևանքով դրանց գները բավական բարձր են և գյուղը աստիճանաբար ավելի ու ավելի է մտնում դրամական շրջանառության ոլորտի մեջ»¹⁰⁵:

Տնայնագործական եղանակով կարագ, պանիր ստանալը շատ հնուց էր գալիս և նահանգում շատ էր տարածված: Այն ուղիղությունը, մասսամբ մեքենայացված առևտրական-ձեռնարկատիրական բնույթ ստացավ միայն XX դարի սկզբներին, կարևորագույն անասնապահական շրջաններում՝ Ալեքսանդրապոլի, Նոր-Բայազետի գավառներում և Հատկապես Լոռիում: Նահանգում առաջիններից մեկը սերմզատ մեքենա գնեց և յուղագործարան ստեղծեց Նիկիտինո գյուղի բնակիչ Սուկովիցինը, որը, սակայն, վարձու աշխատանք չէր օգտագործում. ընտանիքի անդամներն էին մշակում գյուղացիներից գնած կաթը: Չորս ամսվա ընթացքում նա 3700 փութ կաթից ստացավ 148 փութ կարագ, 411 փութ թել պանիր, որոնք վաճառքի էր հանում Դարաշչագում, Դիլիջանում և Թիֆլիսում: Այնուհետև, 1907 թ. Վուկրեսենովկա գյուղում գործարան բացեց վ. Կորուցովը, Մեծ Ղարաբիլիսայում՝ Ալ-Նալբանդովը և 1909 թ. Նիկիտինո գյուղում՝ Ռիզերը: Սրանցից միայն Նալբանդովը 6 ամսվա ընթացքում 5700 փութ կաթից (1700-ը սեփական կովերից և 4000-ը՝ գյուղացիներից գնած) ստացավ 200 փութ կարագ և 620 փութ պանիր: Նոր-Բայազետի գավառում խոշոր պանրագործարան-յուղագործարան հիմնեց նաև Ա. Նիկողոսովը: Նրա գործարանն աշխատում էր ամբողջ տարին. օգոստոս-մարտ ամիսներին արտադրում էր կարագ, իսկ պարիի-օգոստոսին՝ պանիր: Նիկողոսովը վարձում էր 29 բատրակ, որոնք աշխատում էին գործարանում և խնամում անասուններին: Նա ուներ 100 սե. փական կով, 100-ն էլ տեղացիներից էր վարձում: 1909 թ.

¹⁰³ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 4993, թ. 35:

¹⁰⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 36:

¹⁰⁵ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 4993, թ. 33:

գործարանում մշակվել է 6500 փութ կաթ, ստացվել է 700 փութ չանախ պանիր և 100 փութ կարագ նման՝ գործարաններ կային նաև նոր-բայազետի այլ գյուղերում (Ալյիշ, Քոշավայր, Սեմյոնովկա, Միսիսանս և այլն)¹⁰⁶.

«Գյուղատնտես» պարերականի 1910 թ. № 26—29-ում «Կաթնատնտեսությունը Լոռիվա շրջանում» հոդվածով՝ գյուղական բուրժուազիայի կողմից առևտրային կաթնատնտեսության զարգացման և շքավոր անսանապահների շահագործման մասին մանրամասն տվյալներ է բերում եւ, երից յանը: Լոռիում կաթնատնտեսությունն ավելի վաղ էր ապրանքային բնույթ ստացել և 1909 թ. կային արդեն 29 պանրագործարան և 4 յուղագործարան: 29 պանրագործարաններից 25-ը պատրաստում էին շվեյցարական, 3-ը՝ հորմնդական և մեկը՝ չանախ պանիր: 25 գործարաններում մշակում էին տարեկան 370000 փութ կաթ և արտադրում մոտ 26000 փութ շվեյցարական պանիր, որը կազմում էր Կովկասում պատրաստվածի $\frac{1}{3}$ մասը: Զորս յուղագործարանում տարեկան մշակում էին 20000 փութ կաթ և ստանում էին 1000 փութ կարագ: Լոռու 34 գործարանատերերից միայն 5-ն էին, որ կաթ ստանում էին սեփական կովերից: 16 գործարանատերեր ամբողջ կաթը գնում էին գյուղացիներից, իսկ մնացածը՝ մի մասը սեփական կովերից, մյուս մասը՝ գյուղացիներից:

Առևտրային հողագործության զարգացման շնորհիվ աշխուժանում են ապրանքա-դրամային հարաբերությունների շայաստանի ներսում, ամրապնդվում են վերջինիս տնտեսական կապերը եվրոպական Ռուսաստանի տարբեր նահանգների հետ:

Ենինը, խոսելով առևտրական հողագործության մասին, նշում է. «Առևտրային հողագործության աճումը ներքին շուկա է ստեղծում կապիտալիզմի համար: Նախ՝ հողադության մասնագիտացումն առաջ է բերում փոխանակություն հողագործական տարբեր շրջանների միջև, հողագործական

¹⁰⁶ Տվյալները վերցված են «Պամятная записка о подсобных мероприятиях...» պաշտոնական հաղորդումից:

տարբեր պրոդուկտների միջև: Երկրորդ՝ որքան ավելի է հողագործությունը ներս քաշվում ապրանքային շրջանառության մեջ, այնքան ավելի արագ է աճում գյուղական բնակչության պահանջը մշակողական արդյունաբերության պրոդուկտների նկատմամբ, որոնք ծառայում են անձնական սպառման համար, երրորդ՝ այնքան ավելի արագ է աճում արտադրության միջոցների պահանջը, որովհետև ոչ մասը ու ոչ էլ խոչը գյուղական ձեռնարկուն հինավորոց «գյուղացիական» գործիքների, շենքերի միջոցով և այլն և այլն, չի կարող նոր առևտրային հողագործություն վարել: Վերջապես, չորրորդ՝ առաջ է գալիս բանվորական ուժի պահանջ, որովհետև մանր գյուղական բուրժուազիայի առաջացումն ու հողատերերի կապիտալիստական տնտեսությանն անցնելը ենթադրում է գյուղատնտեսական բատրակների ու օրամշակների կոնտինգենտի առաջացում»¹⁰⁷:

Վարձու աշխատանքը.—Գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների գարգացման բնորոշ հատկանիշը վարձու աշխատանքի կիրառման աճն էր, որը տեղի էր ունենում ապրանքային արտադրության վերելքի հետևանքով:

Հայաստանի գյուղերում վարձու աշխատանքը հիմնականում սեզոնային բնույթ ուներ. շատ հաճախ հանդես էր գալիս օրամշակության ձևով: Ավելի երկարատև, մասնագիտացման հետ կապված վարձու աշխատանք օգտագործվում էր գյուղատնտեսության և անասնապահության պրոդուկտների տեխնիկական վերամշակման արտադրության մեջ՝ ըստ պիտաֆորիչ, բամբակագտիչ, յուղի, պանրի գործարաններում: Վարձու աշխատանքը հիմնականում օգտագործում էին առևտրային հողագործության պահանջների համեմատ իրենց տնտեսությունները վերակառուցած գյուղական բուրժուազիայի ներկայացուցիչները: Սակայն դեպքերում այն օգտագործվում էր նաև խոչը կալվածատիրական տնտեսություններում: Վարձու աշխատանքի հիմնական կենտրոնները առևտրային երկրագործությամբ զբաղվող հարթավայրային բամբակա-

¹⁰⁷ Վ. Ի. Ալեքս, հ. 3, էջ 387—388:

գործական, խաղողագործական շրջաններն էին: Այստեղ աշխատանք էին գտնում ոչ միայն տեղի պրոլետարացվող գյուղացիները, այլ նաև լեռնային, նախալեռնային գավառներից, ինչպես և Թուրքիայից ու Պարսկաստանից խոշոր շափով հողագործական արտագնացությունների, դատումների մեկնող քայլայված գյուղացիները: Վարձու աշխատանքն ավելի պակաս շափով օգտագործվում էր նաև նախալեռնային ու լեռնային շրջանների առևտրային երկրագործություն ու անասնապահություն վարող կուլակային տնտեսություններում, որտեղ բավարարում էր տեղական բանվորական ուժը:

Ի՞նչ են ասում թվական տվյալները, փաստաթղթերը օրամշակության հողագործական և ոչ հողագործական արտագրնացությունների շափերի մասին:

Կալվածատիրական տնտեսությունում վարձու աշխատանք օգտագործելու մասին Սմբատ Լոռվարդը իր հուշերում գրում է, որ լոռու կալվածատեր Խանաղյանն իր 920 դես. տարածությամբ հողի վրա տարեկան աշխատեցնում էր 500 տղամարդ և 100 կին բանվոր: Տղամարդ բանվորները ապրիլին օրական ստանում էին 25 կ., մայիսին՝ 30 կ., խոտհընձին՝ 50 կ., արտհնձին՝ 60—80 կ., սեպտեմբերին՝ 25—30 կ., բացի դրանից ճաշում էին տիրոջ հաշվին, աշխատում էին օրական 12—14 ժամ¹⁰⁸:

Խոշոր շափերի էին հասնում հողագործական արտագնացությունները դեպի առևտրային երկրագործության շրջանները: Այդ մասին երևանի նահանգական զեմստվային գյուղատնտեսը 1913 թ. գրում էր. «Արաքսի հովտի հարթավայրում հողը գլխավորապես կազմում է մասնավոր սեփականություն: Զնայած սակավաճորությանն այստեղ բնակչությունը ոչ միայն ոչ մի տեղ չի գնում դատումների, այլև այստեղ աշխատող ձեռքը չի բավականացնում: Խաղողի այգիներում, բամբակի, բրնձի և ծխախոտի պլանտացիաներում աշխատեցու են գալիս բանվորներ Պարսկաստանից, Թաշաբարանից, Դարալագլազից և այլ վայրերից»¹⁰⁹:

¹⁰⁸ Մի հայկական մասնաճյուղի արթիվ, թ. 40, գ. 1, թ. 18:

¹⁰⁹ ՀՍՍՀ ԿՊԱ, թ. 133, գ. 4993, թ. 41:

«Հորիզոնի» 1911 թ. № 95-ում տպագրված, թագավորակած թղթակցությունը հայտնում է, որ գարնանը, դաշտային աշխատանքներն սկսվելուն պես Պարսկաստանից հազարավոր բանվորներ էին գալիս Զանգիբրասարդի և Գանիքասարի շրջանները և աշնանը կրկին ետ վերադառնում: Թղթակիցը գտնում է այն բանի համար, որ բանվորների այդպիսի հակալական բանակի ներկայությունը գցում է տեղի բանվորների օրավարձը: Միայն թագավորում աշխատող բանվորների թիվը 1000-ից անցնում էր, որից կեսից ավելին պարսիկներ էին. աշխատում էին 7 ամիս, օրական ստանալով 60 կ.: Միաժամանակ թղթակիցը նշում է մշակման ցածր տեխնիկան, հինավոր գործիքները, որոնք ցածր արտադրողականության և բանվորական ուժի խոշոր պահունչի պատճեն:

Տարիների ընթացքում հողագործական տարագնացությունը Արարատյան հարթավայրային շրջաններում նորմավորում էր ստեղծել վարձու ուժի օգտագործման բնագավառում: Սոտավորապես հայտնի էր դարձել, թե նահանգի տարրեր գավառներից և կամ թուրքիայից ու Պարսկաստանից ինչքան բանվորներ են գալու, այնպես որ զանազան պատճառների հետևանքով նրանց թեկուզ մի մասի չգալը դժվար վիճակ էր ստեղծում առևտրային հողագործության շրջանների կուլտուրաների մշակման և բերքածավաքի համար, եթե ստիպված դիմում էին նույնիսկ երեխաներ վարձելուն: Այդպիսի մի ժամանակաշրջան հանդիսացավ 1914 թ., երբ պատերազմի սպառնալիքից վախեցած, երևանի նահանգից հեռացան հողագործական դատումների եկած պարսիկ բանվորները: Այդ մասին Պ. Պետրովիլը, հիմնվելով զանազան բամբակագործական գյուղերի թղթակիցների հաղորդումների վրա, գրում է հետեւյալը. «Խնչպես բամբակի խնամքի ընթացքում, այնպես էլ կնգուղների հավաքման առաջին հերթի ժամանակ, նահանգում համարյա ամենուրեք գգացվում էր աշխատող ձեռքերի պակասություն—այս մասին հաղորդում են շատ թղթակիցներ նահանգի բոլոր հինգ բամբակացան գավառներից: Աշխատել են մեծ մասամբ տեղական բանվորները, որոնք գալիս էին Դարալագլազից, էշմիածնի,

երեանի և այլ գավառների լեռնային մասերից, լինում էին բանվորներ նաև հարեան նահանգներից, և, մասնավորապես, Կարսի մարզից: Ինչ վերաբերում է արտասահմանից եկողներին, ապա պարսիկների մասին նախիջեանի թղթակիցները հաղորդում են, որ ընթացիկ տարում թուրքիայի հետ պատերազմ լինելու վախի պատճառով, նրանք հայրենիք են գնացել: Այդ նույնը եղավ նաև Սուրմալուի գավառում աշխատող թուրքահպատակ բանվորների հետ: Բնորոշ է նաև, որ աշխատանքի վարձվելուց խուսափել են նաև քրդերը. «Եկվոր բան Վորներ բոլորովին չկան, իսկ ուրիշ տարիներում շատ էին ընում, մանավանդ քրդեր՝ իրենց մեծ ընտանիքներով»: «առաջ պարսիկներ էին աշխատում, բայց այժմ չկան, հայրենիք են գնացել», — գրում է Երևանի գավառի թղթակիցներից մեկը: Բանվորների պակասությունը «զգացվում է եկվոր տարրերի բացակայության պատճառով» (Բաշնալու գյուղ, Երևանի գավառ):

Բայց այնուամենայնիվ, ըստ երեւութին, բնակչությունը, լուս կդնա ընտանիքների առկա ուժերով և հարևան ոչ բամբակացան գյուղերի ազատ աշխատավորներով: Բամբակք բերքը երեխաներն էին հավաքում, — պարզաբանում է թղթակիցներից մեկը¹¹⁰:

Հացահատիկային շրջանները սովորաբար բավարարվում էին տեղական բանվորներով: Ավելին, ինչպես նշվում էր փոխարքայի գրասենյակի գեմսկի բաժնի 1913 թ. կատարած ուսումնասիրության մեջ, Ալեքսանդրապոլի որոշ գյուղերում գյուղաշիական բանվորները, բավարարելով տեղական պահանջները, նույնիսկ մեկնում են այլ վայրեր՝ դատումների համար¹¹¹: Սակայն քայլքայլած, պրոլետարացվող գյուղացիությունը, տեղական շուկայի նեղության պատճառով, ավելի մեծ շափերով դիմում էր ոչ հողագործական արտագնացությունների. դատումների էր գնում թե Հայաստանի և թե Կովկասի ու Ռուսաստանի արդյունաբերական շրջանները, պղըն-

ձահանքերն ու նավթահանքերը, գործարաններն ու ֆաբրիկաները: Արտադրամիջոցներից զրկված գյուղացին դիմում էր ամեն ինչի իր ընտանիքի գոյությունը քարշ տալու համար:

Թողարկության «Նոր խոսք» թերթը Հայաստանի գյուղացիության մասին գրում է. «Մի կողմից հողագործության ներկա բթացած հին կարգերը, մյուս կողմից սակավահողությունը, դրանց և ընկերանալու վայդ բազմազան տարրերի ուժեղ շահագործությունը, որոշ շափով արդեն զարկ են տալիս գյուղական ժողովրդի պրոկետարիզացիային: Գյուղացին ապրում է տարվա մեծ մասը մշակություն և բանվորություն անելով այս և այն կենտրոններում...»

...Գարունը բացվելու պես, դուք տեսնում եք հազարավոր գյուղացիք աղքատության դժոխքից դուրս պրծած, մի պղտորհ հոսանքի նման թափվում են քաղաքները: Հարկերի ծանրաբենում, պարտքեր, պահանջներ, քաղցածություն, հողի և գործիքների բացակայություն, այդ բոլորը կազմում են նրա իրական վերքը»¹¹²:

Բուն Հայաստանում զգալի թվով բայրաված գյուղացիներ աշխատում էին պղնձահանքերում, խիստ ծանր պայմաններում, որպես բանվորներ: Այսպես, ըստ Ս. Զավարյանի տվյալների, Զանգեզուրի շրջանի 11 գյուղերից 1906 թ. դատումների են գնացել 1917 հոգի, 1903 թ. համեմատությամբ՝ ավելի քան 500 մարդ: Նրա հաշվումներով տղամարդկանց 1/3-ը դատումների է դիմել դրսում: Զգալի թիվ են կազմում Բաքու, ինչպես նաև Զանգեզուրի պղնձահանքերը մեկնողները: Այսպես, միայն Քաջարան գյուղից 1906 թ. արտագնացությունների են դիմել 75 հոգի, որից 63-ը՝ Ղափանի պղնձահանքերը: Ղափանի պղնձահանքերում աշխատող բանվորների (մոտ 1200—2000 հոգի) մեծագույն մասը տեղի քայլքայլած գյուղացիներից էին¹¹³: «Քավառ» պարբերականի 1910 թ. № 10-ում տպագրված «Ղաթարի պղնձահանքերում» հոդվածում նշվում է, որ հանքերում աշխատում են մոտ 2500

¹¹⁰ Պ. Պետրովիչ, Состояние хлопковых плантаций в Закавказье, I/X-1914, Тифлис, 1914, стр. 11.

¹¹¹ ՀԱՅՀ ԿՊԱ, գ. 133, գ. 4948, թ 211.

¹¹² «Նոր խոսք», 1906, № 13:

¹¹³Տե՛ս Ս. Զավարյան, Экономические условия Карабага и голод

1906—1907 гг., С. Петербург, 1907:

բանվորներ, որոնց մեծ մասը տեղացի քայլայված գյուղացիներից են¹¹⁴:

Գյուղի հետագա քայլայման, գյուղացիության ունեցողական ու պրոլետարացման մասին են վկայում զանազան գաղափառներից և շրջաններից տարեցտարի աճող արտագնացությունները: Այսպես, Նոր-Բայազետի գավառապետը 1913 թ. Կովկասյան վիճակագրական կոմիտեին պաշտոնական տրվալաներ է ներկայացնում 1910—1912 թթ. ընթացքում անձնագիր ստացած և դատումների մեկնած գյուղացիների մասին (պետք է նկատի ունենալ, որ գյուղացիության մի մասը հեռանում էր գյուղերից առանց անձնագիր ստահալու, ուղղակի տանուտերերից վկայական վերցնելով): Եթե 1910 թ. Նոր-Բայազետի գավառի 16 գյուղերից անձնագիր են ստացել և դատումների գնացել 9370 հոգի, ապա նրանց թիվը 1911 թ. հասնում է 10568-ի, իսկ 1912 թ. արդեն՝ 10629-ի¹¹⁵: Բորչալուի գավառապետը 1913 թ. հայտնում է, որ լոռավ գավառամասից անձնագիր են ստացել և նահանգից դուրս արտագնացությունների են մեկնել 1910 թ. 3516 հոգի, 1911՝ 4532, իսկ 1912 թ. արդեն՝ 5832 հոգի¹¹⁶: Երևանի նահանգի զեմստվային գյուղատնտեսը 1913 թ. գրում էր. «Ալեքսանդրապոլի գավառի շատ գյուղերից երիտասարդությունը դատումների է գնում Ամերիկա, շատ մարդիկ աշխատում են երկաթուղիներում, մնացածները դատումների են գնում Թիֆլիս, Բաքու, Բաթում, Երևան և ուրիշ տեղեր. լեռնային վայրերի (Արան, Դարալագյազ) շատ բնակիչներ գարնանը գնում են աշխատելու Արաքս գետի հովտի խալողի այգիներում, բամբակի, բնձի և ծխախոտի պլանտացիաներում: Նոր-Բայազետի գավառում Գյուղա լճի ափերին երիտասարդությունը համարյա բոլորովին բացակայում է. այնտեղ մնում են միայն կանայք, երեխանները և ծերունիները»¹¹⁷:

1914 թ. ամռանը Պետերբուրգի «Ծեչ» թերթը հաղորդում

¹¹⁴ ԱՄՊԿ ԿԿ-ին կից Միի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 34, գ. 6, թ. 46—48, 56—60:

¹¹⁵ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 415, գ. 118, թ. 22:

¹¹⁶ Նույն տեղը, գ. 88, թ. 28:

¹¹⁷ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 4993, թ. 11:

էր, որ հողագրկության պատճառով Երևանի նահանգից գյուղացիությունը մասսայաբար գաղթում է դեպի Ամերիկա: Միայն 1914 թ. հունվար-հունիս ամիսներին Ալեքսանդրապոլի մի քանի գյուղերից Ամերիկա են մեկնել շուրջ 140 հոգի¹¹⁸:

Տարագիրների բազմությունը անհանգստություն էր պատճառում ցարական շինովնիկներին: 1912 թ. փետրվարի 26-ին Կովկասի փոխարքայի օգնականը Երևանի նահանգապետին գրում էր. «Սկզբովյան նահանգի նահանգապետից ստացած տեղեկությունների համաձայն ներկայումս Սևանվան նահանգ և գլխավորապես Տուապսի մեծ խմբերով գալիս են բնիկներից բաղկացած բանվորներ Երևանի նահանգից՝ Արմավիր-Տուապսի ճանապարհի կառուցման վրա աշխատելու համար»:

Այնինչ այդ ճանապարհի կառուցմանը եկող բանվորները հոսանքն այնքան մեծ է, որ առաջարկն զգալիորեն գերազանցում է պահանջարկին, նոր եկող խմբերը մնում են առանց աշխատանքի և միջոցների բացակայության հետևանքով նյութական անելանելի դրության մեջ են ընկնում. ներկայումս այդպիսի գործազուրկներ միմիայն Տուապսեռում հավաքվել են մոտ 2000 հոգի¹¹⁹: Նմանօրինակ բովանդակության կարգադրություն է լինում Երևանի նահանգապետին 1914 թ.՝ Սուշիի շրջանում հավաքած հսկայական քանակությամբ բանվորների մասին՝ ընդ որում առաջարկվում է բնակչության այդ մասին տեղեկացնելու միջոցով հասնել արտագնացությունների դադարեցմանը դեպի այդ շրջանները:

Երևանի նահանգից 1912 և 1913 թթ. կատարվող ընդհանուր արտագնացությունների մասին հետաքրքիր տվյալներ է տալիս նահանգական վիճակագրական վարչությունը¹²⁰:

¹¹⁸ ՎՍՍՀ ԿՊԱ, ֆ. 13, գ. 7, գ. 2097, թ. 3—4:

¹¹⁹ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 7/70, գ. 255, թ. 132, 134:

¹²⁰ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 7/70, գ. 432, թ. 10:

¹²¹ Տվյալները վերցրել ենք „Պамятная книжка Эриванской губернии на 1914 г.“, 3-րդ ռամին և „Экономический вестник Армении“ 1923 թ., № 2, օգոստի ենք ։ Թումանյանի „Экономическое развитие Армении“ գրքի էջ 227-ից:

Գավառներ

Գավառների քառությունը	Գավառների մեկ- տղների թիվը			Տեղական գավառների թիվը	Տեղական գավառների թիվը	
	Համանակի ները	Ամենամեծ դաշտը	Ամենամաս- տիքը			
Երևան եջմիածին Սուրբալու Նոր-Բայազետ Ալեքսանդրապուլ Շարուբ-Դարձագյաղ Նախիջևան	79 120 126 132 148 96 127	1758 3121 820 3049 5237 554 1424	195 1157 751 7361 515 1750 3917	6 328 150 41 515 1 1077	36230 373565 151410 873780 832460 88950 350275	— — — — — — —
1912 թ. նահանգ. 1913 թ. նահանգ.	828 861	14547 17446	20368 29149	2118 2137	2706670 2075800	73 ռ. 84 ռ.

Այսպիսով, 1912 թ. արտագնացությունների են դիմել 37033 հոգի, իսկ 1913 թ. արդեն՝ 48732 հոգի, այսինքն՝ 11400-ով ավելի: Մեծ է հատկապես նահանգից դուրս մեկնողների քանակը, որը ցույց է տալիս, որ գերիշխում էր ու հողագործական բնույթի տարագնացությունը: Բերված աղյուսակից այնուհետև երևում է, որ տարագնացությունները քիչ եին Երևանի և Սուրբալուի գավառներում, որտեղ վարուաշխատնքի օգտագործման մեջ հնարավորություններ կային և, ընդհակառակն, շատ էին այդ տեսակետից քիչ զարգացած Ալեքսանդրապուլի և Նոր-Բայազետի գավառներում: Արտագնացության դիմողները թե գյուղատնտեսության և թե արդյունաբերության մեջ կատարում էին ամենածանր, սև և քիչ վարձատրվող աշխատանք: Մանավանդ արդյունաբերության մեջ դա խիստ ակնհայտ էր: Արտագնացողները մշտական, մասնագետ բանվորներ չէին: Աղյուսակի տվյալներից երևում է, որ յուրաքանչյուր բանվոր տարեկան միջին հաշվով ստանում էր 73—84 ռ., որը հնարավորություն չէր ստեղծում պահելու ընտանիքը, վճարելու պարտքերը, հարկերը և միաժամանակ վերականգնելու տնտեսությունը:

Առևտրային հողագործության զարգացման, գյուղացիա-

կան բանվորական ուժի դաժան շահագործման, չնչին վարձատրության, ինչպես նաև կանանց և երեխաների աշխատանքի ավելի էժան օգտագործման մասին որոշ պատկերացում ունենալու համար բերենք հետևյալ աղյուսակը, որը կազմել ենք Կովկասյան գյուղատնտեսական ընկերության տեղական թղթակիցների հաղորդումների հիման վրա: Այն վերաբերում է 1911 թ.: Օրական միջին աշխատավարձը արտահայտված է կոպեկներով¹²²:

Գյուղական բանվորներ	Զենուանը	Վարդանանը	Աշուաննը
Բանվոր	37	45	72
Բանվորուհի	23	31	40
Երեխա	19	28	35

Հաջորդ աղյուսակը կարող է որոշ պատկերացում տալ աշխատավարձի բարձրացման մասին (ոռորդիներով, միջինը)¹²³:

Գյուղական բանվորներ	Ամբողջ տարով վարձվողը			Ամբողջ ամռանը վարձվողը		
	1911	1906	1901	1911	1906	1901
Բանվոր	75,6	52,5	38,6	43,1	30,9	24,5
Բանվորուհի	61,2	38,6	29,4	33,9	23,0	17,2
Երեխա	32,5	23,1	16,9	19,4	14,3	10,8

Այսպիսով, 10 տարվա ընթացքում գյուղական բանվորի աշխատավարձը աճել էր մոտավորապես կրկնակի չափով:

¹²² Տվյալները վերցրել ենք «Сельскохозяйственный обзор по Закавказью за 1911 г.»:

¹²³ Տվյալները վերցրել ենք նույն տեղից:

պն արդյունք էր նաև 1905—1907 թթ. հեղափոխական շարժումների:

Ազատ վարձու աշխատանքի նշանակությունը հողագործության մեջ կայանում էր նրանում, որ փոքրիկ հողակտորին ստրկորեն կապված, հողամարդոցից նատուրալ տնտեսության սահմաններում լճացած, տգիտության ու խավարի մեջ թաղված գյուղացու փոխարեն հանդես էր գալիս հողի ստրկական կախումից ազատ, իր աշխատութը ազատ կերպով տնօրինող, այն բարձր գնով վաճառող, գյուղական խավարի ու ճահճացման մթնոլորտից գուրս եկող, հասարակական կյանքի հետ ժանոթացող բանվորը: Հողագործական և ոչ հողագործական արտագնացությունների հետևանքով, կողեկտիվ աշխատանքի պայմաններում բանվորը շատ բան էր սովորում և աստիճանաբար գիտակցական պայքար էր սկսում իր դասակարգացին շահերի համար:

Գյուղատնտեսական գործիքների բարելավումը.—Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղատնտեսության մեջ պահանջում էր ոչ միայն հողի ռացիոնալ օգտագործում, այլև գործիքների կատարելագործում և մեքենաների ներմուծում: Լենինը նշում է, որ կապիտալիզմը մի կողմից ինքն է ծնում, պահանջում մեքենաների, որակյա գործիքների օգտագործում, իսկ մյուս կողմից հենց գործիքների, մեքենաների տարածումը և օգտագործումը տանում է դեպի կապիտալիզմի հետագա զարգացումը գյուղատնտեսության մեջ¹²⁴:

Հայաստանում խոշոր, կապիտալիստական սկզբունքներով տարվա կալվածատիրական տնտեսությունների համարյա բացակայության պայմաններում գյուղատնտեսական մեքենաների, գործիքների ձեռք բերման, օգտագործման ուղղությամբ խոշոր ներդրումներ փոքր շափերով էին տեղը ունենում: Գյուղացիության հսկայական զանգվածը միջոցներ չուներ դրանք ձեռք բերելու, ուստի իր հողակտորը մշակում էր իսկառ էքստենսիվ եղանակով, խոշոր աշխատանք կլանող և չնշին արդյունքներ տվող պապենական գործիքնե-

րի միջոցով, Միանգամայն սխալ էր պաշտոնական այն տեսակետը, որ առաջ էին քաշում կալվածատիրության, շինովնիկության ներկայացուցիչները, երբ մեղադրում էին գյուղացիությանը տգիտության, ամեն նորին դիմադրելու և իրենց հին գործիքները մտածված կերպով նորով շփոխարինելու մեջ: Սա հերքում է հենց գյուղացիության կարիքներն ուսումնասիրող երկանի նաշանգական կոմիտեի պաշտոնական գեկուցագրերով: «Հին գործիքներով հողը վատ մշակելու մասին նույնական բացարեցին (գյուղացիների ներկայացուցիչները—Մ. Խ.), որ շատերը գիտեն, որ նոր գութաններն ավելի լավն են, դրանցով ավելի հեշտ է աշխատել, հարկավոր է ավելի քիչ բանող անասում՝ 6—8 գույզ եզան փոխարեն ընդամենը 2—3 գույզ, բայց այդպիսի գործիքներ գնելու համար փող չկա և զգիտեն նաև որտեղից գնեն այդ նոր գործիքները, իսկ եթե խանութպաններից ոմանք գյուղերում գութաններ էլ պահում են վաճառքի համար, ապա անմատչելի գին են նշանակում և տհաճությամբ են ապառիկ տալիս»¹²⁵:

Կովկասում գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների վաճառման մենաշնորհը գտնվում էր Առուֆերմանի ֆիրմայի Թիֆլիսի բաժանմունքի ձեռքին: Նշանակելով բարձր գներ, վաճառելով հնացած մեքենաներ ու գործիքներ, Առուֆերմանի ֆիրման հսկայական հսկամուտներ էր ստանում: Այսպիսս, երկանի նահանգի հողագործության վարչության պետի պաշտոնական հաղորդման համաձայն Առուֆերմանը մեքենաները, գործիքները վաճառում էր գնից 35—40, իսկ առանձին դեպքերում՝ 50 տոկոսից բարձր արժեքով: Պարզ էր, որ արժեքն ավելի կմեծանար մեքենաները, գործիքները երկանի նահանգ փոխագրելու դեպքում¹²⁶:

Զնայած կատարելագործված մեքենաների ու գործիքների ձեռք բերման գործում եղած այսպիսի դժվարություններին, բարձր գներին, երկանի նահանգում վաճառքի կետերի բացակայությանը, այնուամենայնիվ, գյուղական բուրժուազիայի ներկայացուցիչները, առևտուային հողագործություն

¹²⁴ «Извлечения из журналов местных комитетов...», стр. 13.

¹²⁵ В. Рштуни, Из истории аграрной политики царизма в Грузии, Азербайджане и Армении, Ереван, 1954, стр. 114—115.

Վարողները ձեռք էին բերում գյուղատնտեսական մեքենաներ, որակալ գործիքներ և բարձրացնում էին հողի մշակման տեխնիկան: Գյուղերում հնամենի արորի, փայտե գութանի և տափկանի հետ միասին հողը մշակում էին նաև երկաթե գութաններով, երկաթե ատամներով տափաններով, գործածության մեջ են մտնում սերմնացանները և սերմագտիչ մեքենաները, կուլտիվատորները և հնձիչ մեքենաները: Այսպէս, Ղուրդուղուկի տանուտերի տվյալներով, 1913 թ. համայնքի գյուղերում եղել են 220 արոր, 210 փայտե տափան, 20 քամհար, 230 մանգաղ, բայց միաժամանակ նաև 28 երկաթե գութան: Կարխունի գյուղական համայնքի տանուտերը հայտնում է, որ 250 արորի, 15 փայտե գութանի, 300 փայտե տափանի, 70 քամհարի հետ միասին գյուղերում եղել են նաև 95 երկաթե գութան¹²⁷, Երևանի գավառի առաջին գավառամասի հաշտարար միջնորդի տվյալներով գավառամասի 5 գյուղական համայնքներում 4230 արորի, 187 փայտե գութանի, 2159 փայտե տափանի հետ միասին գործածության մեջ են եղել 1155 երկաթե գութան և 233 երկաթե ատամնավոր տափան¹²⁸:

Պաշտոնական, սակայն ոչ լրիվ տվյալներով 1912 թ. Երևանի նահանգում եղել են գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ հետևյալ քանակով¹²⁹:

Արորներ	—62800	Զիափոցիսեր	— 245
Փայտե գութաններ	— 5672	Երկաթե ատամով տափաններ	— 3100
Փայտե տափաններ	— 22487	Խոտհնձիչ մեքենաներ	— 68
Քամհարներ	— 5852	Հնձիչ մեքենաներ	— 6
Թագուցագներ	— 66	Սերմնացան մեքենաներ	— 5
Երկաթե գութաններ	— 6532	Խոտի մամլիչներ	— 3

Այս թվերից պարզ երևում է, որ էքստենսիվ հողագործության գործիքների գերակշռության պայմաններում աստի-

¹²⁷ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 73, գ. 53, թ. 1—2:

¹²⁸ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 7/70, գ. 90, թ. 213—214:

¹²⁹ Տվյալները վերցրել ենք «Պաмятная книжка Эриванской губернии на 1914 г.», 3-րդ բաժին, էջ 183—184-ից:

ճանաբար մեծանում է կատարելագործված գյուղատնտեսական մեքենաների քանակը: Այդ են ապացուցում նաև հետեւյալ վիճակագրական տվյալները:
Երևանի նահանգ ներմուծվել են գործիքներ¹³⁰:

1901 թ.—	4333 փութ
1902 թ.—	7086 »
1903 թ.—	14961 »
1906 թ.—	5433 »
1907 թ.—	6351 »
1908 թ.—	10022 »

1905—1907 թթ. գյուղացիական շարժումների և հայ-աղբյուջանական ընդհարումների տարիներին ներմուծման տեմպերն ընկնում են, սակայն կրկին արագորեն բարձրանում են, որ ցուց է տալիս առևտրային հողագործության համար անհրաժեշտ կատարելագործված գործիքների, մեքենաների պահանջի մեծացումը: Նույն տվյալներով 1908 թ. ներմուծման մեջ 70 տոկոսը կազմում էին մանգաղները, բահերը և այլ մանր գործիքներ, շուրջ 25 տոկոսը կազմում էին երկաթե գութանները և 5 տոկոսը՝ գյուղատնտեսական այլ գործիքներն ու մեքենաները: «Արագդայան» կալվածքում օգտագործվում էր նաև տրակտորը:

Այսպիսով, մեքենաների և կատարելագործված գյուղատնտեսական գործիքների օգտագործման հետևանքով զարգանում են կապիտալիստական հարաբերությունները, զարկ է տրվում առևտրային հողագործությանը, մեծանում է վարձությանը օգտագործումը, կանանց և երեխաների աշխատութիւ շահագործումը, ստեղծվում են արդեն մասսամբ բարձր եկամտարերություն ունեցող տնտեսություններ:

Կուլակության պայմանը հողի վերաբանումների դեմ.—XX դարի սկզբին գյուղի կուլակությունը, կապվելով շուկայի հետ, գործադրելով ամեն տեսակի շարաշահումներ ու խարդախություններ և ստանալով ցարական պաշտոնյաների լայն օժանդակությունը, ավելի ու ավելի էր իր ձեռ-

¹³⁰ «Կավказское хозяйство», 1910 թ., № 2.

քում հինտրոնացնում հիմնական արտադրամիջոցը՝ Հողը: Կովակները ամեն կերպ ձգտում էին վերացնել համայնական հողատրության գլխավոր սկզբունքը՝ հողի պարբերական-հավասարական վերաբաժանումները և բաժնե՛ռող ունեցող գյուղացիներին դարձնել իրենց վարձու բանվորները: Նրանք գյուղական հասարակության ժողովներում ապօրինի կերպով, սպառնալիքի, փողի կամ ուղղակի ձնշման միջոցով խափանում էին հողի վերաբաժանումների հարցը և արդյունքը հաճախակի լինում էր այն, որ վերաբաժանումները տասնյակ տարիներով ձգձգում էին:

Երեանի նահանգական զեմստվային գյուղատնտեսը 1913 թ. նշում է, որ համայնական հողերի վերաբաժանում տեղի չի ունեցել ներքին Ղարանլուղում 29 տարի, Ղարաղալյում՝ 22, Գյոլում՝ 25, Արդաշարում՝ 19, Թաքալուղում՝ 20, Դալիփաշայում՝ 25, Ալիխանում՝ 20, իսկ Նովո-Միխայլովկայում՝ արդեն 40 տարվա բնթացքում: «Շատ գյուղերում հողի վերաբաժանում երթեք չի եղել (Եղվարդ, Միրաք, Դաղաղլաղ), այլ գյուղերում հողի վերաբաժանումներն ուշանում են համեմատած այն ժամկետի հետ, որ ահմանված է եղել նախկին հողաբաժանման ժամանակ (ներքին Ղարանլուղ, Ղարաղալյա, Գյոլ, Ծաղկունք, Դդմաշեն, Դալի-Ղարադաշ գյուղեր): Ակներկաբար համայնքում կազմվել է այնպիսի անձանց մի խումբ, որոնց համար հողի վերաբաժանումը որևէ պատճառով ձեռնտու չէ և նրանք ամեն կերպ արդելակում են այդ գործը...»¹³¹:

Գյուղացիության կարիքներն ուսումնասիրող նահանգական կոմիտեն իր եղրակացության մեջ գրում էր. «Հողի համայնատիրության հիմնական նշաններից մեկը՝ հողի պարբերական վերաբաժանումները բնավ էլ ամենուրեք չէ, որ պահպանվում են: Այն գյուղերի կողքին, որտեղ վերաբաժանումները կատարվում են 6 և նույնիսկ երեք տարին մեկ անգամ, գոյություն ունեն նաև այնպիսի գյուղեր, որտեղ արդեն տասնյակ տարիներ է, որ այդպիսի վերաբաժանումներ չեն եղել: Այդ երեսությը բացատրվում է տեղական կու-

լակների ազդեցությամբ, որոնց հաջողվել է իրենց ձեռքը վերցնել մեծ քանակությամբ բաժնեհողեր և որոնց համար վերաբաժանումներ ձեռնտու չեն: Այդ անձինք գյուղական հասարակության ժողովներում հաճախ հասնում են այն բանին, որ վերաբաժանման վերաբերյալ վճիռներ չեն կայացվում»¹³²:

Հաճախ գյուղացիներին հաջողվում էր գյուղական հասարակության ժողովում անցկացնել վերաբաժանման որոշում, բայց չեն կարողանում իրագործել այն, քանի որ կուլակները իրենց արբանյակների միջոցով խանգարում էին նրա իրագործմանը: Զաֆարաբադի ներկայացուցիչները 1913 թ. ապրիլի 6-ին հաշտարար միջնորդին բողոքում են, որ լիազորված հողաշափերը պետք է ըստ շնչերի հավասար բաժանեին հողը, «Բայց լիազորները այնքան էլ բարեխրդարեն չեն բաժանում հողը մեր միջև, որպեսզի խաղաղ վերացցնեն հողերի բաժանումը, մեկին շատ հող են տալիս, մյուսին քիչ, որին էլ բոլորովին հող չեն տալիս, մեկին տալիս են լավ հող, մյուսին տալիս են անպատճ հող, որից խրլում են նրա ունեցած ամբողջ հողը, և այն, որի հետևանքով մեր հասարակության մեջ զանազան անկարգություններ են լինում, առանձնապես ոմանցից խլում են թիուտները, տընամերձ հողերը, իսկ իրենք՝ այդ լիազորները լավ հողամասեր են վերցնում իրենց»¹³³:

Այսպիսով, համայնական հողերի պարբերական հավասարական վերաբաժանումների մասին օրենսդրությունը կամ կյանքում չեր իրագործվում, կամ եթե իրագործվում էր, Ժառայում էր կուլակության շահերին:

7. ԶՈՒՑ ՕՐՏՎԵԼՈՒ ԿԱՐՔԻ, ՀՈՂԵՐԻ ՈՒԽՈԴՈՒՄԸ

Հայաստանի խիստ ցամաքային կլիմայի պայմաններում գյուղատնեսության համար խոշոր նշանակություն ուներ ջուրը. նրա կարևորությունն առանձնապես մեծ էր հարթավայրային շրջաններում: Չնայած ըստ ցարական օրենքների

¹³¹ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 4993, թ. 11:

¹³² «Պամտանա կողային կլիմայի պայմաններում գյուղատնեսության համար խոշոր նշանակություն ուներ ջուրը. նրա կարևորությունն առանձնապես մեծ էր հարթավայրային շրջաններում»:

¹³³ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 7/70, գ. 69, թ. 14:

չուրը կալվածատիրական-մասնատիրական գյուղերում սերվիտուտային, իսկ պետական գյուղերում հավասարարական սկզբունքներով պետք է բաշխվեր, սակայն իրականում այն վերածվել էր կալվածատիրերի, կուլավների սեփականության. Վերջիններս ջրային աղմինիստրացիայի լայն օժանդակության պայմաններում լիովի օգտվում էին «ընդհանուր» օգտագործման տակ գտնվող ջրից, իսկ խեղճ գյուղացին, շրկարողնալով ջրել իր չնչին հողակտորը, սովի սպառնալիքի առաջ գտնվելով, շատ համախի իր հողը ջրելու համար կովի մեջ էր մտնում իր և մոտակա այլ շենքերի գյուղացիների հետ:

Ոռոգման գործի անմիջար վիճակի մասին խոստովանում էին նաև ցարական շինովնիկները: 1900 թ. Կովկասի ջրերի տեսուչն իր զեկուցման մեջ գրում էր, որ 7 տարվա աշխատանքներից հետո 1890 թ. ընդունվել է օրենք Անդրկովկասում ջրից օգտվելու և ոռոգման աշխատանքների կարգի մասին: Դրա հիմքում ընկած էին ինչպես տեղական սովորութները, այնպես էլ ոռուսական օրենսդրությունը: Օրենքը սահմանում էր.

1. Ոռոգվող ջրերը, սակավ բացառությամբ, ոչ թե մասնակոր, այլ համայնական սեփականություն են, ուստի պետք է բաշխվեն ըստ իրական կարիքների և վաղեմի փառատարակություն:

2. Որոշակի աշխատանք պետք է կատարվի հողերի հետաքա ոռոգման, առուների անցկացման գործում:

3. Ջրային տնտեսության կարգավորման և ջրի բաշխման գործը զեկավարելու համար Անդրկովկասը պետք է բաժանվի 94 ջրային օկրունների՝ 10 ինժեներ-հիդրավլիկների գոլխավորությամբ, որոնք իրենց ֆունկցիան իրագործելու էին միրաբների (ջրային օկրուգի պետ), ջուվարների (առուներին հետեղ) և ջրաբաշխների (առանձին գյուղերում ջրի բաշխումը կատարող) միջոցով: Միրաբները, ջուվարները և ջրաբաշխները ընտրվում էին գյուղացիների կողմից և հաստատվում ցարական աղմինիստրացիայի կողմից¹³⁴:

Ինչպես իր ընդհանուր ագրարային քաղաքականության մեջ, այնպես էլ ջրային իրավունքի հարցերում ցարական օրենքները ենում էին կալվածատիրության, կուլավների շահերից: 1890 թ. ջրային օրենսդրությունը ջրի համայնական սեփականության կողքին օգտագործում էր «սակավ ռացառություն», «ըստ վաղեմի փաստացի օգտագործման» արտահայտությունները, որոնք խոշոր սոլանցք էին հանդիսանում ջրից օգտվելու գործում կալվածատիրական-կուլավներին արտօնությունների ստեղծման կամ պահպանման համար: Նույնիսկ այդքան սահմանափակ վիճակում էլ ջրային օրենսդրությունը չէր կիրառվում: Բավական է նշել, որ նշված օրենքի հրապարակումից մինչև 1902 թ. Երևանի նահանգում ոչ մի նոր ջրանցք չի բացվել: Նահանգում եղած 10 ջրային օկրուններից միայն մեկում էր ջրային իրավունքը ուրոշվել, իսկ մնացածներում տիրում էր նույն խառնաշփոթ վիճակը: Ինժեներ-հիդրավլիկ Տաղումսկին գրում էր. «Ճրի բաշխման գործում ջրանների մեծ մասում կարգերը շարունակվում են մնալ բառացիորեն նույնը, ինչ որ եղել էն 1890 թ., և այդ գործում տիրող բառուի, միրաբների կամայականության ու շարացածումների գեմ դժգոհություններ արտահայտում են բոլորը, չբացառելով նաև ինժեներ-հիդրավլիկն»¹³⁵.

Բամբակագործների համագումարում կարգացած զեկուցման մեջ Պ. Պետրովիչը մեջբերումներ է կատարում գյուղական թղթակիցների հաղորդումներից, որոնք նշում մն որոգման համար ջրի անբավարարությունը, միրաբների շարացահումները, ջրի համար վեճերի և նույնիսկ սպանության ղեղաքերը: Նովրուզուից (որտեղ վիճակը ջրի տեսակետից համեմատաբար լավ էր համարվում) թղթակիցը հայտնում էր, որ ջրելու ժամանակ «շատ է շարքարվում գյուղացին, ոչ մի կերպ ժամանակին չեն կարողանում ջրել, ջրի համար սպանություններ են տեղի ունենում»¹³⁶: Էջմիածնի թղթակիցներից մեկը գրում էր. «Ճուրը շատ է, սակայն, միրաբների շա-

¹³⁴ ԿՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 365, գ. 98, թ. 13:

¹³⁵ «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», Հագեմած, էջ 44—65:

¹³⁶ «Труды съезда хлопководов», I, Тифлис, 1913, стр. 108.

Համոլության հետևանքով, որոշ գյուղերում ջրի պակաս է լինում, հատկապես Փ. Շահրիար գյուղում, որտեղ բամբակի ցանքերը երթեմն տառացիորեն չորանում են»¹³⁷: Առանձին թղթակիցներ նշում էին, որ ջրի սակավության հետևանքով ցանքերի փշացումից վախենալով շատ տեղերում չեն հանդրգնում բամբակ ցանել, Սամաղարի թղթակիցը գրում էր, որ իրենց շրջանի 20 գյուղերից քչերը բավարար քանակով ջուր ունեն, մեծ մասը ամռանը ջրի խիստ կարիք է ունենում, որի հետևանքով «համարյա բոլոր այն բնակիչները, որոնք համարձակություն, որովհետև այժմ մեզ մոտ բնակիչները վախենում են վատ շրման հետևանքով բամբակի համար հող հատկացնել» ցանել բամբակ, երաշտից ցանքերը կորչում են և մարդիկ լիակատար հիմարակում են»: Այնուհետև զարունակում էր. «Զանազան պոմպերի միջոցով կարելի է մերձակա լճից կամ գետից ոռոգման համար անհրաժեշտ քանակությամբ ջուր հանել, սակայն մինչև այժմ ոչ չի մտահոգվել դրա մասին»¹³⁸:

1911 թ. ամռանը Ղամարլու, Յուվա, Մասլումա և այլ գյուղերի ներկայացուցիչները հեռագրով դիմում են նահանգապետին Գառնիբասարի ջրային օկրուգի միրաբի կողմից կամայականորեն իրենց հասանելիք ջրի բաժինը միայն 1/5 մասով բաց թողնելու գեմ, որի հետևանքով ցանքերը սկսել էին շրանալ: Ուսումնասիրելով իրերի վիճակը, ինժեներ-Ֆիդրավլիկը թեև մեղմացնում է միրաբի կամայականությունը, սակայն ստիպված նշում է գոյություն ունեցող շարաշահումները: «Ցանքերի անհավասար վիճակը, — գրում է նա, — գյուղերում առաջանում է գլխավորապես ջրի ոչ ճիշտ բաշխման հետևանքով, որպիսի անձատությունը թույլ են տալիս կամ ջրաբաշխները, կամ թե հասարակության ժողովի սահմանած կարգը խախտում են գյուղերի ուժեղ և հարուստ բնակչությունները, որոնց բոլոր ցանքերը միշտ հիանալի վիճակում են լինում: Այս շարիքի դեմ պայքարելը շատ դժվար է»:

Ապա շարունակում է. «Ընդսմին պետք է ավելացնեմ, որ ջրային օկրուգների բոլոր գյուղերում և մասնավորապես վերոհիշյալ գյուղերում ոռոգվող հողի տարածությունն ամեն տարի ավելանում է, իսկ ջրի քանակը չի ավելանում և նույնիսկ չորային տարիներում պակասում է, ուստի և ոռոգման ջրի կարիքը խիստ մեծանում է»¹³⁹:

«Կավազսկое хозяйство» պարբերականը 1914 թ. № 2-ում հաղորդում էր, որ Նոր-Բայազետի մի շարք գյուղերի բնակիչներ զայրացել էին ցարական ազմինիստրացիայի գեմ, որը ոչ մի աշխատանք չէր կատարում ոռոգման գործը կարգավորելու, առուներ փորելու, ջուրը հավասար բաժանելու համար:

1910 թ. Քյորփալու գյուղը դիմում է իշխանություններին, խնդրելով Այզը լճից մեխանիկական պոմպերի միջոցով ջուրը բարձրացնել և ոռոգել իրենց 370 գետատին տարածությունը: Սակայն Երևանի նահանգապետը 1912 թ. օգոստոսի 3-ին փոխարքային ուղարկած գրության մեջ առաջարկում է մերժել Քյորփալու պահանջը, պատճառաբանելով, թե «Հողերի ոռոգման նախագծի կենսագործման ծախսերը Քյորփալու գյուղի բնակչության ուժերից գեր են և նրանց տրված փոխառությունը ստանալու տեսակետից անհուսալի է»¹⁴⁰:

1908 թ. հունիսին Սարգիս Մուբայացյանը դիմում է Երեվանի նահանգապետ ազմինիստրացիային և խնդրում 50 տարով վարձակալության տալ Սարդարապատի տափաստանը՝ Սրբաչայի ջրերով այն ոռոգելու և շրջակա գյուղացիներին վարձակալության տալու պայմանով: Մուբայացյանի դիմումը մերժվում է, որովհետև ցարական շինովնիկները գտնում են, որ իբր նրա առաջարկությունը շահեկան չէ¹⁴¹, 1911 թ. Մուբայացյանը կրկին դիմում է Երևանի նահանգապետ հողագործության վարչությանը Սարդարաբաղի տափաստանը 36 տարով վարձակալությամբ վերցնելու խնդիրքով: Ընդ որում խոստանում է ստորերկրյա և Արփալայի շրերով ոռոգելով գյուղերը, ուստի առաջարկությունը հաջող է առաջարկության համար:

¹³⁷ Նույն տեղում:

¹³⁸ Նույն տեղում, էջ 109:

¹³⁹ ՀՍՍՀ ԿՊՍ, գ. 28/91, գ. 136, թ. 9:

¹⁴⁰ «Ագրարная политика царизма...», стр. 175.

¹⁴¹ ՀՍՍՀ ԿՊՍ, գ. 133, գ. 2657, թ. 14:

բերության հասցնել վարձակալած հողերը: Զնշին եկամուտ տվյալ այդ տարածությունների դիմաց նա պարտավորվում էր պետությանը վճարել առաջին 12 տարում տարեկան 1200 ռ., երկրորդ տարում՝ 2400 ռ., իսկ վերջին 12 տարվա ընթացքում՝ տարեկան 3600 ռ., միաժամանակ խոստանում էր ժամկետը լրանալուց հետո պետությանը թողնել իր ստեղծած բոլոր կառուցումները և այլն: Սակայն այս անգամ ևս նա մերժում է ստանում, որովհետև հողագործության վարչությունը գտնում է, որ «...առաջին, չի կարելի այդ տափաստանի վրա քոշող քրդերին արտաքսել և երկրորդ, որ Մուբայացանի պայմանները պետությանը օգտավետ չեն»¹⁴²:

Իրականում ցարական կառավարությունը չէր ցանկանում զարգացնել կայսրության ինչպես այլ ծայրամասերի, այնպես էլ Հայաստանի արտադրողական ուժերը և նպաստել տեղացիների ձեռնարկատիրական գործունեության ծավալմանը:

8. ԳՅՈՒՂԱՏԵԽԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Տիրապետող սոցիալ-տնտեսական պայմանների հետեւանքով Հայաստանի գյուղատնտեսությունը տակավին գրտնրվում էր հետամնաց վիճակում: Դրա արտահայտություններից մեկը հացահատիկային կուտուրաների գերակշռությունն էր:

Այսպես, Հայաստանում 1913 թ. ամբողջ ցանքատարածությունները եղել են 345,7 հազար հեկտար, որից հացահատիկների ցանքատարածությունը՝ 308,5 հազար հեկտար կամ մոտ 90 տոկոսը: Գյուղատնտեսության հետամնացությունը արտահայտվում էր նաև նրանում, որ խիստ ցածր էր առանձին կուտուրաների բերքատվությունը: 1913 թ. հացահատիկի բերքատվությունը հեկտարից եղել է 5,8 ցենտներ, բարեկինը՝ 8,8, ծխախոտինը՝ 6,7 և այլն¹⁴³:

¹⁴² Տե՛ս «Ագրարная политика царизма...», էջ 167:

¹⁴³ «Социалистическое строительство Арм. ССР (1920—1940 гг.), статистический сборник, Ереван, 1940, стр. 67.

Հայաստանի, գյուղատնտեսության հետամնացությունը արտահայտվում էր նաև նրանում, որ տիրապետում էին տակավին պապենական գործիքները, հողը մշակվում էր գեռես պրիմիտիվ եղանակներով, չին կիրառվում ազգուկուտուրական միջոցառումներ և այլն: 1913 թ. սեպտեմբերին գեմստվային հրահանգիչ Ղազարյանը նշում էր, որ նոր-Բայազետի գավառում արորի միջոցով հողի բարակ շերտը վարելով և շատ թեթև փայտե տափաններով տափանելով՝ հողը փաստուրեն մշակման չեն ենթարկում, ուստի ստանում են մեկին միայն 2—3 բերք, իսկ հողն աստիճանաբար ծածկվում է մոլախոտերով, լցվում քարերով¹⁴⁴:

Ցարական պաշտոնյաները, բոլորության տնտեսագետները գյուղատնտեսության ընդհանուր հետամնացության պատճառներն աշխատում էին որոնել ոչ թե սոցիալ-տընտեսական հարաբերությունների, այլ գյուղացիության ծուլության, տգիտության, նորին ընդդիմանալու, ագրո-կուլտուրական միջոցառումներին ծանոթ լինելու մեջ: Այսպես, եթե հողագործության վարչության պետ Արդասենովը գյուղատնտեսության հետամնացության, անբերիության պատճառուր համարում էր վատ կլիման և մասնավորապես բնակչության կուլտուրական հետամնացությունը, ապա բուրդության անտեսագիտ և ցարական շինովնիկ Սեգալը մի ամբողջ «տեսություն» էր առաջ քաշում այդ հետամնացությունը բացատրելու համար: Նրա «տեսության» մեջ գյուղացու անկուլտուրականության հետ միասին նշվում էին նաև բնության հարստությունը, տաք, տոթ կլիման, որոնք բնակչությանը դարձրել են ծովը, դանդաղաշարժ և այլն¹⁴⁵:

1910 թ. Երևանի նահանգական հողագործության և պետական գույքերի վարչության պետը զեկուցագիր է ներկայացնում Երևանի նահանգական գյուղատնտեսության վերելքի հարցերի մասին: Նա միակ ելքը տեսնում է ագրո-կուլտուրան բարձրացնելու մեջ, առաջարկում է միջոցներ առանձնացնել լեռնային շրջաններում արհեստական խոստ-

¹⁴⁴ ՀՍՀ ԿՊԱ, ֆ. 133, թ. 86—89:

¹⁴⁵ Տե՛ս Լ. Սեղալ, Կрестьянское землевладение в Закавказье. Гифлик, 1913:

շանելու և ապա Երևան քաղաքում գյուղատնտեսական մեթենաների ու գործիքների պահեստ ստեղծելու նպատակով, որի համար խնդրում է Հատկացնել 17000 ռ., նա գտնում է, որ այդ միջոցով կբարելավվի ցանքաշրջանառությունը. կը բարձրանա բերքատվությունը, մեթենաները լայն կիրառում կգտնեն գյուղատնտեսության մեջ, հնարավոր կլինի «բարձրացնելու բնակչության բարեկեցությունը» և եզրափակում, որ «նահանգի գյուղացիական տնտեսությունը այս պատմական փակուղուց, որի մեջ նա ընկել է, դուրս բերելու համար ուրիշ միջոցներ չկան»¹⁴⁶:

1913 թ. Կովկասի ագմինիստրացիան որոշեց Երևանի նահանգում ստեղծել գյուղատնտեսական գործիքներով, մեթենաների վարձակայաններով, ցուցադրական դաշտերով, բուժիչ նյութերով շորս ագրոնոմիական կետեր: Սակայն իրականում 1914 թ. ստեղծվեցին ոչ կատարելագործված մեթենաներով երկու վարձակայաններ և սերմազտիչ կետեր, որոնք ծառայեցին կովակության շահերին, իսկ աշխատավոր գյուղացիության վիճակը՝ ոչնչով շբարելավվեց: Ցարիզմը զուր էր փորձում մասնակի միջոցառումներով գյուղատնտեսությունը դուրս բերել փակուղուց. դրա համար անհրաժեշտ էին ավելի արմատական միջոցառումներ:

Լենինը, նշելով, որ «Թուսատանի գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացման գլխավոր ու հիմնական արգելքը ճորտատիրական մնացուկներն են, այսինքն՝ ամենից առաջ աշխատավճարումներն ու ստրկացումը, ապա ճորտատիրական հարկերը, գյուղացու անիրավահավասարությունը, նրա նվաստացումը բարձր դատերի հանդեպ և այլն»¹⁴⁷, գտնում էր, որ դրս գեմ պայքարելու արմատական միջոցը բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունն է, որը տապալելով ցարիզմը, կոշնչացնի հողի կալվածատիրական սեփականությունը, կազմայնացնի հողը և լայն հնարավորություն կստեղծի արտադրողական ուժերի զարգացման համար:

¹⁴⁶ Բ. Քառունի, Ին պատմություն առաջնային պատմությունների մասին, Երևան, 1954, ստ. 119.

¹⁴⁷ Վ. Ի. Լենին, Հ. 15, էջ 154:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՅԱՐԻԶՄԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1907—1914 թթ.

1. ՅԱՐԻԶՄԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ցարիզմի ագրարային քաղաքականությունն ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում ծառայում էր տեղական կալվածատիրության հողատիրության ընդարձակման, ուռասական խոշոր կալվածատիրական տնտեսությունների ստեղծման, արքունիքի հողային տարածությունների ընդլայնման գործին:

1864—70—77 թթ. գյուղացիական ոեֆորմները, ցարական ագմինիստրացիայի կողմից անցկացվող հողաշնարարական աշխատանքները, գյուղացիների զբաղեցրած հողային տարածությունները արտոնյալ պայմաններով ուսու շինովնիկության ներկայացուցիչներին տալը և այլն միջոցառումներ էին, որոնք ավելի էին կենտրոնացնում հողը կալվածատիրության, արքունիքի ձեռքին: Բայց, չնայած կառավարության այդ քաղաքականությանը, կալվածատիրական հողատիրությունը Անդրկովկասում և Հայաստանում, այնուամենայնիվ, քայլքայլում էր: Դա արտահայտվում էր նրանում, որ հողատերերը գրավ էին դեռում ու վաճառում իրենց կալվածքները: Այսպէս. պաշտոնական տվյալներով (որոնցում իշեցված են կալվածատիրական հողատիրության շափերը) Երևանի նահանգի կալվածատերերի ունեցած 58843 դես. հողից միայն թիֆլիսի, Քութայիսի և Պետական պանրվականական բանկերում առ մեկը հունվարի 1898 թ. գրավ էր գրաված 8344-ը կամ 15 տոկոսը: Ընդ որում դրա դիմաց

ხელაծ պარտფერ კავკასია է 213000 ა.¹ Ամբողջ Թիֆլիսի նահაնգում միայն ազնվականների կողմից Թիֆլիսի և Պետական ազնվականական հողային բանկերում առ մեկը հունվարի 1903 թ. գրավ էր դրված 350000 դես. հող, որից 113000-ը (32,27 տոկոս) բաժին էր ընկնում Բորչալուի գավառին, ընդ որում 106000 դեմատինը գրավ էր դրված 500 և ավելի դեմատին հող ունեցող խոշոր կալվածատերերի կողմից: Մրանց մեջ համամասնաբար մտնում էին նաև Լոռու կալվածատերերը, որոնց մասին առանձին տվյալները, դժբախտաբար, բացակայում են: Միայն մասնավոր մարդկանց մոտ կոռու շրջանի հողատերերը առ մեկը հունվարի 1904 թ. գրավ էին գրել մոտ 7500 դես. հող, և պարտփի գումարը դրա դիմաց հասնում էր 195000 ռ.²:

Երեսնի նահանգի խոշոր կալվածատեր Մ. Մելիք-Աղամալյանը թիֆլիսի ազնվականական հողային բանկում գրավ դրած իր «Արզաքյանդ» և «Դալլար» 4896 դես. ընդհանուր տարածությամբ կալվածքները 1900 թ. ծախում է Բաքվի խոշոր կապիտալիստ և առենտրական Շատուրովին, որն իր ձեռք բերած հազարավոր գեսամտին այլ հողերի հետ միասին սրանք ևս ծանր պայմաններով վարձակալության է տալիս գյուղացիներին³:

Միայն երեսնի նահանգից 1906—1912 թթ. ընթացքում գյուղացիական հողային բանկի Անդրկովկասի բաժանմունքն ստացել էր դիմումներ ապելի քան 11000 դես. կալվածատիրական հողի վաճառքի մասին⁴:

Յարիզմը կալվածատիրության հետ միասին պաշտպանում էր նաև կուպակության շահերը: Այդ երկու տիրապետող շերտերի շահերին էր ծառայում փոխարքայի միջնորդությամբ 1905 թ. Թիֆլիսում Պետական գյուղացիական հողային բանկի բաժանմունքի ստեղծումը, որը, հենց փոխարքայի խոսքերով, խնդիր պետք է ունենար «...մասնավոր սեփակա-

¹ Տե՛ս Օрест Семин, Великая годовщина, Киев, 1911, էջ 48:

² Տե՛ս «Сборник статистических сведений...», 1910 թ.:

³ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 28/91, գ. 204, թ. 9:

⁴ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 13, գ. 7, գ. 2192, թ. 3:

նատիրական հողեր ստանալու և գյուղացիներին վերավաճառքում միջոցով գյուղացիական հողային սեփականություն ստեղծելն ու ընդարձակելու Եթե ագմինիստրացիան դրան հիշտ օժանդակի՝ այն պետք է դառնա ինչպես գյուղացիների հողային կենցաղն ընդհանրապես կարգավորելու, այնպես էլ ուրիշ հողային սեփականությունը գրավելու պրոպագան-դայի դեմ ուղղված մի իրական գործիքը⁵:

Այլ խոսքով՝ գյուղացիական հողային բանկի ստեղծումը նպատակ ուներ պահպանելու կալվածատիրական հողատիրության անձեռնմխելիությունը, կազմակերպելու կալվածատիրական հողերի բարձր վաճառք վաճառքը, օժանդակելու կուլակային տարրերի հզորացմանը և հեռու պահելու գյուղակային հողային հարցի հեղափոխական լուծումից:

Յարիզմի ագրարային քաղաքականության մեջ կարևոր տեղ էր գրավում նաև ոռուսական կալվածատիրության խոշոր տնտեսությունների ստեղծումը և ամրապնդումը: Այդ նպատակով երեսնի գավառի Արագայանի շրջանում 10000 դես. արքունի հողերը 1870 թ. տրվեցին Կովկասի փոստային օկրուգի պետ գեներալ-մայոր Կախանովին. ընդ որում այդ հողերում ապրող քրդերին տեղափոխեցին մի այնպիսի շրջան, որն արդեն բնակեցված էր քրդական այլ ցեղերի կողմից, ուստի դա պատճառ դարձավ փոխադարձ վեճերի, կոփվների և սպանությունների: Կախանովին միջոցներ հատկացրին շրջանցք անցկացնելու համար, և նա մշակելի հողերի 3000 դեսյատինից արդեն մի քանի տարվա ընթացքում կիսրար վարձակալությամբ կարողացավ ստանալ ոչ միայն ծախսած 10000 ռ., այլև զգալի եկամուտներ: XIX դարի վերջերին «Արագայան» կալվածքն անցնում է գեներալ-լեյտենանտ Շերեմետեվին և նրա ժառանգներին, որոնք կալվածքում ստեղծել վաճառքի դաման շահագործման միջոցով խոշոր եկամուղացիների դաման շահագործման միջոցով խոշոր եկամուտներ են ստանում և պարագիտային կյանք վարում: Մարդկան գյուղացիների ընթացքում նրանք ոչ միայն ոչինչ շենքարկար տարիների ընթացքում նրանք ոչ միայն ոչինչ նարկեցին գյուղատնտեսության տեխնիկան, հողի մշակման

⁵ «Аграрная политика царизма...», стр. 51.

ագրոկուտուրան բարելավելու ուղղությամբ, այլ նույնիսկ մսխեցին ջրանցքի վերանորոգման և կալվածքի տնտեսության բարեկարգման համար տրված պետական 30000 ռ. արտոնյալ հատկացումը: Եերեմետևների ժառանգների օրոք կալվածքի տնտեսությունն այն աստիճանի քայլայվեց և այնպիսի պարտքերի տակ ընկալվ, որ ցարական ազմինիստրացիան ստիպված եղավ իր վարկերը ետ ոտանալու համար 1913 թ. կալվածքը հանձնել ակցիոներական ընկերությանը, որը կապիտալիստական եղանակով սկսեց վարել տնտեսությունը: Պրոֆ. Ռշտումին իրավամբ գրում է. «Նման հանգամանքները բոլորովին չէին շիշտեցնում նահանգական և անդրկովկասյան իշխանությունների ներկայացուցիչներին և արգելք չէին հանդիսանում հսկայական տարածությամբ պետական հասութաբեր հոդվածները վարձակալության տալու ուստի կալվածատիրական-ազնվական դասակարգի ներկայացուցիչներին, որոնց՝ ի հավելումն զրա՞ ցարական կառավարության կողմից բաց էին թողնվում խոշոր վարկեր: Այսպիսով, նահանգական և անդրկովկասյան իշխանությունների կողմից գլուղատնտեսության բնագավառում ձեռնարկած բոլոր միջոցառումների մեջ պարզ կերպով ներևան է գալիս աղքային և գաղութային ճնշման գիծը»⁶:

2. ՍՏՈԼԻՇԽԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՎ. ՆԲԱ. ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1905—1907 թթ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը պարտվեց, և ցարական կառավարությունը 1907 թ. հունիսերեքան հեղաշրջումով երկրում հաստատեց ռեակցիայի ծանր ռեժիմ: Այդ ռեժիմի պահպանման համար ինքնակալությունը ռեպրեսիաներից բացի դիմում էր նաև այնպիսի միջոցառումների, որոնք հնարավորություն կտային ամրապնդելու իր սոցիալական հենարանը գյուղում, պայքարելու և ճնշելու հեղափոխական շարժման ամեն մի փորձ: Այդ միջոցառումների մեջ ցարիզմը հիմնական տեղը տալիս էր նոր

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 18—21:

⁷ Նույն տեղը, էջ 28:

ագրարային քաղաքականությանը, որի ակտիվ նախաձեռնողը ու կենսագործողն էր հեղափոխական շարժումների ճնշման գործում իր զաժանությամբ աշքի ընկած խոշոր կալվածատեր ու ցարական մինիստր Ստոլիպինը: Ցարիզմի ագրարային այդ նոր քաղաքականության գործնական կիրառությունը եղեք ուղղությամբ էր ընթանում:

1. Համայնքի բոնի քայլայում (իբր վատ հողաշինարարության դեմ պայքարելու նպատակով), ագրարակային ու հատկածային տնտեսությունների ստեղծում՝ գյուղացիական բաժնեհողերը որպես սեփականություն նրանց ամրացնելու միջոցով:

2. Կալվածատիրական հողատիրության պահպանում և կուլակային տնտեսությունների զարգացում, որոնք հանդիսանում էին ինքնակալության սոցիալական հենարանները և իրավասահմանում:

3. Գյուղացիության վերաբնակեցումների ուժեղացում դեպի ծայրամասերը, որ նպատակ ուներ թեկուց մասամբ մեղմացնել Ռուսաստանի կենտրոնում գյուղացիական խիստ սակավահողությունը և հնարաններ գյուղացիության առավել «վատանգավոր» տարրերին ազնվականների կալվածքներից⁸:

Ստոլիպինյան ագրարային քաղաքականության մեջ առավել կարևոր նշանակություն ուներ համայնքի բոնի քայլայումը, որի մասին 1906 թ. նոյեմբերի 9-ին արտադրույական կարգով հրամանագիր հրատարակվեց: Այն օրենք դարձավ միայն 1910 թ. հունիսի 14-ին, ըստ որի համայնքից անջատվում և ազարակային ու հատկածային տնտեսություններ էին ստեղծում գյուղացիական-համայնական բաժնեհողերի մեծ մասը կենտրոնացրած կուլակային տնտեսությունները: Համայնքը պարտավոր էր նրանց հատկացնել լավագույն հողերը:

Ցարական կառավարությունը շինովնիկների ու կալվածատերերի գլխավորությամբ գործող հողաշինարարական հանձնաժողովների միջոցով դիմում էր համայնական հողատիրության բոնի քայլայմանը՝ հօգուտ աճող գյուղացիան

⁸ Ստոլիպինյան ագրարային քաղաքականության մասին տե՛ս

П. Եֆրեմով, Столыпинская аграрная политика, М., 1941:

բուրժուազիայի շահերի: Ստոլոպինը նշում էր, որ իր ագրարային քաղաքականության կենսագործման համար անհրաժեշտ է միայն քսան տարվա «Համագույթյուն», այսինքն՝ գյուղացիության լուս հնագանդություն, սակայն այդ բանին նաև չկարողացավ հասնել: Նոր ագրարային քաղաքականության կենսագործման հենց առաջին տարիներին առաջացան հուժկու գյուղացիական շարժումներ: Ստոլիպինյան ագրարային քաղաքականությունը կրամի մատնվեց: Դրա ապացուցներից մեկն այն է, որ ինը տարիների ընթացքում (1907—1915 թթ.) Ռուսաստանում եղած մոտ տասը միլիոն համայնական գյուղացիական ծիսերից անջատվեցին շուրջ երկու միլիոն տնտեսություններ: Գյուղացիության 4/5 մասը դարձալ մնաց համայնական հողատիրության շրջանակներում:

Ստոլիպինյան ագրարային քաղաքականության կարեռը լժակներից մեկը գյուղացիական հողային բանկն էր: Մենք վերը արդեն նշեցինք, որ այն հիմնականում ծառայում էր կալվածատիրական, պետական և ուղելային հողերի բարձր գներով վաճառքին գյուղացիությանը, որի ժամանակ ինքը ևս խոշոր եկամուտներ էր ստանում: 1907—1915 թթ. հատկապես ուժեղանում է նրա գործունեությունը կուլակային խոշոր տնտեսությունների ստեղծման գործում: Այդ թըվերին բանկն իր և իր տրամադրության տակ եղած կալվածատիրական, պետական հողերից կուլակությանը վաճառեց ավելի քան 4 միլիոն գեսայատին հող: Բանկի հողերի վրա կազմակերպվեցին մոտ 280 հազար ագրար ագրարկ և հատված: Նոր հողերի գնման և ագրարակների ստեղծման համար բանկը այդ տարիներին որպես վարկ կուլակներին տվեց 480 միլիոն ռուբլի՝ ամեն կերպ օժանդակելով կուլակության միջից «նոր կալվածատերերի» առաջացմանը:

1906 թ. մարտի 10-ին ցարական կառավարությունը որոշեց արագցնել վերաբնակեցումները, դրանով կենտրոնական նահանգներում եղած սակավահողությունը մեղմացնել, գյուղացիական հեղափոխական շարժումները թուլացնել, ենթադրելով, որ պետական «օժանդակությունից» օգտվելուն և վերաբնակեցումներին առաջին հերթին կղիմեին հողադուրկ,

քայլայված, ցարիզմի և կալվածատերերի համար խիստ վտանգավոր տարրերը: Սակայն, եթե առաջին երկու-երեք տարում Սիբիրի, Ուրալի շրջանները վերաբնակման քրվեցին խոշոր քանակով գյուղացիներ, ապա հետագայում նրանց քանակը խիստ կրճատվեց: Լենինը նշում էր, որ եթե 1905 թ. հետո վերաբնակիչների թիվը տարեկան բարձրացավ մինչև կես միլիոն մարդու, իսկ 1908 թ. հասավ 665 հազարի, ապա հետո արագ կերպով նրանց թիվը իջավ և 1911 թ. կազմեց միայն 189 հազար, ընդ որում, նույնիսկ իջեցված տվյալներով, 1910 թ. վերաբնակվածներից ետ են վերադարձել 30—40 տոկոսը, իսկ 1911 թ.՝ 60 տոկոսը, և դրանք առավել քայլայված վիճակում, որը ցույց էր տալիս ցարական վերաբնակեցումների քաղաքականության կրախը⁹: Դա արդյունքն էր այն բանի, որ անսակելի ծանր պայմաններ էին ստեղծված գյուղացիների տեղափոխման համար: Խոստացված հողերի դիմաց նրանց առաջարկում էին ճահճոտ, ավագութ կամ արդեն տեղացիների կողմից գրադարձ հողամասեր, տիրում էր հիվանդության, սովի, ցրտահարության թագավորություն: Իսկ այդ գործը «ղեկավարող» շինովնիկները շարաշահումների միջոցով հսկայական գումարներ էին յուրացնում: Գյուղացիներին «հատկացված» հողերն անցնում էին կուլակների ձեռքը, որոնք աստիճանաբար ուրծանում, խոշոր հողատերեր էին դառնում:

Վերաբնակեցումների քաղաքականությունը ևս ցարիզմի նպատակները շարժարացրեց, սակավահողության մեղմացում տեղի չունեցավ, իսկ գյուղացիական շարժումները, ընդհակառակը, ավելի ուժեղացան:

Իհարկե, ստոլիպինյան ագրարային քաղաքականության հետևանքով տեղի ունեցավ կուլակային տնտեսությունների զգալի աճ, որոնք, արդեն կապիտալիստական եղանակով կազմակերպելով հողի մշակությունը, օգտագործելով որակչալ գործիքներ և վարձու էժան աշխատանք, կարողացան ուրոշ շափով զարկ տալ գյուղատնտեսության զարգացմանը և

⁹ ՏԵ՛ս Վ. Ի. Լենին, Հ. 19, «Ժամանակակից կառավարության ագրարային քաղաքականության (ընդհանուր) հարցի շուրջը» աշխատությունը:

նրա ապրանքայնության մեծացմանը: Սակայն, շնաբած դըրան, արտադրողական ուժերի զարգացումը նույսաստանում խիստ դանդաղ էր առաջ գնում, որովհետև կուլակության աճի, չքավորության պրոլետարացման հետ միաժամանակ տեղի էր ունենում գյուղացիության հիմնական մասի դանդաղ, տանջալի ալքատացում: Խոշոր շափով պահպանվում էին ճորտատիրության մնացուկները, առաջին հերթին խոշոր կալվածատիրական հողատիրությունը՝ կիսրարության և աշխատավճարումների հսկայական օգտագործմամբ, որը հակադիր էր երկրի հետագա կապիտալիստական զարգացմանը: Նույսաստանում տնտեսական քայլացածությունը շարունակվում էր, և կալվածատիրերի կողմից անցկացվող բուրժուական ռեֆորմի արդյունքն այլ լինել չէր կարող, որովհետև այն ենում էր կալվածատիրության, նրա հսկայական հողատիրության և դրա հետ կապված ճորտային խոշոր մնացուկների պահպանման խնդրից: 1911 թ. անբերիրությունը, որի ժամանակ սովյալների թիվը նույսաստանում հասավ 30 միլիոնի, հենց ցուց էր տալիս այդ ռեֆորմի անհաջողությունը: Պրագայի կոնֆերանսն այդ առթիվ իր բանաձեռությունը է: «Ներկա սովը մի ավելորդ անգամ հաստատում է կառավարական ազրարային քաղաքականության անհաջողությունը և նույսաստանի թիվ թե շատ նորմալ բուրժուական զարգացումն ապահովելու անհնարինությունը, երբ ընդհանուրագեն նրա քաղաքականությունը և մասնավորացեն հողային քաղաքականությունը վարում է ճորտատեր-կալվածատերերի դասակարգը»^{10:}

Այսպիսով, ցարիզմի ազրարային նոր քաղաքականությունն իր կենսագործման տասը տարվա ընթացքում շտվեց սպասվող արդյունքները. տեղի ունեցավ համայնքի հողմբի կենտրոնացում փոքրաթիվ կուլակության ձեռքում, որին զուգահեռ միաժամանակ քայլացման, հողագրկման ենթարկվեցին հսկայական քանակով գյուղացիական տնտեսություններ: Իրենց նպատակին շծառայեցին ագրարակների, հատ-

վածների ստեղծումը և վերաբնակեցումները, որոնք ավելի սրբին գյուղացիության շերտավորումը և կալվածատիրության դեմ մղվող գյուղացիական սոցիալական պատերազմից բացի ուժեղացրին նաև գյուղում սոցիալական երկրորդ պատերազմը, որ մղում էր քայլացման մասի դանդաղացին պարզաբանության հետագա ուժեղացում: ցարիզմի սոցիալական հենարանը իր իսկ հակաժողովրդական ագրարային քաղաքականության հետևանքով ավելի խախուս դարձավ: «Անցել է գրեթե $4\frac{1}{2}$ տարի 1906 թվականի նոյեմբերի 9-ի ուկազի հրատարակման ժամանակից, — գրում է Լենինը, — անցել է ավելի քան $3\frac{1}{2}$ տարի 1907 թ. հունիսի 3-ից հետո և հիմա արգեն ոչ միայն կադետական, այլև զգալի շափով օկտյաբրիստական բուրժուազիան էլ համոզվում է հունիսերերյան «կոնստիտուցիայի» և հունիսերերյան ագրարային քաղաքականության «անհաջողության» մեջ»^{11:}

Ի՞նչ արտահայտություն գտավ ցարիզմի ագրարային քաղաքականության նոր կուրսը Անդրկովկասում և Հայաստանում: Այդ հարցի պարզաբանման համար անհրաժեշտ է անդրդապնակ կառավարության կողմից երկրամասում տարվող հողաշինարարական ու սահմանագծումների աշխատանքներին:

Հայտնի է, որ դեռ 1861 թ. ապրիլի 29-ի և 1867 թ. դեկտեմբերի 9-ի օրենքներով սկսվեցին պետական ու մասնատիրական տարածությունները միմյանցից սահմանագտելու աշխատանքները, որոնք տարվում էին հողային և դատական օրգանների կողմից: Միաժամանակ պետական գյուղերում տեղի էին ումանում հողաշինարարական աշխատանքներ, որոնց նպատակն էր արձանագրել գյուղացիների փաստական տիրուցիները և դրանք սահմանագտել արքունի պետական հողերից: Այդ աշխատանքների մասին փոխարքայի գրասենյակը 1909 թ. գրում էր. «Այսպիսով մասնավոր հողատերերի և պետական գյուղերի համար սահմանագծման նշանակու-

¹⁰ ԱՄԿՊ-ն համագումարների կոնֆերենցիաների և կենտրոմի պլենումների բանաձեռում ու որոշումներում, առաջին մաս, էջ 344—345:

թյան ամբողջ տարրերությունը հանգում էր լոկ այն բանին, որ առաջիններն ստանալով իրենց հողերի տարածության ճշգրիտ որոշումը, միևնույն ժամանակ այդ հողերի պլանի հետ մեկտեղ ստանում էին նաև նրանց սեփականության իրավունքը, իսկ վերջիններիս համար, որոնք այդ իրավունքը չէին ստանում, հաստատվում էր նրանց փաստացի հողօգտագործում¹²:

Սակայն պետությունը բոլորովին շահագրգոված չէր գյուղացիության հողաշխնարարական աշխատանքները ժամանակին և արագ վերջացնելու մեջ՝ 1887 թ. հունիսի 2-ի օրենքով սահմանագծումների նախկին կարգի փոխարեն, արքունիքի շահերից ելնելով, մտցվեց մի նոր կարգ, ըստ որի պետք է սահմանագծելին միմիայն մասնատիրական և արքունի հողերը, հանգեցն նրանց պլանները: Պետական հողերի մեջ տարբեր գյուղերի սահմանների որոշման, նրանց փաստացի հողատիրության հարցերը մի կողմ թողնվեցին: Մրա նպատակն էր արագացնել դատական սահմանագծումն՝ առաջին հերթին հաշվի առնելով արքունիքի, ինչպես նաև կալվածատիրության շահերը: Գյուղացիական հողատիրության խառնաշփոթ վիճակը, հսկայական քանակի վեճերը, անորոշությունը և հողերի կտրումները շարունակվում էին, տեղիք էին տալիս շատ բողոքների: Ցարական աղմինիստրացիան այդ օրենքի կիրառման 12 տարվա ընթացքում համոզվեց, որ գյուղացիական հողատիրության սահմանագծման աշխատանքները դանդաղեցնելը և երկրորդ պլանի վրա թողնելը ավելի է խճառում հողային հարցը, առաջացնում է դժգոհություն գյուղացիության մեջ, ուստի 1897 թ. մայիսի 26-ին սահմանագծման այս կարգը վերացվեց:

1900 թ. մայիսի 1-ի՝ պետական հողերի վրա բնակվող գյուղացիության հողաշխնարարության գլխավոր հիմունքների մասին օրենքով ճանաչվեց գյուղացիության վաղեմի փաստացի հողատիրությունը. հողաշխնարարական աշխատանքներն էլ այդ ուղղությամբ պետք է տարվեին՝ նշելու գյուղացիական հողատիրության սահմաններն ըստ գյուղերի,

լուծելու հողային վեճերը և այլն: Աշխատանքները խիստ բարդ-դժվարին բնույթ ունեին, որովհետև 1900 թ. մայիսի 1-ի և 1903 թ. ապրիլի 21-ի կանոններով մշակվեց հողաշխնարարական աշխատանքների բարդ իրագործում: Աշխատանքները հանձնարարվեցին հողագործության և հողաշխնարարության մինչստրուկտյանը և նրա տեղական օրգաններին: Հաճախ կրնակ նրանք ամենը կրնակ էին ամենը, ինչ արդեն կատարվել էր դատական օրգանների կողմից սահմանագծումների ժամանակ: Մտեղծվեցին մի շարք ինստանցիաներ, հանձնաժողովներ, որոնք միայն դժվարացնում էին սահմանագծման աշխատանքները: Ցարական աղմինիստրացիայի կողմից քիչ մասնագետներ առանձնացնելլ, աշխատանքների գանդաղաշարությունը, հողաշխնարարության հանձնաժողովների և դատական օրգանների շարաշառումներն ու կեղծիքները փաստորեն որևէ էական փոփոխություն չմտցըրեցին պետական գյուղացիության հողատիրության մեջ եղած խառնաշփոթ վիճակը վերացնելու գործում: Այդ ստիպված էին խոստովանել նույնիսկ իրենք՝ ցարական շնորվնիկները: Փոխարքայի գրասենյակի տվյալներով, Անդրկովկասում առ մեկը հունվարի 1912 թ. հողաշխնարարական աշխատանքներ են տարվել 3956 պետական գյուղերից 1303-ում՝ 1631107 դես. Հողային տարածությամբ: Դրանցից վերջնականապես սահմանագաղաքած են հողաբաժիններ միայն 709 գյուղերի, ներկայացված են հատկացման գրեր առ 10-ը տեղակամքերի 1912 թ. միայն 23 գյուղերի, ընդ որում չեն տրված հատկացման գրեր և ոչ մի գյուղի¹³: Այսինքն՝ աշխատանքների 10 տարվա ընթացքում ոչ մի գյուղում, ըստ օրենքի, հողաշխնարարությունը չէր ավարտվել, և գյուղացիներն օգտվում էին հողից այնպիսի հիմունքներով, ինչպես մինչև 1900 և 1903 թթ. օրենքները:

Հողաշխնարարական հանձնաժողովները կազմված էին ցարական շնորվնիկներից, որոնք իրենց աշխատանքների ժամանակ ամբողջովով կողմնորոշվում էին այն սկզբունքով, որ ինչքան հնարավոր է շատ կատարեն կտրատումներ գյու-

¹² ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 2652, թ. 1:

¹³ ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 2701:

դացիական հողերից՝ հօգուտ կալվածատիրության և արքունիքի. իսկ այդպիսի կտրումներ հնարավոր էր անել, որովհետև հանձնաժողովները մեծ իրավունքներ ունեին: Նրանց խնդիրն էր՝ պարզել գյուղացիական հողատիրության սահմանները, վճռել սահմանային վեճները, «ուղղել» սահմանները, կազմել և ներկայացնել գյուղական ժողովին սահմանագծման նախագիծը, կազմել հողաբաժնի հատկացման գրեր, որոնցում նշված էր լինում ոչ միայն գյուղացիների կողմից օգտագործվող հողերի տարածությունը, այլ նաև դրա դիմաց պիտությանը տրվող հասութային տուրքի շափը և այլն: Հանձնաժողովները թեև ձեւականորեն լսում էին գյուղացիության ներկայացուցիչների կարծիքը, և սահմանագծման նախագիծը գրվում էր գյուղական ժողովի հաստատմանը (որը ձայների $\frac{2}{3}$ -ով կարող էր նաև որոշել հողօգտագործման համայնական կամ անհատական-ծխային ձերը), սակայն, փաստորեն, գյուղացիության կարծիքը ոչ ոք հաշվի չէր առնում: Սահմանները նախագծվում էին անարդարացի կերպով և տեղիք էին տալիս բազմաթիվ բողոքների թե գյուղացիական գործերի նահանգական ատյանին, և թե անհատին: Այսպես, օրինակ, նոր-Բայազետի գավառի հողաշինարարական հանձնաժողովը գտավ, որ գյուղական հողերի մեջ Հուսեյին Աղա և նրա ազգական Փապուր Աղա Աղաևները իրեն սեփականություն ունեն 78,35 դես. հող, բայց դատական սահմանագծումը այդ ցուց չի տալիս և նրանք էլ ոչ մի փաստաթուղթ չունեն իրենց իրավունքն այդ հողի վրա ապացուցելու համար: Գյուղացիները վկայում են, որ դրանք նեղել են իրենց համայնական հողերը: Սակայն հանձնաժողովը, հենվելով հաշտարար միջնորդի, ոստիկանական պրիստավի և պիտական հողերի տվյալ շրջանի վերահսկիչի «խորը ուսումնասիրությունների» վրա, իր «արդար» որոշումն ընդունեց՝ հանել այդ 78,35 դես. հողը իր վիճելի հող գյուղացիական օգտագործումից, դարձնել պիտական հող և արտոնյալ պայմաններով վարձակալման տալ այդ աղալարներին: Զնայած այն բանին, որ գյուղացիները խնդրել էին ժայռահեղ դեպքում այդ հողակտորը վարձակալման տալ իրենց ավելի բարձր գնով, բայց նրանց թե այդ կրկնակի հարկում էր աղալարների հողագործումը:

թե նրանց բողոքը սենատին մնացին անհետեանք, և հողն անցավ աղալարների օգտագործմանը¹⁴: 1900 և 1903 թթ. օրենքները նախատեսում էին սահմանագծումների և հողաշինարարության միջոցով մեծացնել պետական ազատ հողերի ֆոնդը: Պաշտոնյաներն այդ ուղղությամբ շարաշահումներն այն աստիճանի էին հասցնում, որ նույնիսկ փոխարքան 1907 թ. կայսրին ուղարկած իր հաշվետվությունում գրում էր: «Պետական-հասութաբեր հողամասերը ստեղծվում են ամեն տեսակ անարդար միջոցներով, երբ մենանում է նախկին պիտական գյուղացին իր բաժնեհողը հանձնելով նախկին կալվածատիրական գյուղացիք կամ արտոնյալ դասին պատկանող իր փեսային, բաժնեհողը հարքունիս է գրավվում որպես հասութաբեր հանդակ, սակայն սովորաբար սկզբնական շրջանում այդ հողը վարձակալության է տրվում հենց նույն հողատիրոջը: Խամի վերածված վարելահողը հաշվվում է արքունի արոտավայր: Եթե գյուղացիական բաժնեհողի մի մասում ծառեր են բռնմում, այդ հողաբաժնը վերածվում է արքունի անտառային հասութաբեր հանդակի. եթե այդ բաժնեհողի մի մասը ջրով է ծածկվում՝ գետի հոնը փոխվելու հետևանքով, այդ բաժնեհողը դառնում է արքունի ձկնորսական հասութաբեր հանդակ: Բանն այստեղ է հասնում, որ գյուղացիների սեփական ձեռքով իրենց տնամերձ հողերում անեցրած ընկուզենիները վերածվում են արքունի հասութաբեր հողամասի: Հարքունիս գրավված հողերի համար բնակիչները սովորաբար բազմաթիվ տարիների ընթացքում շարունակում են հարկեր վճարել, որպես բաժնեհողերի համար, և միայն բազմաթիվ դիմումներից և երկարատև գրագրություններից հետո նրանք աղատում են այդ կրկնակի հարկումից»¹⁵:

Փոխարքայի գրասենյակը ստիպված էր ընդունել, որ չնայած 1900 և 1903 թթ. հողաշինարարական օրենքներով որոշ աշխատանքներ կատարվում են, բայց դեռևս որոշակիություն չի մտցվում գյուղուն ունեցող հողային խառ-

¹⁴ Տե՛ս «Ագրարная политика царизма...», էջ 277—283:

¹⁵ Воронцов-Дашков, Всеподданейшая записка, 1907 г., стр. 60.

նաշփոթ հարաբերությունների մեջ, տեղիք է տրվում գյուղացիության մեջ հուզումների և դասակարգային պայքարի հետագա աճման, որ այդ օրենքները չեն ապահովում ցարիզմի կողմից ընդդեմ հեղափոխության ուղղված նոր ազգարային կուրսի՝ ստոլիպինյան քաղաքականության լայն կիրառումը, գյուղական բուրժուազիայի, կովակության շահերի հետագա ամրապնդումը կովկասում։ Ահա դրանով պետք է բացարձել, թե ինչու փոխարքայի գրասենյակն զբաղվում էր 1900 և 1903 թթ. օրենքների հետագա «կատարելագործմամբ», նաև խագծեր էր մշակում պետական գյուղացիների հողաշինարարության հարցերի վերաբերյալ։ Փոխարքայի գրասենյակը 1909 թ. հունիսի 14-ի իր նախագծում գտնում է, որ պետք է հողաշինարարական աշխատանքները կրկին հանձնարարել դատական-սահմանագծային օրգաններին, խիստ պարզեցնել և արագացնել դրանք, կամ ենում էր գյուղացիներին դարձնել բաժնեհողերի սեփականատեր, որ նրանք կարողանային դուրս գալ համայնքից, ստեղծվեին ուժեղ կովակային տնտեսություններ։ Վերջիններս պետք է լինեին ցարիզմի ամուր հենարանը գյուղում՝ հեղափոխական տարրերի դեմ պայքարելու համար։ Այդ կապակցությամբ նախագծում բավական բացահայտ գրված էր, «Ներկայումս, երբ կայսրության մեջ գյուղացիության հողաշինարարության ժամանակ հողի մասնավոր սեփականության սկզբունքը՝ մանր գյուղացիական հողատիրության արմատավորման կապակցությամբ հանդիսանում է հիմնական և զեկավար հիմքը, մեզ թվում է ժամանակին և գյուղացիական հողաշինարարական աշխատանքների համակայսերական ուղղության հիմքում գրված սկզբունքին լիովին համապատասխան, որ Անդրկովկասի պետական հողերում բնակեցված գյուղացիներին ևս տրվի իրենց բաժնեհողերի սեփականության իրավունք։ Նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքան այդ իրավունքը համարում է պետական հիմունքներից մեկը և բնակչության տնտեսական կյանքի ճշշտ զարգացման ամենաանհրաժեշտ պայմանը, այնպես որ գեներալ-ադյուտանտ կոմս Վորոնցով-Դաշկովի կարծիքով Անդրկովկասի մի քանի միլիոն պետական գյուղացիներին այդ իրավունքից զրկելը

կորստաբեր կերպով կանգրադառնա կովկասյան ծայրերկրի քաղաքական և տնտեսական գրության վրա»¹⁶։ Ահա այն նպատակը, որ հետապնդում էր փոխարքան և որը պարզ է դարձնում, թե ինչու էր նա շահագրգոված արագացնելու հողաշինարարական աշխատանքները։ Այս նախագծի հետագա բախտի մասին մեզ չհաջողվեց տեղեկություններ գտնել. հնարավոր է, որ այն մշակման էր ենթարկվում և հետո՝ 1912 թ. հանդես եկավ որպես մի նոր նախագիծ՝ արդեն պետական դումա մտցնելու համար։

Փոխարքայի գրասենյակի 1912 թ. գեկտեմբերի նոր նախագիծը պետական գյուղացիների հողաշինարարական աշխատանքների մասին, տալիս է հողաշինարարական աշխատանքների պատմությունը վերջին 50 տարում և նրանցում տեղ գտած թերությունները, որոնք հասցերել են այն բանին, որ փաստորեն ոչ մի գյուղում վերջնականապես այդ աշխատանքները չեն ավարտվել։ Նախագիծը նշում է, որ սխալ է Անդրկովկասի պետական գյուղացիներին նրանսատանի ներքին նահանգների գյուղացիներից անշատելը և բաժնեհողերի սեփականատեր շգարձնելը, որի հետևանքով նրանց վրա չի տարածվել 1910 թ. հունիսի 14-ի խիստ կարևոր նշանակություն ունեցող օրենքը։ Այսպիսով, այստեղ ևս արվում է այն հետեւությունը, ինչ 1909 թ. նախագծում, որ Անդրկովկասը ևս պետք է օրենսդրական կարգով բռնի ստոլիպինյան ազգարային քաղաքականության կուրսը։ Նախագիծը ձգտում է հիմնական հիմնական բարեկարգությունը, տնտեսական հետամնացությունը, ճահճացումը պայմանավորված են այն բանով, որ գյուղացիները չեն հանդիսանում իրենց բաժնեհողերի սեփականատերը։

«Կովկասի բոլոր վայրերում նկատվում է միևնույն տիպությունը՝ իրավական կարգի լիակատար բացակայությունը հողային հարաբերություններում։ Դեռևս շխոսելով այդ հանգամանքի վնասակար քաղաքական ազգեցության մասին բնակչության մտածողության վրա—բնակչություն, որը դաստիարակվում է առանց հարգանք տածելու դեպի սեփականատերը։

¹⁶ ՎՍՍՀ ԿՊՍ, ֆ. 13, գ. 7, գ. 2652, թ. 10.

կանության իրավունքը և որն անդրադառնում է գյուղական կյանքի ամբողջ կառուցվածքի վրա,—գիտակցության բացակայությունը, որ այն հողը, որի վրա կովկասյան գյուղացին աշխատանք է թափում հնտագայում կարող է խլվել նրա օգտագործումից՝ բարոյալքում է նրան, սպանում նրա մեջ իր տնտեսությունը բարեկավելու ձգտումը, դրդում է նրան կառչած մնալու հողի մշակման հին եղանակներին, ուստի և կը լիմայական պայմաններով հարուստ ներկրամասի ողջ գյուղատնտեսական արդյունագործությունը պահում է լճացման վիճակում»¹⁷:

Այս ծրագրին օրենքի ուժ տալու համար մի քանի տարվա ընթացքում նյութեր հավաքվեցին: Մշակվեց ծրագիր և այն քըննարկման ենթարկվեց Թիֆլիսում, տեղական իշխանությունների և «շահագրգուված բնակչության», պետական հիմնարկների և մասնագետների հաստուկ խորհրդակցություններում, ինչպես նաև փոխարքայի խորհրդում: Այնուհետև, 1912 թ. սկզբին, նախագիծը տրվեց Պետերբուրգում ստեղծված միջհիմնարկային խորհրդակցության քննարկմանը, որին մասնացում էին պետական մի շարք հիմնարկների, մինիստրությունների ներկայացուցիչներ պետական խորհրդի անդամ, սենատոր Նիկոլակու նախագահությամբ: Ի վերջո, 1913 թ. փետրվարի 9-ին փոխարքայի հաստատումից հետո այն պատրաստվեց Պետական դումայի քննարկմանը ներկայացնելու համար¹⁸:

Միջհիմնարկային խորհրդակցությունը դուավ, որ, իսկապես, հողաշինարարական աշխատանքները նախկին ձևով շարունակել չի կարելի և նման տեմպերի դեպքում դրանք կձգգունքն ևս 14—15 տարի: Միաժամանակ նշեց, որ անհրաժեշտ է Անդրկովկասի պետական գյուղացիությանը նույնպես բաժնեհողեր հատկացնել ոչ թե օգտագործման համար, այլ կագմակերպել դրանց ետ գնումը պետությունից: Խորհրդակցությունը սխալ համարեց նոր օրենքի մշակումը կամ Հյուսիսային Կովկասի հողաշինարարության օրենքի նույ-

նությամբ տարածումը Անդրկովկասի վրա, քանի որ դրանով պետք է չեղյալ հայտարարվեին Անդրկովկասում տարգամ հողաշինարարական աշխատանքները, որ կնշանակեր գյուղացիության աշքում վարկաբեկել և հեղինակազրկել պետության կողմից տարվող 10 տարվա աշխատանքները և նորհանրապես գյուղացիությանը թերահավատ դարձնել պետական հողաշինարարական միջոցառումների նկատմամբ: Օորհրդակցությունը գտնում էր, որ հողաշինարարական աշխատանքները 1900 և 1903 թթ. օրենքների հիմունքներով տարվել են միայն Թիֆլիսի, Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում: Այս նահանգներում ահագին աշխատանք է գատարված և կարելի է փոփոխություններ մտցնել ինչպես հողաշինարարության բարդ տեխնիկան պարզեցնելու և աշխատանքներն արագացնելու, այնպես էլ այս երեք նահանգների վրա Հյուսիսային Կովկասի համար մշակված օրենքից որոշ հողվածներ տարածելու ուղղությամբ, իսկ Անդրկովկասի մյուս մասներում լրիվ կարելի է տարածել այդ նոր օրենքը:

Անդրկովկասի վերոհիշյալ երեք նահանգների պետական գյուղացիությանը պետք է թույլ տրվեր ետ գնելու պետությանը վճարվող հասութային տուլքը: Հողաբաժնի սեփականատեր դառնալու համար գյուղացին պետք է 28 տարվա ընթացքում պետությանը վճարեր հասութային տուրքի 77 տոկոսը՝ ելնելով 1912—1914 թթ. պետական հարկման նորմաներից: Այդ ժամանակամիջոցում վճարվող հողային հարկի հետ միասին, ետ գնման վճարումները կազմում էին մի այնպիսի գումար, որը հավասարվում էր հասութային տուրքի 6 տոկոսի կապիտալի կազմից ստացված գումարի: Համարին: Սա մի նոր և ահավոր բեռ էր լինելու քայլքայքած, չքավոր գյուղացիության համար: Նա տարիներ շարունակ արդեն պետությանն էր վճարում ծանր հարկեր, այժմ էլ 28 տարվա ընթացքում հողային, գնման վճարում գյուղական հարկերի, տուրքերի և պարհակների հետ միասին պետք է կատարեր և ետ գնման վճարումները: Ի հակադրություն գյուղացիության մեծամասնության համար ստեղծված այս ծանր պայմաններին, այդ օրինագծի միջոցով ուղղակի արտոնություններ էին ստեղծվում կովկասի գյուղա-

¹⁷ ՎԱՍՀ ԿՊՊԱ, ֆ.13, գ. 7, գ. 2701, թ. 20:

¹⁸ Գյուղատարար, այդ մասին տեղեկություններ շումենք:

Համար: Օրինագծի 11-րդ կետով իրավունք էր տրվում 20 դես. և ավելի հող ունեցող գյուղի առավել ապահովված տարրերին դուրս գալ գյուղական համայնքից և դառնալ վեհականատեր՝ առանց պետությանը ետ գնման վճարումներ կատարելու: Այս կարգի հողատերերի մեջ մտնում էին ոչ միայն զանազան եղանակներով գյուղական համայնքի հողին տիրացած բարձր դասի ներկայացուցիչները, այլ նաև գյուղացիների ուռմացած, հողն իրենց ձեռքում կենտրոնացրած մասը՝ կուլակները, որոնց կողմից ապօրինի միջոցներով խոշոր հողաբաժինների տեր դառնալը ոչ միայն ճանաշվում էր պետության կողմից, այլ նաև նրանց արտոնություններ էր տրվում՝ առանց դրամական ծանր վճարումների դառնալ տիրացած հողերի սեփականատեր և շարունակել չքավոր գյուղացիության շահագործումն արդեն որպես «օրինական» ճանապարհով ճանաշված հողատեր: Ընդ որում «ի հատուցումն» այդ արտոնության և գանձարանի վնասների, նրանք զրկվում էին գյուղերում ընդհանուր օգտագործման տակ գտնվող արտաների և անտառների նկատմամբ ունեցած ամեն մի իրավունքից:

Այս ամենից մենք գալիս ենք այն հետեւթյան, որ Կովկասի պետական գյուղացիների հողաշինարարության մասին այս օրինագիծն ամբողջովին ենում էր ստոլիպինյան ադրարային քաղաքականության սկզբունքներից՝ հանձին կուլակության գյուղում նոր սոցիալական հենարան ստեղծելու և ամրապնդելու նպատակով¹⁹:

Ցարիզմի ագրարային քաղաքականության կարևոր միջցառումներից մեկն էլ կայսրության ծայրամասերը, այդ թվում նաև Անդրկովկասն ու Հայաստանը, ուսական տարրերով վերաբերնակեցնելն էր: Վորոնցով-Դաշկովը 1907 թ. իր հաշվետվության մեջ մեղադրում էր Կովկասի նախկին կառավարչապետերին, որոնք քիչ ուշադրություն են դարձրել այդ կարևոր հարցին: Փոխարքան, ենելով ցարիզմի գաղութային-ագրարային քաղաքականության սկզբունքներից, մի

ամբողջ ծրագիր է կազմում Անդրկովկասի հետագա գաղութացման համար, նա անհրաժեշտ է համարում ուսու վերաբերակիշների համար առանձնացնել լավագույն հողերը, ուսումնան ենթարկել դրանք, ապա Հյուսիսային Կովկասում արդեն Անդրկովկասի կրթմայական պայմաններին հարմարված գյուղացիներին վերաբերակեցնել Անդրկովկասում և պետության ու գյուղացիական բանկի օժանդակությամբ ըստեղծել տնտեսապես ուժեղ կուլակային խոշոր տնտեսություններ: Միաժամանակ նախատեսվում էր նախկինում ընդունված կարգը (երբ ուսական բնակավայրեր էին ստեղծում ցրված վիճակում, իրարից հետո) փոխարինել նոր կարգով և խոշոր հողային տարածությունների վրա ստեղծել վերաբերակեցների բնակավայրերի անընդմեջ տերիտորիաներ: Փոխարքան գտնում էր, որ նախապես պիտք է յուրացնել Սիրի ու Մոզանի, ապա Սարդարապատի տափաստանները և տրամադրել ուսու եկվորներին²⁰: Սակայն ցարիզմի այդ քաղաքականությունը նույնպես տապալվեց²¹:

3. 1912 թվականի ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՕՐԵՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԿՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ժամանակավոր»—պարտավորյալ, կախյալ հարաբերությունները իրու ֆեռալական մնացուկ արդեն այնպես էին խանգարում Անդրկովկասի տնտեսական առաջընթացին, որ այդ մասին ստուգված էր խոստովանել նույնիսկ Գոլիցինի նման ռեակցիոն շինովնիկը: Կովկասի կառավարման իր 1897—1902 թթ. հաշվետվության մեջ նա զեկուցում է թագավորին, որ պարտավորյալ Հարաբերությունները «...բացասական երևոյթ են և նրանց պիտք է վերջ տալ, որպես ճորտատիրական իրավունքի մնացուկի, որը վնասակար է թե բնակչության երկու դասակարգերի բարոյական զարգացման համար, թե այդ երկուսի կողմից իրենց տնտեսությունը բարելավելու գործում ազատորեն նախաձեռնություն դրսել-

¹⁹ Տվյալները վերցված են ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 2701, թ. 1—23-ից:

²⁰ Տե՛ս Ա. Ս. Ամբարյան, Հայաստանի զարգացման առաջնային գործությունների մասին պատմություն (1860—1920), Երևան, 1959:

թելու, իսկ դրա միջոցով նաև բնդհանրապես երկրամասի տնտեսական դրության զարգացման գործում»²²; Երկիրը տնտեսական ճգնաժամային վիճակից հանելու, ինչպես նաև ծայր առնող գյուղացիական շարժումների առաջն առնելու նպատակով Կովկասի կառավարչապետ Գոլիցինի գրասենյակը որոշ շափով աշխուժացնում է աշխատանքները և 1904 թ. հունիս ամսին կալվածատիրության ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկում է նատուրալ բահրան դրամականի վերածելու դեռևս 1870—1880-ական թվականներին մշակված կանոնները և կազմում օրինագիծ՝ փրկանման միջոցով Կովկասում կախյալ, պարտավորյալ հարաբերությունների վերացման մասին; Նախագծով նախատեսվում էր պետության «օժանդակությամբ» երկու տարվա ընթացքում փրկագնել բաժնեհողերը, տալով կալվածատիրոջը տարեկան բահրայի կապիտալիզացված 6 տոկոսը; Գյուղացին 41 տարվա ընթացքում պետությանը պետք է վճարեր ստացած վարդը, ինչպես նաև յուրաքանչյուր ռուբլու դիմաց 5 կոպեկի տոկոսները; Զնայած փրկագնման պայմանները ծանր էին, մանավանդ եթե հաշվի առնենք, որ գյուղացիական ոեֆորմից հետո 30—35 տարվա ընթացքում կալվածատերերն արդեն հսկայական գումարներ էին ստացել և Անդրկովկասում փրկագնման օպերացիայի իրագործման միջոցով պետք է ստանային մոտ 27200000 ռուբլի, որից երեանի նահանգում՝ 5537000 ռուբլի²³, սակայն կալվածատերերը դեմ ելան այդ նախագծին, պահանջելով, որ բաժնեհողերը գյուղացիների կողմից ետ գնվեն իրենց ժամանակակից, և ոչ թե ոեֆորմի ժամանակաշրջանի նեկամտարերության արժեքով; Կալվածատերերի այդ պահանջի պատճառով՝ օրինագիծը չընդունվեց և կառավարության հաստատմանը չներկայացվեց; 1905 թ. հեղափոխական շարժումները ստիպեցին ցարական իշխանություններին նորից անդրադառնալ «ժամանակավոր» պարտավորյալ հարաբերությունների վերացման հարցին; Փոխարքան գրում էր. «Իրոք որ,

կալվածատերերի դեմ գյուղացիության ունեցած թշնամանքը վարչական իշխանությունների դեմ փոխարքելը և պետական կարգից դժգոհ լինելը, անգամ առանց հեղափոխական պրայտանդայի օգնության, ինքնին կարող էր ծագել բնակչության մեջ, — բնակչություն, որը տեսել է կառավարության կողմից նրա կարիքների մասին հոգալու կատարյալ բացակայություն, քանի որ կառավարությունը 35 տարվա ընթացքում չի հրատարակել ոչ մի օրենք (բացի խիզանների վերաբերյալ օրենքից), որը գեպի լավը փոխեր գյուղացիական կենցաղը»²⁴; Փոխարքան գտնում էր, որ Կովկասում ևս պետք է անցկացնել այն բաղաքականությունը, որ անց էր կացվում Ռուսաստանի ներքին նահանգներում, այսինքն՝ պետք էր առաջին հերթին անդրադառնալ գյուղացիությանը կիսաձորացին վիճակից հանելուն, քանի որ հենց պարտավորյալ, կախյալ հարաբերություններն են ոտքի հանում գյուղացիությանն ընդում կալվածատիրության; Նա գրում էր թագավորին, որ «այդ հարաբերությունների (այսինքն՝ կախյալ հարաբերությունների—Մ. Խ.) անհապաղ վերացումն է միայն, որ կարող է հանգստացման հող ըստեղծել այն վայրերում, որոնք բռնված են գյուղացիական հուղումներով և կանխել նույնպիսի հուղումների ծագումը Կովկասի այլ վայրերում»²⁵;

Վորոնցով-Դաշկով՝ օգտագործելով Գոլիցինի կողմից կատարված ուսումնասիրությունները, արագ կերպով ձեռնամուի եղավ կախյալ հարաբերությունների վերացման օրինագիծ մշակմանը, որը և պատրաստի վիճակում 1905 թ. նոյեմբերին ներկայացվեց կառավարության հաստատմանը; Զնայած այն բանին, որ Վորոնցով-Դաշկովի նախագծում լրիվ կերպով պաշտպանվում էին կալվածատիրական շահերը, սակայն փրկագնման պայմանները խիստ տարբերվում էին հեղափոխության վերելքի և անկման ժամանակաշրջաններում:

1905 թ. կազմված օրինագիծի համաձայն գյուղացիները

²² Орест Семин, Великая гедовщина, Киев, 1911, стр. 53.

²³ Նույն տեղը, էջ 17—18:

քաժնեհողերի դիմաց կալվածատերերին ոչինչ շպետք է վը-
ճարեին, որովհետև 30—40 տարվա ընթացքում արդեն իսկ
Հսկայական գումարներ էին վճարել, կատարել էին նատու-
րալ և դրամական պարհակներ: Կախյալ հարաբերություն-
ների այդքան երկարաձգման համար մեղավոր էր պետրո-
թյունը, որը գյուղացիությանը «օգնություն» շէր կազմակեր-
պել, ինչպես նաև պարտադիր ետ գնում շէր սահմանել:
Փոխարքան 1905 թ. գտնում էր, որ քայլացված գյուղացիու-
թյունը հնարավորություն չունի նոր, խոշոր գումարներ վը-
ճարել բաժնեհողերի համար: Սակայն դրա հետ միասին օրի-
նագիծը նախատեսում էր, որ կախյալ հարաբերությունների
երկարաձգման մեջ իրը մեղք չունեցող կալվածատերերին,
որոնցից շատերի «ապրուստի միակ միջոցը» հենց գյուղա-
ցիներից ստացվող բահրան էր, անպայմանորեն պետք է
վարձատրել գյուղացիության սեփականություն դարձող
բաժնեհողերի համար պետական գանձարանից: Միաժամա-
նակ փոխարքան հարց էր բարձրացնում խիստ սակավահող
գյուղացիներին ազատ պետական հողերից և կամ պետական
բանկի միջոցով առանձնացնել որոշ տարածություններ: Հե-
տաքրքիր է, որ փոխարքայի այսպիսի առաջարկությունները,
նույնիսկ որպես նախագիծ, որոշ լիբերալ, մանր-բուրժուա-
կան պատմաբանների կողմից (ինչպես, օրինակ, Կովկասի
ազգարային հարաբերությունների լավ գիտակ Ս. Ավալիանին
էր) գնահատվեցին որպես իրենց նախադեպը չունեցող և
նույնիսկ «հեղափոխական» առաջարկություններ: Իրակա-
նում՝ փոխարքան ոչ թե «արդարադատությունից» էր ելնում,
այլ վախենում էր բաժնեհողերի ետ գնումը գյուղացիության
հաշվին կատարելու իր առաջարկությամբ ավելի վտանգա-
վոր դարձնել գյուղացիական հուժկու շարժումները: Քանի որ
կալվածատիրական շահերին շէր կարելի դիպչել, ուստի ա-
ռաջարկում էր ավելի քան 27 միլիոն ռուբլու շափով վճա-
ռումներն անել պետության հաշվին, ընդ որում, ինչպես
Ճիշտ կերպով նշում է պրոֆ. Ա. Եսայանը, պետությունը այդ
27 միլիոնը դարձյալ գյուղացիությունից կզանձեր՝ զանազան
անուղղակի հարկերի միջոցով²⁶: Ինչ վերաբերում է սակա-

վահող գյուղացիներին լրացուցիչ հող տալու պայմաններին,
ապա ինչպես տեսանք, դա պրակտիկայում իրենից ներկա-
յացնում էր ոչ թե ձրի, լրացուցիչ հողեր տալ, այլ կալվածա-
տիրական, ուղելային, պետական հողերը բարձր գներով
վաճառել, որի գնումը սակավահող գյուղացիության ուժե-
րից վեր էր:

Յարական կառավարությունը նույնիսկ այսպիսի «լիբե-
րալ» նախագիծն անընդունելի համարեց, սակայն 1905 թ.
վերջին և 1906 թ. սկզբներին այն քննարկելիս վերջնական
մերժման որոշում չհանեց. վախենում էր հեղափոխական
վերելքի պայմաններում գյուղացիական շարժման ուժե-
ղացումից: Զեսական կերպով նշվեց, որ ետ գնման այդքան
խոշոր գումարները գանձարանի հաշվին կատարելու հարցը
կարող է վճռել միայն Պետական դուման, որի որոշմանն
սպասելու պատրիակով անորոշ ժամանակով հետաձգվեց
նախագիծը ընդունումը: Արդեն փոփոխված քաղաքական պայ-
մաններում, հունիսերեքյան հեղաշրջումից հետո, 1907 թ.
օգոստոսին մինիստրների խորհուրդը, քննարկելով Վորոն-
ցով-Դաշկովի 1905 թ. ներկայացրած նախագիծը, գտավ, որ
փրկազնման գումարների վճարումը պետության հաշվին
գանձարանի ուժերից վեր է, ուստի փաստորեն մերժեց այն,
նույնիսկ առանց Պետական դումա մտցնելու:

1908 թ. Պետական դումայի անդամ վրաց մենշևիկների
նախաձեռնությամբ կազմվեց և գումայի 34 անդամների ըս-
տորագրությամբ նույն թվի ղեկատեմբերի 15-ին Պետական
դումային ներկայացվեց մի նոր նախագիծ, որն ուղղված էր
Կովկասում «ժամանակավոր»—պարտավորյալ, կախյալ հա-
րաբերությունների վերացմանը: Նախագիծն իր վրա կրում էր
մենշևիկյան ազգարային ծրագրի ազգեցությունը և շատ հե-
ռու էր գյուղացիության մասնակցությամբ, դասակարգային
պայքարի միջոցով ազգարային հարցը հեղափոխական ու-
ղիով վճռելուց: Անսասան թողնելով կալվածատիրական
հողատիրությունը, նախագծի հեղինակները գյուղացիության
հետագա հեղափոխական վերելքից խուսափելու համար ա-
ռաջարկում էին ուժորմի կիսամորտացին հարաբերություն-
ների վերացման իրենց հետեւյալ ծրագիրը: Ճիշտ կերպով

²⁶ ՏՇԱ. Ա. Եսայան, Մոլյակարսկое право в Армении, Ереван, 1948:

նշելով, որ ոեֆորմի հետևանքով տեղի է ունեցել գյուղացիության հետագա հողագրկում, կալվածատերերի ու պետության մեղքով պարտադիր ետ գնում շանցկացնելու հետևանքով գյուղացիությունը կախյալ հարաբերությունների մոտ 40 տարվա ընթացքում բաժնեռողի արժեքից մի քանի անգամ ավելի վճարումներ է կատարել կալվածատերերին, որ գյուղացիները տնտեսական քայլքայված վիճակում են գտնվում և բաժնեհողի դիմաց նորանոր գանձումներ հենց պետական շահերից ենելով նրանցից անել չի կարելի (որովհետեւ այդ դեպքում գյուղացիները լրիվ կքայլքայվեին և կորցնին իրենց վճարումնակությունը), նախադիմն անհրաժեշտ էր գտնում բաժնեհողերը հանձնել գյուղացիությանը՝ առանց կալվածատիրությանը վարձատելու։ Նախագծի հեղինակները կարծում էին, որ զրա հետեւանքով հնարավոր կլիներ ուղի հարթել տնտեսական զարգացման համար, բարձրացնել երկրամասի կուլտուրական վիճակը, ժողովրդին հանել աղքատ, իրավագուրք, խավար վիճակից։

Զնայած Պետական դումայի 34 անդամների ներկայացրած նախագծի լիբերալ-ռեֆորմիստական բնույթին, այնուամենայիվ, ցարական վերնաշերտերի կողմից այն գնահատվեց որպես խիստ վտանգավոր, համարյա հեղափոխական մի առաջարկություն, որը կարող էր քայլքայել կալվածատիրությանը և ծանր հարված հասցնել ցարիզմի սոցիալական կարեւոր հենարանին Կովկասում։ 1909 թ. սկզբներին մինհստրների խորհուրդ ներկայացրած իր եղբակացություններում փոխարքան խիստ քննադատության էր ներթարկում, անընդունելի էր համարում այդ նախագիծը։ Նա հանդես էր դալիս «Խեղճ ու կրակ» կալվածատերերի շահերի այնպիսի շերմեռանդ պաշտպանությամբ, որ ժխտում էր նույնիսկ 1905 թ. իր իսկ կազմած նախագծի դրույթները։ Փոխարքան կալվածատիրությանը ներկայացնում էր որպես «Ժամանակավոր»—պարտավորյալ, կախյալ հարաբերությունների երկարածման մեջ մեղք շունեցող, տնտեսական խիստ նեղվածության մեջ գտնվող և հաճախ գյուղացիներից ստացած բահրանքանի միակ միջոց ունեցող այնպիսի մարդկանց, որոնք բաժնեհողերի դիմաց անհրաժեշտ ետ

գնման գումարներ շտանալու պայմաններում, հուսահատությունից նույնիսկ կարող են ապստամբել կառավարության ռեմ։ Իբր այդպիսի հետևանքներից խուսափելու, գյուղացիական ռեֆորմների ոգուն համապատասխան գործելու համար անհրաժեշտ է «արդարացի» որոշման հանգել բաժնեհողերի ետ գնումը կազմակերպելու գործում։ Փոխարքան առաջարկում էր գյուղացիության կողմից բաժնեհողերի ետ գնումը այնպես անցկացնել, որ անհրաժեշտ չափով դրանից գոտվեին ինչպես կալվածատերերը, այնպես էլ պետությունը։ Այդ էր պատճառը, որ 34-ի նախագիծը Դումայի հողարքին հանձնաժողովի «քննարկման» և այնտեղ էլ փոշու տակ թաղվելու բախտին արժանացավ։

Անդրկովկասի կալվածատիրության ներկայացուցիչները ամբողջ ժամանակաշրջանում ակտիվ գործունեություն էին ծավալել և հանդես էին գալիք ու միայն ցարական աղմինիստրացիայի կողմից կազմած նախագծերի քնարկման ժամանակ իրենց առաջարկությունները, ուղղումները մտցնելով, այլ նաև կախյալ հարաբերությունների վերացմանն ուղղված իրենց սեփական ծրաբրերով։ Նրանց առաջարկություններն ու ուղղումները, հատկապես, նրանց կազմած նախագծերը բացարձակապես ինում էին միմիայն իրենց նեղ գասակարգային շահերից և այնպիսի ծայրահեղությունների էին հասնում, որ ցարական իշխանությունները ևս ստիպված էին լինում շընդունել դրանք։ Այդ տեսակետից խիստ հետաքրիր փաստաթուղթ է երևանի նահանգի հողատերերի 1909 թ. Հունվարի 25-ի գրությունը Կովկասի փոխարքային՝ «Ժամանակավոր»—պարտավորյալ, կախյալ հարաբերությունների վերացման մասին²⁷։ Երևանի նահանգի կալվածատերերը առաջարկում էին թույլ տալ կալվածատերերին գյուղում եղած գյուղացիական ամբողջ բաժնեհողերից իրենց ընտրությամբ կտրել դաշտային հողի ^{8/30} մասը, իսկ մնացած ^{22/30}-րդ մասը առանց որևէ վճարումների թողնել գյուղացիությանը որպես սեփականություն։ Բաժնեհողերի ^{4/30}-ը նրանք ցանկանում էին ստանալ որպես գյուղացիների

27 Տե՛ս «Ագրարная политика царизма...», стр. 54—62:

Կողմից ամեն տարի ստացվող համախառն եկամուտի $\frac{4}{30}$ մասի փոխատուցում, իսկ մյուս $\frac{4}{30}$ մասը նախատեսում էին ստանալ բաժնեհողերի առաջին $\frac{4}{30}$ մասի մշակման ծախսերի փոխարեն, քանի որ մշակման պարտականությունը մինչ այդ ընկած էր կախյալ գյուղացու վրա: Այսպիսով, կալվածատերերը կամենում էին իրավունք ձեռք բերել գյուղացիական բաժնեհողերի ավելի քան $\frac{1}{4}$ մասը կտրելու համար, ընդ որում իրենց նախագիծը ցանկանում էին ներկայացնել որպես միակ ընդունելի մի այնպիսի առաջարկություն, որը բխում էր ոչ միայն կառավարության ու կալվածատիրության, այլ նույնիսկ գյուղացիության շահերից: Այդ նախագծով իրը կառավարությունը կազատվեր ետ զնման օպերացիայի հետ կապված բարդ աշխատանքներից, գյուղացիությանը խոշոր վարդկ տրամադրելուց և ետ զնումը կվերշացներ համեմատաբար կարճ ժամկետներում: Գյուղացիությունն իրը դրանով կազատվեր ետ զնման վճարումների համար վաշխառուներից պարտք վերցնելու և ծանր տոկոսների տակ ընկնելու անհրաժեշտությունից, «ձրի» կստանար բաժնեհողերի $\frac{22}{30}$ մասը, իսկ $\frac{8}{30}$ մասի ամցնելն էլ կալվածատերերին գյուղացիության տնտեսական դրության վրա վատ ագեցություն չեր ունենա: Կալվածատերերի կարծիքով, բաժնեհողերի ավելի քան $\frac{3}{4}$ -ը ընկած էր լենային շրջաններում և յուրաքանչյուր արական շնչին ընկնում էր իր Յ—Ե դեսյատին հող, իսկ հարթավայրային շրջաններում չնայած բաժնեհողերը փոքր էին, սակայն հողի եկամտաթերությունը մեծ էր: Կալվածատերերը փրենց առաջադրած նախագծում, որպես «զիջում» գյուղացիությանը, ծայրահեղ դեպքում համաձայնվում էին հարթավայրային սակավահող շրջաններում ստանալ բաժնեհողերի միայն $\frac{4}{30}$ մասը: Այս «զիջումով» կալվածատերերը ոչ միայն խոշոր շափերով լավորակ, ուսովով հողեր կստանային, այլև հսկայական դրամական եկամուտներ ու գյուղացիությանը երկարատև կախման ու շահագործման մեջ կավաճեին թե իրենցից, և թե վարկատու կառավարությունից: Ետ զնման այդպիսի պայմաններն այնքան դաժան էին, որ փոխադրայի գրասենյակն անգամ անընդունելի համարեց: Փոխադրայի գրասենյակի շի-

նովնիկ Սլովինսկին երեանի նահանգի Հողատերերի գրության կապակցությամբ 1909 թ. հունվարի 30-ին փոխարքայի տեղակալ Զունկովսկուն գրում էր, որ կալվածատերերը ցանկանում են բաժնեհողերից կտրել ավելի քան $\frac{1}{4}$ մասը, առանց որի գյուղացիները չեն կարող ապրել, ուստի ստիպված պետք է լինեն վարձակալել կալվածատերերից հենց նույն իրենց բաժնեհողերից կտրված հողատորները և վճարել այնպիսի խոշոր վարձագին, որպիսին առաջ նրանք վճարում էին իրենց ամբողջ բաժնեհողից որպես բահրա: Սակայն ցարական Ժնովինիկին գյուղացիության վիճակը այնքան չէր անհանգըստացնում, որքան այն, որ այդ նախագծով կալվածատերերի բաժնը պետք է կտրվեր մի շարք գյուղացիական ծխերից, անհրաժեշտություն պետք է առաջանար կատարելու գյուղացիության հողերի նոր բաժնումներ, ընդունված հողային կարգ ու կանոնի հեղաբեկում, իսկ զա կարող էր հասցնել «...խոշոր ագրարային հողապահների»²⁸: Ահա թե ինչու ցարական ազմինիստրացիան ստիպված էր որոշ շափով սահմանափակել կալվածատիրության ախորժակը և մշակել նոր նախագիծ:

4. 1912 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՕՐԵՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ²⁹

1909 թ. փետրվարին կովկասի փոխարքայության գրասենյակը օրենքի նախագիծ մշակեց Անդրկովկասի կալվածատիրական, ինչպես նաև էշմիածնապատկան գյուղացիների «ժամանակավոր»—պարտավորյալ, կախյալ հարաբերությունների վերացման մասին: Մինչև 1912 թ. դեկտեմբերի 20-ը ցարի կողմից որպես օրենք հաստատվելն այն քննարկման ենթարկեց ցարական շինովնիկության ու կալվածատիրության ներկայացուցիչների կողմից և փոքր փոփոխություններով հաստատվեց այն սկզբնական ձևով, որ 1909 թ. նախատեսել էր Վորոնցով-Դաշկովի ազմինիստրացիան:

²⁸ ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 2541, թ. 104:

²⁹ 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքի մասին մանրամասն տե՛ս Խ. Հ. Ավդրաբեկյան, Հողային հարցը Արքելաց Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959, էջ 286—317.

Նախագիծը կազմվել էր ռեակցիայի տարիներին, ուստի և խստ կերպով տարբերվում էր հենց Վորոնցով-Դաշկովի 1905 թ. «լիբերալ» նախագծից և հօգուտ կալվածատիրության ու պետական գանձարանի շահերի ետ գնման այնպիսի ծանր պայմաններ էր առաջ քաշում, որոնց հետևանքով գյուղացիության տնտեսական քայլացիավածությունը, հողագրումը և պարտականությունը խոշոր շափերով մեծանում էին: Թե նախագիծը, և թե նրա բննարկումը զանազան ինստանցիաներում ցույց տվեցին, որ ցարական ժննովնիկությունը, սակայն, շատ լավ էր հիշում գյուղացիության հուժկու ելույթները և դրանց կրկնումը թույլ շտալու համար որոշ չափով սանձաւարում էր կալվածատիրությանը: Այսպես, փոխարքայի նախագծով, բաժնեհողերի ետ գնման արժեքը որոշվում էր համաձայն Հոդի 1860—70-ական թթ. ունեցած եկամտաբերության, այսինքն այն շրջանի գների համաձայն, երբ անց էին կացվել գյուղացիական ռեֆորմները և որոնց համաձայն պետք է տեղի ունենային այդքան հետաձգված ու կալվածատիրության օգտին ծառայած ետ գնման օպերացիաները: Այս սկզբունքն առաջ քաշելու ժամանակ ցարական աղմինիստրացիայի կողմից հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ արդեն կախյալ հարաբերությունների 30—40 տարվա ընթացքում կալվածատիրությունը մի քանի անգամ ավելի գումար էր ստացել գյուղացիներից, քան վերջիններիս օգտագործման տակ գտնվող Հողի արժեքն էր: Չնայած դրան, դարձյալ հենց կալվածատիրության շահերից եղնելով, բաժնեհողերի ետ գնման այնպիսի պայմաններ էին առաջ քաշվել, ըստ որոնց 1870-ական թթ. ժամանակաշրջանում կալվածատիրերն ստանալու էին բաժնեհողերի դիմաց ստացվող տարեկան բահրացի 6 տոկոս կապիտալիքացիայի միջոցով կազմվող գումարը կամ տարեկան բահրան՝ բազմապատկած $16^{2/3}$ -ով: Սա նշանակում էր, որ ետ գնման միջոցով կալվածատիրերն այնպիսի կապիտալ կստանացին, որի միայն տոկոսները հավասար կլինեին նախկին տարեկան բահրացին:

Կալվածատիրության ներկայացուցիչները մեծ աղմուկ բարձրացրին այս սկզբունքի դեմ. պահանջեցին վարձատրել Հողերի ժամանակակից եկամտաբերության շափով, պատճ-

ռաբանելով, որ կախյալ հարաբերությունների ձգձգման մեջ իրենք մեղավոր չեն, իբր գյուղացիական սեփորմի հետևանքով իրենք մեկ անգամ կողոպտվել են և որ այս նոր օրենքի կիրառմամբ վերջնականապես կրաքայվեն: Իրականում նըրանք ցանկանում էին ետ գնման շատ շահավետ օպերացիայի հետևանքով կրկնակի օգուտ ստանալ: Այսպես, 1910թ. գեկտեմբերին Երևանի նահանգի կալվածատիրության ներկայացուցիչները դիմեցին մինհստրների խորհրդին մի գրությամբ, որտեղ քննադատում էին ետ գնման նախագիծը և իրենց «ուղղումներն» էին մտցնում նրա մեջ: Ճետելով թիգլիսի ու Ելիզավետպոլի կալվածատիրությանը, Երևանի մուլքատերերը ևս առաջին հերթին պահանջում էին վրկագնման հիմքում գնել Հողի ժամանակակից եկամտաբերությունը, — այլապես փոխարքայի նախագծի ընդունման դեպքում, ինչպես Երևանի նահանգապահ Տիգենչառողենն էր նշել այդ կապակցությմբ, «...ետ գնման կենսագործումով Երևանի նահանգում նախկին Հողատերերից կսեղծվի մի շքավոր դասակարգ, որն աշխատանքի պատրաստված Ախելով, ծայրատիճան վնասակար կլինի»³⁰: Այս առաջարկությանը շամաձայնվելու դեպքում, կարծես որոշ «զիշում» անելով իրենց պահանջներից, Երևանի մուլքատերերն առաջարկում էին մի նոր «ուղղում», ըստ որի ետ գնվող Հողերի տեսակների գները խիստ կերպով բարձրանալու էին և հավասարվելու առաջին կարգին՝ դեսյատինը 242 ռ. երկրորդ կարգին՝ 133 ռ., երրորդին՝ 124 ռ., չորրորդին՝ 61 ռ. և հինգրորդին՝ 43 ռ., երբ փոխարքայի նախագծով առաջին կարգի վարելահողը հաշվում էր միայն 67 սուբլի: Թե այս «զիշումը» և թե նրանց առաջարկը, որ գյուղացիների հաշվին ետ գնվեն բոլորովին անպետք, ճաճճոտ, քարքարոտ Հողերը, նպատակ էին հետապնդում գյուղացիության դաժան կեղերքման հաշվին մի քանի անգամ մեծացնել իրենց նկամուտները: Թեև կալվածատիրերի այս ու այլ առաջարկությունները մերժեցին ցարական աղմինիստրացիայի կողմից, սակայն դա բոլորովին էլ ցույց չէր տալիսք թե ինչ որ պայքար կար

³⁰ «Ագրարная политика царизма...», стр. 68.

ադմինիստրացիայի և կալվածատիրության միջև։ Յարական կառավարությունը թույլ չէր տալիս ծայրահեղ միջոցառումներ կիրառել գյուղացիության նկատմամբ, որոնք կարող էին ավելի սրել գյուղի դասակարգային հակամարտությունները։ Այս իմաստով էլ հենց 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով իր ողջ էությամբ ցարիզմի և կալվածատիրության շահերից էր ենում և ետ գնման խիստ ծանր պայմաններ էր դնում գյուղացիության առաջ։

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով կախյալ, պարտավորյալ հարաբերությունները վերացվելու էին 1913 թ. Հունվարի մեկից՝ գյուղացիության կողմից պետական «օժանդակությամբ» բաժնեհողերի ետ գնման միջոցով։ Փրկագինը սահմանվում էր գյուղացիության կողմից կալվածատիրոջը տրվող տարեկան բահրայի 6 տոկոսի կապիտալիզացիայից, եթե կանոնագրերում նշված էր լինում դրամական բահրա, ապա կապիտալիզացիան տեղի էր ունենում ուղղակի բահրայի գումարից, իսկ եթե բահրան բնավճար էր նշված լինում, ապա այդ փեպքում ետ գնվող հողի գեսատինի արժեքը որոշվում էր ըստ առանձին նահանգների ու գավառների հողի տեսակների կազմված աղյուսակի, որը կցված էր օրենքին և որտեղ հողի հետաքարերությունը և նրա 6 տոկոսի կապիտալիզացիան հաշված էին ոեֆորմի ժամանակաշրջանի գների հիման վրա։ Դրամական բահրա այգիներից ու բոստաններից գոյություն ուներ միայն երևանի նահանգում, որտեղ մուլքատիրական գյուղերի մեծ մասն ընկած էր հարթավայրային շրջաններում։ Ըստ կանոնագրերի, այգու տասը բաթմանի (300 քառ. սաժ.) դիմաց գյուղացին պարտավոր էր տարեկան դրամական բահրա վճարել 1 ռուբ. 20 կոպ. կամ գեսյատինից 8 ռուբլի, բոստանի տասը բաթմանի դիմաց՝ 80 կոպ.։ Դրամական բահրայի 6 տոկոսի կապիտալիզացիան խոշոր գումար էր կազմում. այգու գեսյատինի ետ գնման արժեքը հասնում էր 133 ռուբլու, այն դեպքում, երբ լավագույն, զրովի վարելահողի գեսյատինի ետ գնման արժեքը միայն 67 ռուբլի էր։ Ուստի դրանով պետք է բացատրել երևանի նահանգի մուլքատերերի պայքարը. վերջիններս հասան այն բանին, որ դրամական բահրայի 6 տոկոսի կա-

պիտալիզացիան հաստատվի և գյուղացիների կողմից տընկած, մեծ շարշարանքով աճեցրած և ավելի քան 40 տարվա ընթացքում կալվածատերերին խոշոր գումարներ տված այդիների դիմաց նոր հսկայական գումարներ պոկեն փրկագնի օպերացիայի միջոցով։

Յարական կառավարությունը ետ գնման գործում խիստ արտոնյալ պայմաններ էր ստեղծել մանավանդ բարձր դասին պատկանող կալվածատիրության համար։ Այդ երկում է նրանից, որ ոչ բարձր դասին պատկանող հողատերերին, նախքան 1877 թ. օրենքի հրատարակումը, գյուղացիական բաժնեհողերում տնկած այգիների դիմաց ոչինչ չեն տալիս, քանի որ այդ այգիները համարվում էին տնատեղերի կարգի հողեր, իսկ օրենքը Երևանի նահանգում տնատեղերը «Ճրի» էր տալիս գյուղացիներին։ Տնատեղերը «Ճրի» տալը շակերտների կարիք է զգում, որովհետև, ինչպես ճիշտ նկատել է պրոֆ. Ա. Եսայանը³¹, Երևանի նահանգի հարթավայրային շրջաններում տնատեղերի մեջ համարյա բոլոր գյուղացիներն էլ ժառանգական օգտագործման ցանկապատաժ բախչա ունեին։ Տնատեղի հողամասերը, որոնք պետք է 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով Ճրի տրվեին գյուղացիներին, փոխարքայի 1913 թ. օգոստոսի 26-ի հրահանգով բաժանվեցին երկու մասի՝ տունը, տնտեսական շինությունները և բախչան, որի նպատակն էր բախչայի տակ ընկնող մասից ետ գնման միջոցով նոր գումարներ պոկել կալվածատերերի օգտին։

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով վերացվում էին նաև թիուկական հարաբերությունները, որոնք գոյություն ունեին Երևանի ու Էջմիածնի գավառի մի քանի գյուղերում։ Ճիշտ է, ցարական կառավարությունը գեռ 1875 թ. որոշել էր թիուլական իրավունքը վերացնել և թիուլիստներին պետական գանձարանից ցմահ նպաստ նշանակել, սակայն ինչպես շատ այլ օրենքներ, այնպես էլ այդ որոշումը շիրագործվեց։ Այժմ, երբ ընդհանրապես վերջ էր տրվում կախյալ հարթաբերություններին, անհնարին էր շվերացնել նաև թիուկական

³¹ Տե՛ս Ա. Եսայան, Մոլոկադարսкое право в Армении, Ереван, 1948:

իրավունքը: Պետությունը իսկստ արտոնյալ պայմաններ ստեղծեց թիուլիստների համար՝ իր վրա վերցնելով այդ միքանի ընտանիք կազմող տարեց թիուլիստների հողերի ետ գնումը: Թիուլիստներն ստանում էին տարեկան բահրագյուղացիական բաժնեհողերի արդյունքի $\frac{3}{30}$ -ի շափով և ամեն մի ծխից՝ նաև տարեկան 2 ռ. 50 կուգ.: Ետ գնման պայմանով թիուլիստը ցմահ գանձարանից պետք է ստանար սեփականատեր դարձող յուրաքանչյուր թիուլական ծխի դիմաց տարեկան 2 ռ. 50 կ., և $4\frac{1}{2}$ տոկոս այն կապիտալ բառմարդից, որն ստացվում էր տարեկան բերքի $\frac{3}{30}$ -րդ մասի 6 տոկոսի կապիտալիցացիայից: Այսպիսով, կախյալ հարաբերությունների վերացման հետևանքով թիուլիստների եկամուտները լրիվ պահպանվում էին, իսկ պետության «մեծահոգությունը» գանձարանի հաշվին նրանց վարձատրելու գործում բացատրվում էր այն բանով, որ թիուլիստների քանակը մի քանի հոգու էր հասնում. դրանք մեծ մասամբ արդեն ծեր մարդիկ էին, որոնց մահից հետո վճարումները գանձարանից պետք է դադարեցվեին:

1912 թ. գեկտեմբերի 20-ի օրենքը տարածվելու էր նաև էջմիածնապատկան Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Եղվարդ և Մուղնի գյուղերի վրա: Վանքապատկան գյուղացիները պարտավոր էին էջմիածնի վանքին հանձնել տարեկան բերքի $\frac{6}{30}$ -ը, որից որպես մուլք՝ բերքի $\frac{3}{30}$ -ի շափով և թիուլ՝ $\frac{3}{30}$ -ի շափով: Վանքը յուրաքանչյուր դեսյատինի դիմաց այգիներից ստանում էր 4 ռ. 80 կուգ.: Բացի գրանից, գյուղացիական յուրաքանչյուր ծուխ տարեկան վանքին վճարում էր 4 ռ. 25 կուգ., որից 2 ռ. 50 կուպեկը որպես թիուլական պարտականություն, իսկ 1 ռ. 75 կուպեկը՝ զեմստվային տուրքի փոխարքն (ետ գնման գումարի մեջ միայն 2 ռ. 50 կուպեկը հաշվվեց, իսկ 1 ռ. 70 կուպեկը գուրս մնաց, քանի որ հետագայում գյուղացիությունը այն պետք է պետությանը որպես զեմստվային տուրք վճարեր): Ետ գնման հետևանքով վանքը հակայական օգուտ էր ստանում: Ինչպես մյուս կալվածատերերը, վանքը նույնպես ստանում էր բերքի $\frac{6}{30}$ -ի 6 տոկոսի կապիտալիցացիայից ստացվող գումարը, որից $\frac{3}{30}$ -ը՝ որպես մուլք. այգիների գրամական բահրան ևս ետ էր

գնվելու գյուղացիության հաշվին (պետական «օժանդակության» միջոցով): Թիուլականի $\frac{3}{30}$ -ի և գյուղացիական տարեկան թիուլացին դրամական բահրայի փոխարքն 1913 թ. հունվարից վանքը 10 տարվա ընթացքում միանվագ պետք է գանձարանից ստանար տարեկան 21 հազար ռուբլի: Մակայն այսպիսի խոշոր գումարների ստացումը հարցի միայն մի կողմն էր: Հարցի մյուս կարենոր կողմն այն էր, որ 1912 թ. գեկտեմբերի 20-ի օրենքով էջմիածնապատկան գյուղերի վրա տարածվելու էր միաժամանակ նաև 1870 թ. ռեֆորմը, որը ոչ միայն վանքին ընձեռելու էր այն բոլոր իրավունքները, որ ժամանակին տրված էր կալվածատիրությանը՝ անարգել կերպով թալանելու գյուղացիությանը, կտրելու նրա բաժնեհողերից լավագույն, բերքի կտրոները, այլև միաժամանակ ավելի ծանր պայմաններ էր ստեղծելու վանքապատկան գյուղացիների համար: Բաժնեհող ստանալու իրավունք ձեռք էին բերում միայն էջմիածնապատկան այն գյուղացիները, որոնք մտել էին 1886 թ. ծխամատյանների մեջ: Այսպիսով, այս կամ այն պատճառով ցուցակներից դուրս մնացածները, ինչպես նաև բնական աճի հետևանքով առաջացած նոր ընտանիքները 1912 թ. գեկտեմբերի 20-ի օրենքով մտնում էին ժամկետային վարձակալների մեջ և զրկվում բաժնեհող ստանալու իրավունքից: Այս կատեգորիայի գյուղացիությունը խիստ անհրաժեշտ էր վանքին իր անմիջական տնօրինության տակ գտնվող խոշոր հողային տարածությունների մշակման համար:

Պետական-մուլքատիրական գյուղերի ետ գնման պայմանների մասին եղած երկար վեճերը ավարտվեցին նրանով, որ այդ գյուղերի վրա ևս պետք է տարածվեն մուլքատիրական գյուղերի ետ գնման սկզբունքները: Պետությունը կամ մուլքատերը, ըստ գյուղում ունեցած իրենց հողային տարածությունների, պետք է գյուղացիներից բաժնեհողերի դիմաց ստանար ետ գնման գումարը՝ կանոնագրերում նշշված պարհակների շափերի համաձայն:

1912 թ. գեկտեմբերի 20-ի օրենքը ձեականորեն ելնում էր այն սկզբունքից, որ չպետք է թույլ տալ ետ գնման օպերացիայի ժամանակ գյուղացիական բաժնեհողերի որևէ կրծ-

տում, պետք է ղեկավարվել կանոնագրերը կազմելու ժամանակ գյուղացիների տրամադրության տակ թողնված հողաբանակով (թուլ էր տրվում և կալվածատերերին, և գյուղացիներին իրենց հաշվին պահանջել հողաշափ և շափել հողը) և երկրագործության համար ոչ պիտանի՝ քարերոտ, ձանապարհների տակ ընկած հողերը պետք է ձրի անցնեն գյուղացիությանը և այլն; Իրականում ցարական ադմինիստրացիան, հօգուտ կալվածատիրության շահերի, գյուղացիության կողմից ետ գնվող հողերի քանակը հաշվում էր հարկային նպատակներով կազմված տվյալների հիման վրա, որոնց մեջ մտնում էին նաև գյուղացիությանը համարյա արդյունք շտվող, հաճախ կալվածատիրության և գյուղացիության «ընդհանուր» օգտագործման տակ գտնվող արոտները, քարերոտ, բուսականությունից զուրկ տեղերը և այլն; Այսպես, Երևանի նահանգում գյուղացիության օգտագործման տակ գտնվող 100 հազար դեսյատինի փոխարեն, ետ գնվող գյուղացիական հողաքանակը նշվում էր 127—137 հազար դեսյատինի շափով, որը նշանակում էր՝ մշակության համար ոչ պիտանի, փաստորեն կալվածատիրական հողերը պարտադիր կերպով ծախել գյուղացիությանը՝ կալվածատիրությանը լրացուցիչ եկամուտներ տալու համար:

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով, կալվածատերերը մինչև գյուղի բաժնեհողերի ետ գնման ակտի վերջնական հաստատումը, 1913 թ. հունվարի մեկից սկսած, գանձարանից տարեկան պետք է ստանային (հաշտարար միջնորդների կազմած նախնական հաշիվների հիման վրա) իրենց հասանելիք գումարի $4\frac{1}{2}$ տոկոսը: Ետ գնման ակտի վերջնական հաստատումով կալվածատերերն ստանալու էին մնացած գումարն ամբողջությամբ: Օրենքով սահմանված այս կարգը դժգոհություն առաջացրեց կալվածատերերի մեջ. նրանք պահանջում էին ուղղակի, նախնական հաշիվների հիման վրա իրենց վճարել ետ գնման կապիտալ գումարը, քանի որ դրա $\frac{1}{2}$ տոկոսի ստացման միջոցով իրենց գոյությունը պահպանելն իբր դժվար է, հող շունեն և այլն³²:

³² Տե՛ս Վ. Աշտումունցված ժողովածուն, էջ 102—103:

1913 թ. հունվարի 1-ից գյուղացիները դադարեցնելու էին. դրամական կամ նատուրալ բահրացի վճարումը կալվածատիրոջը և հաշտարար միջնորդի կողմից կազմած նախնական հաշիվների հիման վրա վճարելու էին ետ գնման վճարումներ պետությանը: Գյուղական հասարակությունը ձայների մեծամասնությամբ որոշում էր, թե քանի տարվա ընթացքում պետք է մարի պետական վարկը: Հաշտարար միջնորդը նախնական հաշիվների հիման վրա հայտնում էր, թե ինչքան է գյուղի ընդհանուր հողաքանակը, ինչ կարգի հողեր են, որքան է ետ գնման մոտավոր գումարը: Գյուղացիությանը զգուշացվում էր, որ վարկի գումարը 56 տարվա ընթացքում մարելիս պետության յուրաքանչյուր ոռություն դիմաց տոկոս պետք է վճարել տարեկան $4\frac{1}{2}$ կոպեկ, 41 տարվա ընթացքում՝ 5 կոպ. և 28 տարվա ընթացքում՝ 6 կոպեկ: Գյուղը ետ գնման համար միասնական ժամկետ էր՝ ընդունումը: Ետ գնման ակտի կազմումը գտնվում էր չինովնիկության ձեռքում: Հաշտարար միջնորդը կատարում էր նախնական հաշիվները, հարկային տեսուչը համաձայնություն էր տալիս և գյուղին ներկայացնելուց հետո, եթե մի ամսվա ընթացքում բողոքներ չեն լինում, ապա Գյուղացիական գործերի նահանգական ատյանը հաստատում էր այն:

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով ապահովվում էին ինչպես կալվածատիրության, այնպես էլ պետության շահերը: Ավալիանին ոչ լրիվ տվյալների հիման վրա նշում էր, որ եթե կալվածատիրությունն Անդրկովկասի հինգ նահանգներում գյուղացիական բաժնեհողերի դիմաց ստանալու էր մոտ 23 միլիոն ոռություն, ապա պետությունը յուրաքանչյուր տարի միայն ետ գնման վճարումների հետեւանքով ստանալու էր մոտ մեկ միլիոն ոռություն³³:

Գյուղացիների գրությունը 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքի հետևանքով շրաբելավվեց. նա ծանր պարտքերի մեջ ընկալ և տարիներ շարունակ պետք է խոշոր վճարումներ կատարել պետությանը: Նրա վրա գրվեց կալվածատիրա-

³³ Տե՛ս Ս. Լ. Ավալիան, Կрестьянский вопрос в Закавказье, т. IV, Одесса, 1914, էջ 140:

կան շատ անպետք հողերի եւտ գնման պարտականությունը։ Հնարավորություն տրվեց գյուղացիական հողերի մասնակի կտրում կատարել հօգուտ եկեղեցու։ Այն շտարածվեց խիզաների վրա և չվերացրեց արոտավայրերի, անտառների սերվիտուտները։

5. 1912 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՕՐԵՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ
ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ֆարական կառավարության կողմից անցկացված գյուղացիական այս մրկրորդ ռեֆորմի կիսատ-պոատությունը և ճորտատիրության մնացուկների հետագա պահպանումն Անդրկովկասում և Հայաստանում երևում էր հենց այդ ռեֆորմի կենսագործման ուղղությամբ տարվող աշխատանքների ամրող ընթացքից։ Ազմինիստրացիան խիստ դանդաղաշրջություն էր ցուցաբերում փրկագնման ակտերի կազմելու աշխատանքներն արագ ավարտելու, գյուղացիության ու կալվածատիրության հողաշահության վերաբերյալ պահանջները, բավարարելու ուղղությամբ։ Ետ գնվող գյուղերում հողերի տեսակների և եկամտաբերության որոշման հարցերում ցարական շինովնիկները խոշոր կեղծիքների և շարաշահումների էին դիմում։ Գյուղացիական գործերի նահանգական ատյանը գյուղացիության բազմաթիվ դիմումներին, բողոքներին երկար ձգձգումներից հետո բացասական պատասխան էր տալիս։ Ամբողջ Անդրկովկասում մինչև 1917 թ. հունվարը, ըստ Ավալիխնիի տվյալների, 6184 ետ գնման ակտերից կազմված էր միայն 2795-ը կամ 45 տոկոսը³⁴, ետ գնման ակտերի կազմելու աշխատանքների խիստ դանդաղ ընթացքն արդյունք էր հատկապես այն բանի, որ ցարական ազմինիստրացիան, շահագրգուվածություն ցցուցաբերելով փրկագնի պահերացիացի արագ ավարտման գործում (հնարավոր է նաև այն պատճառով), որ դա կնշանակեր միանգամից խոշոր գումարներ հանել գանձարանից, երբ ժուռաստանը նոր պատերազմի նախօրյակին էր, և երկրի ֆի-

նանսները քայլացված վիճակում էին գտնվում), համարյաշ չէր զբաղվում բաժնեհողերը շափելու պահանջ ներկայացրած հարյուրավոր գյուղերի խնդիրքների բավարարումով։ Պաշտոնական տվյալներով, 1913 թ. ընթացքում Անդրկովկասի հինգ նահանգներից 888 գյուղեր պահանջ էին ներկայացրել հողաշահություն անցկացնելու մասին։ Հողաշահութում կատարվել էր միայն 168-ում։ Նույն տվյալները երեվանի նահանգի համար համապատասխանաբար կազմում էին 259 և 42³⁵։ Ետ գնման աշխատանքների անմխիթար վիճակն արտահայտող բազմաթիվ գեկուցագրերից, դիմումներից, հաշվետվություններից³⁶ հարկ ենք համարում մեջ բերել միայն էջմիածնի գավառի շորորդ բաժնի հաշտարար միջնորդի՝ գյուղացիական գործերի նահանգական ատյանին ուղղված գեկուցագրից մի հատված 1914 թ. ընթացքում կատարված աշխատանքների մասին։ «Հողատերերի հանգեց գյուղացիական գործերի ունեցած պարտավորյալ հարաբերություն 1912 թ. գեկտեմբերի 20-ի օրենքը կենսագործելու միայն գյուղացիական բաժնեհողերի ետ գնման արժեքի և նրա տոկոսները հողատերերի օգտին որոշելու նախօրյական հաշիվները կազմելու նկատմամբ։ մուլքատիրական կալվածքների և էջմիածնի հայ լուսավորչական վանքին պատկանող կալվածքների վերաբերյալ ետ գնման ակտեր կազմելը չէր ձեռնարկվել այն պատճառով, որ հողատերերի և գյուղացիների պահանջով բաժնեհողերը շափելու համար հողաշահ չէր եկել։ Վանքապատկան կալվածքների կանոնագրեր կազմելը չէր ձեռնարկվել Ատյանի 1913 թ. սեպտեմբերի 23-ի որոշման հետևանքով³⁷։ Այս իմաստաթուղթը խոսում է ոչ միայն ետ գնման օպերացիայի խիստ դանդաղ նեմացերի, այլև այն մասին, որ 1912 թ. գեկտեմբերի 20-ի օրենքի հրատարակումից հետո, երկու տարվա ընթացքում ոչինչ չէր ձեռնարկված էջմիածնապատկան գյուղացիներին կիսամորտացին վիճակից հանելու ուղղությամբ։

³⁴ ՏԵ՛Շ նույն տեղը, էջ 139։

³⁵ ՏԵ՛Շ ՀԱՅԱ գումար, ֆ. 13, ց. 7, գ. 1514, թ. 4—7։

³⁶ ՏԵ՛Շ ՀԱՅԱ գումար, ֆ. 28/91, ց. 562, 2, 76, 77, 78, 79, 82, 92 և այլն։

³⁷ ՀԱՅԱ գումար, ֆ. 28/91, ց. 562, թ. 55։

Աշխատանքների կատարման նման պայմաններում զարմանալի չէ, որ ինչպես պայտոնական տվյալներն են հաղորդում, մինչև 1915 թ. մարտ ամիսը ներառյալ Երևանի նահանգում ետ գնման ենթակա 353 կալվածքներից հաշտարար միջնորդների կողմից ետ գնման ակտեր էին կազմվել միայն 62-ի համար. զրանցից գյուղացիական գործերի նահանգական ատյանի կողմից հաստատվել էր միայն 25-ը: Նույն ժամանակամիջոցում հողի չափելու մասին եղած 330 պահանջներից բավարարվել էր միայն 84-ը³⁸, ետ գնման աշխատանքների մյուս խոշոր արգելակիչ հանգամանքը ցարական շինովնիկության շարաշահումներն ու կեղծիքներն էին՝ հողի սահմանների, նրա եկամտաթերության ու ետ գնման գնման որոշման գործում, որոնք խոշոր բողոքների, վեճերի պատճառ էին դառնում և վերջանաւմ էին ի վնաս գյուղացիության:

Հոռու Աքրորի գյուղի կալվածատեր Լոռիս-Մելիքովները, Գյուղացիական գործերի Թիֆլիսի նահանգական ատյանի հողաշափի և հաշտարար միջնորդի հետ համաձայնության գալով, ետ գնման ակտով, որը կազմվել էր միայն 1916 թ. վերջերին, գյուղացիներին հող են առանձնացնում ոչ թե ըստ կանոնագրերի եղած տեղաբաշխման, այլ մի ընդհանուր հատվածում³⁹: Գյուղացիների բողոքն այս կամայականության դեմ խոսում էր այն մասին, որ կալվածատիրության շահերից նենելով, ցարական շինովնիկները գյուղացիներին ետ գնման ժամանակ աշխատում էին տալ վատ, անբերը հողերը: Ցարական շինովնիկության այս և նման կամայականությունները միաժամանակ ցույց էին տալիս, որ ձեւական բնույթ ուներ փոխարքայի 1913 թ. հովիսի 17-ի այն բացարությունը, որն արգելում էր առանց գյուղացիների համաձայնության հողի նման կարգի վերադասավորում կատարել: Խոշոր շարաշահումներ էին կատարվում հօգուտ կալվածատիրության, երբ ետ գնվող հողերի մեջ էին մտցը- վում եկամտազուրկ, մշակման համար ոչ պիտանի, քարք-

³⁸ ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 1592, թ. 74—75:

³⁹ ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 1952, թ. 74—75:

րու հողերը, որոնք օրենքով ձրի պետք է անցնեին գյուղացիներին: Զարաշահումների, կեղծիքների դեմ ուղղված գուղղացիական շատ բողոքներից⁴⁰, որոնք ցարական ադմինիստրացիայի կողմից մեծ մասամբ մերժվում էին, նշենք մեկը. Երևանի գավառի Զառ գյուղի ներկայացուցիչները 1914 թ. հունիսին բողոքում են գյուղացիական գործերի Երևանի նահանգական ատյանին այն մասին, որ հաշտարար միջնորդը ետ գնման ակտի մեջ մշակման համար անպետք 600 գեսյատին հողը գրանցել է որպես պիտանի հող և գնահատել գեսյատինը 27 ոռոգի, իսկ արոտատեղի և խոտհարք հանդիսացող հողամասերի մի մասը ցույց է տվել որպես վարելանող. բացի դրանից, շրջակա մի քանի գյուղերի (հավանաբար վիճելի) հողամասերի մի մասը ևս մտցնելով ետ գնման ակտի մեջ՝ խիստ ծանրացրել է Զառի գյուղացիների վիճակը: Ինչպես համարյա մնացած բոլոր գեպքերում, գյուղի բողոքը մերժվում է, և ետ գնման ակտի հաստատումըն էլ՝ ձգձգվում⁴¹:

Ցարական ադմինիստրացիայի կողմից տարվող ետ գընման այսպիսի «աշխատանքները» պարզ է, որ չէին կարող ճորտատիրության մնացուկների դեմ ուղղված օրենքն իր վախճանին հասցնել: Առանց այն էլ այդ ոեփորմը մասամբ միայն իրագործվեց, և ճորտատիրության որոշակի մնացուկների լիկվիդացման հարցը կապվեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման հետ:

Հայաստանի Կենտրոնական պետական արխիվից մեզ հաջողվեց գտնել փաստաթղթեր, որոնք քիչ թե շատ պատկերացում են տալիս 1912 թ. գետսեմբերի 20-ի օրենքի կենսագործման ընթացքի մասին Երևանի նահանգում, 1913 թ. հունվարից մինչև 1917 թ. ընկած ժամանակամիջոցում: Երեվանի նահանգական գյուղացիական գործերի ատյանն ի պատասխան Անդրկովկասի հատուկ կոմիտեի (ՕՅԱԿՈՄ) 1917 թ. մայիսի 31-ի խիստ շտապ պահանջին, հետեւալ

⁴⁰ Նույն տեղը, գ. 17285, թ. 64 ա, 65 ա և 68:

⁴¹ ՎՍՍՀ ԿՊԱ, ֆ. 7/70, գ. 75, թ. 79—80:

տվյալներն էր հայտնում նահանգում ետ գնման օպերացիայի վիճակի մասին, թաճնեռղերի դիմաց հողատերերը լրիվ վարձատրություն էին ստացել (ուրեմն և ետ գնման ակտերը վերջնականապես հաստատվել էին) 8 կալվածքում՝ 6045 դեսյատին հողի դիմաց, ընդ որում նրանց ստացած վարձատրության գումարը կազմել էր 23444 ռուբլի: 110 կալվածքներում՝ 61961 դեսյատին հողի դիմաց արդեն կազմված ետ գնման ակտերով (որոնց մի մասն էր միայն հաստատված) կալվածատերերը պետք է ստանային դեռևս 1854014 ռուբլի: 232 կալվածքներում՝ 59134 դեսյատին հողով, դեռևս ետ գնման ակտեր չեին կազմվել, և կալվածատերերը նախնական հաշիվներով ստանալու էին 2343693 ռուբլի: Այսպիսով, ըստ այս փաստաթղթի, ետ գնման ենթակա 350 կալվածքներից լրիվ կերպով ետ գնման օպերացիան ավարտվել էր միայն 8 կալվածքում: 232 կալվածքներում այդ օպերացիան փաստրեն տեղի չեր ունեցել, իսկ ինտրվարյան հեղափոխությունից հետո այն լրիվ դադարեցվեց: Փաստաթուղթը ետ գնման ենթակա հողի քանակը երևանի նահանգում նըշում էր մոտ 127 հազար դեսյատին, որից միայն լրիվ կերպով ետ գնվել էր մոտ 6000 դեսյատինը կամ ամբողջի 5 տոկոսը⁴²: Քանի որ այս փաստաթուղթը չի ստորագրածանում, թե 110 գյուղերից քանիսում էր հաստատվել ետ գընման ակտը, ուրեմն և վերջացել ետ գնման օպերացիան, ուստի մենք դիմում ենք մի այլ փաստաթղթի վկայությանը: Երևանի Պետական պալատի կառավարչի 1917 թ. մայիսի 3-ի պաշտպանական գրությունից երևում է, որ առ 20-ը ապրիլի 1917 թ., ըստ Պետական պալատի տվյալների, երեվանի նահանգի ետ գնման ենթակա 354⁴³ կալվածքից միայն 27-ի մասին էր թույլտվություն ստացվել հարկահանության դեպարտամենտից, որ դրանց տերերին կարելի էր ետ գնման լրիվ գումարը տալ, իսկ 327 կալվածքներում դեռևս

⁴² ՀՍՍՀ ԿՊԱ, գ. 28/91, գ. 191, թ. 6, 8—9:

⁴³ Այն հանգամանքը, որ պաշտոնական փաստաթղթերում ետ գնման ենթակա կալվածքների մասին տարբեր թվեր են նշվում (353, 350, 354), ևս խոսում է ետ գնման օպերացիայի կազմակերպման գործում եղած խանաշփորձության մասին:

շարունակվում էին ետ գնման տոկոսների տարեկան վճարումները⁴⁴: Այս փաստաթուղթը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ետ գնման ակտերը վերջնականապես հաստատվել և 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը քիչ թե շատ լրիվ կերպով կենսագործվել էր միայն 27 կալվածքում: Կախյալ հարաբերությունների մեջ գտնվող գյուղացիների հսկայական մեծամասնությունը թեռևս չէր դարձել իր փոքրիկ բաժնեհողի սեփականատերը և տնտեսական ծանր պայմաններում, ետ գնման կեղեցիկից վճարումներ կատարելով, քայլարկում, պառապերացման ու պրոլետարացման էր ենթարկվում: Այլ բան սպասել ցարիզմից, կալվածատերերի կողմից անցկացվող գյուղացիական ուժորմից չէր էլ կարելի: Այդ է վկայում նաև 1912 թ. ռեֆորմի կենսագործման տարիներին ցարական ազմինիստրացիայի կողմից կուլակության շահերին ծառայող մի շարք հրահանգներ, բացառություններ, շրջաբերականներ հրատարակելու:

Հաշվի առնելով Անդրկովկասի կալվածատիրության բազմից դիմումներն ու խնդիրքներն այն մասին, որ իր գյուղացիների տարեկան բահրայի փոխարեն ստացվող ետ գընման գումարի տոկոսները շատ քիչ են փրենց գոյության պահպանման համար և այլ միջոցներ, բացի դրանցից իրենք չունեն, փոխարքայի գրասենյակը 1913 թ. հոկտեմբերի 3-ին շրջաբերական է ուղարկում բոլոր պետական պալատների կառավարիչներին: Այնտեղ ասված է «Նկատի ունենալով վերը բներգած հիմունքները և ուշադրության առնելով այն հանգամանքը, որ զանազան պետական պարտքերի և ապառիկների գանձումը ոչ միայն բուն ետ գնման վարձատրությունից, այլև այդ վարձատրության նախնական տոկոսներից կարող է անբարենպաստ ազգեցություն գործել երկրամասի հողատիրական տնտեսության կացության վրա, ֆինանսների մինիստրությունը՝ Պետական վերահսկողության հետ համաձայնեցնելով, արգելք չի տեսնում այդ տոկոսներն ազատելու պետական գանձումներից» և հետո «...Զեմստվային ապառիկներն ու գանձումները, ինչպես նաև մասնավոր

⁴⁴ ՀՍՍՀ ԿՊԱ, գ. 28/91, գ. 101, թ. 4—5:

ազնվականական գանձումները, այդ նույն հիմունքներով, ենթակա շեն պահման՝ վերսիցյալ տոկոսներից»⁴⁵: Աչա թե ինչպիսի հոգատարություն էր ցուցաբերում և արտօնություններ էր ընձեռում կալվածատիրությանը ցարական ադմինիստրացիան իր «տնտեսական քայլայումից», նրան փրկելու համար: Յարական կառավարությունը որոշում է ընդունում այն մասին, որ երբ կալվածատերերը հողի նկատմամբ իրենց սեփականությունը հաստատող փաստաթուղթ չունեն, ապա Գյուղացիական գործերի նահանգական ատյանը սենատի և նահանգական «Տեղեկադրերում» ինչպես նաև ամենատարածված լրագրերում, տվյալներ պետք է տպագրի այդ մարդկանց և նրանց կալվածքների ու հասանելիք ետքնման տոկոսների մասին: Եթե մեկ ամսվա ընթացքում կալվածատիրոջ բողոքը չստացվի, ապա նա կստանա ինչպես ետքնման տոկոսները, այնպես էլ ետքնման ամբողջ գումարը⁴⁶:

Կալվածատիրությունը, շրջանցելով 1912 թ. օրենքի պահանջները, այս որոշման միջոցով հնարավորություն էր ստանում առանց հողի սեփականության մասին փաստաթուղթ ներկայացնելու հանաչվել որպես զավթած հողի լիակատար սեփականատեր և ստանալ ետքնման գումարները հողի իսկական տեր հանդիսացող գյուղացիներից:

Այսպիսով, 1912 թ. օրենքն իր ամբողջ էությամբ ու կենսագործմամբ կալվածատիրության, պետության, կուլակության շահերին էր ծառայում և գյուղացիությանը կանգնեցնում էր նոր կմղեքումների առաջ:

1912 թ. դեկտեմբերի 19-ին Պետական խորհրդի կողմից հաստափած «ժամանակավոր»—պարտավորյալ, կախյալ հարաբերությունների վերացման մասին նախագիծը դեկտեմբերի 20-ին ստորագրվեց նիկոլայ երկրորդի կողմից և օրենքի ուժ ստացավ: Իսկ դեկտեմբերի 21-ին Կովկասի փոխարքան մինիստրների խորհրդի նախագահին ուղարկած շնորհակալական հեռագրում գրում էր. «Այդ օրենքն ընկած

է Կովկասի հողային կարգերի իրավական սկզբունքների հիմքով; Կծառայի Կովկասը ուս կուտարական կյանքի ընդհանուր հունին հաղորդակից անելուն և հնարավորություններ կընծեղի երկրամասում քաղաքակրթության ամուր հիմքեր ստեղծելու համար»⁴⁷: Դրանով փոխարքան ցույց էր տալիս, որ ազգարային քաղաքականության բնագավառում ինքը, հետեւելով Մուսաստանի ներքին նահանգներին, այսինքն՝ ստոլիսկինյան ազգարային քաղաքականության կուրսին, ձգտելու է համանել ցարիզմի սոցիալական բազայի ամրապնդմանը և «օրինաչափության» պահպանմանը: Այս տեսակետից են հիմնականում հարցին և գնահատում 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը ինչպես պաշտոնական թերթերը, այնպես էլ կովկասյան բուրժուազիայի և կալվածատիրության ներկայացուցիչները: Այսպես, հայրուրժուազիայի օրգան «Մշակու» 1912 թ. № 285-ի Խմբագրական հոդվածում ցարական այդ օրենքը «առաջին խոշոր ծաղիկն էր» համարում, որ տրվել էր Անդրկովկասին: Դաշնակցականները «Հորիզոն» թերթի 1912 թ. № 286-ում ցարիզմի և կալվածատիրության շահերին ծառայող այս օրենքը բարձրագույն հայտարարություններով վահանի վրա էին բարձրացնում և նշում, որ «...մեր գյուղացիությունը նոր տարվա համար ստանում է մի անգնահատելի նվիր»:

Այս օրենքը, ստոլիսկինյան ընդհանուր ազգարային քաղաքականության արգասիքը լինելով, չնայած իր խիստ կալվածատիրական սահմանափակվածությանն ու կենսագործման շափականց թույլ տեմպերին, այնուամենայնիվ, որոշ շափով օժանդակեց գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացմանը, կուլակային տարրերի ուժեղացմանը: Այս տեսակետից կարելու նշանակություն ուներ այն հանգամանքը, որ պարտադիր նախուրալ բահրայի վերացման հետևանքով մեծանում էր գյուղացիության շահագրգովածությունը գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման գործում: Նախկինում ձեւականորեն կախյալ հարաբերությունների մեջ գտնվող ուներ կուլակային տնտեսություն-

⁴⁵ ՀՍՍՀ ԿՊԱ, 28/91, գ. 463, թ. 2:

⁴⁶ ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 73, գ. 66, թ. 11:

Ների համար արդեն ավելի մեծ հնարավորություններ էին ստեղծվում գյուղատնտեսության մեջ միջոցներ ներգնելու, ռացիոնալ-ապրանքային տնտեսություն վարելու, շքավոր, ունեցուկ համագյուղացիների հողերի բացարձակ զավթումների և նրանց էժան աշխատուժի օգտագործման բնագավառում։ Կալվածատերերին տրվող դրամական վճարումներին անցնելը ևս մասմբ զարկ էր տալիս ապրանքադրամային հարաբերությունների հետագա զարգացմանը գյուղում։ Հենց ցարական ադմինիստրացիան իր օրենքներով ու միջոցառումներով օգնում էր գյուղական բուրժուազիայի ուժեղացմանը։ Այսպես, գյուղական բուրժուազիայի շահերին էր ծառայում 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքի այն կետը, որը, ինչպես ճիշտ կերպով նկատել է պրոֆ. Ա. Ծսայանը, որոշ փոփոխություն էր մտցնում 1910 թ. հունիսի 14-ի ստոլիպինյան հայտնի օրենքի մեջ այն Անդրկովկանի պայմաններում կենսագործելու համար։ Այն թույլ էր տալիս ետ գնման գումարից կամ Գյուղացիական հողային բանկին ողջ գյուղի ունեցած պարտքից առանձնացնել գյուղական հասարակությունից դուրս եկող և առանձին տնտեսություն ստեղծող գյուղացիների բաժինը, իսկ սա փաստորեն նշանակում էր նպաստել գյուղական համայնքից կուլակային-ուներոր տընտեսությունների առանձնացմանը։

Սակայն 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը սոսկ ձևականորեն ազդարարեց գյուղացիության ազատագրումը, որովհետև գյուղացիության ուժերից վեր էին բարձր փրկանումների վճարումները և փաստորեն գյուղացիությունը շարունակում էր կախյալ հարաբերությունների մեջ մնալ հողատերերից։ Արագրողական ուժերի զարգացմանը շատ էին խանգարում նաև սերվիտուտային իրավունքի պահպանումը, պետական գյուղացիներին հողի սեփականատեր շրջանաշելը, պետական ծանր հարկերը, տուրքերը և ամենազիստը՝ ճորտատիրության և աշխատավճարումների ամենահիմնական բազա հանդիսացող պետական ու կալվածատիրական հողատիրությունը։ Այսպիսի պայմաններում է, որ ավելի է ուժեղանում պայքարը գյուղատնտեսության մեջ կալվածատիրական ու գյուղացիական ուղիների միջև, աճում

են գյուղացիական շարժումները ընդգեմ կալվածատիրական հողատիրության հետագա պահպանման։ 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքի կենսագործման ժամանակ Կովկասում գյուղացիության կողմից «ըստ իրենց» օրենքը հասկանալու ու կալվածատիրական հողերի բռնագրավմանը դիմելու փորձերի մասին Ելիզավետպոլի նահանգապետը 1914 թ. հունիսի 4-ին գաղտնի գրություն է ուղարկում Կովկասի փոխարքայություն։ «Այս օրենքի շնորհիվ գյուղացիները ձգտում հայտնաբերեցին իրենց բաժնեհողերն ընդարձակելու ի հաշիվ կալվածատիրական հողերի, դիմելով կամայական զավթման և նպատակ ունենալով ետ գնման միջոցով ամրացնելու այդ հողերը որպես իրենց սեփական հող։ Մի քանի գյուղերում գյուղացիներն այս կամայական գործողություններին դիմեցին տեղական պարագումների սարքանքով, որոնք ետ գնման վերոհիշյալ օրենքի իրենց խեղաթյուրված մեկնաբանությամբ կարողացել էին համոզել այդ գյուղացիներին, որ նրանց ձգտումը ճիշտ է և խմբվիմ ելույթը՝ անվտանգ»⁴⁸։

Այսպիսով, ցարիզմի ազդարային քաղաքականության նոր կուրսը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Կովկասում ու Հայաստանում տապալվեց։ Այն չկարողացավ վերացնել աճող կապիտալիստական հարաբերությունների և խիստ հետամնաց, կիսաճորտային ազդարային հարաբերությունների միջև առաջացած կոնֆլիկտը։

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը ենում էր կալվածատիրության, եկեղեցու և ցարական կառավարության շահերի պաշտպանությունից, գյուղացիությանը գնում էր նոր պարտավորությունների, լավագույն հողերից գրկվելու, տընտեսական հետագա քայլայման սպասնակիությունը և ապեգանության օպերացիայի խիստ դանդաղ ընթացքը, շինովնիկության շարաշահումները, հողաշափության հետ կապված բազմաթիվ վեճերը փաստորեն հասցրին այն բանին, որ այս օրենքով նախատեսված բաժնեհողերի ետ գնման օպերացիան Հայաստանում, սակայ բացառությամբ, համարյա շկենագործելեց։

⁴⁸ ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 15, գ. 2745, թ. 81։

ԳԼՈՒԽ ԶՈՐՈՌՈԴ

ԲՈԼԵՎԿԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԾ
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՍԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ
ՇԱՌԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1907—1914 թթ.

1. ԲՈԼԵՎԿԻԿՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄՐԱԳԻՐԸ

Բոլշևիկյան կուսակցությունը ցարիզմի հակաժողովրդական ագրարային քաղաքականության բացահայտման, գյուղացիական տարերային շարժումներին դիտակցական, կազմակերպված բնույթ տալու և գյուղացիությանը պրոլետարիատի կողմից ղեկավարող հեղափոխական շարժման մեջ ներգրավելու համար ազիտացիոն-կազմակերպական մեծ աշխատանք էր ծավալել: Նա իր ագրարային ծրագիրը մշակեց՝ համառ պայքար մղելով բոլորու ակտուալիզմ և օպորտունիտական կուսակցությունների դեմ, մերկացնելով ինչպես կադետների, այնպես էլ մենշևիկների ու էսեռների ագրարային ծրագրերի կեզծ ժողովրդական էությունը: Բոլշևիկյան կուսակցությունը փր ագրարային ծրագիրը մշակելիս հաշվի էր առել այն կարեռ հանգամանքը, որ Ռուսաստանում 20-րդ դարի սկզբին դեռևս խոզոր շափով պահպանվում էին ճորտատիրության մնացուկները, որոնք խիստ կերպով արգելակում էին արտադրողական ուժերի հետագա առաջընթացը, թույլ չեին տալիս գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի ամերիկյան ուղղու զարգացումը և դրանով իսկ խանգարում էին կապիտալիստական հակասությունների հետագա սրման, աշխատավոր մասսաների հեղափոխական խոշոր վերելքի և սոցիալիստական հեղափոխությանը անցնելու գործին: Այս բոլորը ցուց էին տալիս, որ ագրարային հարցը կազմում էր ուստական բոլորու ակտական հեղափոխության հիմքը, և բոլշևիկյան կուսակցությունը հեղափոխության բոլորու պեմ-

կրատական էտապի իրականացման համար խնդիր էր դնում՝ բռնագրավել կալվածատիրական, արքունի, եկեղեցական հողերը, ազգայնացնել մասնատիրական և համայնական ամբողջ հողը: Ագրարային ծրագիրը բոլշևիկյան կուսակցության ընդհանուր ծրագրի անխղելի մասն էր և ծառայում էր պրոլետարիատի դասակարգային պայքարի հիմնական խնդիրն, պրոլետարիատի դիկտուրայի և սոցիալիզմի համար մղվող պայքարի խնդրին: Ենինք գրում էր. «Իրեն կենտրոնական փաստ Ռուսաստանի նաև ագրարային կարգերի բնագավառում մենք ընդունում ենք դասակարգային պայքարը: Մենք մեր ամբողջ պարարային քաղաքականությունը (հետևաբար և ագրարային ծրագրը) կառուցում ենք այս փաստի անշեղ ընդունման վրա՝ նրանից բխող բոլոր հետևանքների հետ միասին: Մեր գլխավոր մերձավորագույն նպատակն է՝ մաքրել գյուղում դասակարգային պայքարի ազատ զարգացման ուղին, պրոլետարիատի դասակարգային պայքարի, որ ուղղված է իրագործելու համաշխարհային սոցիալ-դեմոկրատիայի վերջնական նպատակը, պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճումը և սոցիալիստական հասարակության հիմքերի ստեղծումը»¹:

Բոլշևիկների կուսակցությունը մեծ աշխատանք էր տանում գյուղացիության մասսաներին ցարիզմի ու կալվածատիրության դեմ ընդհանուր հեղափոխության շարժման մեջ ներգրավելու համար: Ուստի կուսակցությունը գյուղին տալիս էր այնպիսի լողունզներ, որոնք կապահովեին գյուղացիության հեղափոխական շարժման վերելքը, նրա համախըմբումը բանվոր դասակարգի շուրջը՝ ցարիզմի ու կալվածատիրության դեմ մղվող ընդհանուր պայքարում: Եթե ՌՍԴԲԿ II համագումարում ընդունված ծրագրի մեջ խնդիր էր դրվում ստեղծելու գյուղացիական կոմիտեներ, որոնք պետք է գյուղացիներին վերադարձնեն ճորտատիրության իրավունքի վերացման ժամանակ նրանցից խլված հողահատվածները, ապա կուսակցության III համագումարը որպես պրակտիկ խնդիր առաջ քաշեց գյուղացիական հեղափոխա-

1 Վ. Ի. Անդին, Երկեր, Հ. 6, էջ 178—179:

կան կոմիտեների միջոցով արքունի, կալվածատիրական ե-
կեղագապատկան հողերի բռնագրավումը:

Բոլշևիկյան ազգարային ծրագրի սկզբունքները փայլուն
կերպով տրված են Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի պրա-
րային ծրագիրը 1905—1907 թթ. ոռուական առաջին հեղա-
փոխության մեջ» աշխատությունում։ Մերկացնելով ոռուա-
կան բուրժուազիայի ռեակցիոն բնույթը և նրա ազգարային
ծրագրի ողջ հակածողովրդական էությունը, Լենինը ցույց էր
տալիս, որ ինչպես մենչկեների կողմից առաջ քաշված
հողերի «մունիցիպալիզացիայի», այնպես էլ էսեռների՝ «սո-
ցիալիզացիայի» ազգարային ծրագրերը իրենց էությամբ չեն
ծառայում զյուղացիության շահերին և հակասում են սոցիա-
լիստական հեղափոխության հաղթանակին հասնելու գործին։

Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության նախա-
պատրաստման և անցկացման ժամանակաշրջանում խիստ
կարևոր նշանակություն ուներ այսպես կոչվող լիբերալ բուր-
ժուազիայի մեկուսացումը, քանի որ նրա շահերն արտահայ-
տող կաղետական կուսակցությունը կեղծ խոստումներով,
մանր ուժորմներ առաջարելով ցանկանում էր իր հետեւից
տանել զյուղացիությունը, հեռու պահել նրան պրոլետարիա-
տի կողմից մզվող հեղափոխական պայքարից և ապահովել
կալվածատիրության, ինչպես նաև բուրժուազիայի մասնա-
վոր սեփականության անձեռնմխելությունը։ Լենինը, բացա-
հայտելով ոռուական բուրժուազիայի հակահեղափոխական
բնույթը, ցույց էր տալիս, որ կաղետների կողմից առաջ
քաշված ազգարային ծրագիրը, որը նախատեսում էր արքու-
նի, կալվածատիրական որոշ հողերի «Հարկադրական օտա-
րում», մի նոր միջոց էր մասնատիրական, արքունի հողերի
անձեռնմխելության պայմաններում բարձր գներով զյուղա-
ցիներին վաճառելու երկրագործության համար ոչ պիտանի,
ավագուտային, ճահճային հողերը և նորանոր եկամուտներ
տալ պետությանը և կալվածատիրերին։ Կաղետների լիբերա-
լիզմի ողջ կեղծությունը և ոռուական բուրժուազիայի ռեակ-
ցիոն էությունը լրիվ կերպով բացահայտվում է հատկապես
հունիսիների հեղաշրջումից հետո, երբ երկրորդ Դումա-
կամ պահանջում էին տրուգովիկները, երբ երկրորդ Դումա-
յում անկուսակցական զյուղացիների հետ միասին առաջ էին
առ մենշևիկները մունիցիպալիզացման ծրագիրը չէին կա-
պում ամբողջ երկրում լուրջ գեղագության հաղթանական և

գեղագության ի պաշտպանություն ցարի ու ոռուական կալվա-
ծատիրության իշխանության ամրապնդման։
Լենինը շախալիլ քննադատության է ենթարկում մեն-
շևիկների ագրարային ծրագիրը և ցույց է տալիս հողի մու-
շիցիպալիզացիայի ամբողջ անհեթեթությունը։ ԸստԲԿ Խ
համագումարում ընդունված մենշևիկյան ազգարային ծրա-
գիրը պահանջում էր բռնագրավել ինքեղապատկան, արքու-
նի, կաբինետացին հողերը և պետական հողերի հետ միա-
սին հանձնել տեղական ինքնավարության օրգաններին, ընդ
որում մասնատիրական հողերի (բացառությամբ մանր հո-
ղատիրության) բռնագրավման չափերը պետք է որոշեին
տեղական ինքնավարության օրգանները։ Միաժամանակ
պահանջում էր զյուղացիական բաժնային հողատիրու-
թյունը, որը կապված էր ճորտատիրության մնացուկների,
աշխատավճարումների ու էքստենսիվ հողագործության հետ։
Համագումարի բոլշևիկյան ֆրակցիան Լենինի գլխավորու-
թյամբ գուրս նկավ այդ ծրագրի գեմ և գիմում հղեց կուսակ-
ցությանը, որի մեջ ասվում էր, «Մունիցիպալիզացիան նշա-
նակում է՝ զյուղացիների սեփականությունն իրենց հողաբա-
ժինների նկատմամբ և զեմստվոններին հանձնված կալվա-
ծատիրական հողերի վարձակալությունը զյուղացիների կող-
մից։ Ըստ էության դա ինչ-որ մի միջին բան է իսկական
ազգարային հեղափոխության և կաղետական ազգարային
ուժորմի միջև։»² Բոլշևիկները նշում էին, որ զյուղացիները
գրան չեն համաձայնվի, կամ կավահանջեն ուղղակի հողը բա-
ժանել, կամ բուրը հողերը դարձնել ժողովրդի սեփակա-
նություն, այսինքն այն, ինչ իսկապես հետագայում Դումա-
յում պահանջում էին տրուգովիկները, երբ երկրորդ Դումա-
յում անկուսակցական զյուղացիների հետ միասին առաջ էին
առ մենշևիկները ազգայնացման և քաժանման հարցերը։ Քա-
շաշում հողերի ազգայնացման և քաժանման հարցերը։ Քա-
նի որ մենշևիկները մունիցիպալիզացման ծրագիրը չէին կա-
պում ամբողջ երկրում լուրջ գեղագության հաղթանական և

պայմաններում մունիցիպալացումը»... որպես լիբերալ-շինովնիկական ռեֆորմ, ամենակին այն չի տա գյուղացիներին, ինչ նրանց պետք է, և միանույն ժամանակ նոր ուժ, նոր ազգեցություն կընծենի զեմստվոներում տիրապետող բռնութական հակապրոլետարական տարրերին, փաստորեն նրանց ձեռքը հանձնելով հողերի ֆոնդի բաշխումը»³:

Լենինը նշում էր, որ հաղթական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության առաջնահերթ տնտեսական խնդիրն է վերացնել ֆեոդալիզմի ամեն տեսակի մնացուկները: Մենշեվիկյան ազգարային ծրագրով նախատեսվում էր Ծովասատանի հողերի մոտ կեսը (280 միլիոն դեսյատինից 138-ը) թողնել որպես մասնավոր սեփականություն, այսինքն՝ հնարավորություն ստեղծել հողի մենաշնորհ իրավունքի, բացարձակ ունա-տայի պահպանման համար, որոնք լուրջ խոշնդու կհանդի-սանային գյուղատնտեսության կապիտալիստական արագ զարգացման համար: Մերկացնելով մենշևիկյան ազգարային ծրագրը, Վ. Ի. Լենինը գրում էր. «Մունիցիպալիզացիայի մեջ մենք տեսնում ենք իսկական ագրարային բիմետալիզմ: ամենահին, հնացած ու իր դարն ապրած, միջնադարյան, բաժնեհողային սեփականության զուգակցումը հողի մասնավոր սեփականության բացակայության հետ, այսինքն՝ կապիտալիստական հասարակության մեջ հողային հարաբերությունների ամենաառաջավոր, թերիփապես-իդեալական կարգավորման հետ: Այդ ազգարային բիմետալիզմը թերիփա-պես պնդեթեթություն է, զուտ տնտեսական տեսակետից ինչ-որ անհնարին բան»⁴:

Լենինը միաժամանակ բացահայտում էր մենշևիկյան մունիցիպալացման ծրագրի բաղաքական ամբողջ վտանգավորությունը, ոչ հեղափոխական էությունը, նրա սերտ կապը անգլիական բուրժուազիայի գործակալ հանդիսացող ֆաքիականների քաղքենիական օպորտունիզմի՝ այսպես կոչված «մունիցիպալ սոցիալիզմի» հետ, որը անգլիական սոցիալ-դեմոկրատները ճիշտ կերպով մունիցիպալ-կապիտալիզմ

³ ՏԵ՛ս նույն տեղը:

⁴ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, էջ 395:

էին անվանում: Մունիցիպալացման ծրագրի ոչ հեղափոխական հությունն արտահայտվում էր նրանում, որ փոխանակով գյուղացիությանը կոչելու հեղափոխական եղանակով բռնագրավել կալվածատիրական հողերը, ծրագիրը նախատեսում էր այդ հողերի օտարում և տեղական ինքնավարությունների տնօրինության հանձնում: Մասլովի տիպի մենշևիկյան «տեսաբանները» առաջ էին քաշում տեղական ինքնավարությունների, զեմստվոների դեմոկրատացման քաղքենիական, կեղծ սոցիալիստական ծրագրի, ըստ որի պետք է հաստատվեր ոչ թե բանվորա-գյուղացիական հեղափոխական կառավարություն, այլ ոչ դեմոկրատական, ինչ-որ կենտրոնական իշխանություն: «Մունիցիպալ-սոցիալիզմը» արևմտաեվրոպական օպորտունիստների հակահեղափոխական այն ծրագիրն էր, որով նրանք ցանկանում էին շեղել հասարակական ուշադրությունը սոցիալական-տնտեսական ամենակարևոր նշանակություն ունեցող հարցերի հեղափոխական լուծումից և զբաղեցնել տեղական ինքնավարության, «բանակչության կարգեները» հոգալու հարցերով: Ուստ մենշևիկները քարոզում էին քաղքենիական սոցիալիզմ, դասակարգային պայքարի բթացում, երբ ազգարային հարցը դասում էին տիրապետող, դասակարգերի շահերին զդիպչող տեղական կառավարման ոչ կարելոր հարցերի շարքը:

Զախշախիչ հարված հասցնելով մունիցիպալացման մենշևիկյան հակահեղափոխական «տեսությանը», մերկացնելով նրա տնտեսական և քաղաքական ողջ անձնեթեթությունը և օպորտունիզմը, լենինը գրում էր. «Բանվոր դասակարգը բուրժուական հասարակությանը պետք է տա բուրժուական հեղաշրջման ամենազուտ ամենահետևողական, ամենավրձուական ծրագիրն ընդհանուր մենշևիկով հողի բուրժուական ազգայնացումը: Բուրժուական հեղափոխության մեջ պրոլետարիատն արհամարդանքով մի կողմ է քաշվում քաղքենիական ունիքորմատորությունից: մեզ հետաքրքրում է ազատությունը պայքարի համար և ոչ թե ազատությունը քաղքենիական երաշնկության համար»⁵:

⁵ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, էջ 462:

Լենինը սուր կերպով քննադատում էր նաև ինտելիգենտ-չսեռների ու նրանց հարած ազգայնական կուսակցությունների՝ Հողի «սոցիալիզացիայի» ծրագիրը, որը իդեալիզա-նացնում էր մասր տնտեսությունը, իր դարն ապրած պրդեն խիստ շերտավորման քննիչը կված համայնքը և պատրանք էր ստեղծում, թե իբր կապիտալիզմի պայմաններում, ա-ռանց պրոլետարիատի ու շքավոր գյուղացիության սոցիա-լիստական հեղափոխության հաղթանակի, հնարավոր է հա-մայնական հողերի հավասարարական օգտագործման միջո-ցով հասնել սոցիալիզմի։ Լենինը մեշքերումներ անելով Դումայում հանդես եկած դաշնակցության ներկայացուցիչ Սաղաթելյանի ելույթից, ցուց էր տալիս էսեռական ագրա-րային ծրագրի ողջ ուսուպիական էությունը։ Դաշնակցու-թյան այդ «տեսաբանը» երկրորդ Դումայում թեզ առաջարկեց, որ իբր «այդ ձեզ (այսինքն՝ համայնքը) կարող է ծավալվել-վերածվել համաշխարհային շարժման, որն ի վիճակի է մատնանշելու բոլոր տնտեսական հարցերի լուծումը»⁶։

1905—1907 թթ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխու-թյան պարտությունից անհրաժեշտ հետևություններ անելով, բոլշևիկյան կուսակցությունը ստոլիպինյան ռեակցիայի ժա-նըր տարիներին, օգտագործելով լեզար և անեզար աշխա-տանքի բոլոր հնարավոր միջոցները, հետևողականորեն պայքարում էր հանուն բանվոր դասակարգի ու գյուղացիու-թյան հեղափոխական դաշինքի ամրապնդման։

Ծնորհիվ լեզար ու անեզար աշխատանքի հմուտ գու-գակցման, մասսաների հետ կապի պահպանման բոլշևիկ-յան կուսակցությունը ռեակցիայից հետո վերադասավորե-լով ուժեց, կրկին առաջ քաշեց 1905—1907 թթ. հեղափո-խության ժամանակ լուծված խնդիրները։

1912 թ. հունվարին ՌՍԴԲԿ Պրագայի կոնֆերանսը նշեց. «Կոնֆերենցիան վստահություն է հայտնում, որ բանվորա-կան շարժման մեջ սկսվող աշխատացման կապակցությամբ կշարունակվի հին կազմակերպական ձևերի ամրապնդման ու նոր, բավականաշափ ձևում, կազմակերպական ձևերի ըս-տեղման եռանդուն աշխատանքը, ձևեր, որոնք կօգնեն ս. դ.

Կուսակցության պայքարին հանուն հին հեղափոխական նը-պատակների ու հեղափոխական մեթոդների նոր փրադրու-թյան մեջ»⁷։

2. ԹՈՂԵՎԱԿԻՑԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հեկավարվելով լենինյան դրույթներով, Անդրկովկասի բոլշևիկները մեծ աշխատանք կատարեցին գյուղացիության դասակարգային պայքարի ճիշտ կազմակերպման ուղղությամբ։

Եթե կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակեր-պությունների միության ծրագրի նախագծում «գյուղացինե-րին ճնշող ճորտային գրության մնացորդները ոչնչացնելու և գյուղում դասակարգային կովկի ազատ զարգացում ստեղ-ծելու համար» առաջարկվում էր վերացնել ետ գնման վճա-րումները, «ժամանակավոր»—պարտավորյալ հարաբերու-թյունները և կալվածատիրական գյուղացիներին ու խիզան-ներին որպես սեփականություն հանձնել նրանց օգտագործ-ման տակ գտնվող բաժնեհողերը, ապա ՌՍԴԲԿ երրորդ հա-մագումարը «Կովկասի իրադարձությունների մասին» բա-նաձեւում զերմագին ողջույն հղեց «Կովկասի հերոսական պրոլետարիատին ու գյուղացիությանը քաղաքում և գյու-ղում հեղափոխական շարժման ծավալման համար, որը հա-սել էր արդեն ժողովրդական ապստամբության մակարդա-կին։ Այդ մի շարժում էր, որի ընթացքում գյուղացիությունը պրակտիկ կերպով կննաւործում էր 1905—1907 թթ. ուղ-սական առաջին հեղափոխության ժամանակ բոլշևիկյան կուսակցության կողմից առաջարած խնդիրը՝ կալվածատի-րական, արքունական, եկեղեցապատկան հողերի բռնագրա-վումը⁸, Ճիշտ է, գյուղացիության հեղափոխական շարժման

7. «ԽԱԿԱԿՈՒՄ Համագումարների, կոնֆերենցիանների և կենտրոնի պլե-նումների բանաձեռում ու որոշումներում», I մաս, Երևան, 1954, էջ 336։

8. ՏԵ՛ս «Պրոլետարիատի կովկը», 1903 թ., № 2—3 և «ՍՄԿՊ-ն Համա-գումարների, կոնֆերենցիանների և կենտրոնի պլենումի բանաձեռում ու որոշումներում», I մաս, Երևան, 1954, էջ 49, էջ 103—104։

հիմնական կենտրոնը Կովկասում Արևմտյան Վրաստանն էր, սակայն գյուղացիության դասակարգային պայքարը, նրա հեղափոխական ելույթները որոշակիորեն արտահայտվեցին նաև Հայաստանում, ընդ որում ոչ միայն 1903—1907 թթ., այլև ռեակցիայի ծանր տարիներին:

Հայաստանում 1905 թ. ընթացքում ծավալված բանվորական և գյուղացիական հեղափոխական շարժման մասին ժխտական տեսակետ է արտահայտել Ֆ. Մախարաձեն: Ընկերությ ծայրահեղության մեջ, նա հայտարարում էր, որ հայ բանվորն ու գյուղացին ամբողջովին գտնվում էին եկեղեցու ու դաշնակցության ազդեցության տակ և իր վերջինիս գործունեության հետեւանքով «...1905 թ. հեղափոխության ժամանակաշրջանում հայ բանվորի և հայ գյուղացու ամբողջ եռանդն ուղղված էր ոչ թե աշխատավորների բարեկեցությանը, այլ ծառայում էր հօգուտ հակահեղափոխության ու մոլությունից⁹: Թերաֆնահատելով բոլշևիկյան կազմակերպությունների կողմից գյուղում կատարվող բացատրական, մասսայական աշխատանքը, նա փորձում էր բացատրել դա հայերեն ու ադրբեջաներեն իմացող պրոպագանդիստ-ագիտատորների բացակայությամբ:

Իհարեկե, չի կարելի ժխտել այն փաստը, որ թե եկեղեցին և թե, մասնավորապես, դաշնակցական կուսակցությունը կարողացել են որոշ չափով իրենց ազդեցության տակ պահել աշխատավոր մասսաներին, դանդաղեցնել բանվոր դասակարգի և մանավանդ գյուղացիության քաղաքական զարթոնքը, վնասել են Հայաստանի աշխատավորության հեղափոխական պայքարի գործին: Չի կարելի ժխտել նաև այն փաստը, որ ցարիզմի կողմից հրահրված հայ-ադրբեջանական ընդհարումները բացասական նշանակություն են ունեցել կովկասի աշխատավորության կողմից մղված հեղափոխական պայքարի մեջ: Այդ ընդհարումների կազմակերպման մեջ մեղք ունեին նաև հայկական ու ադրբեջանական ազգայնական կուսակցություններն ու խմբավորումները, որոնք գործում էին աշխատավորությանը հեռու պահել դասակար-

⁹ Ф. Махарадзе, Очерки революционного движения в Закавказье, Тифлис, 1927, стр. 8.

գային պայքարից և նրա գիտակցությունը թունավորել բուրժուական նացիոնալիզմի գաղափարներով: Սակայն այս ամենը իրավունք չեն տալիս անտեսելու Հայաստանի բանվոր դասակարգի, գյուղացիության հեղափոխական պայքարի պատմությունը, բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը: Ալավերդու բանվորների 1905—1906 թթ. հումկու գործադրությունը, Հաղպատի գյուղացիության 1903 և 1905 թթ. հերոսական ելույթները՝ ընդհուպ մինչև կալվածատիրական հողերի բռնագրավումը և ցարական ուժերի հետ գինված ընդհարումը, 1905—1907 թթ. հեղափոխության ժամանակ և հետագա տարիներին բանվոր դասակարգի ու գյուղացիության բազմաթիվ ելույթները պայծառ էշեր են Հայաստանի աշխատավորության մղած հեղափոխական պայքարի պատմության մեջ:

Ստեփան Շահումյանը 1906 թ. հովհաննելու «Կայձ»-ում գրում էր: «Մենք պարզապես նկատում ենք, որ մեր գավառներում կյանքը փոխվում է: Հին կուռքերը կամաց-կամաց ընկնում, գահավիժում են: Քաղաքական գիտակցությունը մուտք է գործում հայկական գավառները: Երկանում, Ալեքսանդրապոլս, Զարսում, Շուշիում, Շամախում և այլն և այլն, երբեմն նույնիսկ ամենահետամնաց գյուղերում մենք ունենք արդեն պրոլետարական-սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, որոնք կամաց-կամաց խմբում են իրենց շուրջը մեր գավառների կենսունակ, իսկապես հեղափոխական-պրոլետարական տարրերը և կազմակերպում նրանց հանուն սոցիալիզմի ընդհանրապես և հանուն անմիջական հեղափոխական կովի ոռուայց բռնակալության դեմ՝ մասնավորապես»¹⁰:

Սուրեն Սպանդարյանը «Մեր դերը գյուղերում» ծրագրային նշանակություն ունեցող հողվածաշարում մերկացնում էր ազգայնական, կեղծ սոցիալիստական կուսակցությունների բացասական դերը, նրանց հակահեղափոխական գործունեությունը հայկական գյուղում, որոնք մտրածի, գենքի, էկզեկութիւնների միջոցով աշխատել են իրենց ազդեցության

¹⁰ Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, Երևան, 1955, էջ 236:

տակ պահել գյուղացիությանը, նրան դարձնել հնագանդ զանգված։ Սպանդարյանը գտնում էր, որ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները պետք է ազատեն գյուղացիությանը ազգայնական կուսակցությունների ազդեցությունից, հաստատեն գյուղացիության և պրոլետարիատի միջև գաղափարական դաշինք։ «Մեր պարտքն է հեղափոխականացնել գյուղը ամբողջապես, ազդել ամբողջ գյուղացիության վրա, տալով նրան մեր լոգունք՝ «ամբողջ հողը և ամբողջ ազատությունը»»¹¹, — նշում էր Սպանդարյանը և ավելացնում, որ անհրաժեշտ էր հասկացնել գյուղացիությանը, որ առանց հեղափոխության, առանց քաղաքական ազատության հնարավոր չէ դրա իրականացումը։

Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը անողոք պայքար էին մղում նաև «Հայ ժողովրդական կուսակցության», «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայկական կազմակերպության» (սպեցիֆիկների) և, ինչպես հիշատակվեց, հատկապես «բուրժուա-ազգայնական դաշնակցություն» կուսակցության դեմ։

«Հայ ժողովրդական կուսակցությունը» հիմնականում կանգնած լինելով ոռւսական կադետների քաղաքական դիրքերի վրա, իր գործունեության գլխավոր նպատակը տեսնում էր հայ աշխատավոր մասսաներին հեղափոխական պայքարից հեռու պահելու, ցարիքմի, կալվածատիրության, մասնավոր սեփականության հիմունքները ամրապնդելու մեջ։ Որպես բուրժուական կուսակցություն, իր էությամբ լինելով հակահեղափոխական, նա աշխատում էր հօգուտ ստորևինյան պրարային քաղաքականության կուրսի, որի իրականացմանը ձգում էր հասնել ոչ թե բացահայտ բռնության մեթոդներով, այլ կադետներին հատուկ լիբերալիզմի, դատարկ խոստումների, առանձին փոքր զիջումների քաղաքականության միջոցով։ Գյուղացիությանը հեղափոխական պայքարի ուղղուց շեղելու, իր ռեֆորմիստական քաղաքականության հետեւ համար հայ կադետները թմբկարում, վահանի վրա էին բարձրացնում ոռւսական բուրժուա-

11 Ս. Սպանդարյան, Երկը, հ. 1, Երևան, 1959, էջ 129։

ազիացի կողմից առաջ քաշված արքունի, կալվածատիրական հողերի մի մասի «հարկադրական օտարման» մեջ արդեն հայտնի ծրագիրը, գյուղացիության բոլոր կարիքներին «վեր տվող», «ամենազոր ու ամենափրկիլ» տեղական ինքնավարություններ՝ զեմստվոներ մտցնելու հարցը, դասակարգերի հաշտեցման և հայ ժողովրդի «միասնական նպատակների» իրագործման խնդիրը և այլն։

Հայ կադետների օրգան «Մշակը» գրում էր. «Մասնավորապես շատ զգալի է զեմստվային հաստատությունների բացակայությունը մեր երկրում։ Եվ մենք ամեն օր՝ այս ու այն կուլտուրական ձեռնարկության սկսելու և կազմակերպելու ժամանակ՝ համոզվում ենք, որ մենք թույլ ենք հենց այդ տեղական ինքնավարության հաստատությունների բացակայության շնորհիվ և անկարող ենք ընդարձակ, հարատեև և էական նշանակություն ունեցող գործ կատարել, որ իր արժատները զգի մեր կյանքի մեջ և նպաստի նրա առաջադիմությանը»¹²։

Դաշնակցական գործի Ավ. Մահակյանը «Մեր գյուղատեսության հետամնացության պատճառները» հոդվածում իրար կողքի զնելով գյուղացիությանը հողով ապահովելու, «ժամանակավոր»—պարտավորյալ հարաբերությունների վերացման, դատարանի, կրթական գործի ուղղությամբ պահանջվող բարենորոգումների հարցերը, նշում էր, որ կենտրոնական կառավարությունը զբաղված է «շատ բարդ» գործերով, ուստի այդ բարենորոգումների իրագործողը պետք է զեմստվոները լինեն։ «Զեմստվայիկան ինքնավարության է անհամբեր սպասում մեր երկիրը, նա է, որ իրավական ազատ պայմաններում բերելու է իր հետ մեր գյուղի վերածընությունը, նա է բեղմնավորելու աշխատավոր գյուղացիությանը կերակրող մայր հողը»¹³։ Սա կրկնություն էր մասլովյան այն տեսակետի, ըստ որի տեղական ինքնավարությունները պետք է գործեին կենտրոնական ռեակցիոն կառավարության առկայությամբ և վճռեին բնակչության ու ամբողջ

12 «Մշակ», 1912, թ., № 30։

13 «Գյուղատնտես», 1909 թ., № 4, էջ 52։

պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող հարցերը:

Թողեիկյան «Պրոլետարիատի կոփվը», մերկացնելով Կովկասի փոխարքայության կողմից զեմստվոներ մտցնելու հարցի առթիվ զանազան խորհրդակցություններ հրավիրելու, նոր ստեղծվող դեմստվոները տիրող դասակարգերի շահերին ծառայեցնելու և աշխատավոր մասսաներին հեղափոխական շարժումներից հեռու պահելու քաղաքականությունը, գրում էր. «Հեղափոխական պրոլետարիատը վաղուց է հասկացել ցարի կառավարության զափիր քաղաքականությունը; Պրոլետարիատը առանց դանդաղելու, կզնահատի ժողովրդին փրչացնելու և նրան հեղափոխությունից հետ քաշելու համար ցարի ինքնակալության գործ դրած»¹⁴:

Թերթը կոչ էր անում բոլոր կուսակցական կազմակերպություններին օգտագործել նախընտրական ագիտացիան մերկացնելու ցարիզմի նոր մաների իսկական էությունը և գյուղացիության ժողովներում բոյկոտելու փոխարքայի նոր խարեւությունը՝ ներկայացուցիչներ շուղարկելով խորհրդական ժողովը:

Հայ կագետական կուսակցությունը աշխատում էր իրենց տալ որպես վերջասակարգային, ամբողջ ժողովրդի շահերն արտահայտող մի կուսակցություն, որի նպատակը «ընդհանուր աշխատավորական է, ընդհանուր ժողովրդական, ընդհանուր մարդկային»¹⁵:

Թուրքուական կուսակցությունների հետ միասին ազգայնական, հակահեղափոխական դիրքերում էր կանգնած նաև «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը», որը, ինչպես կենինն էր բնորոշում, «Բունդական կրեատուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը սնելու համար»¹⁶. Այդ կազմակերպության «թերետիկները» գտնում էին, որ հայ իրականության «սպեցիֆիկ» պայմանները պահանջում են ունենալ ինքնակար իրավունքներով օժական սոցիալ-դեմոկրա-

տական հայկական առանձին կազմակերպությունը, նրանք պահանջում էին ինքնավարություն, այն նպատակով, որ հեռու պահանջներ հայ աշխատավորությանը պրոլետարիատի ինտերնացիոնալ պայքարից, հաշտեցնեն նրան հայ բոլորաւագիայի հետ և սեեւեն նրա ուշագրությունը «ընդհանուր ազգային» խնդիրների վրա: «Սպեցիֆիկները» անիմաստ էին համարում հայերի մեջ գոյություն ունեցող դասակարգային պայքարը, գտնելով, որ հայերը ունեն իրենց ընդհանուր ազգային թշնամիները և ընդհանուր ազգային պահանջները: Միաժամանակ պրոպագանդում էին այն գաղափարը, որ հայ աշխատավորությունը չպետք է մասնակցի այլ ազգությունների ներկայացուցիչների կողմից տարվող դասակարգային պայքարին, քանի որ ամեն մի ազգ պայքարում է իր «սպեցիֆիկ» շահերի համար:

Թե ինչքան կեղծ, դեմագոգիական էր «սպեցիֆիկների» իրենց որպես հայ աշխատավորության շահերի իմկական պաշտպան ներկայացնելու հավակնությունը, երեսում էր նաև այն բանից, որ նրանք չեն մշակել հայ գյուղացիության համար կենսական նշանակություն ունեցող ազրարային հարցի մասին որոշակի ծրագիր: Փետրվարյան հեղափոխությունից հետո, 1917 թ. մայիսին «սպեցիֆիկների» հայտնի գաղափարախոս Դ. Անանունը «Նամակներ հայ գյուղացիներին» հողվածաշարով կոչ էր անում գյուղացիությունը չըրավել կալվածատիրական հոգերը, այլ սպասել Հիմնադիր ժողովի որոշմանը: Անդրադառնալով ազրարային հարցի լուծման լավագույն ծրագիրը մունիցիպալիզացիան է»¹⁷:

«Սպեցիֆիկները» ժխտում էին հայ գյուղացիության կողմից հայ կալվածատիրության դեմ մղվող դասակարգային պայքարի անհրաժեշտությունը. նրանք գտնում էին, որ իր հայ կալվածատիրությունը ընդհանրապես գոյություն չունի, աշխատում էին գյուղացիության դասակարգային պայքարին

¹⁴ «Պրոլետարիատի կոփվը», 1905 թ., № 7,

¹⁵ «Մշակ», 1907 թ., № 55:

¹⁶ Վ. Ի. Լենինին, Երկեր, հ. 34, էջ 383:

¹⁷ «Բանվոր», 1917 թ., № 4:

ազգայինական բնույթ տալ և այն ուղղել միայն ադրբեջանցի կալվածատիրության դեմ:

Հայտեցնել դասակարգային հակասությունները, համախմբել հայերին «ընդհանուր ազգային» խնդիրների լուծման համար, կտրել մյուս ժողովուրդների և հատկապես Ռուսաստանի առաջավոր հեղափոխական քանվոր դասակարգի և գյուղացիության մղած ընդհանուր դասակարգային պայքարից, ուրեմն և օժանդակել տիրող կարգերի պահպանմանը՝ սա էր «սպեցիֆիկների» հակահեղափոխական քաղաքականությանը:

Ստ. Շահումյանը, սուր ծաղրի ենթարկելով Դ. Անանունին «սպեցիֆիկների» շվատարած գործունեությունը իմառաբանելու և, ընդհակառակն, բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքն անտեսելու համար, գրում էր. «Հետաքրքիր է, որ այն միջոցին, երբ համառուսական մարքսիստների շարքերից բազմաթիվ ինտելիգենտները ու բանվորները լցրել են տարիների ընթացքում բանտերը և այժմ էլ տասնյակներով տնքում են տաժանակիր աշխատանքների դատապարտված և հավիտյան Սիբիր ուղարկված,—այդ միջոցին ոչ ժամդարմները և ոչ պրոկորատորան շեն կարողացել, խոշորագույն մեջ նույնիսկ նկատել, «հայ ս.-դ. կազմակերպության» գոյությունը, որպեսզի գոնե մի հատիկ ձերբակալություն տեղի ունեցած լիներ այդ «կազմակերպությանը» պատկանելու համար»¹⁸:

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի ղեկավարությամբ գյուղացիական մասսաների նվաճման՝ համար մղվող պայքարում հիմնական հարվածն ուղղում էին դաշնակցություն կուսակցության դեմ: Դաշնակցականներին հաջողվել էր կեղծ, դեմագոգիկ խոստումներով, մտրակի և սրի օգնությամբ իրենց ազգեցության տակ գտել հայ գյուղացիության զգալի մասին: Անհրաժեշտ էր բացատրական-պրոպագանդիստական աշխատանք ծավալել, բարձրացնել գյուղացիության քաղաքական ինքնագույնակցությունը, հանել նրան դաշնակցական-

ների ազգեցությունից, զախախել վերջիններիս սխալ, վնասակար տեսական դրությունները և ոտքի հանել գյուղացիության ամբողջ մասսային՝ բոլշևիկյան ազգարարին ծրագիրը հեղափոխական եղանակով իրականացնելու համար:

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները, բոլշևիկյան հայ մամուլը ակտիվ գործունեություն՝ ծավալեցին այս խնդիրների իրականացման համար:

Ս. Սպանդարյանը «Մեր գերը գյուղերում» հոդվածաշարում գրում էր. «Մեր «ազգային կուսակցությունները», որոնք բաժանել են հայ գյուղացիությունը իրենց մեջ, որ «կազմակերպել» և «գարգարել» են մեր գյուղերը մտրակներով, զենքով և էկզեկուցիաներով—շարունակ բթացրել են գյուղի պրոլետարական տարրերի գիտակցությունը և հայ գյուղացիությունը դարձրել են «ամենախաղաղ, լուս ու մունջ մասսա», որ այդ կուսակցություններն իրենց անվանել են միշտ «սոցիալիստ», իսկ գործով եղել են ամենաառին թշնամի սոցիալիստական գաղափարի և ոչինչ չեն արել տարվա ընթացքում գյուղը հեղափոխականացնելու և պրոլետարական մասսաները կազմակերպելու գործում»¹⁹:

Դաշնակցությունը թեպետ իր 10-րդ ընդհանուր ժողովում որոշում ընդունեց բոլոր հոգերը վերածել ժողովրդական սեփականության և հանձնել համայնքներին՝ հավասարարական օգտագործման համար, սակայն այդ միջոցառումների իրականացումը վերջինս կապում էր ոչ թե հեղափոխական հեղաշրջման, շահագործողների էքսպրոպրիացիայի հետ, այլ կենտրոնական կառավարության, նրա ներկայացուցչական օրգանի օրենսդրական ակտերի հետ:

Դաշնակցականների քաղաքական ու պրակտիկ գործունեությունը սահմանափակվում էր ցարից ու Դումայից ըսպասվող որոշ ռեֆորմներով: Նրանք պահանջում էին տեղական ինքնավարություններ, կոռպերատիվ միություններ և պետական-գեմսատվային գումարներով ազգությունուրական որոշ միջոցառումներ: Այսպես, դաշնակցական «Հռոիզոն» թերթը 1912 թվականը Հայաստանի գյուղատըն-

18 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 377:

19 Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 1, Երևան, 1959, էջ 128—129:

տեսության համար «մի նոր դարաշրջան» է համարում, քանի որ կառավարությունը «կյանքի բարելավման» համար որոշել էր գեմստվայական գումարների հաշվին ստեղծել մի գյուղատնտեսական կազմակերպություն, որն իր մասնագետների միջոցով ագրոկուլտուրական աշխատանք պետք է կատարեր գյուղերում²⁰: Դաշնակցական «Փայլակ» թերթը խմբագրական հոդվածում գրում էր, որ հայ ժողովրդի տընտեսական կյանքում հին ժամանակներից գոյություն ունեցող համայնքները խոշոր շափով կարող են օժանդակել կոռպերատիվ միությունների ստեղծման ու տարածման գործին, որ «գյուղացիական գործակցական միությունները» (այսինքն կոռպերատիվները—Մ. Խ.) ոչ միայն բարձրացնում են աշխատավորների նյութականը, այլև զարգացնում են նրանց «հասարակականապես և քաղաքականապես» և որ մյուս կողմից էլ և նա ամենակարևորն է—նրանք հարթում են ուղին դեպի կատարյալ համայնականությունը, դեպի սոցիալիզմը²¹:

Ստ. Շահումյանը իր բազմաթիվ հոդվածներում ցույց էր տալիս, որ իրենց հեղափոխական համարող դաշնակցականները գործնականում պայմանավորել են գյուղացիության և բանվոր դասակարգի հեղափոխական շարժման դեմ, աշխատել են աշխատավորությանը վարակել նացիոնալիզմի թույնով, հեռու պահել նրան հեղափոխական շարժումներից: Շահումյանը գրում էր: որ դաշնակցությունը մինչև այժմ «հեղափոխական» կուսակցություն էր անվանում իրեն, որպեսզի 15 տարի շարունակ մարտնչի հեղափոխության դեմ: Նա այժմ իրեն անվանում է «հեղափոխական» ու «սոցիալիստական» կուսակցություն, որպեսզի կովի հեղափոխության ու սոցիալիզմի դեմ²²:

Դաշնակցության խոկական դեմքը ավելի է պարզվում, եթե անդրադառնում ենք նրա գործունեությանը հայկական գյուղերում, տեսոր ու սպանություն, ծեծ ու բռնություն, նորանոր հարկեր ու տուգանքներ, կալվածատերերի, կովակ-

ների վաշխառուների շահերի բացահայտ պաշտպանություն, գյուղացիության շահագործման ուժեղացում, լկտի կամայականություն—այս էր պատկերը հայկական այն գյուղերի, որոնց վրա իր թաթն էր դրել իրեն «սոցիալիստ» ու «հեղափոխական» անվանող «դաշնակցություն» կապակցությունը:

Դաշնակցականներն ստեղծել էին նաև դատարաններ, որոնք իրենց վայրագ որոշումներով, բիրոտ միջոցներով ու պատիճներով սարսափ էին ազգում գյուղացիության վրա: Նրանք ստիպում էին գյուղացիներին ոչ մի գործով չդիմել պաշտոնական դատարաններին, այլ բոլոր հարցերը «լուծել» դաշնակ «արդարադատ» դատարաններում: Երբ Ալիքուշակի 30 գյուղացիներ դաշնակցական դատարանի որոշումից զրծգում են Աշտարակ՝ հաշտարար միջնորդին բողոքելու, դաշնակցական «ղողչիները» կապում են նրանց միմյանց, ցեկ քում երեսներին և ման ածում գյուղերում:

Բոլշևիկյան «նոր խոսք» թերթը մերկացնում էր նաև դաշնակցական պաշտոնյաներին, որոնք սպանալիքով ու բռնություններով ավելացնում էին իրենց նկամուտները, գյուղացիներին կեղեքում և հարստահարում: Նույն թերթը նշում էր, որ «մի քանի տարի կոմիտեներություն անողք այլևս դառնում է գյուղի տերը, «աղեն», իր հարստությունով և ամեն առավելություններով»²³:

Գյուղացիության խոր ատելությունն էին առաջացնում հատկապես դաշնակցական «պետերի» ապօրինություններն ու կամայականությունները հողաբաժանության հարցերում: Այս կապակցությամբ «նոր խոսքը» գրում էր: «Վերջին ժամանակներս երևանի նաշանգում, բազմաթիվ գյուղերում մի խիստ բողոք ու խուզ տրտունջ կա դաշնակցության այդ «պետերի» դեմ՝ հողային ճնշումների և հափշտակության պատճառով: «Սոցիալիստ» դաշնակցության այդ «սարսափելի աղերը» միջամտելով հողաբաժանության զանազան գործերի մեջ, սկսել են ամենաանխիղճ կերպով սեփականացնել ժողովրդի հողերը, ամեն մի հողաբաժանության ժամանակ յուրացնելով իրենց համար «առյուծի բաժինը»²⁴:

²⁰ «Հորիզոն», 1913 թ., № 4:

²¹ «Փայլակ», 1907 թ., № 4:

²² Ստ. Շահումյան, երկեր, հ. 1, Երևան, 1955, էջ 290:

²³ «նոր խոսք», 1906 թ., № 4:

²⁴ Նույն տեղը:

Բոլշևիկյան «Կայծ» թերթը, նշելով կուպակների ու վաշ-խառուների, կաշառակեր պաշտոնյաների և հոգեռական-ների կողմից գյուղում ստեղծված դժոխային վիճակը, գրում էր, որ հին ցեցերի կողքին այժմ բուսել է ձրիակեր կեղե-քիների մի նոր տարր՝ դաշնակցությունը, որը ժողովրդի գլխին ստեղծել է բոնության ռեժիմ։ Թերթն օրինակներ էր բերում նրանց կատարած բազմաթիվ չարագործություննե-րից և մերկացնում վերջիններին հակածողովրդական գոր-ծունեությունը։ Այսպես, գյուղերից մեկում «փնքնաւաշտ-պանության» անվան տակ հավաքելով 1580 ոռութի, դաշ-նակցականներն այն դնում են առևտրական շրջանառու-թյան մեջ։ Այդ «սոցիալիստ» դաշնակցականները գյուղերից մեկում, պարտքը ժամանակին շմուծելու համար, մի գյու-ղացու ծառից կապելով ծեծում են, իսկ հետո կովը վաճա-ռում և պարտքը գանձում։ Հատկապես ծանր էր գյուղացի-ների համար դաշնակցականների կողմից նշանակված զա-նազան կամացական հարկեր, տուգանքներ, վճարումներ կատարելը։ Թերթը նշում էր, որ միայն մի տարվա ընթաց-քում Կ. գյուղը դաշնակցականներին վճարել էր 820 խորձ խոտ, 157 ոռութի, յուրաքանչյուր բնակի 40 կոպեկից մինչև 2 ռ. 60 կոպեկ, գյուղի 12—15 պահապանների համար՝ օրա-կան 6 ռ. 50 կոպեկ և այլն։ Միաժամանակ գյուղացիներն իրենց տներում պահել էին գնացողեկող դաշնակցական ձրիակերներին, ինամենա նրանց ձիերը և այլն։ Արտահայտե-լով դաշնակների ծանր լծի տակ գտնվող գյուղացիների պա-հանջը, «Կայծը» գրում էր. «Որքա՞ն երշանիկ կլիներ գյու-ղացին, Ֆթեն նրա վզից արձակեին այդ փաթաթովի ազգա-սիրությունը»²⁵։

Մերկացնելով հայ բորժուա-ազգայնական կուսակցու-թյունների վնասակար գործունեությունը, կենինի հայ գինա-կիցները և բոլշևիկյան մամուլը մեծ աշխատանք ծավալեցին Հայաստանում մարքսիզմի տարածման, սոցիալ-դեմոկրա-տական կազմակերպությունների ստեղծման ուղղությամբ։ Դեռ 1899 թ. Զալալօղիում Շահումյանի կողմից կազմա-

կերպվում է առաջին մարքսիստական խմբակը Հայաստա-նում։ Մինչև 1905 թ. սոցիալ-դեմոկրատական խմբակներ և կազմակերպություններ են ստեղծվում Հաղպատում, Ալա-վերդում, Սամահինում, Երևանում, Ալեքսանդրապոլում, իսկ 1905—1907 թթ. հեղափոխության տարիներին՝ նաև նոր Բայազետում, Զանգեզուրում և այլուր։ Շահումյանը կուսակ-ցության V համագումարում արտասանած իր ճառում նշում էր, որ միայն կոփիում նրանց թիվը 1906 թ. հասել էր 21-ի։ Բոլշևիկյան կազմակերպությունների կողմից գյուղացիու-թյան մեջ տարվող կազմակերպական-բացատրական աշխա-տանքը շուտով իր արդյունքն է ունենում։ «Նոր խոսք» այդ արդյունքների մասին գրում էր. «Այժմ Բորչալուի և Լոռվա գավառում մուտք են գործել Խուսաստանի սոցիալ-դեմոկ-րատական բանվորական կուսակցության անդամները և ի-րենց եռանդուն պրոպագանդայով դուրս են բերել դաշնակ-ցության ճահճից շատ գյուղեր»²⁶,

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների պրո-պագանդիստական-բացատրական աշխատանքի համար հայ-կական գյուղերում եղած պարարտ հողի և նրա ազդեցու-թյան կոնկրետ պրակտիկ հետևանքների մասին «Պրոլետա-րիատի կոփիվը» գրում էր. «Գյուղացիները լսելով, որ իրենց կարիքների մասին խոսելու ժողով պիտի լինի, ուրախու-թյամբ են հավաքվում։ Մի քանի գյուղերում, իրենց գյուղա-ցիների առաջարկությամբ, գաղտնի և անմիջական քվեար-կությամբ գյուղական կոմիտեներ են ընտրվում։ Այս կոմի-տեները վարում են գյուղական ներքին գործերը, համագյու-ղացիների մեջ ծագող վեճերն ու տարածայնությունները, տարածում են գրականություն ու տեղացիներին գյուղական ժողովի հրավիրում։ Մի խոսքով, նկատվում է, որ գյուղացի-ները մեծ համակրանք են ցույց տալիս մեր ազիտացիային և ուշադրությամբ լսում են մեր ասածները»²⁷։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին լուսու-մի շարք գյուղերում սոցիալ-դեմոկրատական կազմակեր-

²⁵ «Կայծ», 1906 թ., № 8:

²⁶ «Նոր խոսք», 1906 թ., № 12:

²⁷ «Պրոլետարիատի կոփիվը», 1905 թ., № 6:

պությունների ղեկավարությամբ ստեղծվել էին գյուղացիական հեղափոխական կոմիտեներ, որոնք կատարում էին գեղարտական վերափոխումներ, գյուղացիության ազատում էին ոստիկանական-շինովնիկական ձնշումից և թեթևացնում կալվածատիրական լուծը²⁸:

Հայաստանի գյուղացիության դասակարգային պայքարին գիտակցական-կազմակերպված բնույթ տալու գործում կարևոր նշանակություն ունեցավ ՌՍԴԲԿ Կովկասյան Միության կոմիտեի 1905 թ. մարտի 19-ի կոչը հայ գյուղացիներին²⁹: Կոչը ցույց էր տալիս գյուղացիությանը ցարի ու կալվածատիրերի տիրապետության ամբողջ հակաժողովրդական էությունը. նշում էր, որ անհրաժեշտ է տապալել ցարի բըռնակալությունը, քանի որ թագավորը ոչինչ չի տա ժողովրդին, ժողովրդի ազատության գործը ինքը՝ ժողովրդը պետք է տնօրինի:

Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները գյուղացիության հեղափոխական շարժումների, դասակարգային պայքարի ղեկավարման գործում հիմք էին ընդունում կուսակցության Յ-րդ համագումարում ընդունված «Գյուղացիական շարժման նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին» բանաձեռքը: Այն բոլոր կուսակցական կազմակերպություններին հանձնարարում էր.

ա) «Ժողովրդի լայն խավերում պրոպագանդել, որ սոցիալ-դեմոկրատիան իրեն խնդիր է զնում ամենաեռանդուն կերպով աջակցել գյուղացիության այն բոլոր հեղափոխական միջոցառումներին, որոնք ընդունակ են բարելավելու գյուղացիության դրությունը՝ ընդհուպ մինչև կալվածատիրական, պետական, եկեղեցապատկան, վանքապատկան և արքունական հողերի բռնագրավումը»:

բ) Որպես գյուղացիության մեջ ագիտացիա անելու պրակտիկ լոգունգ և որպես գյուղացիական շարժման մեջ

²⁸ Այս մասին ավելի հանդամանալից տե՛ս Հ. Ս. Մելիքյան, «Մարքսիստական կազմակերպությունները և ուսույնութիւն շարժումները լուսիում» աշխատությունը, Երևան, 1957:

²⁹Տե՛ս «Ռեռլուցիոն կոչը և թուցիկներ», Երևան, 1960, էջ 116—

առավել շատ գիտակցականություն մտցնելու միջոց, պառաջաշել անհապաղ գյուղացիական կոմիտեներ կազմակերպելու անհրաժեշտությունը, նպատակ ունենալով իրականացնել հեղափոխական դեմոկրատական բոլոր վերափոխումները՝ գյուղացիությանը ոստիկանական-շինովնիկական ու կալվածատիրական ձնշումից ազատելու համար:

գ) Ինքնակալությունը կազմակերպելու և նրա ղեմ ռողըղված հեղափոխական գրոհին աջակցելու նպատակով կոչ անել գյուղացիության ու գյուղական պրոլետարիատին՝ գիմել ամեն տեսակ քաղաքական ցուցերի, կողմեկտիվ կերպով հրաժարվել հարկերն ու տուրքերը վճարելուց, զինվորական ծառայությունից և կառավարության ու նրա գործակալների որոշումներն ու հրամանները կատարելուց:

դ) Զգուել գյուղական պրոլետարիատի ինքնուրույն կազմակերպմանը, նրան քաղաքային պրոլետարիատի հետ միաձուկելուն սոցիալ-դեմոկրատական կուսակցության որոշ տակ և նրա ներկայացուցիչներին գյուղացիական կոմիտեների մեջ ընտրելուն»³⁰:

Գյուղացիության դասակարգային պայքարը Հայաստանում, ինչպես նշվեց, համեմատաբար ցայտուն էր արտահայտվում լոռիում, որը պայմանավորված էր ինչպես գյուղացիության կալվածատիրական դաժան ձնշմամբ, այնպես էլ այն բանով, որ լոռին արդյունաբերական տեսակետից համեմատաբար զարգացած էր, ուներ հեղափոխական բանվորություն և բողլիկյան ուժեղ կազմակերպություններ: «Նոր խոսքը» լոռու գյուղացիության դասակարգային պայքարի մասին գրում էր. «Այս մինչև օրս լոռվա գյուղացին տարել է այս սարսափելի կեղեքումները (խոսքը կալվածատիրական անողոք շահագործման մասին է—Մ. Խ.), բայց ներկա քաղաքական-տնտեսական շարժումները արդյունք տվին նաև լոռում և գյուղացիք հետաքանի թեքվում էին զեպի հեղափոխական ձանապարհը... Ամսույս 12-ին, Այգեհատում

³⁰ «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պետությունների բանաձեռում ու որոշումներում», 1-ին մաս, Երևան, 1954, էջ 99:

գյուղաքիները հավաքվելով զանազան գյուղերից՝ կազմեցին մի միտինգ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության անդամների ղեկավարությամբ և վճռեցին փոփոխության ևնթարկել մինչև օրս կատարվող տուրքերի և արենդների եղանակը»^{31:}

Լոռիում դատակարգային պայքարի ծավալման գործում մեծ դեր խաղացին տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, որոնք միավորված էին Բորչալուի կուսակցական կազմակերպության մեջ և կազմակերպորեն ենթարկվում էին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կազմակերպությանը, ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության Յ-րդ կոնֆերանսը, որը տեղի ունեցավ 1907 թ. գարնանը, քննարկելով հողային հարցը, ընդունում է համապատասխան որոշումներ և Բորչալուի կազմակերպության կողմից գյուղաքիությանն է ուղղում «Ընկերներ» վերնագրով կոչը:

Այդ կոչը ոչ միայն կալվածատերերից նախորդ տարիներում ստացած գիշումների պահպանման հարցն էր առաջ քաշում, այլ նաև տալիս էր այն ընդհանուր խնդիրները, որոնց համար պետք է պայքարեին գյուղացիները գլուխ բարձրացնող ռեակցիայի դեմ: Կոչում ասվում էր. «Ընկերներ, գարնանային աշխատանքները սկսվում են: Կալվածատերերը թե առած ժամանակավորապես գլուխ բարձրացրած ռեակցիայից, ուզում են հետ խլել աղքատ գյուղացիների այն փոքրիկ իրավունքները, որ նրանք նվաճել են իրենց կովով: Նրանք ուզում են ամեն կերպ ճնշել ժողովրդին և խլել գյուղացու սոված երեխաների ձեռքից նրա վերջին կը տոր հացը: Ընկերներ, դուք պետք է դիմադրեք նրանց ոտքնագություններին, ձեր միությամբ ու համեմատիրապետական մեջ գյուղաքաղաքական պահպանությամբ դուք պետք է ցույց տաք, որ հեշտ չէ խլել ձեզանից այն, ինչ որ դուք մի անգամ նվաճել եք: Ընդհակառակը, դուք պետք է շարունակեք կովել և դիմեք նորանոր հաղթանակների ձեր արյունը ծծող վաշխառու կալվածատերերի դեմ: Ամբողջ Ռուսաստանի գյուղաքիությունը օրն-օրի վրա գալիս է ինքնափետակցության և շարունակելով իր առօրյա կոիկը կալվածատերերի դեմ, պատրաստվում է վճռական հարված հասցնել այդ

կալվածատերերի պաշտպան բյուրոկրատ կառավարությանը: Ընկերներ, մենք կոչ ենք անում ձեզ ստվարացնել ձեր շարքերը, ամրացնել ձեր կազմակերպությունները և համերաշխ ձեր քաղաքների բանվոր ընկերների հետ, դիմել զեպի այն մեծ նպատակը, որ դրված է մեր առաջ: Միայն համերաշխ կովով, միայն գյուղացիան ու քաղաքացին պրոլետարիատի միացած ուժերով կարելի է տապալի շահագործության ու ճնշումների ուժիմը և ձեռք բերել ազատություն ժողովրդի համար:

Պետք է պատրաստվենք, որպեսզի միացած ուժերով ամբողջ Ռուսաստանի գյուղաքիության հետ միասին, հետ խըլենք ազնվականների ու կալվածատիրության ձեռքից բոլոր հողերը: Ամբողջ հողը գյուղացիներին և ամբողջ ազատությունը ժողովրդին, այս է մեր սրբազն պահանջը»^{32:}

1907 թ. հունիսի 3-ին ցարը ցրեց երկրորդ Պետական դուման: Նրա 65 հոգուց բաղկացած սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան ձերակալվեց և Սիբիր աքսորվեց, ապա Հրապարակվեց ռեակցիոն կալվածատիրությանը և բուժուազիային մեծ արտոնություններ շնորհող և դումայում համարյա բացարձակ մեծամասնությունն ապահովող նոր ընտրական օրենք: Երկրում հաստատվեց ռեակցիայի բացահայտ տիրապետությունը. Հեղափոխական շարժումների և բոլշևիկյան կազմակերպությունների դեմ ցարիզմը ոտքի հանեց պատժի զոկատներ, ոստիկանության ու ժանդարմերիայի ուժեր, միապետական-խուզիդանական տարրեր: Բոլշևիկյան կուսակցությունն անցավ խոր ընդհատակ, աշխատեց քիչ կորուստներով անցկացնել ռեակցիայի շրջանը, կապերը պահպանել աշխատավոր մասսաների հետ, կոփել և դաստիարակել նրանց քաղաքականապես ու կազմակերպչորեն՝ նոր մարտերի համար: Բոլշևիկյան կազմակերպությունները, ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում պայքարում էին կալվածատիրության ու ոստիկանության սանձարձակ բռնությունների դեմ:

³¹ «Նոր խոսք», 1906 թ., № 5:

Երկրորդ Պետական դումայի արձակման առթիվ ՌՍԴԲԿ
 Բորշալուի կազմակերպության կոմիտեն հատուկ կոչ ընդունեց, որտեղ ասված էր, որ ցարիզմը առաջին Պետական դումայի միջոցով աշխատում էր մասսաներին խաթել և ետ կանգնեցնել հեղափոխությունից, սակայն չհասավ արդյունքի: Նա փորձեց պայքարել հեղափոխության դեմ նաև ուսպանիաներով ու գնդակահարություններով, բայց դա էլ արդյունք չտվեց: Ապա գումարեց երկրորդ Պետական դուման, կարծելով, որ այն հնագանդ կատնվի և հեղափոխության դեմ պայքարելու գործում իրեն կօգնի, սակայն այս տեղ ևս ցարը սխալվեց: Կոչը ազդարարում էր, որ առաջիկա սեպտեմբերին նշանակված են երրորդ Պետական դումայի ընտրությունները և աշխատավոր մասսաների առաջ խնդիր էր գնում կազմակերպվել, համախմբվել հանուն հեղափոխության և ազատության. «Ընկերներ. կառավարության բոլոր խոլորդանների դեմ կովելու համար մեզ հարկավոր է կազմակերպվել և խտացնել հեղափոխական շարքերը, միմիայն հեղափոխության միջոցով կարող ենք ձեռք բերել մեր բոլոր պահանջները, ուրեմն կազմակերպվենք ընկերներ».

Երրորդ Պ. դումայի նկատմամբ մեր բռնելիք դիրքի մասին մենք կհայտարարենք հետո:

Կորչի ոռու խաթերա կառավարությունը.

Կորչի բոլոր խոլորդանները.

Կեցցե հեղափոխությունը.

Կեցցե գեմոկրատական հասարակապետությունը.

Կեցցե սոց-դիմոկրատական կուսակցությունը.

Կեցցե սոցիալիզմը.

Բորշալուի կոմիտե ՌՍԴԲԿ»³³:

3. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1907—1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ինչպես ստոլիպինյան ռեակցիայի տարիներին, այնպես էլ հեղափոխական շարժումների նոր վերելքի ժամանակա-

շրջանում գյուղացիության պայքարը շարունակվում և աստիճանաբար ավելի մեծ ծավալ էր ստանում:

